


ՎԱՅՐԱՄ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ



ԳԱԼՈՒՄՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՆՊԱՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

*Խորին շնորհակալություն եմ հայտնում
«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության
Հայկական բաժանմունքի տնօրեն
դոկտոր Զավեն Եկայանին և
փոխտնօրեն Աստղիկ Զամբերթենին
գրքի ստեղծմանը օժանդակելու և
տպագրությունը հովանավորելու համար*

Վահրամ Ղարախանյան

VAHRAM GHARAKHANYAN

**ARMENIAN ACTIVITIES OF
THE CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION:
1956-2006**

EDITOR' DOCTOR ZAVEN V. YEGAVIAN

ВАГРАМ КАРАХАНЫАН

**ПРОАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ
УЧРЕЖДЕНИЯ “ГАЛУСТ
ГЮЛЬБЕНКЯН”:
1956-2006 ГГ.**

РЕДАКТОР ДОКТОР ЗАВЕН В. ЕКАВЯН

YSU PRINTING HOUSE • ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ

YEREVAN - 2008 - ЕРЕВАН

929 : 364. 4. (479, 25) Նյարդաբանական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԼԿՎԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՎԱՀՐԱՄ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

«ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ»
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ,
1956-2006 թթ.

A 93995 II

ԽՄԲԱԳԻՐ ԴՈԿՏՈՐ ԶԱՎԵՆ Վ. ԵՎԱՎՅԱՆ
(Լիսաբոն)



ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2008

**Աշխատությունը Հրատարակության և Երաշխավորել
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը**

Խմբագիր՝ դոկտոր Զ. Եկավյան

**Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հ. Մ. Հարությունյան
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ս. Ա. Պողոսյան**

Ղարախանյան Վ.

Ղ 466 «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հայանպաստ գործունեությունը. 1956 – 2006 թթ.: – Եր.: ԵՊՀ Հրատ., 2008 թ., 272 էջ + 4 էջ ներդիր:

Մենագրությունը նվիրված է գրեթե չուսումնասիրված, արդիական և գիտագործնական նշանակություն ունեցող թեմայի՝ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության ստեղծմանն ու անցած ավելի քան 50 տարվա ընթացքում ծավալած Հայանպաստ բարեսիրական գործունեությանը:

Գրքում մանրամասնորեն լուսարանված ու արժևորված են Սփյուռքում և Հայաստանում նշված բարեգործական կազմակերպության իրականացրած կրթամշակութային օջախների շինարարության, կրթաթոշակների և դրամաշնորհների, Հայկական Հոգևոր, առողջապահական Հաստատությունների աջակցության, մշակութային ձեռնարկումների և գիտության զարգացման ծրագրերը: Ներկայացված է նաև աշխարհահռչակ նախարդություններով Գալուստ Սարգսի Կյուլպենկյանի կենսագրությունը:

ԳՄԴ 63.3 (2Հ)

Գալուստ Կիւլպէնկեան մահկանացու ծնունց,
բայց իր մարդասիրական մեծ իրագործումներով
ժառանգորդ դարձավ անմահութեան:
Օրհնութիւն նրա վաստակին, օրհնութիւն նրա յիշատակին,
օրհնութիւն նրա կեանքի կոչած հիմնարկութեան:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԷՆ Ա ՊԱԼՃԵԱՆ**

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Բարեգործությունն ու բարեգործական Հաստատությունները Հայ իրականության մեջ հանդես են եկել վաղ ժամանակներից: Զանազան ուսումնասիրողներ վկայում են, որ նույնիսկ Հեթանոսական ժամանակաշրջանում բարեգործություն միջոցով հանրությանն օգտակար լինելու գաղափարը խորթ չէր հայերին¹: Մեհյաններին կից հիմնվում էին նաև ժողովատեղիներ ու ապաստարաններ, որտեղ քրմերը սնունդ էին բաժանում չքավորներին և հոգ տանում հիվանդների բուժման համար²: Քրիստոնեությունը տարածմանը զուգահեռ Հայաստանում նոր թափ են ստանում բարեսիրական ձևոնարկումներն, իսկ միջին դարերում Հայոց եկեղեցին և պետությունը նույնիսկ նեցուկ էին կանգնում բարեգործներին, որոնք ոչ միայն հարուստներ էին, այլև հասարակ շինականներ ու եկեղեցու սպասավորներ: Նվիրատվությունները հիմնականում կատարվում էին վանքերի տարածքներում գտնվող մանկատներում ու ծերանոցներում: Եկեղեցին խրախուսում էր հատկապես այն բարեգործներին, որոնք իրենց նվիրատվություններով փորձում էին լուծել անօգնական և հաշմանդամ մարդկանց հանապազօրյա հացի խնդիրը: Պատմություն մեջ քիչ չեն նաև դեպքերը, երբ Հայ նշանավոր անհատներն են օգնության հասկ սևիական ժողովրդի չքավոր Հատվածներին՝ իրենց նյութական կարողությունների մի մասը ծառայեցնելով նրանց կարիքներին, կրթական, գիտական և առողջապահական գործի հաջողությանն ու այլ կարևոր ձևոնարկների:

Հայոց պատմության մեջ ուշագրավ հրեույթ էր, հատկապես, պետության զլխի՝ արքայի, բարեսիրական գործունեությունը: Այդ-

¹ Տե՛ս Թորգոմեան Վ., Հայոց՝ Հին Հիւանդանոցները, «Հայաստանի կոչնակ» (միամսյա հանդես, նյութ Յորթ), թիւ 1, Յունուար 3, 1925, էջ 12-13, Քէօսէեան Վ., Յուշամատեան 160-ամեայ Մուրթ Փրկիչ Հայոց Հիվանդանոցի, Իսթանպուլ, 1994, էջ 1 և այլն:

² Տե՛ս Թորգոմեան Վ., նշվ. աշխ., «Հայաստանի կոչնակ», թիւ 1, Յունուար 3, 1925, էջ 12-13:

պիստով երկիրը շենանում էր թև՝ պետական գանձարանի, թև՝ պետութայան առաջին դեմքի անձնական միջոցների հաշվին: Ընդ որում, ֆեոդալական հասարակարգի պայմաններում այդ միջոցները ծախսվում էին ոչ միայն հայոց միապետութայան զլխավոր ավատատիրոջ՝ թագավորի բուն կալվածքներում ու մայրաքաղաքում, այլև զրանց սահմաններից դուրս՝ դանաղան քաղաքներում, ավաններում ու գյուղերում: Հատկանշական է, որ թագավորի օրինակին հետևում էին նաև նախարարական տները: Սխալված չենք լինի, եթե նույնիսկ նշենք, որ քաղաքական ու աշխարհագրական սահմաններ չճանաչող մի այնպիսի երևույթ, ինչպիսին բարեգործությունն է, ևս նպաստում էր ավատատիրական ժամանակաշրջանի մասնատված պետութայան միավորման գործընթացին՝ երբեմն մեղմելով նախարարական տների, ինչպես նաև դասակարգերի միջև ծագող տնտեսական, սոցիալական ու քաղաքական հակասությունները: Վստահարար կարևոր է պնդել, որ հայ ժողովուրդը երբևր չի մոռանա Բագրատունի թագավոր Աշոտ III-ին (953-977 թթ.), որը ձերանոցներ, աղքատախնամ ու հիվանդախնամ հաստատություններ էր հիմնում՝ և հոգում ժողովրդի մի ստվար զանգվածի կենսական կարիքները: Պատահական չէ, որ նա հիշվեց որպես Ողորմած թագավոր: Դժվար չէ մտաբերել նաև Վասուրական աշխարհի թագավոր Գագիկ Արծրունուն (908-943 թթ.), Կիլիկիայի հայոց արքա Լևոն II-ին (1187/1198-1219 թթ.)*, նրա դուստր Զարեյ թագուհուն (1219-1252 թթ.), Հեթում II-ին (1289-1305 թթ.)** և բաղձաթիվ ուրիշ բարեգործների, որոնք իրենց միջոցներից առատորեն բաշխումներ էին կատարում՝ հիվանդախնամ ու աղքատախնամ վայրեր բանալու, եկեղեցաշինություն, քաղաքաշինություն, գյուղատնտեսություն և արհեստագործություն զարգացման համար: Արքաներից ու իշխաններից հետ չէին մնում հոգևոր առաջնորդները: Պատմիչները հաղորդում են Սահակ Պարթևի, Ներսես Մեծի, Անաստաս կաթողիկոսի և այլոց բարեսիրական գործունեություն մասին: Ընդ որում, հարկ է նշել, որ Հայաստանում բարեգործությունը չի եղել սոսկ ինքնարուխ երևույթ, որն անկաղ-

* 1198 թ. Կիլիկիայի հայկական իշխանությունը հռչակվեց անկախ թագավորություն, իսկ Լևոն II-ը՝ թագավոր:

** Հեթում II-ը Կիլիկիայի թագավորություն գահին նստել է ընդհատումներով՝ 1289-1294, 1295-1296, 1299-1305 թթ.:

մակերպ 'ձևով դրսևորվել է միայն պատեհ առիթի ղեկբում: Մշակվել ու իրականացվել են այնպիսի ծրագրեր, որոնք ապահովել են դրա շարունակական բնույթը: Փալատոս Բուզանդն, օրինակ, տեղեկացնում է, որ Ներսես Մեծն (մոտ 329-373 թթ.) աղքատանոցներ, ծերանոցներ, հիվանդանոցներ ու որրանոցներ կառուցելուց դատ. Հայ ժողովրդի մեջ արթնացրել էր զթասրտության այնպիսի զգացում, որն ստիպում էր յուրաքանչյուր մարդու նվիրատվություններ կատարել կարիքավորների համար¹. «...բոլորն իրենց ունեցածները,- գրում էր պատմիչը,- իրենց աղքատներին հավասարապես և հոժարությամբ մատակարարում էին»²: Հատկանշական է, որ բարեսիրական նպատակներով ժողովրդից հավաքվող միջոցների հսկողության ու պահպանության նպատակով պաշտոնի էին կոչվել պետական հատուկ ծառայողներ՝ տեսուչ-վերակացուներ³: Գործն այնպիսի մասշտաբներ էր ընդունել, որ պատմագիրը նշում էր, թե «Նրա (Ներսես Մեծի՝ Վ. Ղ.) նման ուրիշ մեկը չեղավ Հայոց աշխարհում»⁴:

Հայ ժողովրդի պատմության վայրիվերումներով լեցուն էջերում բարեգործության ղերն ավելի է մեծացել, երբ անկում է ապրել պետութունը: Այդ առումով միանգամայն իրավացի էր Բեյրութում հրատարակվող «Ազգակ» օրաթերթը, երբ գրում էր, թե «...որքան ահաւոր ու կործանարար եղած է թշնամիին աւերումը, հալածանքն ու կոտորածը, կարծես նախախնամական կարգադրութեամբ մը նոյնքան անպարտելի եղած է Հայ ժողովուրդի ստեղծագործ ոգին, մարդկային զթութեան և բարեգործութեան զգացումը, որ մեր գոյութեան պահպանման մէջ ճակատադրական ղեր կատարած է՝ խնամելով, ապրեցնելով որրը, այրին ու թշուառը և վերաշինելով ու ծաղկեցնելով աւերակները»⁵:

17-18-րդ դարերում՝ Հայ ազատագրական մտքի զարթոնքի շրջանում, բարեգործական ղգալի աշխատանքներ կատարեցին ժամանակի Հայտնի Հասարակական-քաղաքական բաղմաթիվ

¹ Տե՛ս Փալատոս Բուզանդ, Հալոյ պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Ե. 1947, էջ 143-148, 268-269:

² Նույն տեղում, էջ 144:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 268-269:

⁴ Նույն տեղում, էջ 148:

⁵ «Ազգակ» օրաթերթ, թիւ 281 (9721), Պէյրութ, 11 Փետրուար, 1964:

գործիչներ: Հնդկաստանի Մադրաս քաղաքի Հայ աղատագրական խմբակն, օրինակ, ոչ միայն քաղաքական գործունեություններ էր ղրգադվում, այլև նրա անդամների բարեգործությունների շնորհիվ Հայաստանում բացվել էին տպարաններ, հրատարակվել աղատագրական, հայրենասիրական, աղատական գաղափարներ քարոզող գրքեր, գումարներ կտակվել Հայաստանին:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին եվրոպական և աշխարհի յավագույն համալսարաններում ուսանած բազմաթիվ Հայ երիտասարդներ Հայաստանում ոչ միայն դեմոկրատական արժեքներ, ազատասիրական ու աղատագրական գաղափարներ էին քննարկում, այլև փորձում էին տնտեսություն մեջ օգտագործել արդյունարևրություն վերարեդյալ ձևերերած գիտելիքները: Հայոց պատմությունը հայտնի են Քյուրքչյան, Թամաճյան, Մանթաշյանց, Ղուկասյան, Միրզախանյանց և բազմաթիվ ուրիշ արդյունաբերող ու ձեռնարկատեր հայերի անուններ, որոնք իրենց բարեգործություններով նպաստել են սեփական ժողովրդի ֆիզիկական զոյությունը, նրա հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանն ու հարստացմանը: Մեծահարուստ Հայ բարերարների նվիրատվությունների շնորհիվ Անդրկովկասի Հայաչատ վայրերում կառուցվեցին որրանոցներ, հիվանդանոցներ, տպարաններ, դպրոցներ, վարժարաններ ու դպրեվանքեր: Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ նրանք ևս լրջորեն նպաստել են Հայ ժողովրդի բարօրությունը, խթանել հասարակական ու մշակութային կյանքը: «Պոլսի երևելի ամիրաներէն սկսեալ,- գրում էր «Ազդակը»,- մինչև Մանթաշեան, Մուրատ-Ռափայել, Պօղոս փաշա Նուպար, Մելքոնեան, և ղեռ տասնեակներով ուրիշներ՝ եկեղեցիներ կառուցած են, կրթական հաստատություններ հիմնած ու տարիներով հոգացած են, լոյս ու գիտություն քաջալերած են, և այդ կենսական գործերով այ թէ սատարած են ազգային գոյութեան պահպանման, և թէ այդ կրթական հաստատութեանց մէջ պատրաստուած մտաւորականներով փութացուցած են Հայ ազգային դարթօնքը, անշուշտ այլ գործօններու օժանդակութեամբ»¹:

19-րդ դարի երկրորդ կեսին Հայ մտավորականությունը բազմա-

¹ «Ազդակ» օրաթերթ, թիւ 281 (9721), Պէյրուս, 11 Փետրուար, 1964:

Թիվ ներկայացուցիչներ փորձում էին հիմնել բարեգործական կազմակերպություններ և կազմակերպված բնույթ տալ դրանց աշխատանքներին: 1860-ական թվականներին Հասարակական, քաղաքական շատ գործիչներ բարեսիրական գործունեություն ծավալեցին Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանի զավառներում, սակայն չհաջողվեց ծածկել այն խոր վիճը, որ բացվել էր մեծահարուստ հայ ամիրաների և արևմտահայ զավառների միջև¹: Այդ ժամանակաշրջանում առանց «ազգային ջոջերի» բարեգործական լայն գործունեություն իրականացնելը միանգամայն անհնար էր, իսկ Կ. Պոլսում և Թուրքիայի ծովափնյա քաղաքներում ուժեղացած հայ առևտրական դասի ներկայացուցիչների մի մասը վաղուց կորցրել էր իր ազգային դեմքը և ապրում էր հայ իրականությունից բոլորովին մեկուսացված կյանքով:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին բարեգործական Հաստատություններ հիմնադրվեցին նաև Կովկասում, որոնցից կարելի է հիշատակել «Հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում»², «Բաքվի Հայոց մարզասիրական ընկերությունը»³, «Թիֆլիսի Հայուհեաց բարեգործական ընկերությունը», «Թիֆլիսի վանքի ավագ (մայր) եկեղեցուն առընթեր կրոնապատմական թանգարանը» և այլն⁴: Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում խորհրդային իշխանությունից Հետո բարեգոր-

¹ Արևմտահայ իրականության մեջ բարեսիրական գործունեություն ծավալած գործիչներից կարելի է հիշատակել Մկրտիչ և Գրիգոր Աղաթոն (Աղաթոնյան) Լոբայաներին, Սերովոն Թագվորյանին, Գրիգոր Օսյանին, Մկրտիչ Պեչիկյանին, Հովսեփ Շիշմանյանին և ուրիշներին, որոնց նախաձեռնությամբ 1860 թ. Կ. Պոլսում ստեղծվեց «Բարեգործական ընկերություն Հայոց» կազմակերպությունը: Այդ կազմակերպության աշխատանքներին մասնակցել է նաև Մխրայել Նալբանդյանը (տե՛ս Ծառվորյան Հ., Թիֆլիսի հայ բարեգործական Հաստատությունների պատմությունից, Ե., 2007, էջ 10-11):

² Հիմնվել է 1881 թ. Թիֆլիսում, լույս է հարատ տեսնում Նավասարդյանի, նշանավոր դրամատուրգ Գարբիել Սունդուկյանի և նրանց Համախոհների ջանքերով (տե՛ս Լեո, Երևանամյակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում: 1881 - 1911, Թիֆլիս, 1911, Ծառվորյան Հ., նշվ. աշխ., էջ 11):

³ Ստեղծվել է 1864 թ. Բաքվում, ղեկավարել Գ. Ռոստոմյանի, Մ. Չոհրաբյանի և քաղաքի այլ եչնաավոր հայերի միջոցով (տե՛ս Հայ սոյուռք Հանրազոտարան, Հայկական Հանրազոտարանի հրատ., Ե., 2003, էջ 25-26):

⁴ Տե՛ս Ծառվորյան Հ., նշվ. աշխ.:

ծական կազմակերպությունները դադարեցին գործելուց: 1923–1937 թթ. ընթացքում Խորհրդային Հայաստանում բարեգործական ծրագրեր էր իրականացնում 1906 թ. կահիրեում (Եգիպտոս) հիմնված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը¹: Հարկ է նշել, որ այդ կազմակերպությունը կենսունակ գտնվեց Հայության համար բախտորոշ օրերին սատար կանգնելու նրա բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրների լուծմանը և շարունակել իր հետագա ազգանպաստ գործունեությունը: Բարեգործականին ծնունդ և շունչ տվողը Հայ ճանաչված Հասարակական–քաղաքական գործիչ, եգիպտահայ մեծահարուստ Պողոս փաշա Նուրարյանն էր (Պողոս Նուրար), որն էլ դարձավ նրա առաջին նախագահը²:

20-րդ դարի առաջին կեսի Հայ բարեգործների շարքում առանձնակի տեղ է զբաղում համաշխարհային նալթարդյունարևության հիմնադիրներից մեկը՝ Գալուստ Կյուլպենկյանը: «Ազգակի» կարծիքով. «Ի խորոց սրտի յարգելով հին թէ ներկայ օրերու բոլոր բարերարները, հոգեկան անհուն գոհունակութեամբ պէտք է արձանագրել, և ժողովրդական լայն զանգուածներու սեփականութիւնը դարձնել այն իրականութիւնը, որ Գալուստ Կիւլպէնկեան բոլոր կտակարարներուն մէջ գազաթնացաւ. համազգային չափանիշով, տիրանալով նաև միջազգային բարերարի պատուարեր անունին»³:

Ո՞վ էր այս մարդը՝ անխարհահոշակ նալթարդյունարերոզն ու մեծահարուստը, որի խորհրդավոր անունն ավելի քան կես դար էր իջնում թե՛ սփյուռքահայ, թե՛ օտար մամուլի էջերից և որի փառքը 20-րդ դարի առաջին կեսին տարածված էր Մերձավոր, Միջին Արևելքի, Խորհրդային Միության երկրներում, Եվրոպայում և նույնիսկ հեռավոր Ամերիկաներում: Ցավալիորեն պետք է արձանագրենք, որ Հայ ընթերցողը ներկայումս անբավարար չափով է ծանոթ Հայ և օտար մամուլում տեղ գտած ու պահպանված որոշ

¹ Տե՛ս Մելքոնյան է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923–1937 թթ. (այսուհետև՝ ՀԲԸ Միությունը...), Ե., 1999:

² Տե՛ս Մելքոնյան է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն (այսուհետև՝ ՀԲԸՄ պատմություն), Ե., 2004, Պողոսեան Ս., Պողոս Նուրար Փաշա, ազգային գործիչը, Ե., 2004:

³ «Ազգակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964:

Հողվածներին ու աշխատություններին¹, որոնցում փորձ է արվել ներկայացնել Գ. Կյուլպենկյանի կենսագրությունը, Համանուն Հիմնարկության ստեղծման մանրամասներն ու գործունեությունը: Հրատարակված նյութն, իր Հերթին, անրավարար է լիարժեք ձևով լուսարանելու թե՛ Կյուլպենկյան գործչի, թե՛ Կյուլպենկյան բարերարի կենսագրությունն ու գործունեությունը:

Սնդրին կարևորություն և արդիականություն է հաղորդում Գ. Կյուլպենկյանի՝ աշխարհահռչակ բարերար լինելու Հանգամանքը, որն իր լայնածավալ, նպատակաուղղված բարեգործություններով ամրացրել է Հայ ողին, նպաստել Հայ ժողովրդի մշակութային արժեքների պահպանմանն ու Հարստացմանը, աճող սերունդներին դաստիարակել Համամարդկային վեհ գաղափարներով: Նրա անունն իրապես արժանի է Հիշտակության այնպիսի Հայ նշանավոր գործիչների ու բարերարների շարքում, ինչպիսիք են Պողոս փաշա Նուբարյանը, Ալեք Մանուկյանը, Քրքր Քրքրոյանը և ուրիշներ: Ըստ Աթենքի «Ազատ օր» օրաթերթի՝ «Կիւլպէնկեան կը մտնէ մեծանուն բարերարներու ակումբին մէջ Համազգային չափանիշով»²:

1956 թ. Գ. Կյուլպենկյանի կտակով Լիսաբոնում (Պորտուգալիա) Հիմնադրվեց իր անունը կրող բարեգործական ու գիտամշակութային Հաստատություն, որն այսօր իրավամբ Համարվում է Համայն մարդկության առաջին թացին սատարող կառույց՝ իր կարևորությամբ ամենևին չզիջելով «Նորեկյան», «Ռոկֆելլեր», «Ֆորդ» և նմանատիպ այլ կազմակերպությունների³: Ընդ որում,

¹ Տե՛ս **Զամբերթեն Ա.**, Գալուստ Սարգիս Կիւլպէնկեան, Մարդը և իր գործը, 1869-1999, Լիսաբոն, 1999, **Գալլաքյան Կ.**, Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը (Կևսդարյա Հոբելյանի աթիվ), «Պատմա-բանասիրական Հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2006, № 3, էջ 3-6, **Բալապյան Լ.**, Գալուստ Գյուլբենկյան, Ե., 2004, **Hewins R., Mr. Five Per Cent. The story of Calouste Gulbenkian.** Rinehart & Company, INC., New York, 1958, **Gulbenkian N., Portrait in oil. The autobiography of Nubar Gulbenkian,** Simon and Schuster, New York, 1965, **Éodwick J., An interpretation of Calouste Sarkis Gulbenkian, in collaboration with D. H. Young.** London, 1958, «Արև» օրաթերթ, Գահիրե, թիւ 11.198-11.217, 13 Հոկտեմբեր-4 Նոյեմբեր, թիւ 11.219-11.222, 7-10 Նոյեմբեր, 1955, թիւ 12.506, 27 Յունուար, 1960 և այլն:

² «Ազատ օր» օրաթերթ, թիւ 7335, Աթլնք, 15 Ապրիլ, 1969:

³ Աննախաղևալ ու բավականին Հետաքրքիր Երևույթ էր 20-րդ դարում Հանրային օգուտի և գերազանցապես մեկ մարդու բաղձամիլիարդանոց նյութական

այս հաստատությունն իր կառուցվածքով և միջոցներ գոյացնելու առումով, կապես տարրերվում է հիմնադրամներից, որոնք գերադանցնապես ստեղծվում են տարրեր անհատների համատեղ ջանքերով, հանդիսանում են հասարակական կազմակերպություններ, իսկ բարեսիրական գործունեություն համար անհրաժեշտ միջոցներն ապահովում են առավելապես անդամավճարներին, նվիրատիությունների ու դրամահավաքների միջոցով: «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը, որը նպաստել է գիտություն, կրթություն, առողջապահության և արվեստի զարգացմանն ամբողջ աշխարհում, ստեղծվել է մեկ անհատի կողմից և բացառապես մեկ անհատի նյութական հարստությամբ: Այս հաստատության

կարողություններով բարեգործական հիմնարկությունների ծնունդը: Հայտնի է, որ կապիտալիստական հասարակարգի և ազատ շուկայական հարարկությունների հաղթանակն աշխարհի բազմաթիվ երկրներում, ինչպես նաև 19-րդ դարում տեղի ունեցած արդյունաբերական հեղաշրջումը պարարտ հող զարձան մի խումբ մարդկանց համար՝ կուտակելու հսկայական նյութական հարստություններ. նորից կորացրելով, Ռոկֆելլեր ընտանիքի, Հենրի Ֆորդի, Գալուստ Կյուլպենկյանի և մի շարք այլ մեծահարուստների անուններ իրավամբ ձևով էին բերել անվաճակիր արքաների համաշխարհային համբավ: Քիչ ավելի ուշ՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, ի հայտ եկավ մարդկության «ոսկի միլիարդ» հատվածը, կամ ավելի պարզ ընտրո՞ւմամբ, աշխարհի մեծահարուստներին խումբը, որի ձևովում կենտրոնացավ երկիր մոլորակի հարստությունների գերակշիռ մասը: Ուշագրավ է այն փաստը, որ եթե այդ հարստություններն իրենց տերերի կենդանության ժամանակ ամբողջապես չէին ծառայում ողջ մարդկությանն, ապա նրանց մահից հետո, նրանց իսկ ցանկությամբ, ի սպաս զրվեցին համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը: Ընդ որում, ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաթիվ միլիարդատերեր կամ նպատակահարմար ժառանգ չեն ունեցել կամ նախընտրել են իրենց դիզած հարստության առյուծի բաժինը ծառայեցնել համայն մարդկության շահերին, այլ ոչ թե կտակել իրենց հետնորդներին, որը նաև նրանց հանդեպ տածած անվտանգության ու միլիարդները փոշիացնելու մտավախության արդյունք էր: 20-րդ դարակրթից մինչև արդի ժամանակները զանազան երկրներում ստեղծվել ու շարունակում են հիմնադրվել այնպիսի բարեգործական կազմակերպություններ, ինչպիսիք են «Նորեյքան», «Ռոկֆելլեր», «Կառնեգի», «Ֆորդ» (ԱՄՆ), «Վեկոմ տրաստ» (Մեծ Բրիտանիա), «Կալբաս» (Իսպանիա), «Գալուստ Կյուլպենկյան» (Պորտուգալիա), «Փոլկսֆոլդ» (Գերմանիա), «Կոնրադ Ադենաուեր» (Գերմանիա), «Ադա Ռան» (Շվեյցարիա), «Կարիպո» (Իտալիա), «Վեհլեր Կոչ» (Թուրքիա) հիմնարկությունները և այլն: Անատոլիայի է ևս մեկ իրողություն, բարեգործական հաստատությունների շնորհիվ է նաև, որ աշխարհի բազմաթիվ երկրներում հաջողվել ու հաջողվում է կապես լիցքաթմափել սոցիալական անհավասարության պատճառով առաջացող լարվածությունը:

տնտեսական և նյութական Հիմնական կարողությունը խարսխված է ևղել Իրաքի նավթային ընկերության (Iraq Petroleum Company Ltd.) մեջ նրա ունեցած Հինգ տոկոս չահարածնի, իսկ այժմ՝ իր սեփականությունը Հանդիսացող Partex (Participations and Explorations Oil and Gas Group) նավթի և գազի արդյունահանման ընկերության չահերի ու եկամուտների վրա¹: Բարեգործական նպատակներով ծախսված գումարների առումով դեռևս 1969 թ. «Աղատ օրն» ընդգծում էր, որ. «Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը աշխարհի մէջ չորրորդը կը նկատուի Ֆորտ, Ռոքֆելլըր և Գարնէկի Հիմնարկութիւններէն վերջ, իր տրամադրած տնտեսական միջոցներու տեսակէտով»²: Մեկ այլ համարում նույն թերթը Համեմատական կարգով ներկայացնում էր Հիմնարկության՝ տարրեր նպատակներով կատարած Հատկացումների ծավալները: Ըստ այդմ՝ «Քարնէկի ուսուցման յատկացուց 13 միլիոն տոլար, խաղաղութեան համար 16 միլիոն տոլար: Տիկին Սթենֆըն Հարքնէս առողջապահութեան յատկացուց ութսուն միլիոն տոլար: Ֆորտ Ընկերութեան Հիմնարկութիւնը յատկացուց վեց Հարիւր միլիոն տոլար: Կիւլպէնկեան Հիմնարկութեան գիտութեան և արուեստի յատկացուցած գումարն է 44 միլիոն տոլար»³: Ներկայումս Հիմնար-

¹ Ուշագրավ է, որ Հիմնարկության ղեկավարության որոշմամբ 21-րդ դարասկզբից Partex-ը ներգրոււմներ է կատարում այլընտրանքային՝ բամու ուժի միջոցով էլեկտրակներգիա արտադրող ընկերություններում՝ Lusenerg-Energias Renováveis SGPS, SA, Generg SGPS S.A., ENEOP-Eólicas de Portugal SA, SGAM 4/D Energy Fund: Այդ ընկերություններում Partex-ի չահերը ներկայացնելու նպատակով 2006 թ. Պորտուգալիայում Հիմնվել է նաև Hidrexpand դուստր կազմակերպությունն, իսկ 2007 թ. գնվել Lusenerg-Energias Renováveis (Պորտուգալիա) ընկերության արժեթղթերի տասը տոկոսը: Փաստորեն, նավթի և գազի արդյունաբերությունից ստացվող չահույթներից բացի, Հիմնարկության Տնօրենների ժողովը փնտրում և ուսումնասիրում է ֆինանսական նոր, ավելի հուսալի աղբյուրներ, որոնցով անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել Հաստատության նավթային եկամուտներն՝ ապահովելով նրա Հարատև զոյությունն ու բարեխրական գործունեությունը (ավելի մանրամասն տես՝ <http://www.zulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/11.pdf>, p. 43 [այցիկությունը կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.]):

² «Աղատ օր» օրաթերթ, թիւ 7335, 15 Ապրիլ, 1969:

³ Նույն տեղում, թիւ 7555, 8 Յունուար, 1970, տե՛ս նաև նշված բարեգործական Հաստատությունների գործունեություն տարեկան տեղեկագրերը. օրինակ, The Rockefeller Foundation, annual report, 1949, New York, 1950, The Ford Foundation Annual Report: 1969, New York, 1969 և այլն:

կուլթյան նպաստներից օգտվում է ավելի քան 75 երկիր¹:

Լիսաբոնից ոչ հեռու՝ Օերաշ քաղաքում տեղակայված «Գալուստ Կյուլպենկյան» գիտությունների ինստիտուտը Հզոր խթան դարձավ Պորտուգալիայի գիտական մտքի թռիչքի համար՝ նպաստելով այդ երկրի առողջապահական հաստատությունների արդիականացմանն ու զարգացմանը: Պորտուգալիայում անդրազիտություն վերացմանն էին ուղղված «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության՝ բնակչության լայն դանդախներին գրքեր բաժանելն ու երկրի հեռավոր շրջաններ հատուկ մեքենաներով շարժական գրադարաններ (bibliobus) ուղարկելը²: Այսօր էլ հաստատությունը շարունակում է զգալի աշխատանքներ կատարել Պորտուգալիայի կրթական գործի բարելավման ուղղությամբ: Հիմնարկությունը պորտուգալերեն լեզվով հրատարակում է «Զրույցներ գրականության մասին», «Զրույցներ արվեստի մասին» և «Զրույցներ գիտության մասին» հանդեսները³:

2005 թ. ընթացքում կատարած հատկացումների ծավալով (132 միլիոն եվրո) «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը «Եվրոպական բարեգործական հաստատությունների կենտրոնի» կողմից Եվրոպայում ճանաչվել է չորրորդը 40 այնպիսի խոշորագույն հիմնադրամների շարքում, ինչպիսիք են Wellcome Trust-ը (Մեծ Բրիտանիա, 701 միլիոն եվրո), Fundacion La Caixa-ն (Իսպանիա, 169 միլիոն եվրո), Stichting NOVIB-ը (Նիդերլանդներ, 154.7 միլիոն եվրո) և այլն⁴:

Գ. Կյուլպենկյանը որոշ մասնակի հատկացումներ էր նախատեսել Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գրադարանին, Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ Հայկական հիվանդանոցին և էջմիածնի Մայր տաճարին, սակայն բարերարն իր կտակում էջը նշել Հայկական

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 8, թ. 31, նսև՝ Azeredo de Perdigao J., Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report, 20th July-31st December 1959, Lisbon, 1961, pp. 19-22, **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 50, Գալլաքյան Կ., նշվ. աշխ. «ՊԲՀ», 2006, № 3, էջ 3-6, «Արև», թիւ 11.222, 10 նոյեմբեր, 1955, թիւ 11.609-11.634, 19 Փետրուար-20 Մարտ, 1957, թիւ 12.506, 27 Յունուար, 1960:

² Տե՛ս Azeredo de Perdigao J., նշվ. աշխ., էջ 105-111, **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 58:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 8, թ. 34:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 1-2:


Համայնքների ծառայութան բաժանմունք (այսուհետև՝ Հայկական բաժանմունք) ստեղծելու մասին¹: Այդ գործում ղգալի և վճռական դեր են կատարել Գ. Կյուլպենկյանի անձնական փաստաբան ժողև Ազերեղոզը Պերզիզանը, զատեր ամուսինը՝ Գեորգ Եսայանը, և կտակարարի եղբոր՝ Վահան Կյուլպենկյանի որդին՝ Ռորերտո Կյուլպենկյանը:

Հարկ է նշել, որ Գ. Կյուլպենկյանի մահից հետո Սփյուռքի հասարակական, քաղաքական ուժերն ու մամուլը Հայտնվել էին սպասողական վիճակում և չէին ցանկանում իրադարձություններից առաջ ընկնելով՝ տարատեսակ գնահատականներ տալ Գ. Կյուլպենկյանի կտակին և նրա գործադիր մարմնի անդամներին: Բացառություներ, այնուամենայնիվ, եղան. Հայկական որոշ թերթեր, վաղանց կատարելով իրադարձություններին, գտնում էին, թե Հայ ժողովրդի օգտին կատարվելիք նորաստեղծ հաստատությունն առաջիկա բարեգործական ծրագրերն անարդարացի կերպով լիարժեք չեն: Թեհրանում (Իրան) լույս տեսնող «Ալիբը», մասնավորապես, ավստոսանք էր Հայտնում, որ. «...օտարներու մէջ այնքան մեծ համբաւ ունեցող միլիոնատէր Գալուստ Կիւլպէնկեան կը մեկնի այս աշխարհէն, առանց իր բազմակարօտ ազգին նշանակալից օգտակարութիւն մը ունենալու»²:

1950-ականների վերջերից, սակայն, սփյուռքահայ մամուլի կարծիքը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության և նրա Տնօրենների ժողովի նկատմամբ 180 աստիճանով թեքվեց ղեպի դրական հարթություն: Հիշյալ և հետագա տարիներին մամուլում առավելապես երևում էին շնորհակալություն, երախտագիտություն և հարգանքի խոսքեր: «Ազգակն», օրինակ, 1957-ին գրում էր, թե սկզբնական շրջանում. «...Շատեր հիասթափված էին իր (Գ. Կյուլպենկյանի՝ Վ. Ղ.) մահէն վերջ, կարծելով որ Հայ Կրեստը կտակին մէջ մոռցած էր իր ազգը: Ոմանք ալ փութացած էին անիրաւ գատաստան ընել: Սակայն Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Ապրիլ 27ի ղեկույցը՝ Հրատարակուած «Յառաջ»ի Մայիսի 5ի թիւին մէջ, եկաւ փարատելու ամէն կասկած...Հայկական գործերով դրա-

¹ St'ya Azeredo de Perdigao J., նշվ. աշխ., էջ 191-201:

² «Ալիբ» օրաթերթ, թիւ 36 (5098), Թեհրան, 14 Փետրուար, 1955:



ղելու համար պիտի կազմուի մասնաւոր յանձնախումբ մը, որ թէև պիտի ունենայ խորհրդակցական հանգամանք, սակայն կոչուած է կատարելու կարևոր դեր մը»¹:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան Հայկական րաժանմունքի բյուջէի զգալի մասը ծախսուել և ծախսուում է երեք տասնյակից ավելի երկրների հայկական համայնքների կարիքները հոգալու համար: Ուշադրութեան կենտրոնում են պահուել Սիրիայի, Լիբանանի և Թուրքիայի հայ համայնքները: Հատկացումներ են կատարուել նաև Հունաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Սերբիայի, Ավստրալիայի և Ամերիկա Մայր ցամաքի երկրների համայնքներին²:

Բաժանմունքը կրթաթոշակներ է բաշխել առաջադիմութեամբ աչքի ընկած, սոցիալապես անապահով հայ աշակերտներին և ուսանողներին, մասնակցել հայկական դպրոցների և ուսումնական այլ հաստատութունների կառուցման, վերանորոգման, կահավորման աշխատանքներին, խրախուսել հայկական գրքերի տպագրութեունն ու նպաստել հայագիտութեան դարգացմանը՝ եվրոպական և աշխարհի տարրեր երկրների համալսարաններում Հիմնադրելով հայագիտական ամբիոններ: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան միջոցներով են հրատարակուել «Պատմա-բանասիրական հանդեսը», «Բաղմալէպը», «Հանդէս Ամսօրեայ»-ն, «Revue des Etudes Arméniennes»-ը և այլ գիտական հանդեսներ ու ամսագրեր:

Կրթութեան, գիտութեան և առողջապահութեան դարգացման նպատակով Խորհրդային Հայաստանին, այնուհետև Հայաստանի Հանրապետութեանը րաժանմունքի կողմից տրամադրուել է տարեկան մոտ 500 հազ. ԱՄՆ դոլարի նպաստ: 1989 թվականից ի վեր Հայաստանը «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեանից Հիմնականում ստացել է բժշկական որակյալ սարքավորումներ և ղեղորայք³: Զգալի նյութական միջոցներ են տրուել Մեսրոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանին (այսուհետև՝ Մատենադարան), Երևանի պետական համալսարանին, Հայաստանի Գիտութեանի ակադեմիայի ինստիտուտ-

¹ «Ազգակ», թիւ 72 (7572), 23 Մայիս, 1957:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 8, թ. 32, Զամբրթեն Ա., Մարզը և իր գործը, էջ 60:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 8, թ. 31-32:

ներին և հիմնարար գրադարանին: 1988-1989 թթ. Հայկական բաժանմունքի բյուջեից գատ, «Գալուստ Կյուլենկյան» հիմնարկությունը շուրջ 1 մլն. դոլարի օգնություն հատկացրեց Հայաստանի՝ երկրաշարժից տուժած չրջաններին¹:

Ներկայումս բաժանմունքն ունի ութ աշխատակից, որոնք պատասխանատու են Հայկական ծրագրերի համար²: Այդտեղ է աշխատում Պողոս Նուրարի ծոռնուհին՝ Աստղիկ Չամբերթենը³: Հայկական բաժանմունքի առաջին վարիչ-տնօրենը Գևորգ Եսայանն էր, որին հաջորդել է Ռոբերտո Կյուլենկյանը: Վերջինիս փոխարինել է Միրայել Եսայանը⁴: Հիմնարկությունում աշխատել են նաև Կորյուն Քելչյանն⁵ ու սփյուռքահայ նշանավոր արձակագիր Վահրամ Մավյանը (1963-1983 թթ.)⁶: Բաժանմունքի աշխատանքները 1985 թվականից ի վեր ղեկավարում է Ջավեն Եկավյանը⁷:

Հարկ է նշել, որ «Գալուստ Կյուլենկյան» հիմնարկության ինչպես համաշխարհային մասշտաբով, այնպես էլ հայրենի համար իրականացրած բազմաթիվ ծրագրերն առ այսօր չեն արժանացել խոր ու համակողմանի ուսումնասիրության: Հարցի լուսա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 8, թ. 31-32:

² Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

³ Աստղիկն ու իր բույրը, Արա Չամբերթենի և Պատլա-Նվարդ Նուրարի դուստրերն են: Պատլա-Նվարդը Պողոս Նուրարի որդու՝ Վահրամի (1886-1957 թթ.), և Ռոզիտա Մորիի դստիկն է: Աստղիկ և Ինգրիդ Չամբերթենները Օսմանյան կայսրության խորհրդարանի սենատի (1876-1878 թթ.) անդամ Արրահամ փաշա Երամյանի ղեկավարման տեղում արձակցական կապեր ունեն նաև Կյուլենկյանների և Եսայանների հետ (տե՛ս Պողոսեան Ս., նշվ. աշխ., էջ 20. Արրահամ փաշա Երամյանի մասին տե՛ս «1900, Ընդարձակ օրացույց Ազդային հիվանդանոցի», տոմար, դանդաղան գիտելիքներ, փհհակադրական տեղեկություններ, Կ. Պոլիս, 1900, էջ 302):

⁴ Տե՛ս Գալլաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 14, <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201>, <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=568> [այցելությունները կայք էջեր կատարվել են 20.07.2008 թ.]:

⁵ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

⁶ Տե՛ս «Արև», թիվ 19.178, 23 Յունիս, 1982, թիվ 19.361, 8 Փետրուար, 1983:

⁷ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=571>, <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201> [այցելությունները կայք էջեր կատարվել են 20.07.2008 թ.], Գալլաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 14: Հատուկաբար նշանակալից է հայ աշխատակիցների մասին տե՛ս հավելվածում՝ Կենսագրական համառոտ ակնարկ «Գալուստ Կյուլենկյան» հիմնարկության և Հայկական բաժանմունքի Հայազգի ղեկավարները:

րանճանն անմիջականորեն նվիրված գրքերը փոքրաթիվ են, իսկ աշխատությունների մեծ մասն, իր Հերթին, Հիմնականում նվիրված է Գ. Կյուլպենկյան մարդուն: Համանուն Հիմնարկությունն ու նրա գործունեությունն անդրադարձող գործերն ավելի քիչ են:

Գ. Կյուլպենկյանին որպես տնտեսական գործիչ, անգերազանցելի մտավոր ունակությունների ու նյութական հարուստ կարողությունների տեր մարդու և աշխարհահռչակ անհատականության ներկայացրել է Ռալֆ Հյուինսն իր «Պարոն Հինգ տոկոսը» գրքում¹: Հիշյալ աշխատությունն ընթերցողներին է ներկայացնում Գ. Կյուլպենկյանի կենսագրությունը, մեկնաբանում նրա խաղացած առաջնային դերը նավթային գործի աշխարհում, ընդգծում, որ Գ. Կյուլպենկյան անհատը հանդիսացել է նավթային բաղձաթիվ կազմակերպությունների Հիմնադիր և նրանց միջև տնտեսական հավասարակշռություն հաստատող փայլուն բանազնաց ու այդ հավասարակշռության պահպանման նրա աշխատը: Թեպետ Ռ. Հյուինսի աշխատության մեջ օգտագործված է փաստական հարուստ նյութ և զիրքը բավականին արժեքավոր է որպես Գ. Կյուլպենկյանի գործունեությունը համակողմանիորեն լուսարանելու առաջին լուրջ փորձ, սակայն որոշ հարցերի առումով հեղինակը հեռացել է իրականությունից: Մասնավորապես, «Պարոն Հինգ տոկոսը» գրքի վերջին բաժնում տեղ են գտել «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հիմնադրմանն ու գործունեությանը վերաբերող տեղեկություններ ու մեկնաբանություններ, որտեղ Ռ. Հյուինսը հանդես է բերել կողմնակալ մոտեցումներ: Պետք է նշել, որ նա իր աշխատությունը գրելիս օգտվել է բացառապես Գ. Կյուլպենկյանի որդու՝ Նուրար Կյուլպենկյանի տրամադրած նյութերից: Արդյունքում, Գ. Կյուլպենկյանի կտակի մեկնաբանումների, համանուն բարեգործական հաստատության տեղակայման վայրի և գործունեության աշխարհագրական սահմանների վերաբերյալ վերջինիս որդեգրած դիրքորոշումները լրջորեն ազդել են հեղինակի կարծիքների վրա²:

¹ St'evins R., նշվ. աշխ.:

² Հոր մահից և նրա կտակով բարեգործական հաստատության Հիմնադրումից հետո՝ 1956-ից մինչև 1960-ական թվականների վերջերը, ավելի քան մեկ տասնամյակ, Ն. Կյուլպենկյանն զբաղված էր իր Հոր կտակի մեկնաբանությունները վիճարկելու և խնդիրը հօգուտ իրեն դատական կարգով լուծելու գործընթացներով: Հենց

Գ. Կյուլպենեկյանին նվիրված «Մեկնություն Գ. Կյուլպենեկյանի» խորագրով գիրք է Հեղինակել Ջոն Լոդվիկը, որտեղ խոսվում է Հայ մեծահարուստի կյանքի և տնտեսական գործունեությունից մասին²: Աշխատությունից համար անհրաժեշտ նյութերը հետադոտողին տրամադրել է նավթային գործչի անձնական քարտուղար Գեյվիդ Յանգը: Խնդրո առարկա գրքում մեկնարանվում են Գ. Կյուլպենեկյանի կյանքի և գործունեության առանձին գրվագներ՝ Գ. Յանգի Հետ նրա ունեցած հարարերությունների լույսի ներքո: Իր արժանիքներով հանդերձ՝ պետք է նշել, որ Ջ. Լոդվիկի աշխատություն մեջ՝ անդրողովին չի ներկայացված Գ. Կյուլպենեկյան տնտեսական գործիչն ու բարերարը:

Թեման ուսումնասիրելու համար պակաս կարևոր նշանակություն չունի Ն. Կյուլպենեկյանի ինքնակենսագրությունը, որը ներկայացնում է Գ. Կյուլպենեկյան նավթարդյունարերողի տնտեսական գործունեությունն, անդրադառնում Պորտուգալիայում տեղակայված միջազգային բարեգործական հաստատություն հիմնելու նրա ցանկությունն ու գրդապատճառներին³: Նշված Հեղինակի գործում, սակայն, Գ. Կյուլպենեկյան մարդու և գործչի, ինչպես նաև նրա

այդ տարիներին էլ՝ 1958 թ., լույս տեսավ Ռ. Հյուինսի «Պարոն Հինգ տոկոսը» աշխատությունը, որի առաջարանում Հեղինակը նախ շեշտում է, թե գիրքը գրելու համար անհրաժեշտ բոլոր տվյալներն ինքն ստացել է Ն. Կյուլպենեկյանից, որը տասնութ ամիս աշխատել է իր Հետ և իր տրամադրության տակ գրել 15 Հազ. բառերից բաղկացած նոթեր, ապա խորին շնորհակալություն է Հայտնում Նուբարին առ այն, որ առանց այդ տվյալների անհնար կլիներ իրականացնել Հիշյալ գրքի տպագրությունը: Ավելին, Ն. Կյուլպենեկյանը Ռ. Հյուինսի տրամադրության տակ էր գրել նաև իր Հոր անտիպ Հուշերը: Ինչու՞ էր Գ. Կյուլպենեկյանի որդին օգնում Ռ. Հյուինսին: Հարցի պատասխանն, բայց մեզ, Հետևյալն է՝ Հանրությունը, շահագրգիռ անձանց և կառավարություններին (այս դեպքում Մեծ Բրիտանիայի, որի քաղաքացին էր Ն. Կյուլպենեկյանը) փորձել ասպացուցել, որ Գ. Կյուլպենեկյանի կտակն ազատվել է նրա կտակակատարների կողմից և թևակտ իրեն բաժին չի Հասել Հոր գրեթե ողջ կարողությունը, կնքը, սակայն, պետք է լիներ Հիմնադրված բարեգործական Հաստատության ազդեցիկ ղեկավարից մեկը, եթե ոչ առաջինը (ավելի մանրամասն տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ vii, 40, 179, 252, նաև՝ «Ազդակ», Գուրգեն Եանիկեան, Գալուստ Կյուլպենեկյանի որդին իր Հօր մասին, թիւ 112 (7917), 20 Յուլիս, 1958):

² Տե՛ս Lodwick J., նշվ. աշխ.:

³ Տե՛ս Gulbenkian N., նշվ. աշխ., նաև նույն Հեղինակի՝ *Nous les Gulbenkian*, London, 1965.

կտակի, նրա կողմից հիմնադրված հիմնարկության գործունեության վերաբերյալ տեղ են գտել որոշ փաստերի և իրադարձությունների սխալ վերլուծություններ ու զրանց վրա հիմնված սուրյնկեղծիվ կարծիքներ¹:

«Գալուստ Կյուլենկյան» հիմնարկության գործունեություն ուսումնասիրելու համար աղբյուրազխտական մեծ արժեք ունեն խնդրո առարկա Հաստատություն և նրա առաջին նախագահ Ժ. Ազերեդո զր Պերդիգանի հրատարակած զեկույցներն ու ընդարձակ տեղեկագրերն, ինչպես նաև հիմնարկության համացանցային կայք էջերը²: Պերդիգանի՝ անգլերեն լեզվով առաջին զեկույցը հրատարակվել է 1961 թ. և ընդգրկում է Գ. Կյուլենկյանի կտակի թարգմանությունը, Պորտուգալիայի կառավարություն՝ հիմնարկությանն իրավաբանական անձի կարգավիճակ շնորհող հրամանագրի տեքստն ու հաստատություն կանոնադրությունը³: Զեկույցում տեղ են գտել նաև նյութեր, որոնք վերաբերում են 1955-1959 թթ. ընթացքում այս կառույցի կատարած բարեգործություններին, ունեցած եկամուտներին և ֆինանսական տարրեր հարցերի: Մեծարժեք է նաև Պերդիգանի՝ 1962 թ. անգլերենով լույս տեսած 2-րդ զեկույցը, որում լուսարանված և մեկնարանված են հիմնարկու-

¹ Ն. Կյուլենկյանն իր ինքնակենսագրության մեջ փորձել է ապացույցել, որ ա) խախտվել են Գ. Կյուլենկյանի կտակի պահանջները, որի հետևանքով ինքն ու Մեծ Բրիտանիայի մեկ այլ քաղաքացի՝ յորդ Ռեդկլիֆ Վերմոնդս անօրինական ձևով հեռացվել են կտակակատարների և «Գալուստ Կյուլենկյան» հիմնարկության հիմնադրման աշխատանքների պատասխանատուների պաշտոններից, բ) Գ. Կյուլենկյանի անձնական փառատարան, հետագայում նրա կտակակատար, ազգությունը պորտուգալացի Ժ. Ազերեդո զր Պերդիգանը Պորտուգալիայի՝ կառավարության հովանավորությամբ զերազանցել է իրեն վերապահված լիազորությունները և կտակարարի կարողության առջին լավի ժառանգորդ բարեգործական կառույցը ծառայելու զլիսավորապես Պորտուգալիայի շահերին (սպիկի մանրամասն տե՛ս Gulbenkian N., Portrait in oil, pp. 240-259):

² Տե՛ս Azeredo de Perdigao J., նշվ. աշխ., նույն հեղինակի՝ Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, Lisbon, 1963, Calouste Gulbenkian, Collector; Lisbon, 1969, Calouste Gulbenkian Foundation, Calouste Gulbenkian Museum, Lisbon, 1977, տե՛ս նաև Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, 1963-1965, prepared by the finance department, Lisbon, 1963, 1966, <http://www.gulbenkian.pt>, <http://www.gulbenkin-paris.org>, <http://www.gulbenkian.uk.org> (այցելությունները կայք էջեր կատարվել են 20. 07.2008 թ.):

³ Տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959.

Թյան կատարած բարեգործությունները, ֆինանսական կարգավիճակը, հայկական բաժանմունք ստեղծելու անհրաժեշտությունը և այլն¹: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հայկական բաժանմունքի՝ 1956–1976 թթ. ընթացքում իրականացրած ծրագրերին է նվիրված Հաստատության Տնօրենների ժողովի կողմից հրատարակված «Հայկական բաժանմունք. գործունեության 20 տարիները/ 1956–1976 թթ.» տեղեկագիրը, որտեղ ամփոփ և ընդհանուր գծերով ներկայացված են Հօգուտ Հայության Հիմնարկության կատարած հատկացումները կրթության, գիտության և առողջապահության ոլորտներում²: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության 30-ամյա բարեսիրական գործունեության մասին ավելի ստվարաձայն տեղեկագիր Հաստատության ղեկավարությունը հրատարակել է 1983 թ.: Այստեղ ներկայացված ու նկարագրված են նաև Հիմնարկության հայանպաստ ձեռնարկումները³: Հայկական բազմաթիվ կազմակերպությունների օգտին կատարված հատկացումների մասին արժեքավոր տեղեկություններ կան նաև «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության տարեկան ֆինանսական հաշվեկշիռն ստուգող հանձնաժողովների հրապարակած ղեկույցներում⁴:

ՀնՍՀ-ի, այնուհետև ՀՀ-ի բազմաթիվ գիտական, կրթական, մշակութային և առողջապահական կազմակերպություններին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության հատկացրած միջոցների, զրանց ծավալների և այստեղ Հաստատության իրականացրած բազմաթիվ ծրագրերի մասին տեղեկություններ են պարունակում Հայաստանի աղգային արխիվում պահվող նյութերը⁵: Հարցի

¹ *Sl'u Azeredo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962.*

² *Sl'u Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, Twenty years of activity 1956-1976, Lisbon, 1977.*

³ *Sl'u Fundação Calouste Gulbēnkian, 1956-1981, 25 Anos de Gestão Financeira, Lisboa, 1983.*

⁴ *Sl'u Calouste Gulbenkian Foundation, Report of the accountancy checking commission, relating to the years 1961, 1962, 1964, 1965, 1967, 1968, 1969, 1971, 1976, 1978, Lisbon, 1962, 1963, 1965, 1966, 1968, 1969, 1970, 1972, 1977, 1979.*

⁵ *Sl'u ՀԱԱ, ֆ. 113, ց. 168. դ. 207, Ֆ. 875, ց. 1, դ. 30, ց. 2, պգ. 251, 532, 533, 534, 669, ց. 4, պգ. 287, 864, ց. 5, պգ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 303, ց. 6, պգ. 564, 565, 585, 586, 594, ց. 8, պգ. 12, 216, ց. 9, պգ. 34, 117, 140, ց. 14, դ. 17:*

կապակցութեամբ սկզբնադրուրային մեծ նշանակութիւն ունեն հիմնարկութեան աշխատակիցների կազմած ղեկույցները, նպաստառու Հաստատութիւնների ցանկերն ու դրանց օգտին կատարւած Հատկացումների չափերը, կառավարութեան՝ ստացվող օգնութիւններին, դրանց Հասցեատերերին և բաշխման մեթոդներին վերաբերող արձանագրութիւններն ու Հրամանները: Մեր կողմից նախապատրաստվել և որպէս առանձին փաստաթղթեր «Բանրեր Հայաստանի արխիւների» զիտահանրամատչելի Հանդեսի 2005-2006 թթ. Համարներում Հրատարակվել են «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան՝ 1960-1970-ական թվականներին Հայկական կազմակերպութիւնների օգտին կատարած Հատկացումների ցուցակները¹: Հիմնարկութեան բարեսիրական գործունեութեանն առնչվող Հաշվետվութիւններից և ղեկուցումներից դատ, նշված արխիւում պահպանվել են Ռ. Կյուլպենկյանի, Կ. Քելչեյանի, Վ. Մավյանի՝ Սփյուռքահայութեան Հետ մշակութային կապի կոմիտեին Հասցեագրած նամակները: Դրանցում հիմնականում շոշափված են «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան գործունեութեան զանազան ոլորտներին վերաբերող, սփյուռքահայութեանը հուղող, Հայկական մշակույթը եվրոպական երկրներում ներկայացնելու նպատակով կազմակերպվելիք միջոցառումների, պորտուգալացի և Հայաստանի զիտնականների, մշակույթի գործիչների փոխայցելութիւնների, Հայագիտական թեմաներով զիտաժողովներ, խորհրդաժողովներ կազմակերպելու, Հայաստան առաքվող օտարերկրյա արտադրութեան թանկարժեք սարքավորումների և դրանց գործարկման Հետ կապված Հարցեր ու խնդիրներ²:

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան բարեգործական ծրագրերի, Հայութեանն այս կազմակերպութեան կողմից 1956-2006 թթ. բնթացքում ցուցաբերված օգնութեան, նպաստների, դրանց ծավալների, միջազգային հիմնադրամների Հետ Համագոր-

¹ Տե՛ս Ղարախանյան Վ., Գալուստ Կյուլպենկյան հիմնարկութեան բարեգործական գործունեութիւնը 1964-1970 և 1974-1976 թթ., «Բանրեր Հայաստանի արխիւների» (այսուհետև՝ «ԲՀԱ»), 2005, № 1, էջ 108-119, 2006, № 2, էջ 67-71:

² Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 875, ց. 1, գ. 30, ց. 2, գգ. 251, 532, 533, 534, 669, ց. 4, գգ. 287, 864, ց. 5, գգ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 303, ց. 6, գգ. 564, 565, 585, 586, 594, ց. 8, գգ. 12, 216, ց. 9, գգ. 34, 117, 140, ց. 14, գ. 17:

ծակցութեան, Հիմնարկութեան խնդիրների ու նպատակների վերաբերյալ օտարալեզու (անգլերեն և ֆրանսերեն) արխիվային փաստաթղթեր են մեղ տրամադրել Ջ. Եկալյանն ու Ա. Չամբերթները: Ուղարկված նյութերից կատարել ենք թարգմանություններ և առանձին փաստաթղթերի տեսքով «Բաները Հայաստանի արխիվների»՝ 2006 թ. երկրորդ Համարում լույս ընծայել Հայկական բաժանմունքի՝ 1995-1998 թթ. գործունեությունը նվիրված տեղեկագրեր¹: Խնդրո առարկա Հաստատությունը պատկանող նավթի և գազի արդյունահանման՝ ղեռես 1938 թ. Պանամայում Գ. Կյուլպենկյանի կողմից Հիմնադրված Partex ընկերություն տնտեսական գործունեությունը յուսարանող նյութեր, ֆինանսական Հաշվետվություններ, Հայ նավթարդյունարերողին նվիրված պատմական ակնարկներ և նմանատիպ այլ փաստաթղթեր ենք Հայտնաբերել, ուսումնասիրել Համացանցում տեղ գտած տարրեր կայք էջերից ու էլեկտրոնային արխիվներից²: Նշված բոլոր նյութերը Հանձնել ենք Հայաստանի Ազգային արխիվ, որոնք Համարակալվել և ներկայումս պահվում են «Արտասահմանից ստացված վավերագրական նյութերի Հավաքածուի» մեջ³:

Գ. Կյուլպենկյան բարերարի և Համանուն Հիմնարկության գործունեության վերաբերյալ Հայ իրականության մեջ Հետաքրքրություն որոշակի աճ նկատվեց 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին: Աշխարհահռչակ նավթարդյունարերողի և նրա անունը կրող Հիմնարկության գործունեության ընդհանուր Հարցերի քննարկման առումով Հիշյալ ժամանակահատվածում Հրատարակված աշխատություններից ուշադրության, արժանի են Կարլեն Դալլաբյանի, Աստղիկ Չամբերթների, էդուարդ Մելքոնյանի և Լիա Բալազյանի գործերը:

Գ. Կյուլպենկյանի՝ ՀԲԸ Միություն նախագահի պաշտոնավարության շրջանին և այդ պաշտոնից նրա Հրատարականի Հարցին է

¹ Տե՛ս Ղարախանյան Վ., Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության Հայկական Համայնքների ծառայության բաժանմունքի գործունեությունը 1995-1998 թթ., «ԲՀԱ», 2005, № 2, էջ 162-170:

² Տե՛ս Partex ընկերության պաշտոնական կայք էջերը՝ <http://www.petroprimo.pt>, <http://www.petroprimo.pt/brochurafinal.pdf>, նաև՝ <http://bookz.ru/authors/urijukov/stalin-705/page-10-stalin-705.html>, <http://www.zarplata.ru/a-id-14230.html> [այցելությունները կայք էջեր կատարվել են 05.08.2007 թ.]:

³ Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 420, ց. 86, գ. 1- 8:

անդրադարձել Կ. Դալլաքյանն իր «ՀԲԸ Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի Հրաժարականի Հարցի շուրջ»¹ աշխատությունն մեջ: Այստեղ քաղաքական անցուղարձակի դիտանկյունից ներկայացված են ՀԲԸ Միության նախագահի պաշտոնից Գ. Կյուլպենկյանի Հրաժարականի պատճառները և զրանցում միջազգային կենտրոնների խաղացած դերը: Հիշյալ աշխատությունն մեջ Հանդիպում ենք նաև «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը նվիրված Հատվածներին, որոնք, սակայն, Հեղինակի քննարկած նյութի հետ անմիջական կապ չունենալու պատճառով ընդարձակ չեն և ամբողջական պատկերացում չեն տալիս Հաստատությունից գործունեություն մասին²: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունից Հիմնադրման 50-ամյա Հոբելյանի առթիվ 2006 թ. Կ. Դալլաքյանի Հեղինակությունը Հոգված տպագրվեց «Պատմա-բանասիրական Հանդեսում»³: Այստեղ Հեղինակն ընդհանուր գծերով ընթերցողներին է ներկայացնում Հիմնարկությունից գործունեությունը, Հայությունը տարբեր տարիների ընթացքում տրամադրված միջոցների ծավալները, Միյուռքի և Հայաստանի գիտակրթական, առողջապահական Հաստատությունների օգտին կատարված նպաստներն ու Հատկացումները: Հոգվածն ուշադրավ է, մանավանդ, այն առումով, որ նրանում առաջին անգամ ի ցույց Հանվեց մի Հետաքրքիր իրողություն, այն է՝ նախկին մագնատը վերջին շնչում իր կտակակատար Ժ. Աղևբեղո զը Պերդիգանին բանավոր կերպով Հանձնարարել է «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության կազմում ունենալ նաև Հայկական բաժանմունք, որը պետք է զրադվեր Հայությունն օգնելու Հարցերով:

1999 թ. լույս է տեսել Գ. Կյուլպենկյանին, նույնանուն Հիմնարկությունն ու նրա Հայկական բաժանմունքին նվիրված Ա. Ջամբիրթենի «Մարզը և իր գործը»⁴ փոքրածավալ աշխատությունը, որը ֆրանսերենից թարգմանվել ու հրատարակվել է նաև Հայերեն, արարերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով: Նշված աշխատու-

¹ Տե՛ս Դալլաքյան Կ., ՀԲԸ Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի Հրաժարականի Հարցի շուրջ (այսուհետև՝ ՀԲԸ Միության նախագահ...), Ե., 1996:

² Տե՛ս Դալլաքյան Կ., ՀԲԸ Միության նախագահ... էջ 18:

³ Տե՛ս Դալլաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 3-22:

⁴ Տե՛ս Ջամբերթեն Ա., Մարզը և իր գործը:

Թյան մեջ Հեղինակը Համառոտակի պատմում է Գ. Կյուլպենկյանի՝ նավթարդյունարևության մեջ հարթած ճանապարհի, թուրքական և իրանական կառավարությունների տնտեսական խորհրդական լինելու, անդլիական, ֆրանսիական կառավարող շրջաններում ունեցած ազդու քաղաքական դիրքերի, ՀԲԸ Միություննախագահության և «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության կատարած բարեգործությունների մասին¹: Արժևքավոր է նաև Ա. Ջամբերթենի Հեղինակությունը 2007 թ. հայերենով լույս տեսած «Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ» գիրքը²: Այստեղ ներկայացված են Կյուլպենկյան գերդաստանի ներկայացուցիչների Երուսաղեմում իրականացրած բարեսիրական ձեռնարկումները: Առանձնահատուկ կերպով ներկայացվել են Գ. Կյուլպենկյանի և նրա ծնողների աջակցությունը Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը, պատրիարքարանի «Գալուստ Կյուլպենկյան» գրադարանի Հիմնադրմանը և տպարանի աշխատանքների վերսկսմանը: Մեղ Հետաքրքրող հարցի առումով առավելապես արժևքավոր են գրքի այն հատվածները, որտեղ լուսարանված են «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության կատարած հատկացումները Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գրադարանին, նրանում պահվող հնագույն ձեռագրերի վերականգնմանն ու տեսաժապավենների պատրաստմանը, Սուրբ Հարություն տաճարի և Հայկական Հոգևոր, կրթական, մշակութային Հաստատությունների Հիմնանորոգման աշխատանքներին և այլն:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեության ամփոփ լուսարանման համար տեղ է հատկացվել «Սփյուռքահայ կազմակերպություններ» գրքում³ և «Հայ սփյուռք» Հանրագիտարանում⁴:

¹ Տե՛ս Ջամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 49-62:

² Տե՛ս Ջամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, Լիվպոն, 2007: Գիրքը լույս է տեսել նաև պորտուգալերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով (տե՛ս <http://www.acam-france.org/bibliographie/auteur.php?cle=tchamkerten-astvig> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]):

³ Տե՛ս «Սփյուռքահայ կազմակերպություններ», գիրքը Հրատարակության են պատրաստել Արամ Սարգսյանը, Անայա Պարոտյանը, լամբագիր՝ Հովհաննես Ալվադյան, Ե., 2002, էջ 16-20:

⁴ Տե՛ս Հայ սփյուռք Հանրագիտարան, էջ 658-660:

2004 թ. յույս տեսավ Լ. Բալագյանի «Գալուստ Գյուլբենկյան» աշխատությունը, որը նվիրված է նավթային մագնատի կյանքին ու տնտեսական գործունեությունը¹: Հեղինակն այս աշխատությունն մեջ Հակիրճ անդրադարձել է նաև Գ. Կյուլպենկյանի՝ բարեզործական կազմակերպություն հիմնելու մտադրությունը, կտակին և հիմնարկությունն ստեղծման, գործունեությունն հարցերին: Չնայած հիշյալ գիրքը յույս է սփռում մեծանուն Հայի կյանքի միայն առանձին դրվագների վրա, բավարար չափով չի ներկայացնում նավթարդյունաբերության «Թալեյրանի»² գործունեությունը, սակայն որպես Գ. Կյուլպենկյան մարդուն, համաշխարհային նավթարդյունաբերության կարկառուն գործչին, Հայ բարերարին հանրությունը ներկայացնելու փորձ արժանի է շնորհակալություն:

Գ. Կյուլպենկյանի մասին առանձին պարբերությունների տեսքով տեղեկություններ են պարունակում նաև Ա. Սարուխանի «Աղեքսանդր Մանթաշևանց, Մեծ վաճառականն և բարեգործը»³, Ա. Վասիլևի «Պարսից ծոցը փոթորկի էպիկենտրոնում»⁴, Դանիել Երզնի «Մրցանակը»⁵, Կ. Դալլաքյանի «Ռամկավար ազատական կուսակցությունն պատմություն»⁶, Է. Մելքոնյանի «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ.»⁷ և «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն»⁸ աշխատությունները: Մեծանուն Հայ բարերարի կտակով ստեղծված հիմնարկության գործունեություն,

¹ Տե՛ս Բալագյան Լ., նշվ. աշխ.:

² Տե՛ս «Ազատ օր», թիվ 7553, 5 Յունուար, 1970:

³ Տե՛ս Ա. Սարուխանի Ա., Աղեքսանդր Մանթաշևանց, Մեծ վաճառականն և բարեգործը, Յիշողություններ իր մահուան 20 ամսակի առթիվ, Վիեննա, 1931, էջ 128-129:

⁴ Տե՛ս Վասիլև Ա., Պարսից ծոցը փոթորկի էպիկենտրոնում, Ե., 1986, էջ 10-11:

⁵ Տե՛ս Yergin Daniel, *The Prize: the epic quest for oil, money, and power*, New York, London, Sydney, Tokyo, Singapore, printed in the U.S.A., Simon & Schuster, 1991, pp. 413-419, 439, 444-445.

⁶ Տե՛ս Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), Ե., 1999, էջ 211-213:

⁷ Տե՛ս Մելքոնյան Է., ՀԲԸ Միությունը..., էջ 9, 46-47, 55, 70-71, 88-117:

⁸ Տե՛ս նույն Հեղինակի՝ ՀԲԸՄ պատմություն, էջ 17-18, 44, 111, 158, 187, 208, 223-232, 234-237, 239-249, 311, 406:

տարրեր Երկրների Հայ Համայնքներին ու Հայաստանի կազմակերպություններին վերջինիս կողմից հատկացված նպաստների վերաբերյալ Հիշատակումներ կան Կ. Դալլաբյանի «Հուշապատում»¹-ում, «Հայ սփյուռքի պատմություն»²-ում, է. Մելքոնյանի՝ վերը հիշված գործերում³, Վ. Քյոսեյանի «Յուշամատենան 160-ամնայ Սուրբ Փրկիչ Հայոց Հիւանդանոցի»⁴ աշխատությունում և այլն:

Թեմայի ուսումնասիրության համար օգտվել ենք նաև սփյուռքահայ մամուլի հրատարակումներից, որոնք այլազան տարիների ընթացքում տեղ են գտել Կահիրեում հրատարակվող «Արևի», «Յուսարերի», Բոստոնի «Պայքարի», Աթենքի «Ազատ օրվա», Բնյուրուի «Ազդակի», «Այզի», Թեհրանի «Ալիքի», Փարիզի «Յառաջի», Լոս Անջելեսի «Ասպարէզի», Կ. Պոլսի «Մարմարայի» և այլ թերթերի էջերում: Մամուլում պարբերաբար հրատարակվել են «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության գործունեությանը նվիրված հոդվածներ, տպագրվել հաստատության և նրա Հայկական բաժանմունքի Հայտարարություններն ու ղեկույցները: Անհրաժեշտ է ընդգծել, որ սփյուռքահայ թերթերը չեն բավարարվել միայն բաժանմունքի կատարած նվիրատվությունների նկարագրությամբ, այլև վերլուծել ու գնահատել են նրա գործունեությունը՝ խնդրին մոտենալով ազգապահպանման և Հայաստանի դորացմանը սատարելու դիրքերից:

Ամփոփելով ասվածը և ամենևին չթերագնահատելով նշված բոլոր աշխատությունները՝ պետք է, սակայն, ընդգծել, որ Գ. Կյուլպենկյանի, համանուն հիմնարկության և նրա Հայկական բաժանմունքի վերաբերյալ հրատարակված նյութերը բավարար չեն ամբողջական պատկերացում կազմելու թե՛ համաշխարհային ճանաչման հասած նավթարդյունաբերության դարձնողներից մեկի, թե՛ նրա կտակով հիմնադրված բարեգործական հաստատության գործունեության մասին: Առ այսօր «Կյուլպենկյան» երևույթը⁵ և

¹ Տե՛ս Դալլաբյան Կ., Հուշապատում, Ե., 1998, էջ 90:

² Տե՛ս նույն Հեղինակի՝ Հայ նվիրուքի պատմություն, Ե., 2004, էջ 219-220:

³ Տե՛ս Մելքոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 431-432, 439-440, 460:

⁴ Տե՛ս Քէօսէտան Վ., նշվ. աշխ., էջ 207-209, 263-265, 271-272, 294-295, 381-383, 489-490:

⁵ Տե՛ս Դալլաբյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 3:

Համանուն հիմնարկությունը չեն գարձել գիտական լուրջ հետազոտությունների ատարակա, որի պատճառով բաղձաթիվ իրադարձություններ, քաղաքական անցուզարձեր արժանացել և արժանանում են սխալ, տրամաբանորեն միմյանց հակասող մեկնարանությունների: Հարցին այս կամ այն չափով առնչվող տեղեկությունները, որոնք պարունակում են հիշատակված գործերն ու սիյուռքահայ մամուլը, կցկտոր են, համառոտ և լիարժեք ձևով չեն արտացոլում ավելի քան կեսդարյա պատմություն ունեցող «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն գործունեությունը: Կարելի է ասել, որ հայ հասարակությունն այսօր պատշաճ կերպով չի ճանաչում Գ. Կյուլպենկյան գործչին և անտեղյակ է նրա կտակով ստեղծված հաստատություն միջազգային բարեսիրական գործունեությունը, որն անչահախնդիր ծառայություններ է մատուցում նաև հայությունը՝ ամբողջակամ ու զորացնելով նրա ազգային կեցություն հիմքերը: Խնդրոտ ատարակա հիմնարկություն՝ բաղձաթիվ երկրների հայ համայնքների տարարնույթ կարիքները հոգալուն միտված, հայապահպանության և ազգային միասնության նշանարանով առաջ տարվող քաղաքականությունը ներկայումս ծածկված է անհայտություն շղարշով: Այդ առումով մեր ուսումնասիրությունն առաջին փորձն է ստեղծելու գիտական և համապարփակ աշխատություն «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության՝ հայ իրականության մեջ ծավալած բարեսիրական գործունեության մասին: Գործունեություն, որը հաստատապես կարելի է որակել հայնպատ՝ հայոց պետականության՝ հայապահպանության և ազգային համերաշխության հարկարաժիններում տարված անդուլ ու բեղմնավոր աշխատանքի պատճառով:

Պետք է նշել, որ թեպետ հիմնարկությունը գործում է մինչև օրս, սակայն ներկա ուսումնասիրությունն ժամանակագրական սահմաններն ընդգրկում են նրա հիմնադրման տարեթից (1956 թ.) մինչև 2006 թվականն ընկած տարիները¹: Պատճառն այն հանգամանքն է, որ հաստատություն գործունեությանը վերաբերող տա-

¹ Աշխատության մեջ որոշ հարցեր լուսարանվել են ժամանակագրական նշված սահմաններից դուրս՝ պայմանավորված զրանց առանձնահատկությամբ ու կարևորությամբ:

րեկան պաշտոնական հաշվետվությունների աշխատանքներն ամ-
բողջութեամբ ավարտվում և արդյունքները հրապարակվում են
միայն հաշվետու տարվան հաջորդող շրջանում: Անշուշտ, չա-
փազանց կարևոր է նաև ծանոթանալ դրանց մասին մամուլում և
դանազան լրատվամիջոցներում հայտնվող կարծիքներին ու գնա-
հատականներին և կատարել համապատասխան եզրահանգումներ:

Թեև մային առնչվող կարևոր, հիմնական նյութերը վերցված են
Հայաստանի ազգային արխիվից, «Գալուստ Կյուլպենկյան» հիմ-
նարկությունից պաշտոնական կայք էջերից և արխիվից, Հայաստա-
նում, Սփյուռքում և արտերկրում տարբեր տարիների ընթացքում
լույս տեսած գրքերից ու թերթերից: Օգտագործված է նաև օտա-
րալեզու՝ անգլերեն, ֆրանսերեն և պորտուգալերեն զրականու-
թյուն: Նյութերի մեծ մասը շրջանառություն մեջ է դրվում առաջին
անգամ:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

«ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼՊԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

1.1. Գալուստ Կյուլպենկյանի կյանքն ու գործունեությունը

Գ. Կյուլպենկյանը ծնվել է 1869 թ. մարտի 23-ին՝ Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, հայ վաճառական Սարգիս Կյուլպենկյանի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Գատըզյուղի Արամյան-Ունճյան դպրոցում, այնուհետև՝ ֆրանսիական Սուրբ Հովսեփ վարժարանում: Ֆրանսերենը կատարելագործելու նպատակով 1884 թ. մեկնել է Մարսել, այնտեղից՝ Լոնդոն, որտեղ ընդունվել է 1887 թ. գերազանց գնահատականներով ավարտել է Թագավորական քոլեջի (King's collage) «Ինժեներական արվեստ և կիրառական գիտություններ» ֆակուլտետը՝ ստանալով ինժեներ չինարարի որակավորում¹: 1892 թ. Լոնդոնում ամուսնացել է հայտնի ձեռնարկատեր Հովհաննես Եսայանի դստեր՝ Նվարդի հետ: Ունեցել է երկու երեխա՝ Նուբար և Ռիտա Կյուլպենկյաններին²:

Դեռ վաղ հասակում՝ 1888 թ., Գ. Կյուլպենկյանն ուղևորվել է Բաբու, ծանոթացել ժամանակի Հռչակավոր նավթարդյունաբերողներ Լյուդվիգ և Ռոբերտ Նորել եղբայրների հետ³: Նա անձնապես ճանաչում էր նաև հայ նավթարդյունաբերող Ա. Մանթաշովին⁴:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=2&artId=12> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.], Hewins R., նշվ. աշխ., էջ 14, **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 6-10, Fundação Calouste Gulbenkian 1956/1981, p. 28.

² Տե՛ս **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 6:

³ Բարվում Գ. Կյուլպենկյանին ղեկավորել է Լյուդվիգ Նորելի որդին (տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 20-23): Գ. Կյուլպենկյանի՝ ղեկավար կատարած ճանապարհորդության մասին ավելի մանրամասն տե՛ս Gulbenkian C. S., *La Transcaucasie et la Peninsule d'Apcheron: souvenirs de voyage, Paris, 1891.*

⁴ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 47-50, «Արև», թիվ 11.146, 12 Օգոստոս, 1955, Մարտիտան Ա., նշվ. աշխ., էջ 128:

Բարձրում Երիտասարդ Գայուստն ուսումնասիրել է «սև ոսկու» արդյունաբերությունը, որն էլ նշանակալից դեր է խաղացել նրա՝ նավթային գործով զբաղվելու որոշման հարցում¹: Հյուսիսային Միջագետքում՝ ներկայիս Իրաքի տարածքներում, Գ. Կյուլպենկյանը հայտնաբերել է շահագործման է հանձնել մի շարք նավթահանքեր: 1897 թ. սկսնակ նավթարդյունաբերողն աշխատանքային զբառնեցակ է բացել Լոնդոնում, իսկ 1902-ին ստացել բրիտանական քաղաքացիություն²:

1920 թ. Գ. Կյուլպենկյանը Լոնդոնից բնակություն է տեղափոխվել Փարիզ, իսկ կյանքի վերջին տարիներն անց է կացրել Պորտո-գալիայում, որտեղ հաստատվել էր 1942 թ.: Մահացել է Լիսաբոնում՝ 1955 թ. Հուլիսի 20-ին՝ ութսունվեց տարեկան հասակում³: Նրա մարմինը հրկիզվել է Շվեյցարիայի Յյուրիխ քաղաքում, որից հետո՝ 1956 թ. Հուլիսի 20-ին, սափորը ամփոփվել է Լոնդոնում իր իսկ կողմից կառուցված Սուրբ Սարգիս Հայկական եկեղեցում⁴:

* * *

1891 թ. Հրատարակվեց Գ. Կյուլպենկյանի «La Transcaucasie et la Péninsule d'Apcheron - Souvenirs de Voyage» (Անդրկովկասը և Ապչերոնյան թերակղզին. ճանապարհորդական հուշեր) գիրքը: Նա հողվածներ էր տպագրել նաև «Revue de Deux Mondes» ֆրանսիական պարբերականում⁵: Հրատարակված աշխատությունն ու հողվածները շարժեցին թուրքական կառավարությունը և ստաբրբությունը: Այդ առիթով Գ. Կյուլպենկյանն իր անտիպ «Հուշերում» գրել է. «...իմ աշխատությունը գրավեց զանձապետ (սուլթան Արդուլ Համիդ 2-րդի՝ Վ. Ղ.) Հակոբ Փաշայի ուշադրությունը, որն իմ հոր վաղնձի և հանքերի նախարար Սևիմ էֆենդիի բարեկամն էր»⁶: Թուրքիայի բարձրաստիճան այդ պաշտոնյաներն

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 20-50, Lodwick J., նշվ. աշխ., էջ 14, «Արև», թիվ 11.146, 12 Օգոստոս, 1955:

² Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 89, Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 10, «Արև», թիվ 11.145, 11 Օգոստոս, 1955, թիվ 11.146, 12 Օգոստոս, 1955:

³ Տե՛ս Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 10, Hewins R., նշվ. աշխ., էջ 254, Gulbenkian N., Portrait in oil, p. 262.

⁴ Տե՛ս Gulbenkian N., Portrait in oil, pp. 261-262, Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 248:

⁵ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 27-29:

⁶ Նույն տեղում, տե՛ս նաև Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 18, Վասիլե Ա., նշվ. աշխ., էջ 10:

էլ անփորձ, սակայն զխտելիքներով լավագույնս ղինված երիտասարդին հանձնարարեցին տեղեկագիր կազմել Օսմանյան կայսրության և Մերձավոր Արևելքի՝ նավթով հարուստ տարածքների մասին, որն էլ հաջողութեամբ իրականացվեց: Տեղեկագրում մանրակրկիտ ձևով վերլուծութեան էր ենթարկված նաև Թուրքիայում Գերմանիայի աճող քաղաքական ազդեցությունը¹: Այդ փաստաթղթի կարևորութեանն էր անդրադառնում «Արևը»՝ հաղորդելով, որ Արդուլ Համիդ 2-րդի իշխանութեան ժամանակ էր, երբ կայսրութեան արքունի գանձապետը՝ Հակոբ փաշան, Գ. Կյուլպենկյանին գործուղեց Միջագետք: Ուսումնասիրություններ կատարելուց հետո նա հիմնավորապես ապացուցեց, որ այնտեղ նավթի հարուստ ու շահարեր հանքեր կային, որից հետո դրանք հայտարարվեցին որպես սուլթանի սեփականություն²: Իր աշխատանքի ղիմաց Գ. Կյուլպենկյանը կառավարությունից չնչին վարձատրություն ստացավ, որն ամենևին չմտահոգեց նրան. ապագա միլիոնատերը գտել էր անսպառ հարստություն և ուժի նոր աղբյուր, ձևոր բերել նավթարդյունաբերություն հմուտ մասնագետի հոչակ, որը շուտով հատելու էր երկրի սահմանները³:

Վերոհիշյալ տեղեկագրին Գ. Կյուլպենկյանի կենսագրությունը նվիրված իր գրքում ղգալի նշանակություն է տվել Ռ. Հյուինսն՝ արձանագրելով, որ. «...Դա պատմական, գործնական հանդիպում էր (Գ. Կյուլպենկյանի հանդիպումը Թուրքիայի հանքերի նախարարի հետ՝ Վ. Ղ.): Դա ներկայիս Իրաքի նավթային հոգոր ընկերություն ծնունդն էր: Դա Անգլո-գերմանական լարված մրցակցություն սկիզբն էր նավթի արդյունահանման իրավունքների և կայսեր՝ (Գերմանիայի՝ Վ. Ղ.) Բեուլին-Բաղդադ երկաթգծի ծրագրի համար, որը պայթեցրեց Համաշխարհային առաջին պատերազմը... Դա Մեծ Տերությունների նավթային մրցակցություն սկիզբն էր, որը գերա-

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 29, «Ազդակ», Մեյքոնեսան Լեոն, Գալուստ Ս. Կիլյակնկան (կեանքն ու գործը), Թիւ 232 (12104), 7 Գեկտմերեր, 1971:

² Նախապես Հյուսիսային Միջագետքի՝ նավթով հարուստ տարածքների կոնցեսիաների տրամադրման իրավունքը պատկանում էր օսմանյան կառավարության ֆինանսների նախարարությունը, սակայն մինչև 1899 թ. նավթարեր հողերն ամբողջությամբ սեփականեց սուլթանը (տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 29-30, 255):

³ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 29-30, «Արև», Թիւ 11.144, 10 Օգոստոս, 1955:

կայելու էր Մերձավոր Արևելքի պատմությունն ինչպես նաև հետագա ողջ ընթացքում՝ ընդհուպ մինչև 1956-1957 թթ. Սուեզի ձգնաժամը»¹:

1898 թ. Գ. Կյուլպենկյանին վստահվում է Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում օսմանյան ղեկավարությունների տնտեսական խորհրդականի պաշտոնը, որը բրիտանական քաղաքացիություն չունեցող և հետ մեկտեղ ապահովում է նրա հզոր քաղաքական ու տնտեսական դիրքերն ինչպես Եվրոպայում, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքում, հատկապես Օսմանյան կայսրությունում²:

20-րդ դարասկզբին նավթի արդյունահանումն սկսում էր ավելի ու ավելի եկամտաբեր դառնալ: Երբ եվրոպական երկրներն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները ղեռն չէին հետաքրքրվում Մերձավոր Արևելքի նավթով, Գ. Կյուլպենկյանն առաջինն էր, որ որպես հեռատես տնտեսական գործիչ և նավթարդյունաբերող, Անգլիայի իշխանություններին կարողացավ ապացուցել Պարսից ծոցի նավթահանքերը լայնամասշտաբ շահագործելու արդյունավետությունը՝ վստահ լինելով, որ արդյունաբերությունն այդ ճյուղը մոտ ապագայում դառնալու է ամենաշահավետներից մեկը, եթե ոչ առաջինը³: Երիտասարդ Հայ նավթարդյունաբերողը մասնակցել է Անգլիական և Հոլանդական նավթային ընկերությունների միավորման (Royal Dutch Petroleum Company and Shell Transport and Trading, կարճ՝ Royal Dutch-Shell) աշխատանքներին (1906 թ.), եղել է ռուսական և ամերիկյան նավթային ընկերությունների միջև բանակցություններ վարող անձ. «...Կիւլպէնկեան,- գրել է «Արևու»,- կ'աշխատէր իբրև միջնորդ և սակարկող»⁴:

1908 թ. Երիտթուրքերի հեղաշրջումը չխոչընդոտեց նավթաշխարհում Գ. Կյուլպենկյանի առաջխաղացմանը: Դրան մեծապես նպաստեցին նաև նրա անգլիահապատակությունը և Եվրոպայում ունեցած ամուր տնտեսական դիրքերը: Ավելին. «...երբ 1909-ին Համիտ զահրնկէց կղաւ, Կիւլպէնկեան աւելի մեծ շահեր ապահովեց քան թէ թրքական կառաւարութիւնը»⁵: 1910 թ. նա նշա-

¹ Hewins R., նշվ. աշխ., էջ 29:

² Տե՛ս Ջամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 20:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

⁴ «Արևու», թիւ 11.144, 10 Օգոստոս, 1955, տե՛ս նաև Hewins R., նշվ. աշխ., էջ 57-58:

⁵ «Արևու», թիւ 11.144, 10 Օգոստոս, 1955:

նակվեց անգլիացիների կողմից Հիմնադրված Թուրքիայի Ազգային ղրամատան՝ Լոնդոնի ներկայացուցչության գործադիր տնօրենի պաշտոնում¹:

Գ. Կյուլպենկյանի՝ բանագնացի ճկուն ընդունակությունների է անդրադարձել Ա. Վասիլևը՝ գրելով, որ նա արտասահմանյան ընկերությունների համար անփոխարինելի գործակալ էր, որովհետև ոչ միայն գիտեր սովթանական պալատների և մինիստրությունների բոլոր ելումուտերը, այլև լավ էր պատկերացնում, թե ում, ինչպես և որքանով կարելի է զնել: Օգտագործելով Գ. Կյուլպենկյանի հնարամտությունն ու կապերն օսմանյան կառավարական շրջաններում՝ անգլիացիները կարողացան հասնել այն բանին, որ Թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց ամերիկացիների հետ կնքած համաձայնագիրը և նավթահանքերով հարուստ հողերի կոնցեսիան հանձնեց իրենց²: Այդ շրջանում Հայ նավթարդյունաբերողը Հիմնականում փորձում էր ղիմակայել գերմանացիների ճնշմանը, որոնք Թուրքական կայսրության նավթահանքերին տիրանալու նպատակով ձգտում էին ձեռք բերել երիտթուրքական կառավարության համաձայնությունը: Ըստ «Արևելի»՝ «...Կիւլպէնկեան կ'աշխատէր որ գերմանական ազդեցութեան փոխարէն անգլիականը զօրանար Թուրքիոյ մէջ»³:

1912 թ. ստեղծվեց Թուրքական նավթային ընկերությունը (Turkish Petroleum Company), որը խարսխված էր Անգլո-Հոլանդական նավթային կոնցեսիոնի (20,000 արժեթուղթ կամ 25%), Թուրքիայի Ազգային ղրամատան (28,000 արժեթուղթ կամ 35%), Գ. Կյուլպենկյանի (12,000 արժեթուղթ կամ 15%) և Գերմանական բանկի (Deutsche Bank and Anatolia Railway) (20,000 արժեթուղթ կամ 25%) բաժնետոմսերի վրա⁴: Նոր ընկերությունը հաջողությամբ ծաղկում էր, սակայն ստիպված էր մրցակցություն մեջ մտնել Անգլո-պարսկական նավթային ընկերության (Anglo-Persian Oil Company, ներկայիս՝ British Petroleum) հետ, որի թիկունքին այդ տարիներին կանգնած էր Մեծ Բրիտանիայի կառավարությունը⁵:

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 73, 255, «Արև», թիւ 11.146, 12 Օգոստոս, 1955:

² Տե՛ս Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 10-11:

³ «Արև», թիւ 11.146, 12 Օգոստոս, 1955:

⁴ Տե՛ս Զամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 20, Hewins R., նշվ. աշխ., էջ 77:

⁵ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 79:

Գ. Կյուլպենկյանն այդ առիթով հիշում էր. «...մտավորապես 1900 թ. D'Arcy Syndicate-ը (Հետագայի Anglo-Persian Oil Company-ին) Պոլիս ուղարկեց պարոն Ն. Ե. Նիկոլսին (Հետագայում նրանց տնօրեններից էր) (ընդգծումը բնագրում է), որը փորձելու էր կոնցեսիաներ ձևոք գցել: Պարոն Նիկոլսը զգալի գումարներ ծախսեց, սակայն ոչինչ չստացավ և վերադարձավ միանգամայն ձեռնու-նայն»¹:

Ունենալով անգլիական կառավարության հովանավորությունն՝ Անգլո-պարսկական նավթային ընկերությունը Թուրքական նավթային ընկերությունից պահանջում էր Թուրքիայի Ազգային դրամատան բաժնեթղթերի մեծ մասը: 1913-1914 թթ. Հիշյալ ընկերությունների ներկայացուցիչների միջև տեղի ունեցան բանակցություններ, որոնց արդյունքում Թուրքական նավթային ընկերությունը վերակազմավորվեց և բաժնետոմսերը վերարաչլվվեցին Անգլո-պարսկական նավթային ընկերության, Անգլո-Հոլանդական կոնցեսիոնի և գերմանացիների միջև: Ստեղծված պայմաններում Գ. Կյուլպենկյանն ստիպված էր գնալ զիջումների, որի շահութաբաժինը 15 տոկոսից իջավ 5-ի²:

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Գ. Կյուլպենկյանը որոշեց աջակցել ֆրանսիացիներին, որոնք ցանկանում էին ձևոք բերել Գերմանական բանկի արժեթղթերը³: Պատերազմում Գերմանիայի պարտության Հետևանքով դրանք հայտնվել էին անգլիական խնամակալության տակ և Ֆրանսիային փոխանցվեցին Մոսուլի վիլայեթի նկատմամբ վերջինիս ունեցած հավակնություններից հրաժարման և իր մանդատային տարածքով՝ Սիրիայով, նավթամուղի կառուցման համաձայնություն կայացման փոխարեն⁴: Առաջին աշխարհամարտի ավարտից Հետո Գ. Կյուլպենկյանի նախաձեռնությամբ Ֆրանսիայում ստեղծվեց նավթահանքերի շահագործման ֆրանսիական ընկերությունը (*Société Française pour*

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 79:

² Տե՛ս Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 20, Hewins R., նշվ. աշխ., էջ 83-84, Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 11:

³ Տե՛ս The Houghton Mifflin Dictionary of Biography; The Most Comprehensive Coverage, from ancient times to the present day; Introduction by Justin Kaplan, Boston-New York, 2003, p. 656.

⁴ Տե՛ս Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 11:

l'Exploitation du Pétrole), որն ստացավ Թուրքական նավթային ընկերություն զերմանական բաժնեմասը (23.75 տոկոս)¹: 1920 թ. ապրիլի 24-ին Սան Ռեմոյի (Իտալիա) կոնֆերանսի ընթացքում (1920 թ. ապրիլի 19-26) կնքված **Նավթային Համաձայնագրով** Թուրքական նավթային ընկերությունը Հերթական անգամ վերակազմավորվեց. Անգլո-պարսկական ընկերությունը բաժին Հասավ 47.5 տոկոսը, Անգլո-Հոլանդականին՝ 22.5, Ֆրանսիային՝ 25, Գ. Կյուլպենկյանին՝ 5²: 1924 թ. ստեղծվեց Ֆրանսիական նավթային ընկերությունը (Compagnie Française des Pétroles), որն էլ տնօրինեց Թուրքական նավթային ընկերության ֆրանսիական փայարածիւնը³:

Օսմանյան կայսրության փլուզումից Հետո խառնաշփոթ իրավիճակում էր Հայտնվել նաև Թուրքական նավթային ընկերությունը, քանի որ Հյուսիսային Միջագետքում նավթաբեր հողերի կոնցեսիաներ տրամադրելու կամ նախկինում տրվածները վավերացնելու իրավունքն արդեն պատկանում էր Թուրքիայից անջատված, նորաստեղծ այլ պետություն՝ Իրաքի իշխանություններին: Նման պայմաններում Անգլիայից զատ, Իրաքում փորձում էր ազդեցիկ դիրքեր գրավել ԱՄՆ-ը: Գ. Կյուլպենկյանը գտնում էր, որ ամերիկացիների Հետ Իրաքում նոր կոնցեսիաներ ձևաք բերելու նպատակով ուժասպառ մրցավազք սկսելու փոխարեն ավելի նպատակահարմար էր նրանց առջև բացել Թուրքական նավթային ընկերության դռները: Այդ քայլով Հայ նավթարդյունաբերողը փորձում էր Հավասարակշռել նաև ընկերության բաժնետերերի ուժերը: Նա Համոզված էր, որ շուտով իր տեսակետը պաշտպանելու են Անգլո-Հոլանդական կոնցեսոնն ու Ֆրանսիական նավթային ընկերությունը, որոնք ևս ձգտում էին թուլացնել Թուրքական նավթային ընկերության արժեթղթերի 47.5 տոկոսը տնօրինող Անգլո-պարսկական ընկերության բացարձակ գերակա դիրքերն իրենց նկատմամբ: Գ. Կյուլպենկյանի կանխատեսումը շուտով իրականացավ. 1922 թ. կողմերի միջև կնքվեց **Ժամանակավոր պայմանագիր**, որով ամերիկացիները՝ դարձան Թուրքական նավ-

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 113:

² Տե՛ս նույն տեղում, էջ 130:

³ Տե՛ս **Չամբերթեան Ա.**, Մարդը և իր դորձը, էջ 21, «Ազդակ», թիւ 239 (12111),

Թային ընկերություն բաժնետերեր¹: Կրկին կատարվեց արժև-
թղթերի վերարաշխում: Այս անգամ Անգլո-պարսկական, Ֆրան-
սիական նավթային ընկերությունները, Անգլո-հոլանդական կոն-
ցեսիոն ու Նյու Ջերսիի «Ստանդարտ» և «Մորիլ» ամերիկյան ընկե-
րությունները միասին («Standard Oil of New Jersey», «Mobile Oil»)
ստացան յուրաքանչյուրը 23.75 տոկոս²: Գ. Կյուլպենկյանը պահ-
պանեց իր 5 տոկոսը³:

1920 թ. Անգլիան Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշմամբ ստա-
ցավ Իրաքի (ներառյալ Մոսուլը) և Պաղեստինի մանդատները: 1921
թ. Հիմնվեց Իրաքի թագավորությունը, որի առաջին տիրակալը
դարձավ Ֆեյսալ I-ը՝ երկրում հիմնադրելով Հաշիմյանների արքա-
յատոհմը: 1925 թ. Թուրքական նավթային ընկերություն գլխավոր
տնօրենի պաշտոնակատար Հ. Ե. Նիկոլսը Սան Ռեմոյի նավթային
Համաձայնագիրը Ֆեյսալ I-ի ու նրա Նախարարների խորհրդի
կողմից ևս վավերացնելու և նոր կոնցեսիաներ ձևով բերելու նպա-
տակով մեկնեց Բաղդադ՝ թագավորի Համար որպես նվեր տանելով
40 Հազ. ֆունտ ստեռլինգ⁴: Այդ գումարը, սակայն, չձառայեց իր
նպատակին, քանի որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն արդեն
ճնշում էր գործադրել միապետի վրա՝ կայացնելու Համապա-
տասխան որոշումներ⁵: Նույն թվականի դեկտեմբերին Աղզերի
լիգան Մոսուլի շրջանը պաշտոնապես ճանաչեց Իրաքի տա-
րածք⁶:

Նշված տարիներին բանակցությունների առաջին գծում էր
նաև Գ. Կյուլպենկյանը՝ Հստակեցնելու Թուրքական նավթային ըն-
կերություն տարածքների նոր սահմանները: 1925 թ. նրան Հաջող-
վեց Հարթել Իրաքի կառավարության և ընկերություն միջև
գոյություն ունեցող տարաձայնություններն ու վեճերը: Անգլո-
պարսկական նավթային ընկերություն, Անգլո-հոլանդական կոն-
ցեսիոն, ֆրանսիացիների, Գ. Կյուլպենկյանի և ամերիկացիների միջև

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 134:

² Տե՛ս նույն տեղում, էջ 133-134, նաև՝ Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 12:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 137:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում:

ղեկուս 1921 թ. սկսված բանակցություններն ավարտվեցին 1928-ի հուլիսի 31-ին Բելգիայի Օստենդ քաղաքում կնքված նոր Համաձայնագրով¹: Թուրքական նավթային ընկերությունը վերափոխվեց Իրաքի նավթային ընկերություն (անվան պաշտոնական փոփոխությունը կատարվեց 1929 թ.² Iraq Petroleum Co. Ltd.²), իսկ նրա բաժնեթղթերը բաժանվեցին չորս ընկերության միջև. դրանք էին Անգլո-պարսկական (Anglo-Persian Oil Co.), Անգլո-հոլանդական (Royal Dutch-Shell Group), Ֆրանսիական (Compagnie Française des Pétroles) և Մերձավոր Արևելքի դարգացման կորպորացիան (ամերիկյան վեց խոշոր նավթային ընկերության միավորում՝ Near East Development Corporation³), որոնք էլ դարձան ապագայի խոշոր նավթարդյունաբերողները՝ ստեղծելով միջազգային նավթային կարտելը (Համաձայնագիրը)⁴: Գ. Կյուլպենկյանին բաժին Հասավ Իրաքի նավթային ընկերության արժևտոմսերի հինգ տոկոսը, որի պատճառով էլ ստացավ իր Հանրաձայնագրի «պարոն հինգ տոկոս» մականունը⁵:

Նավթային ընկերությունների Համաձայնագրի բաղկացուցիչ և կարևոր մաս էր Համարվում «Կարմիր զիծը», որի Հեղինակը Գ. Կյուլպենկյանն էր⁶: Նա քարտեզի վրա կարմիր մատիտով նշել էր այն սահմանը, որից ներս գործելու էին Անգլո-հոլանդական կոնցեցիոնը, Անգլո-պարսկական և Ֆրանսիական նավթային ընկերու-

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 134-141, նաև՝ ԱՄՆ-ի Պետ. քարտուղարության պաշտոնական կայք էջը՝ <http://www.state.gov/r/pa/ho/time/id/88104.htm> [այցելությունը կայք էջ կատարվել է 03.10.2008 թ.], Ջամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 21-22:

² Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 145, 257:

³ Մերձավոր Արևելքի դարգացման կորպորացիան ներառում էր «Ջերսի Ստանդարտ» (Jersey Standard), «Սոկոնի» (SOCONY - Standard Oil Company of New York), «Մովածոցի նավթային կորպորացիա» (Gulf Oil Corp.), «Ատլանտյան վերամշակման» (Atlantic Refining, Հետադայում՝ ARCO - Atlantic Richfield Co.), «Պանամերիկյան նավթային և տրանսպորտային» (Pan - American Petroleum and Transport Company) ընկերությունները (տե՛ս <http://www.state.gov/r/pa/ho/time/id/88104.htm> [այցելությունը կայք էջ կատարվել է 03.10.2008 թ.]):

⁴ Տե՛ս Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 12, «Մարմարա», թիւ 437, 24 Մարտ, 1926:

⁵ Տե՛ս Վասիլև Ա., Պարսից ծոցը փոթորկի էպիկենտրոնում, էջ 11-12:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 17-18:

Թյունները: Տարածքը ներառում էր Իրաքը, Բահրեյնը, Քաթարը, Սաուդյան Արաբիան և այլն¹: «Կարմիր գծից» դուրս՝ Քուվեյթում, նավթ էր արդյունահանելու Մերձավոր Արևելքի զարգացման կորուստը ցանկանում²: Անգլիացիները նավթահորեր ունեին թե՛ Իրանում, թե՛ Իրաքում³: Ըստ կայացած Համաձայնությունից՝ Իրաքի նավթային ընկերություններից ընկերությունները Օսմանյան Թուրքիայի նախկին տարածքներում նոր կոնցեսիաներ էին ձևաք բերելու միասին և նախկին Համաձայնությունները: Նշված Համաձայնագիրը գործնականում 1918 թ.⁴: Գ. Կյուլպենկյանի Հասույթները գոյանում էին «Կարմիր գծից» ներս ընկած և շահագործվող բոլոր նավթահորերից: Նա կարողացավ վարպետորեն Համադրել նավթային ընկերությունների շահերը՝ Հաստատելով տնտեսական ուժերի հավասարակշռություն: «Կարմիր գծի» Հեղինակին սկսեցին կոչել նաև «նավթային դիվանագիտության Թայկյան»⁵: Ձևաք բերված Համաձայնությունից Հետո Գ. Կյուլպենկյանն իր շահութաբաժնին միավորեց նաև կանադական նավթային ընկերություններից մեկի շահութաբաժնի, որն սկսեց վերահսկվել «պարոն Հինգ տոկոսի»՝ Լոնդոնի գրասենյակից⁶: Ավելի ուշ՝ 1938 թ. Հունիսին, Գ. Կյուլպենկյանը Պանամայում Հիմնեց նոր նավթային ընկերություն, որը կոչվում էր Participations and Explorations Corporation (ներկայիս Partex-ը)⁷:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկացիներն Արաբա-ամերիկյան նավթային ընկերություն (Arabian American Oil Company, կարճ՝ Aramco) միջոցով սկսեցին արագորեն ներթափանցել արաբական աշխարհի նավթահանքեր: Այդ տարիներին անգլիացիները Պարսից ծոցի ավազանից արդյունահանում էին նավթի շուրջ 80 տոկոսն, իսկ ամերիկացիները՝ 14⁸, որն

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 141:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 18:

⁴ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 141, **Զամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 24-25, **Վասիլև Ա.**, նշվ. աշխ., էջ 21:

⁵ Տե՛ս «Աղատ օր», թիւ 7553, 5 Յունուար, 1970:

⁶ Տե՛ս **Զամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 24:

⁷ Տե՛ս նույն տեղում, նաև՝ ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 4:

⁸ Տե՛ս Վասիլև Ա., նշվ. աշխ., էջ 16:

էլ առիթ տվեց վերջիններիս խախտելու 1928 թ. ձեռք բերված համաձայնությունը: Սկսված բանակցությունների արդյունքում 1948 թ. ամերիկացիների, անգլիացիների, ֆրանսիացիների և Գ. Կյուլպենկյանի միջև կնքվեց նոր համաձայնություն: Կնքված պայմանագիրը հետագայում հայտնի դարձավ «Փաստաթղթերի վերջնամշակում 54» անունով, քանզի որոշ հարցերի շուրջ կողմերի միջև վերջնական համաձայնությունը կայացավ միայն 1954 թ.¹: Վերացվեց «Կարմիր գիծը» և ամերիկացիներին հաջողվեց ընդարձակել իրենց ազդեցությունը գոտիները նոր հայտնաբերված նավթահանքերի հաշվին²: Ռ. Հյուինսը նշում էր, որ. «...այժմ “/54”-ը (Փաստաթղթերի վերջնամշակում 54՝ Վ. Ղ.) վերահսկում է Իրաքի նավթային արդյունաբերությունը և հուսալիորեն պաշտպանում Կյուլպենկյանի 5 տոկոս շահութաբաժինն, ինչպես մի անգամ դա արել էր Հոչակավոր Կարմիր գիծը»³: Պատկերն ավելի գունեղ է ներկայացրել Դ. Երգինը՝ գրելով, որ պայմանագրից հետո «Պարոն Հինգ տոկոսն այլևս չկար. նա այժմ ավելի ազդեցիկ էր»⁴:

Ջարմանալ ու հիանալ կարելի է Գ. Կյուլպենկյան անհատի անսահման եռանդի և մտավոր անգերազանցելի կարողությունների վրա, որը կարողացել է ոչ միայն նոր նավթային ընկերություններ հիմնել, այլև զրանք հզորացնել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մոլորակը ցնցվում էր համաշխարհային պատերազմներից և տնտեսական ճգնաժամերից: Պատահական չէր, որ Հայաստանի առաջին հանրապետությունն ավարչապետ,

¹ Sև's Hewins R., նշվ. աշխ., էջ 227, Dictionary of Biography, p. 656. Ուշագրավ և Հիշատակության արժանի է նշված պայմանագրի վերաբերյալ Անգլո-իրանական (նախկին Անգլո-սարսկական) նավթային ընկերության նախագահի արտահայտած տեսակետը, ըստ որի՝ «Այժմ մենք (բանակցող կողմերը՝ Վ. Ղ.) հաջողել ենք այն բանում, որ պայմանագիրը լիովին անհասկանալի ենք դարձրել ցանկացած մարդու համար»: Հարցի առումով ամերիկացի հետազոտող Դանիել Երվինն իր «Մրցանակը» ստվարաձավալ աշխատությունում մեջրներում է Գ. Կյուլպենկյանի իրավարաններից մեկի կարծիքը, որի համաձայն՝ պայմանագրի բարդությունը նաև առավելություն էր, քանի որ այն չհասկանալու պատճառով ոչ մեկը երբևէ ի վիճակի չէր լինի դատարանում վիճարկել նրա կետերը (ավելի մանրամասն տե՛ս Yergin D., նշվ. աշխ., էջ 413-419):

² Sև's Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 24-25, Hewins R., նշվ. աշխ., էջ 227:

³ Hewins R., նշվ. աշխ., էջ 227:

⁴ Yergin D., նշվ. աշխ., էջ 419:

նշանավոր քաղաքական և պետական գործիչ Միմոն Վրացյանը գրում էր. «Ես նոր կտեսնեի Հայ Կրեստը (Գ. Կյուլպենկյանին՝ Վ. Ղ.): Առաջին հայնացքով առանձին տպաւորութիւն չգործեց վրաս, սովորական կեսարացի վաճառական մը, արտայայտիչ թուլս դէմքով և ծանր շարժումներով, - բայց խօսակցութեան ընթացքին, մանաւանդ տեսակցութեան վերջը պարզուեցաւ, որ արտակարգ անհատականութեան մը հետ էր մեր գործը»¹: Գ. Կյուլպենկյանի ժամանակակիցները նշում էին, որ եթե Գալուստն իր թիկունքում ունենար Արեւմուտքի հզոր պետութիւններէից մեկին, ապա նա երբեք այդքան մեծ բաժին չէր զիջի իր շահերից: Վերջիվերջո, Իրաքի նավթային ընկերութիւնն իր «ջանքերի փառավոր զագաթն»² էր և 15-ի ու 5 տոկոսի միջև, մեղմ ասած, տարբերութիւնը փոքր չէր: Անշուշտ, ճիշտ չէ աներկրայորեն ընդունել Գ. Կյուլպենկյանի կնոջ եղբոր այն կարծիքը, թե իրր աշխարհահռչակ միլիոնատերը, որպէս հալածված ու անհայտ Հայ ազգի ներկայացուցիչ և վտարանդի, «...չհամարձակվեց պահանջել ավելին»³, սակայն միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ այդ տեսակետն ամբողջովին կտրված չէր իրականութիւնից: Բոլոր դեպքերում Գ. Կյուլպենկյանն իր գործը վատ չէր կատարել. նրա բաժնետոմսերը 1950-ականներին բերում էին տարեկան 5 մլն. ֆունտ ստեռլինգի հասույթ, որը կարճ ժամանակ անց աճեց և գերազանցեց 10 մլն.-ը⁴:

Գ. Կյուլպենկյանն իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում Ֆրանսիայում: Նույնիսկ այն բանից հետո, երբ գերմանացիները գրավեցին այդ երկրի ղզայի մասը, նա չհեռացավ այդտեղից: Գ. Կյուլպենկյանի՝ պարսկական շահի խորհրդականի պաշտոնն ապահովեց նրան գերմանական վտանգից, իսկ Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը, օգտվելով այն հանգամանքից, որ Գ. Կյուլպենկյանը 1940 թվականից ի վեր շարունակում էր բնակվել գերմանացիների կողմից օկուպացված Ֆրանսիայում, նրան համարեց

¹ «Ազատ օր», թիւ 3187, 29 Օգոստոս, 1955:

² Տե՛ս Գալաքթյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 3, նաև՝ Yergin D., նշվ. աշխ., էջ 414:

³ Hewins R., նշվ. աշխ., էջ 88:

⁴ Տե՛ս նույն տեղում:

իր «տեխնիկական թշնամին» (“Enemy under The Act”)¹: Անգլիական կառավարությունն այդ քայլով ոչ միայն վիրավորեց մոտ կես դար Մեծ Բրիտանիայի նավթային շահերին ծառայող մարդու ինքնասիրությունն ու պատիվը, այլև բռնազրավեց նրա Հինգ տոկոս շահութարածինը: Գ. Կյուլպենկյանը չընդունեց այն կարծիքները, որոնց համաձայն՝ բրիտանական կառավարությունն, իր, ցանկանում էր անուղղակի կերպով իրեն պաշտպանել գերմանացիներից և նրանց դրածո Պետեն Լավալի ճնշումներից²: Հայ նավթարդյունարերողը գտնում էր, որ Իրաքի նավթային ընկերությունն Անգլո-Հոլանդա-ամերիկյան խմբավորումն (Anglo-Dutch-American group) օգտագործել էր առիթը, ճնշում բանեցրել Մեծ Բրիտանիայի կառավարության վրա և ընկերությունից հեռացրել իրեն ու ֆրանսիացիներին: Նա համոզված էր, որ այդ խմբավորումը գողանում էր իր ու ֆրանսիական ընկերության նավթը, որն ամերիկյան միջնորդի միջոցով և սահմանած գներով, առանց իրենց համաձայնության, վաճառքի էր հանվում³:

Վիրավորված ու խոցված Անգլիայի կառավարությունից՝ Գ. Կյուլպենկյանը փոխեց իր նկարների հավաքածուն Մեծ Բրիտանիայի Ազգային պատկերասրահին ընդմիջտ թողնելու մտադրությունը և այլևս ոտք չդրեց անգլիացիների հողին⁴: 1943 թ. վերջերին անգլիական կառավարությունը վերականգնեց նրա բոլոր իրավունքները, իսկ հետագայում փոխհատուցեց նաև այն նյութական վնասները, որ պատճառել էր Հայ նավթարդյունարերողին Մեծ Բրիտանիայի «թշնամի» որակելու ժամանակ⁵:

1942 թ. Գ. Կյուլպենկյանը Հեռացավ Ֆրանսիայից⁶: Նախապես

¹ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 219, նաև՝ Yergin D., նշվ. աշխ., էջ 413: Նույնպիսի ճակատագրի արժանացավ նաև Ֆրանսիան, որից մեծապես տուժեց Ֆրանսիական նավթային ընկերությունը (տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 223, Yergin D., նշվ. աշխ., էջ 413):

² Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 219:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 219-220:

⁵ Տե՛ս նույն տեղում., էջ 221-224, նաև՝ Yergin D., նշվ. աշխ., էջ 413:

⁶ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 220, Lodwick J., նշվ. աշխ., էջ 127 (Զ. Լոդվիկը նշում է, որ Գ. Կյուլպենկյանը Փարիզից մեկնել է 1943 թ.: Հավաստի տվյալ պետք է համարել Հայ նավթարդյունարերողի որդու՝ Ն. Կյուլպենկյանի, և անձնական փաստաթանի՝ Ժ. Ազերեդո դը Պերդիգանի Հաղորդած տարեթիվը՝ 1942 թ.: Տե՛ս Gulbenkian N., Portrait in oil, p. 209, Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 3):

նա մտադրվել էր Հանգրվանել Շվեյցարիայում, սակայն այդ երկիրը չըջապատման մեջ էր և անապահով: Որդու խորհրդով և Ֆրանսիայում Պորտուգալիայի դեսպանի հրավերով Գ. Կյուլպենկյանը ժամանակավորապես Հանգրվանում է Լիսաբոնում: Այդտեղից նա ցանկանում էր մեկնել ԱՄՆ, սակայն որոշ ժամանակ ապրելով Պորտուգալիայում՝ կայացրեց նոր երկրում վերջնականապես Հաստատվելու որոշում¹:

Նավթի «հայ արքան» գրեթե միշտ եղել է նաև Հայության ուշադրության կենտրոնում: ՀԲԸ Միության նախագահ Պ. Նուրարի մահից հետո Հայ Հասարակական-քաղաքական շրջանակներն իրենց ուշադրությունը սևեռեցին Գ. Կյուլպենկյանի վրա՝ մի մարդու, որն այդ տարիներին համաշխարհային փառքի տիրացած նավթարդյունարերող էր և քաղաքական ու տնտեսական լուրջ ազդեցություն ուներ թուրքական, ֆրանսիական, անգլիական և պարսկական կառավարությունների վրա: Գ. Կյուլպենկյանն ընդունեց իրեն արված առաջարկությունը և 1930 թ. ստանձնեց ՀԲԸ Միության նախագահությունը, սակայն չկարողանալով տանել իր հասցեին 1931 թ. հոկտեմբերին Հայկոմկուսի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սուր, թրքամետ և վարկարեկիչ ճառը, ինչպես նաև Բարեգործականից չափից ավելի պահանջներն ու անհարկի քննադատությունները՝ 1932 թ. ապրիլին հրաժարական տվեց²:

Այդ հրաժարականին են անդրադարձել Կ. Դալլաքյանն ու է. Մելքոնյանը, որոնք համակողմանիորեն քննելով խնդիրը՝ կատարել են որոշ եզրահանգումներ: Ըստ Կ. Դալլաքյանի՝ Գ. Կյուլպենկյանը, քաղաքականութայն մարդ չլինելով, մինչև վերջ չի գիտակցել, թե ինչ Հայաստաց ծրագրի է հակադրվել իր՝ որպես ՀԲԸ Միության

¹ St'ya Hewins R., նշվ. աշխ., էջ 220, **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 25, Gulbenkian N., Portrait in Oil, pp. 209-217.

² Տե՛ս Դալլաքյան Կ., ՀԲԸ Միության նախագահ..., էջ 5-20, 48-49, նաև նույն Հեղինակի՝ Ռամկավար Ազատական Կուսակցության պատմություն (1921-1940), էջ 211-213, Մելքոնյան է., ՀԲԸ Միությունը..., էջ 89-117, **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 12, The AGBU Story, prepared by Bedros Norehad, New York, 1956, p. 11, «Արև», թիւ 11.198-11.217, 13 հոկտեմբեր-4 նոյեմբեր, 1955, թիւ 11.219-11.222, 7-10 նոյեմբեր, 1955, թիւ 12.502-12.505, 22-26 Յունուար, 1960, «Պայքար» օրաթերթ, թիւ 214 (16329), Պոսթըն, Սեպտեմբեր 12, 1959, «Նորհրդային Հայաստան» օրաթերթ, Ե., № 243 (3116), 15.10. 1931, № 19, 22.01.1932:

նախագահի գործունեությունը (Հայերի՝ ղեպի Սիրիա ծրագրված գաղթին աջակցելը, որի պատճառով անհարկի վայնասուն էին բարձրացնում թուրքերը), այսպես այդքան հեշտությունամբ չէր ղիջի սևփական ղիրքերը¹: Է. Մեկրոնյանը գտնում է, որ բացի նշվածից, Գ. Կյուլպենկյանն ուներ հրաժարականի ևս երկու ազդու զրդապատճառ: Ըստ նրա՝ Գ. Կյուլպենկյանի մասշտաբի տեր անհատը ՀԲԸ Միությունն առաջինը հետո չէր կարող լինել Գ. Նուբարի գործը պարզ շարունակողի դերով, ուստի և փորձեց լուծել երկու գերխնդիր²: Դրանցից առաջինը Բարեգործականի հիմնական զրամական միջոցները մեկ ֆոնդի մեջ միավորելն էր, իսկ երկրորդը՝ համագործակցության հաստատումը Հայ հեղափոխական դաշնակցության հետ: Այդ ուղղությունները ձևավորված քայլերը մատնվել են անհաջողության, որն էլ զրդել է ՀԲԸ Միության նախագահին՝ կայացնելու հրաժարականի որոշում³: Ամփոփելով իր քննարկումները՝ Է. Մեկրոնյանը գտնում է, թե. «Այս տարարնույթ պարագաների համագումարն էլ հանգեցրեց Գ. Կյուլպենկյանի Հայտնի որոշմանը»⁴: Համամիտ ենք, անշուշտ, գիտնականի այդ եզրահանգմանը, սակայն չենք կարող ընդունել նրա պնդումն այն մասին, որ. «Լինելով ընդգծված անհատապաշտության տեր մարդ՝ թե իր գործունեության և թե անձնական կյանքում, Գ. Կյուլպենկյանը չէր կարող և չէր ցանկանա զոհարերել իր «Ես»-ը հանուն որևէ գաղափարի կամ մեկ նպատակի»⁵: Հարկ է այդ առումով մեջբերել Հենց Գ. Կյուլպենկյանի խոսքերը, որոնք նա շարադրել էր Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանին 1922 թ. հունվարին հասցեագրած իր նամակում. «...իմ ընտանիքի առանդությունը, - գրում էր բարերարը, - երբեք ինձ ուսուցած չէ զոհել ազգային շահերը անձնական զգացումներին ու

¹ Տե՛ս Դալլաքյան Կ., ՀԲԸ Միությունն առաջինը..., էջ 3:

² Տե՛ս Մեկրոնյան Է., ՀԲԸ Միությունը..., էջ 106. Նաև նույն հեղինակի՝ Գալուստ Կյուլպենկյան - Նորհրդային Միություն, չկայացած գործընկերություն, (այսուհետև՝ «Գալուստ Կյուլպենկյան - Նորհրդային Միություն...»), «Լրարեր հասարակական գիտությունների» («ԼՀԳ»), 1998, № 3, էջ 91-101:

³ Տե՛ս Մեկրոնյան Է., ՀԲԸ Միությունը..., էջ 107, «Արև», թիվ 12,502, 22 Յունուար, 1960:

⁴ Մեկրոնյան Է., ՀԲԸ Միությունը..., էջ 108:

⁵ Նույն տեղում, էջ 106:

նկատառումներին, և, կամ թէ գործից խուսափիլ, կրք՝ներ Ազգին իրապէս օգտակար մի ծառայութիւն մատուցանելու առիթ է ներկայացած»¹: Անշուշտ, այս բառերը սոսկ Հայրենասիրական ղգացմունքի դրսևորում չէին. թե՛ իր կենդանութեան օրոք, թե՛ իր մահից հետո աշխարհահռչակ նապթարդրոնարերողի նյութական կարողութեաննրից օգտուել է ողջ Հայութեանը: Միայն Հարազատ ազգի Հանդեպ ունեցած անկեղծ սիրով կարելի էր բացատրել Գ. Կյուլպենկյանի բարեսիրական գործունեութեանը, որը նպատակաուղղված էր Հայ ժողովրդի նյութական բարեկեցութեանը, նրա պատմամշակութային և հոգևոր արժեքների պահպանմանն ու Հարստացմանը, Հայաստանի բարգաւաճմանը:

Հրաժարվելով ՀԲԸ Միութեան նախագահութունից՝ Գ. Կյուլպենկյանն, այնուամենայնիվ, նշում էր, որ շարունակելու է բարեգործութեաննր կատարել իր Հայրենիքի և ժողովրդի Համար. «...Արդ, բացարձակապէս Հրաժարականս մատուցանելով Հանդերձ, - գրում էր նա, - միանգամայն կը պահեմ իմ գուրգուրանքս Ազգիս միակ մխիթարութիւն Հայաստանի յուրջ բարգաւաճման Համար, իրրև. Հայրենի աւանդութեան նուիրական պարտականութիւն»²: 1920-ական թվականներից սկսած՝ Հայ բարերարի օգնութեամբ և նվիրատուութեաննրով Հայկական դպրոցներ, հիմնականոցներ էին բացվել Թուրքիայի, Լիբանանի, Սիրիայի, Իրաքի, Հորդանանի Հայաշատ վայրերում, կառուցվել են եկեղեցիներ ու տեական խնամք տարվել դրանք բարեկարգ վիճակում պահելու Համար³: Հայ գաղթականներին և որրերին օգնելու, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի որոշ կարիքներ հոգալու նպատակով 1921-1922 թթ. Հատկացումներ էին կատարվել նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին ու «Մերձավոր Արևելքում Ամերիկյան նպաստամատուց կոմիտէին» (յուրաքանչյուրին 50 Հազ. ֆրանսիական

¹ ՀԱԱ, Ֆ. 430, ք. 1, գ. 731, թ. 29-30:

² Դալլաբյան Կ., ՀԲԸ Միութեան նախագահ..., էջ 6, «Արև», թիւ 11.205, 21 Հոկտեմբեր, 1955, թիւ 12.504, 25 Յունուար, 1960:

³ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 197-207, Մելքոնյան է., ՀԲԸ Միութեան..., էջ 109-110, Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 43-48, «Արև», թիւ 11.212-11.222, 29 Հոկտեմբեր-10 Նոյեմբեր, 1955:

ֆրանկ)¹: Գ. Կյուլպենկյանի միջոցներով կառուցված Հայկական եկեղեցիներ ևն զործում Բաղդադում, Տրիպոլիում (Լիբանան) և Բիրբուրում: 1929 թ. նրա նյութական աջակցությամբ է կառուցվել Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի նշանավոր զրադարանը և նշանակվել պատրիարքարանին տրվող կանոնավոր նպաստ²: Հարկ է, ի դեպ, չլռտել այն հատուկ վերաբերմունքը, որն այս պատրիարքարանի հանդեպ դրսևորել է Գ. Կյուլպենկյանը: 1934 թ. նա այցելել է Երուսաղեմ, եղել Հայոց պատրիարքարանում և իր անունը կրող զրադարանում: Ա. Ջամբերթենն ուշագրավ տեղեկություն է հաղորդում Հայ բարերարի շահագրգռվածությունն մասին՝ հարըստացնելու զրադարանը զիտական նոր հրատարակություններով, հանդեսներով ու պարբերականներով, որոնք Հայ և օտարազգի Հետազոտողների համար Հետազայում զործունեություն լայն դաշտ բացեցին՝ ուսումնասիրելու Հայերեն և օտարալեզու բազմաթիվ գրքեր ու սկզբնաղբյուրներ թե՛ Հայագիտություն, թե՛, ընդհանրապես, պատմագիտություն ու քրիստոնեություն պատմության բնագավառներում կատարվող Հետազոտությունների ընթացքում: Վկայակոչելով Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի «Սիոն» ամսագրի 1948 թ. հունվարի համարը՝ Ա. Ջամբերթենը գրել է, որ Գ. Կյուլպենկյանը «...կը ճոխացնէ մատենադարանը (Երուսաղեմի «Գալուստ Կյուլպենկյան») զրադարանը՝ Վ. Ղ.) աղբիւրագիտու-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 731, թ. 2, 11, 29, Ավետիսյան Ս., «Մերձավոր Արևելքում Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի զործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.» (Թեկնածուական ատենախոսություն), Ե., 2007, էջ 110, նաև նույն Հեղինակի՝ Հայ ազգային պատվիրակության և Ամերիոմի համագործակցությունը 1920-ական թթ., «Հայոց պատմության հարցեր», 2007, № 8, էջ 292:

² Գրադարանի կառուցման մտահղացումը պատկանում էր Երուսաղեմի Հայոց պատրիարք Եղիշ Դուրյանին, որի իրականացման համար Հնդկաստանից Պետրոս Կրետի, Եղիսատուից ծխախոտի վաճառական Արմենակ բեյ Կամարականի, նշանավոր բարերար և ՀԲԸ Միություն նախագահ Պողոս փաշա Նուբարի կողմից կատարվել էր երեք հազար անգլիական ոսկու նվիրատվություն: Գ. Կյուլպենկյանը զրադարանի կառուցման առթիվ պատրաստակամություն Հայտնեց ստանձնելու ոչ միայն նրա Հիմնադրման համար անհրաժեշտ գումարի մեծ մասը, այլև հոգալու զրադարանի Հետազգ կարիքներն ու ծախսերը: Այդ իսկ պատճառով Ե. Դուրյան պատրիարքի խնդրանքով և նախաձեռնությամբ զրադարանն անվանակոչեց «Գալուստ Կյուլպենկյան» (ավելի մանրամասն տե՛ս **Ջամբերթեն Ա.**, Երուսաղեմ և Կիւլպենկյաններ, էջ 80-91, Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July-31st December 1959, p. 196):

Թեան զիրքերով և կ'ապահովէ Հանրագիտարաններու և մասնագիտական թերթերու կանոնաւոր ստացումը»¹: Որպէս իր մտահոգման առաջին գործնական քայլ՝ նա 47 անգլերէն զիրք է ուղարկում զրազարան և կրկնապատկում Հայոց պատրիարքարանին տրոփող տարեկան 300 պաղեստինյան ոսկու օժանդակութունը²: Ա. Չամբերթենը նշում է նաև, որ Երուսաղեմի՝ վերոհիշյալ զրազարանն իր հիմնադրումից Հետո սկսել էր թանկարժէք զրքեր, թերթեր, գիտական ամսագրեր և աղբյուրագիտական Հարուստ նյութեր ստանալ Եգիպտոսի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Հնդկաստանի, Ֆրանսիայի, Իրանի, Լիբանանի և Սիրիայի Հայերից: Արդեն 1930-1940-ական թվականներին ձեռք էր բերել Հայագիտական Հետազոտութունների Համար ղգայի կարևորութուն ներկայացնող կենտրոնի պատվավոր Համբավ³: «Անշուշտ մատենադարանին յաջողութեան գլխաւոր գաղտնիքը Գալուստ Կյուլպենկեանի անձնական Հետաքրքրութիւնն էր այս նոր ծրագրին նկատմամբ, - կարդում ենք Ա. Չամբերթենի գրքում, - Ան կ'ուզէր տեսնել արդիական մատենադարան մը օժտուած նորագոյն միջոցներով: Ան Երուսաղէմ կ'երթայ պատուիրակութեամբ մը և մօտէն կը հսկէ շէնքին («Գալուստ Կյուլպենկեան» զրազարանի՝ Վ. Ղ.) քար առ քար բարձրացման»⁴: Այսօր Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի զրազարանը Համարվում է ոչ միայն քաղաքի, այլև տարածաշրջանի պատմագիտական, մատենագիտական, աղբյուրագիտական Հնագոյն, Հարուստ և բացառիկ նյութեր պարունակող Հաստատութուններից մեկը:

Կ. Պոլսում 1835 թ. Հարություն (Գաղազ Արթին) ամիրա Պեղ-ճյանի կողմից կառուցված Սուրբ Փրկիչ Հիվանդանոցը ևս արժանացել է Կյուլպենկեան ընտանիքի ուշադրութեանը. Գ. Կյուլպենկեանի ծնողների Հովանավորութեամբ կառուցվել են Հիվանդանոցի Հավելյալ մասնաշենքերն, իսկ 1906 թ. Հիշյալ առողջապահական Հաստատութունը Գ. Կյուլպենկեանի շնորհիվ ունեցավ վիրարութութեան կենտրոն: Հետագայում Հայտնի բարերարը նույն Հիվանդանոցին կտակեց էմինոնու թաղամասում գտնվող իր Սեւամուտ

¹ Չամբերթեն Ա., Երուսաղէմ և Կյուլպենկեաններ, էջ 86-87:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Հան շենքերը¹: Ի հիշատակ իր ծնողների՝ Հայ բարերարը 1922 թ. Լոնդոնում կառուցել էր Սուրբ Սարգիս Եկեղեցին, իր կտակով 400 Հազ. ԱՄՆ դոլար Հատկացրել էջմիածնի Մայր տաճարի նորոգությանը, օժանդակել Երևան քաղաքին Հարող տարածքներում իրականացվող նուրարաշենի և նոր Կեսարիայի շինարարական աշխատանքներին²:

Հայաստանը նույնպես մշտապես Հետաքրքրել է Գ. Կյուլպենկյանին և Հարկ է բնդգծել, որ նա Հայ իրականության Հետ սերտորեն չլիվել սկսել էր և՛ Բարեգործականի նախագահ լինելու ժամանակ, և՛ ավելի վաղ: Ս. Վրացյանն, օրինակ, հաղորդում է, որ «Գալուստ Կիւլպէնկեանի շուրջ խօսքեր կ'ըլլային դեռ Հայաստանի մէջ, Հանրապետութեան շրջանին»³: Շարունակելով միտքը՝ նա տեղեկացնում է, որ Գ. Կյուլպենկյանը միշտ Հետաքրքրվել է իր Հայրենի երկրի խնդիրներով և Փարիզում սերտ կապեր պահպանել ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի և փոխնախագահ Համադասպ Օհանջանյանի Հետ: Ուշադրավ են, մանավանդ, դաշնակցական նշանավոր գործչի տողերն առ այն, որ Գ. Կյուլպենկյանն առաջարկել էր Հայաստանի կառավարությանը երկրում ստեղծել պետական դրամատուն, որի դրամագլխի հիմնական մասը կաղմվելու էր բարերարի կատարած նվիրատվություններից ու Հատկացումներից⁴: Գ. Կյուլպենկյանը պարտավորվել էր նաև այդ ծրագրի իրականացման նպատակով գործակցության հրավիրել ուրիշ մեծահարուստ Հայերի: Հատկանշական է, որ կառավարության նիստերից մեկում հիշյալ Հարցին նվիրված զեկուցումով հանդես է եկել վարչապետ Ալեքսանդր Սատիսյանը: Ցավալիորեն պետք է արձանագրել, սակայն, որ այն իրականություն չզարձալ: Պատճառն, ըստ Ս. Վրացյանի, Հայաստանի Հանրապետության կարճատև գոյությունն էր. «...կը Հաւատամ,- գրում էր նա,- որ եթէ Հայաստանի Հանրապետութիւնը տևէր, Գ. Կիւլպէնկեանի անունը նիւտի կապուէր անոր Հետ ամուր կապերով:

¹ St'u Azered de Perdigao J., Chairman's Report, 20th July-31st December 1959, p. 196.

² St'u Hewins R., նշվ. աշխ., էջ 197-207, Ջամբերթեն Ա., Մարդը և իր գործը. էջ 43-48, Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 200, «Արև», թիւ 11.212-11. 222, 29 Հոկտեմբեր-10 Նոյեմբեր, 1955:

³ «Ազատ օր», թիւ 3186, 27 Օգոստոս, 1955:

⁴ St'u նույն տեղում:

Հանրապետութիւնը գնաց, Կիւլպէնկեանի Հետաքրքրութիւնն այ
Հայկական Հարցերով՝ տկարացաւ: Տկարացաւ, բայց չմեռաւ»¹:

Ճշմարտութիւնն ընթերցողին կիսով չափ ներկայացրած կլի-
նենք, եթէ չնչնք, որ վերոհիշյալ դրամատան ծրագրի կապակցու-
թյամբ, ինչպէս նաև «Հայկական Հարցերի վերաբերյալ իր
Հետաքրքրության տկարացման պատճառներն» այլ տեսանկյունից
էր ներկայացնում Գ. Կյուլպենկյանը: Այդ մասին տեղեկանում ենք
1920-ական թվականներին տեղի ունեցած որոշ քաղաքական
իրադարձութիւններէ: Մասնավորապէս, 1921 թ. Հոկտեմբերի
11-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-
Եղիայանի, Հայ կաթողիկ համայնքի պատրիարքական տեղապահ
Հովհաննէս եպիսկոպոս Նաղյանի և Հայ ավետարանականների
առաջնորդ Զենոր Պեղճյանի միջոցով Հայոց ազգային պատվիրա-
կութիւնը դիմել էր Գ. Կյուլպենկյանին՝ ստանձնելու ստեղծվելիք
«Ազգային Հիմնադրամի» նախագահութիւնը²: Գ. Կյուլպենկյանը
մերժել էր առաջարկութիւնը: Նախ, բարերարն արդարացիորեն
նշում էր, որ միայն Հասարակական Հիմունքներով գործող Կ. Պոլսի
Համազգային ժողովն ազդու լծակներ չունենր՝ վերահսկելու Հանգա-
նակված նյութական միջոցները տնօրինող ենթակա մարմինների
գործունեութիւնը³: Այնուհետև շեշտը դրվում էր միջկուսակցական
տարաձայնութիւնների վրա, որոնք, ըստ Գ. Կյուլպենկյանի, յրջո-
րեն մտանգում էին ազգային ընդհանուր և Հիմնական նպատակին
(Հայ դատի արդարացի լուծմանը) հասնելու գործի հաջողությանը⁴:
Հայ մեծահարուստը տեղեկացնում էր, որ ժամանակին, երբ պայ-
մանները նպաստավոր էին (Հայկական Հարցի բարեհաջող ելքի
համար՝ 1919-1920 թթ.), Հայոց ազգային պատվիրակութեանն է
ներկայացրել «Ազգային Հիմնադրամ» ստեղծելու ծրագիրը: Գ. Կյուլ-
պենկյանն առաջարկել է, որպէսզի հավաքված գումարներն օգտա-
գործվեն առանց կուսակցական խտրութեան և ծառայեն Հայ
ժողովրդի՝ տարազրկված Հատվածների կարիքներին: «Այս թելադ-
րանքս, - նշում էր բարերարը, - մեր Պատուիրակութեանց պետերի

¹ «Ազատ օր», թիւ 3186, 27 Օգոստոս, 1955:

² ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 731, թ. 1-3:

³ ՏՆՍ նույն տեղում, թ. 4:

⁴ ՏՆՍ նույն տեղում:

(Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի՝ Վ. Ղ.) կողմից նպաստաւոր ընդունելութիւն չը գտաւ»¹:

Ազգային պատվիրակութեան փոխնախագահ Գարրիել Նորատունկյանն² այդ առիթով հավելում էր, որ Գ. Կյուլպենկյանն Ա. Ահարոնյանի հետ քննարկել էր նաև Հայաստանի ֆինանսական խնդիրները լուծելու հարցեր և «...զանոնք կուսակցական ամէն նկատումէ ազատ մնալիք կազմակերպութեան մը (պետական դրամատան՝ Վ. Ղ.) ենթարկելու մասին ներկայացուցած է առաջարկութիւններ որոնք անլսելի մնացեր են»³: Գ. Նորատունկյանը նշում էր, թե իրեն ծանոթ չեն այն պարագաներն ու պատճառները, որոնց հետևանքով Գ. Կյուլպենկյանի ծրագրերը մատնվել են անհաջողութեան, սակայն ըստ նրա՝ «Այնպէս կերեւայ թէ ինք (Գ. Կյուլպենկյանը՝ Վ. Ղ.) Պօղոս փաշայի և Պ. Ահարոնյանի գործնականորէն բոլորովին տարրեր սխալէմ մը առաջարկած է և այդ եղած է պատճառ որ չեն կրցած համաձայնիլ»⁴:

Համադրելով այս փաստերը, ինչպես նաև այն իրողութիւնը, որ ՀՀ և Ազգային պատվիրակութիւններն՝ ի դեմս Պ. Նուբարի և Ա. Ահարոնյանի, լուրջ տարածայնութիւններ ունեին միմյանց հետ ապագա Հայաստանի կերտման հարցում՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացութեանը. Գ. Կյուլպենկյանի՝ Հայաստանի կառավարութեան վերահսկողութեամբ և արտասահմանի մեծահարուստ Հայերի նյութական կարողութիւններով ու մասնակցութեամբ ստեղծվելիք թե՛ ազգային դրամատան, թե՛ համազգային բարեսիրական կազմակերպութեան ծրագրերը չէին կարող հավանութեան արժանանալ ո՛չ Ա. Ահարոնյանի, ո՛չ էլ Պ. Նուբարի կողմից այն պարզ պատճառով, որ հայտնվեցին նշված գործիչների միջև գոյութիւն ունեցող սուր հակասութիւնների ոլորտում⁵:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 731, թ. 1-3:

² 1921 թ. հուլիսին Պ. Նուբարը դուրս եկավ Ազգային պատվիրակութեան կազմից, իսկ նախագահի պաշտօնը հանձնեց Գարրիել Նորատունկյանին (տե՛ս Պօղոսեան Ս., նշվ. աշխ., էջ 205):

³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 731, թ. 7:

⁴ Նույն տեղում:

⁵ Ազգային պատվիրակութեան՝ ՀՀ կառավարութեան և պատվիրակութեան հետ ունեցած հարաբերութիւնների ու հակասութիւնների մասին ավելի մանրամասն տե՛ս Պօղոսեան Ս., նշվ. աշխ., էջ 125-161, 171-188, 189-207, Զաւէն Արքեպս., Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 374-381:

Հայաստանի Հետ կապված՝ Հիշարժան է նաև մեկ այլ իրադարձություն: 1936 թ. Հունվարին Հայաստանի Ժողովրդավարական-կոմունիստական կուլտուրայի նախարար Ա. Գուլոյանը Վ. Մալեղյանից ստացավ մի նամակ, որով կառավարությունը տեղյակ էր պահելու Գ. Կյուլպենկյանի մտադրությունն՝ մասին՝ Երևանի պետական համալսարանին նվիրարենելու: Կ. Պոլսում գտնվող իր գույքն ու հողատարածքները: Այդ առիթով բարերարը երկու անգամ հանդիպել է Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Լևոն Կարախանին¹: Շուտով, սակայն, Կարախանը հայտարարվեց ժողովրդի թշնամի և զնդակահարվեց: Խորհրդային ժողովուրդների թշնամու պիտակը փակցվեց նաև Ա. Գուլոյանի ճակատին, որը 1937 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Մ. Լիտվինովին գրած նամակում խնդրում էր միջոցներ ձեռք առնել Գ. Կյուլպենկյանի ունեցվածքն ստանալու համար²:

Խորհրդային Միությունում այդ տարիներին մոլեգնող ստալինյան բռնությունների ալիքը խանգարեց Հայաստանի իշխանություններին՝ լրջորեն զբաղվելու Գ. Կյուլպենկյանի նվիրատվությունների հարցով, որը ձգձգվեց մինչև 1946 թ., իսկ ստեղծված անորոշ իրավիճակից փորձեց օգտվել Թուրքիան՝ ձգտելով առգրավել իր երբևեմի հպատակի ունեցվածքը³: 1946 թ. խնդրի կարգավորման համար վաշինգտոնում ԽՍՀՄ դեսպանությունը դիմեցին ՀԲԸ Միության փոխնախագահ Լ. Կերտանը և Վ. Մալեղյանը, ԱՄՆ-ում ԽՍՀՄ դեսպան Ն. Նովիկովին, իր հերթին, դիմեց ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությունը, սակայն բոլոր փորձերն անցան ապարդյուն⁴:

¹ Տե՛ս Մեկընյան է., ՀԲԸ Միությունը..., էջ 109-110, նաև նույն հեղինակի՝ Գալուստ Կյուլպենկյան-Խորհրդային Միություն..., «ԼՀԳ», 1998, № 3, էջ 91-101, Ստեփանյանց Ս., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994, էջ 201, ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 518, թ. 5-6, «Արև», թիվ 11.212, 29 Հոկտեմբեր, 1955:

² Տե՛ս Մեկընյան է., ՀԲԸ Միությունը..., էջ 110-115:

³ Տե՛ս Ստեփանյանց Ս., նշվ. աշխ., էջ 202, ՀԱԱ, ֆ.1, ց. 4, դ. 10, թ. 70, «Արև», թիվ 11.212, 29 Հոկտեմբեր, 1955:

⁴ Տե՛ս Մեկընյան է., ՀԲԸ Միությունը..., էջ 115, նաև նույն հեղինակի՝ ՀԲԸ պատմություն, էջ 248, Ստեփանյանց Ս., նշվ. աշխ., էջ 202, Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 169:

//
1.2.՝ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հիմնումը,
կանոնադրությունը և բաժանմունքները

Գ. Կյուլպենկյանի՝ Լիսաբոնում ապրած վերջին տարիներն էլ ազդեցություն գործեցին նրա հետագա որոշումների վրա՝ կապված Պորտուգալիայում միջազգային բարեգործական հաստատություն հիմնելու մտադրության հետ¹: Հայ մեծահարուստն իր հիմնական նյութական կարողությունները կտակեց ստեղծվելիք հիմնարկությանն՝ ապահովելով նաև իր ընտանիքի անդամների բաժինները և կատարելով որոշ մասնակի հատկացումներ²:

1955 թ. Հուլիսի 23-ին պաշտոնական պայմաններում բացվեց նավթային մագնատի կտակը, որն ի կատար ածողը Ժ. Աղևերդո դը Պերդիգանն էր³: «Արևը» նշում էր, որ միջազգային մամուլն այդ առիթով սկսեց մանրամասն տեղեկություններ հաղորդել կտակի մասին և ուշադրությամբ հետևել նրա շուրջը ծավալվող իրադարձություններին⁴: Թերթերն, ընդ որում, հակասական տվյալներ էին հաղորդում Գ. Կյուլպենկյանի նյութական ողջ կարողության վերաբերյալ, որոնցից առավել հավանականն «Արևը» համարում էր 300

¹ Ավելի մանրամասն տե՛ս Ղարախանյան Վ., Ինչու? Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը տեղակայվեց Պորտուգալիայում, «Հայոց պատմության հարցեր», 2008, № 9, էջ 232 – 244, նաև՝ «Ջարթօնք» օրաթերթ, բացառիկ, նույնում Թամկավար Ազատական կուսակցության քառասնամյակին և «Ջարթօնք» օրաթերթի քսանհինգամյակին, 1962, Սեպտեմբեր, Պեյրոթ, էջ 336-337: Լ. Բայազյանի՝ հիշատակված գրքում տեղ է գտել մի ձևակերպում, ըստ որի՝ Գ. Կյուլպենկյանի կտակով ստեղծված Հիմնարկությունն այսօր ծառայում է միայն մեկ ժողովրդի՝ պորտուգալացիներին (տե՛ս Բալազյան Լ., նյվ. աշխ., էջ 243): Երջանատության մեջ դրված այս տեսակետն, անկասկած, ամբողջությամբ սխալ է և չի դիմանում ոչ մի քննության, քանզի «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը միջազգային նշանակության կառույց է՝ կոչված ծառայելու համայն մարդկությանը. իր հիմնադրումից ի վեր Հիմնարկությունը բարեգործություններ է կատարում երկիր մոլորակի տարբեր անկյուններում, որի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել ինչպես հաստատություն արևիվային փաստաթղթերում, այնպես էլ բաղձաթիվ կրկնների պարբերական մամուլի էջերում:

² Ավելի մանրամասն տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July-31st December 1959, pp. 23-32, 191-201, 205, «Արև», թիւ 11.609-11.634, 19 Փետրուար-20 Մարտ, 1957:

³ Տե՛ս «Արև», թիւ 11.222, 10 Նոյեմբեր, 1955:

⁴ Տե՛ս նույն տեղում:

մյն. անգլիական ոսկին¹: Որոշ Հարցերում, ի դեպ, թե՛ օտար, թե՛ Հայկական թերթերի հաղորդած տեղեկությունները համընկնում էին. Գ. Կյուլպենկյանն իր հարստությունը կտակել էր պորտուգալական օրենքներին համապատասխան ստեղծվելիք «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը, որի համար կենտրոնատեղի էր ընտրված Լիսաբոնը: 1955 թ. մամուլը չէր սխալվում նաև, երբ նշում էր, որ Հիշյալ Հաստատությունը ղեկավարները լինելու էին Գ. Կյուլպենկյանի վաղեմի բարեկամ լորդ Ռեդկլիֆ Վերմեդը, տասներեք տարվա խորհրդատու փաստաբան դոկտ. Պերդիգանը և կտակարարի փեսան՝ Գ. Եսայանը: Հիշարժան է, մանավանդ, այն հանգամանքը, որ դեռևս 1955 թ. «Արևը» գրում էր, թե՛ «...միջազգային տեսակէտով, այդ հիմնարկությունը կ'ըլլայ կարևորագույնը, մինչև իսկ Րոբֆիլլըր և Նուպէլ Հիմնարկությունանց Հետբաղատելով»²:

Խնդրո առարկա կտակի վերաբերյալ 1955 թ. Հուլիսի 23-ին Հետաքրքիր հոդված էր իր էջերում ղեկողել նաև Բեյրութում հրատարակվող «Այգ» օրաթերթը, որը Հայ ընթերցողներին ներկայացնում էր ապագա կազմակերպությունն նպատակներն ու պարզարանում կտակի՝ իրեն հայտնի մանրամասները: «Այգը» տեղեկացնում էր, որ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը Հետապնդելու է մարդասիրական, զեղարվեստական, գիտական ու կրթական նպատակներ³: Ուշագրավ է, Հատկապես, թերթի կարծիքն առ այն «...թե՛ Գալուստ Կյուլպենկյանն ներշնչուած է Ռոբֆիլլըր հիմնարկությունան սկզբունքներէն»⁴:

Գ. Կյուլպենկյանը կտակը կազմել էր ֆրանսերեն լեզվով, որին ազատորեն տիրապետում էր. պատճառը նրա՝ պորտուգալերենի ոչ հստակ իմացությունն էր, ինչպես վկայել է կտակը վավերացնող նոտար Ֆերնանդո Տավարեշ ղը Կարվալիոն⁵: Կտակի բովանդակությունը ֆրանսերենից պորտուգալերեն թարգմանել է Պեդրո Բատալիա Ռեշը Գ. Կյուլպենկյանի ու նրա վկաների՝ Մանուել

¹ Տե՛ս «Արև», թիվ 11.222, 10 նոյեմբեր, 1955:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Այգ», թիվ 738, Պէյրութ, 23 Յուլիս, 1955:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս *Azedo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959.* pp. 191-201.

Անտունն է Ռիբայրոյի և Էոնեստո Պերեյրա դը Ալմեյդայի անմիջական ներկայությունը: Փաստաթուղթը ստորագրվել և վավերացվել է 1953 թ. Հունիսի 18-ին¹: Կտակում բարեգործական Հաստատություն հիմնելու կապակցությամբ գրված է. «Այս կտակով և պորտուգալական օրենսդրությունը համապատասխան՝ ստեղծվել է հիմնարկություն, որը պետք է կրի «Գալուստ Կյուլպենկյան» անունը: Այդ հիմնարկության գործունեությունն իրականացվելու է Հետևյալ սկզբունքներով՝ ա) այն պորտուգալական հարատև հիմնարկություն է, տեղակայման վայրը՝ Լիսաբոն, սակայն անհրաժեշտության դեպքում կարող է մասնաճյուղեր ունենալ քաղաքակիրթ աշխարհի ցանկացած մասում, բ) նրա նպատակները լինելու են բարեգործական, զեղարվեստական, կրթական և գիտական, գ) նրա գործունեությունն իրականացվելու է ոչ միայն Պորտուգալիայում, այլև ցանկացած որևէ երկրում, որտեղ նպատակահարմար կհամարեն նրա ղեկավարները, դ) այն ղեկավարվելու է ստորև նշված հավատարմատարների և նրանց կողմից ընտրված այլ անձանց միջոցով կամ համապատասխան Հողվածներով նախատեսված կարգով»²:

Գ. Կյուլպենկյանը ցանկանում էր, որպեսզի իր կտակակատարները՝ Պերդիգանը, լորդ Ռեդկլիֆն ու Գ. Եսայանը, կտակի գործադրման ժամանակ համագործակցեին Ավետում Հակոբյանի, Լ. Գ. Դենտոնի³, Նուրար Էքսերջյանի⁴, Ջարլզ Ուիչոյի⁵ և Ռոբերտո Կյուլպենկյանի հետ⁶: Հետագայում լորդը հրաժարվեց իր պատականություններից⁷: Տեղին է, թերևս, փաստերի իրական լույսի

¹ *St'ua Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 191-201.*

² Նույն տեղում:

³ Ա. Հակոբյանն ու Լ. Դենտոնը Գ. Կյուլպենկյանի՝ Լոնդոնի գրասենյակի աշխատակիցներից էին (տե՛ս *Gulbenkian N., Portrait in oil, p. 247*):

⁴ Ն. Էքսերջյանը բրիտանական բանակի գեներալ էր, մասնակցել է Երկրորդ Համաշխարհային պատերազմին, եղել է Իրաքի նավթային ընկերության տնօրեններից մեկը (տե՛ս *Ջամբերթեն Ա.*; Երուսաղէմ և Կիւլպենկյաններ, էջ 97):

⁵ Ջ. Ուիչոն Անգլիայի պետական կենտրոնական բանկի իրավաբաններից էր, եղել է Գ. Կյուլպենկյանի խորհրդականներից մեկը (տե՛ս *Gulbenkian N., Portrait in oil, pp. 247-252*):

⁶ *St'ua Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 191-201.*

⁷ *St'ua Ջամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 50, «Արև», թիվ 11.622, 7 մարտ, 1957:*

ներքո անդրադառնալ այդ խնդրին՝ մեկընդմիջտ դնելու պորտուգալացիների կողմից հայ մեծահարուստի կարողությունն ամբողջությամբ տեր կանգնելու նպատակով նրա կտակի կարգադրությունները խախտած և անտեսած լինելու թյուրիմացություն վերջակեսը:

Կտակի՝ լորդին վերաբերող հատվածում նշված է. «...ներկայումս լորդ Ռեդկլիֆին իր պաշտոնական պարտականությունների պատճառով չի կարող ստանձնել պաշտոնը գործադրելու իրավունքը (խոսքը կտակակատարի պաշտոնի մասին է՝ Վ. Ղ.): Սակայն հնարավորինս շուտ, երբ հաղթահարվի խոչընդոտը, նա պետք է անցնի հավատարմատարի և հիմնարկություն գործերի կառավարչության վերադաս տնօրենի պարտականությունների կատարմանը»¹:

Լորդը կիպրոսում սահմանադրական բարեփոխումների գծով Մեծ Բրիտանիայի կոմիսարն էր: Հենց այդ պաշտոնն էլ արգելել է նրան՝ դրազվելու այլ գործով²: «Մարդը և իր գործը» աշխատության մեջ նշված է, որ Ռեդկլիֆին «...անմիջապես հրաժարեցաւ իր պաշտօնէն»³, մինչդեռ Լ. Բալագյանը գտնում է, որ «...երկարատև բողոք-նամակագրություն միջոցով իր դժգոհությունն ու անհամաձայնությունը պաշտոնապես հայտնելուց հետո՝ ուղղված Սոսե Դև Աղերեղո Պերդիգաոյին»⁴ և չհանդուրժելով նրա թելադրանքով կատարված պորտուգալական իշխանությունների կամայականությունները՝ դուրս եկավ կտակակատարի իր պարտականություններին⁵:

Դատելով Պերդիգանի և Ռեդկլիֆի միջև տեղի ունեցած նամա-

¹ *Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 197.*

² Տե՛ս «Արև», թիւ 11.6.22, 7 մարտ, 1957, *Gulbenkian N., Portrait in oil, p. 246.*

³ **Չամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 50:

⁴ Պորտուգալերենից հայերեն սխալ է թարգմանված *Joze Azeredo de Perdigao* անունը: Այդ լեզվի -ao վերջավորությամբ բառերը հայերեն թարգմանելիս բառավորում ունենում են -ու. *Sao Paulo* բառի հայերեն թարգմանությունն, օրինակ, կլինի Սան Պաուլո, այլ ոչ թե Սաո Պաուլո: Հետևաբար *Perdigao*-ի հայերեն ճիշտ թարգմանությունը Պերդիգանն է: Նշված սխալը տեղ է գտել սիլուոբահայ մամուլում, որն էլ, մեր կարծիքով, շարունակել է կրկնել հեղինակը՝ պորտուգալերենին չփորապետելու պատճառով:

⁵ Տե՛ս **Բալագյան Լ.**, նշվ. աշխ., էջ 249:

կազրույթյան տևողութունից (Հունվարի 16 – Հունիսի 1, 1956 թ.)՝ կարելի է եղրակացնել, որ Գ. Կյուպենկյանի մահից հետո այնքան էլ երկար ժամանակ չէր անցել, երբ լորդը հրաժարվեց իր պարտականություններից: Ռեդկլիֆը չէր ընդունում կտակի որոշ կետերի մեկնարանություններ, բայց պնդել, որ այդ կետերն աղճատվել կամ վերափոխվել էին, ճիշտ չէ, քանզի կտակը կազմելու պահին լորդն անձամբ ներկա չի եղել այդ գործընթացին և բնական է, որ քաջատեղյակ չէր Գ. Կյուպենկյանի վերջին ցանկություններին: Ռեդկլիֆը հիշատակում է, թե ծանոթ էր հայ նավթարդյունաբերողի՝ հասարակական-բարեգործական հիմնադրամ ստեղծելու մտադրությունը և նշում, որ որևէ երկրի օգնելու հարցում նա որևէ մեկին առաջնություն չէր տալիս՝ շեշտելով դրա համամարդկային բնույթը¹: Գ. Կյուպենկյանի անգլիահպատակ կտակակատարը հասկանալի պատճառներով դեմ էր այն իրողությունը, որ 1942 թ. Լիսաբոնն իր վերջին հանգրվանը դարձրած տնտեսական գործիչը որոշեց ստեղծվելիք բարեգործական հաստատություն մայր կառույցը տեղակայել Երկրորդ աշխարհամարտում չեղորոշյուն պահպանած Պորտուգալիայում՝ այն համարելով ապահով երկիր: Սակայն դա չէր նշանակում, թե հաստատությունը ծառայելու էր միայն Պորտուգալիային ու նրա ժողովրդին:

Պերդիգանին ուղղված 1956 թ. փետրվարի 27 թվակիր իր նամակում Ռեդկլիֆը գրում էր. «...իսկապես, կտակի այն կետը, որով կտակարարն արտահայտում էր իր ցանկությունն՝ ստեղծել Լիսաբոնում տեղակայված «պորտուգալական հարատև հիմնարկություն», ճշգրտում է, որ այդ հաստատության նպատակները լինելուն մարդասիրական, զեղարվեստական, կրթական ու գիտական, և որ գործունեությունը չի իրականացվելու միայն Պորտուգալիայում, այլ նմանապես բոլոր այն երկրներում, որտեղ նպատակահարմար կհամարեն նրա կառավարիչները: Անկարելի է արհամարհել այս բաների կարևորությունը»²: Ուրեմն, ո՞րն էր խնդիրը. առավել ևս, երբ հետագայում հիմնարկությունը ներկայացուցչական կենտրոններ բացեց Լոնդոնում, Փարիզում, Բեյրութում, Հայկազում և այլուր³:

¹ Տե՛ս Gulbenkian N., Portrait in oil, pp. 331-332.

² Նույն տեղում, էջ 330-337:

³ Տե՛ս <http://www.gulbenkian.org.uk>, <http://www.gulbenkian-paris.org> [այցելությունները կայք էջեր կատարվել են 20.07.2008 թ.]:

Ինչու՞ էր մի տեղ յորդը Հաչվի նստում Գ. Կյուլպենկյանի կտակի կետերի Հետ, որոնք վերարերում էին Հիմնարկության նպատակներին ու տեղակայման վայրին, մեկ այլ տեղ առարկում, թե կտակարարը մտադիր էր իր նյութական բոլոր միջոցները, կամ դրանց մի ինչ-որ մասը Պորտուգալիային Հատկացնել¹: Ճիշտ է՝ Ռեզկլիֆը դժգոհում էր, թե Գ. Կյուլպենկյանն իր Հարստությունը ձեռք չի բերել Պորտուգալիայում կամ պորտուգալական պետության Հովանավորությանը կատարված գործարքների արդյունք է, սակայն միևնույն ժամանակ մոռանում էր նշել, որ այդ Հարստությունը ձեռք էր բերվել Իրաքում, իսկ անգլիական իշխանություններն էլ ոչ թե Հովանավորել, այլ ժամանակ առ ժամանակ խոչընդոտել էին Հայ նավթարդյունարերողի գործունեությունը²:

Ո՛չ Պերդիգանը, ո՛չ էլ պորտուգալական իշխանությունները թույլ չէին տա, որ Հիմնարկության կենտրոնատեղին տեղափոխվեր Պորտուգալիայի սահմաններից դուրս, քանի որ ունեին միանգամայն Համոզիչ իրավական Հիմքեր՝ պարփակված կտակի Հետևյալ կետում. «...գործերի կառավարչության (Հիմնարկության) կենտրոնը պետք է գտնվի Լիսաբոնում»³: Այլ Հարց է, եթե Ռեզկլիֆը փորձում էր շահարկել կտակի՝ «...Հիմնարկության գործունեությունը չի իրականացվելու միայն Պորտուգալիայում...»⁴ Հատվածը՝ Հովանարար նպատակ ունենալով ոչ Հեռավոր ապագայում որպես Հաստատության կենտրոնատեղի բնտրել Լոնդոնը: Ճիշտ է՝ Պերդիգանին ուղղված նամակներում նա բացահայտ ոչ մի ակնարկ չի արել այդ կապակցությանը, սակայն դրանց բովանդակությունից նշմարվում էր յորդի Հիշյալ մտադրությունը: Օրինակ, Ռեզկլիֆն այն կարծիքին էր, թե Գ. Կյուլպենկյանի կտակի որոշ ձևակերպումների մեկնաբանությունը Հնարավոր էր այլ իրավազետների կողմից վիճարկել՝ Հիմք ընդունելով այն Հանգամանքը, որ այդ ձևակերպումները չափազանցված կարեորություն են տալիս Հիմնարկության գտնվելու վայրի ընտրությանն ու այն ղեկավարող օրենսդրությունը⁵: Կասկածից դուրս է, որ այդ քայլն արդեն յուրօ-

¹ Sli'a Gulbenkian N., Portrait in oil, pp. 330-337.

² Sli'a նույն տեղում, էջ 352:

³ Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 197.

⁴ Նույն տեղում, էջ 195:

⁵ Sli'a Gulbenkian N., Portrait in oil, p. 332, Բալադյան Լ., նշվ. աշխ., էջ 246:

րինակ իրավական խառնաշփոթ ստեղծելու փորձ էր, որպեսզի Հիմնարկուծյան գլխավոր կառույցը չտեղակայվեր Պորտուգալիայում. հաջողութան դեպքում որպես հաստատութան կենտրոնատեղի կարող էր համարվել Մեծ Բրիտանիան: Միանգամայն տեղին է կարծել, որ չհասնելով այդ ամենին և խոչընդոտների հանդիպելով՝ իրականացնելու կտակակատարի իր պարտականությունները, որոնց մասին նշված էր նաև կտակում, լորդ Ռեդկլիֆը հրաժարական տվեց:

Ավելի պարզ էր Ն. Կյուլպենկյանի խնդիրը: Գ. Կյուլպենկյանի կտակակատարներն ու Հիմնարկուծյան պատասխանատու, ղեկավար գործիչները ոչ միայն իրավական հիմքեր ունեին հաշվի չառնելու որևէ խնդրի կամ հատկացման վերաբերյալ նրա կարծիքը, այլև օժտված էին լայն իրավասություններով՝ Նուրարին չեղոքացնելու «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկուծյան գործերին միջամտելուց¹: Գ. Կյուլպենկյանի կտակի 18-րդ կետի կապակցությամբ Ռ. Հյուլինսը գրում էր, թե ամենավերավորականն այն ակնարկն էր, որի համաձայն՝ Նուրարը կարող էր կտակակատարների կողմից դիտվել որպես հնարավոր համակտակակատար, եթե դա խոհեմ համարվեր²: «Պարոն Հինգ տոկոսը» գտնում էր, որ Նուրարը չի գիտակցում զրամի գինը և շատ վշտացած էր որդու փիլիսոփայությամբ՝ «...կյանքի իմաստն այն վայելելու մեջ է...»³, որն էլ, ըստ Գ. Կյուլպենկյանի, նշանակում էր զրամի անխնա վատնում⁴:

Ստեղծվելիք բարեգործական հաստատութան բարձրագույն ղեկավար մարմինը՝ Տնօրենների ժողովը, սերտորեն համագործակցելու էր նաև «Պարոնայք Թոմսոն Մակ Լինտոկ և միություն» անգլիական Հոչակավոր հաշվապահական ընկերության հետ, իսկ Հույժ կարևոր ֆինանսական խնդիրները պետք է լուծվեին ամերիկյան որևէ բարձրակարգ բանկի հետ խորհրդակցելու միջոցով, ինչպիսին օրինակ «Ձեյդ» Ազգային բանկն էր⁵:

¹ *Sl'u Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, p. 198.

² *Sl'u Hewins R.*, նշվ. աշխ., էջ 40:

³ *Sl'u նույն տեղում*, էջ 164:

⁴ *Sl'u նույն տեղում*:

⁵ *Sl'u Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, pp. 195-197.

Հիմնարկութեան Հիմնադրման աշխատանքներն ավարտվեցին Հաջողութեամբ և 1956 թ. Հաստատութիւնն սկսեց իր գործունեութիւնը: Նրա առաջին նախագահը դարձավ Ժ. Ազեբերդո դը Պերդիգանը¹: Կտակարարի Հարադատներին թույլատրված էր անդամակցել Հիմնարկութեան Տնօրենների ժողովին²: Ներկայումս ժողովի ինը տեսուչներից մեկը Գ. Կյուլպենկյանի ծոռն է, Միքայել Եսայանի որդին՝ Մարտին Եսայանը³, որը նաև կառույցի՝ Լոնդոնի ներկայացուցչութեան պատասխանատուն է, իսկ Միքայել Եսայանը Հանդիսանում է Հիմնարկութեան ցմահ պատվավոր նախագահը⁴:

Գ. Կյուլպենկյանը Հիմնարկութեանը կտակեց նաև արվեստի գործերի իր Հարուստ Հավաքածուն (ավելի քան 6 Հազ. նմուշ) և նավթարդյունարերութեան մեջ ունեցած շահարածինը⁵: Հաստատութեան սեփականութիւնը դարձան Իրաքի նավթային ընկերութեան և նրա դուստր կազմակերպութիւնների 7.365.520 բաժնեթղթերը, որոնցից յուրաքանչյուրը գնահատված էր մեկ անգլիական ոսկի⁶: Գ. Կյուլպենկյանի Հիմնած բարեգործական Հաստատութեան կանոնադրական կապիտալը 1955 թ. կազմեց չուրջ 65 միլիոն ԱՄՆ դոլար⁷: Հետագայում այն անընդհատ աճել է՝ 1958-ին Հասնելով 99.117.620 դոլարի⁸, իսկ 1989-ին՝ մոտ 1 մլրդ. 180 մլն.-ի⁹: Յուրաքանչյուր տարի Հիմնարկութեան Հաստիքներից կատարվել

¹ Տե՛ս Gulbenkian N., Portrait in oil, pp. 269-270.

² Տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 179-184, **Զամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 51:

³ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=48> [այցելութիւնը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

⁴ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=568> [այցելութիւնը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.], **Զամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 60:

⁵ Տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 23-32, **Դալլաքյան Կ.**, նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 6-7, «Պայքար», թիւ 114 (19105), Մայիս 20, 1969:

⁶ Ավելի մանրամասն տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 23-32, 205. «Արև» օրաթերթը բաժնեթղթերի թիվը ներկայացնում է 7.144.020 (տե՛ս «Արև», թիւ 12.506, 27 Յունուար, 1960): Հավաստի թիվը Պերդիգանի պաշտոնական ղեկույցում տրվածն է՝ 7.365.520:

⁷ Տե՛ս Դալլաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 7:

⁸ Տե՛ս «Արև», թիւ 12.506, 27 Յունուար, 1960:

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ.420, ց. 86, դ. 8, թ. 31:

են րաչխումներ, որից հետո մնացած գումարը հավելվել է ակտիվին: Կապիտալի ուժնացման մասին կարելի է դատել հիմնարկութան հասույթների և ծախսերի տվյալներից, որոնք հրապարակվել են նրա գործունեությունից 25-ամյակի առիթով¹: 2004 թ. «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության նյութական կարողությունն զգալիորեն ավելացել է՝ գրանցելով հիմնական դրամագլխի 5.6 տոկոս աճ, որը կազմել է 123.7 միլիոն Լիրո²: Հաստատությունից զուտ ակտիվը 2003 թ. 2 մլրդ. 214.6 մլն.-ի փոխարեն 2004 թ. կազմել է 2 մլրդ. 338.3 մլն. Լիրո³: Այդ աճը պայմանավորված էր նավթի և գազի արդյունարևութան մեջ հիմնարկության ունեցած արժեթղթերի ավելացմամբ, որն ապահովել է շահարաժին 6.75 տոկոս ընդհանուր աճ: 20 տոկոսով ավելացել են նաև նավթի և գազի վաճառքից ստացվող հիմնարկության հասույթները⁴: Հարկ է նշել, որ 1974 թ. Իրաքի նավթային ընկերության հողատարածքների ազգայնացումից (գործընթացն սկսվել էր 1960-ական թվականների վերջերից⁵) և ընկերության լուծարումից հետո Իրաքի կառավարությունը կասեցրեց հիմնարկության՝ այդ երկրում ունեցած նավթային եկամտի արտոնությունը և որպես փոխհատուցում նրան վճարեց շուրջ 13 միլիոն դոլար⁶: Նավթահորերի ազգայնացումից

¹ Տե՛ս հավելվածում՝ աղյուսակ 1:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 5, թ. 2:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Իրաքի նավթային ընկերության նավթահորերի ազգայնացման մասին ավելի մանրամասն տե՛ս *The lessons and consequences of the nationalization of the "Iraq Petroleum", by Dr. R. Andreasyan, The international seminar on Oil as a weapon, Baghdad, November 11-14, 1972; published by The Permanent Secretariat of the A.A.P.S.O., Manial Cairo, A.R.E., October, 1974, pp. 269-280.*

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 4, Calouste Gulbenkian Foundation, *Report of the accountancy checking commission, Relating to the year 1978, Lisbon, 1979, pp. 3-5.* Պետք է նշել, որ տարրեր պետություններում օտարերկրյա նավթային ընկերությունների ազգայնացման գործընթացը միշտ չէ, որ հարթ է ընթացել: Օրինակ, 1948 թ. Հունգարիայի կառավարությունն իր № 9,960 Հրամանագիր-օրենքով առանց որևէ փոխհատուցման, ուժի կիրառմամբ ազգայնացրեց «Ստանդարտ օյլ» ընկերությանը (*Standard Oil Company - Նյու Ջերսի / ԱՄՆ*) պատկանող Հունգարա-ամերիկյան նավթային ընկերությունը (*Magyar Amerikai Olajipari Reszvenytarsasag, կարճ՝ MAORT*) (ավելի մանրամասն տե՛ս *European Gas & Electric Company, Standard Oil Company (New Jersey), Standard Oil Company (New Jersey) and oil production in Hungary by MAORT: 1931-1948. Copyright 1949, European Gas & Electric Company, printed in U.S. A., N. Y. 1949*):

Հետո Հաստատութիւնն ստեղծեց նաւթային և գազի արդյունահանման նոր ընկերութիւններ, որոնք Հիմնականում գործում էին Օմանում, Բրազիլիայում, Ալժիրում և Ղազախստանում¹: 1998 թ. մարտին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութիւնը գնեց Partex կորպորացիայի բաժնետոմսերի ողջ փաթեթը և դարձավ նրա լիարժեք սեփականատերը²: Հիմնարկութիւնն ղրամազլխի աճը կապված էր նաև Օմանի սուլթանութիւնն կողմից Partex ընկերութիւնն Հետ ունեցած պայմանագրի վերանայման ու վերահաստատման Հետ, որի արդյունքում ավելացվել են այդ երկրի տարածքից արդյունահանվող նավթի ծավալները, իսկ պայմանագրի վավերութիւնն ժամկետը երկարաձգվել է մինչև 2044 թ.³: 2005 թ. «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութիւնն ընդհանուր ղրամազլխին արդեն կադմում էր 2 մլրդ. 755.8 մլն. եվրո՝ նախորդ տարվա ղրամազլխի Համեմատութիւնը արձանագրելով 17.9% աճ⁴: 2006-ին Հիմնարկութիւնն ողջ նյութական կարողութիւնն անցել էր 3 մլրդ. եվրոյի սահմանը (3 մլրդ. 77.5 մլն.)⁵:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութիւնն Հիմնադրումից գրեթե երեք տարի անց նրա ղեկավարները նշում էին, որ գործադրված ջանքերի արդյունքում Հնարավոր է դարձել Հաղթահարել բոլոր խոչընդոտները և ապահովել Հաստատութիւնն անխափան գործունեութիւնը⁶: Անշուշտ, տիտանական աշխատանք էր պահանջվում Հիմնարկութիւնն Տնօրենների ժողովից, որպեսզի լավագույնս կարողանար պաշտպանել Հաստատութիւնը կտակված նյութական աճովի կարողութիւնը և իրականացնել կտակարարի բոլոր կարգադրութիւններն առանց պորտուգալական օրենսդրութիւնն Հետ լուրջ Հակասութիւններ ունենալու. Պորտուգալիայում բազմամիլիոնանոց ղրամազլխով բարեկրթական կազմակերպու-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 6-8:

² Նոյն տեղում, թ. 4: Partexի կենտրոնական գրասենյակը 1996 թ. Լոնդոնից տեղափոխվեց Լիխտենշտեյն:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 4:

⁴ Տե՛ս <http://www.gulbenkian.org/english/report2005/Apresentacao.pdf>, p. 13 [այցելութիւնը կայք էջ կատարվել է 15.09.2006 թ.]:

⁵ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/11.pdf>, p. 11 [այցելութիւնը կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.]:

⁶ Տե՛ս «Արև», թիւ 12.506, 27 Յունուար, 1960:

Թյուն Հիմնելու նախագիծեր չէին գրանցվել¹:

Հիմնադրումից ի վեր Հիմնարկություն Տնօրենների ժողովը պարբերաբար պատրաստում և հրատարակում է Հաստատությունների գործունեությունը նվիրված տարեկան տեղեկատու մատյաններ: Հաստատությունների գեներալներն, ինչպես արդեն նշվել է, հրատարակվել են նաև սփյուռքահայ մամուլում²:

1956 թ. Պերդիգանը մշակեց «Գալուստ Կյուպենկյան» Հիմնարկության կանոնադրությունը, որն ապահովեց նրա անկախ իրավական կարգավիճակը պետությունից³: Նույն թվականի Հուլիսի 18-ին Պորտուգալիայի կառավարությունն իր թիվ 40690 հրամանագիր-օրենքով Հիմնարկությանն օժտեց իրավաբանական անձի կարգավիճակով և նկատի ունենալով նրա բարեսիրական բնույթն ու նպատակները՝ ազատեց բոլոր տեսակի հարկերից⁴: Այդ երկրի իշխանություններն ի լուր աշխարհի հայտարարեցին, որ. «...կարելի է ուրանալ այն իրողությունը, որուն համաձայն մեր երկրին փստահուցաւ այսքան մեծ և սքանչելի կտակի մը պահ-

¹ Տե՛ս Ժ. Ալբերգո դը Պերդիգանի՝ 1956 թ. մարտի 22-ի նամակը լորդ Ռեդ-կլիֆին. *Gulbenkian N., Portrait in oil*, p. 350.

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, *Grants, 1956-1962, 1963-1965*, «Արև», Թիւ 12.503, 23 Յունուար, 1960, «Պայքար», Թիւ 52 (19043), Մարտ 7, 1969 և այլն:

³ Տե՛ս Azeredo de Perdigao J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, pp. 19-22, 179-187: Ինչպես իրավաբանական նկատելի է «Ֆորդ» Հիմնարկության նախագահներից մեկը՝ Մակ Ջորջ Բանդին, բարեգործական որևէ Հաստատության անկախ իրավական կարգավիճակը պետությունից չի նշանակում. Թե այդ կարգավիճակները կարող է կատարել այն, ինչ կամենում է: Ըստ նրա՝ «...Հիմնարկությունների ազատությունն, առավել քան երբևէ, նրանց ամենախանդավառ հարատու թյունն է և, անշուշտ, ճշմարիտ է, որ պետական վերահսկողությունը կարող է ոչնչացնել այդ ազատությունը» (տե՛ս *The Ford Foundation Annual Report: 1969*, p. XIX):

⁴ Տե՛ս Azeredo de Perdigao J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, pp. 185-187. *Gulbenkian N., Portrait in oil*, pp. 269, 281, **Չամբերթին Ա.**, Մարդը և իր գործը, էջ 50-51, «Արև», Թիւ 12.506, 27 Յունուար, 1960: Հարկ է նշել, որ ոչ բոլոր պետություններն էլ ին բարեգործական Հաստատություններին լիարժեքորեն ազատում հարկերից: ԱՄՆ-ի կոնգրեսն, օրինակ, 1969 թ. ընդունեց օրենք, ըստ որի՝ երկրի տարածքում գործող Հիմնադրամներից ու բարեգործական Հիմնարկություններից զանձվելու էր ակնյիղային հարկ՝ նրանց տարեկան եկամտի չորս տոկոսի չափով (ավելի մանրամասն տե՛ս *The Ford Foundation Annual Report: 1969*, pp. XV-XXIII):

պանութեան գործը. Հիմնարկութեան վարիչները, մեծագոյն մասամբ փորձուկացիներ, վստահ ենք թէ պիտի պատուեն կատարելապէս իրենց յանձնուած այս վստահութիւնը, իրենց ճշգրիտ և ուղղամիտ գործունէութեամբ ի գործ դնելով կտակարարին կամբքը»¹:

Բարեգործական այս հաստատութեան պատկերն առավել հստակ արտացոլելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նրա կանոնադրութեան այն կարևոր հոդվածներին, որոնք վերաբերում են կառուցի տեղակայման վայրին, Տնօրենների ժողովի ֆունկցիաներին և ֆինանսական միջոցների տնօրինմանը²:

Իրավական առումով «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութունը հանրային օգուտի մասնավոր կառույց է՝ օժտված իրավարանական անձի կարգավիճակով (գլուխ 1-ին, հոդված 1): Հաստատութունը կառավարվում է Հիշյալ կանոնադրութեամբ: Այն մշտնջենապես պորտուգալական է (հոդված 2), տեղակայման վայրը՝ Լիսաբոն (հոդված 3) և որևէ թերացման դեպքում ղեկավարվելու է պորտուգալական համապատասխան օրենքով:

Հիմնարկութունը կարող է մասնաճյուղեր Հիմնել աշխարհի ցանկացած մասում (հոդված 5), որոնք ստեղծվել և ներկայումս գործում են Լոնդոնում ու Փարիզում: Հիմնարկութեան նպատակները բարեգործական, զեղարվեստական, կրթական ու զիտական են (հոդված 4): Կանոնադրութեան մեջ նշված է նաև Գ. Կյուլպենկյանի կտակով նախատեսված որոշ նպատակային նվիրատվութունների մասին, որոնք կատարվելու էին Ստամբուլի Սուրբ Փրկիչ Հայկական Հիվանդանոցի և Երուսաղեմի «Գալուստ Կյուլպենկյան» զրադարանի օգտին (հոդված 7):

Հիմնարկութեան ղրամագլխի մասին խոսվում է կանոնադրութեան 3-րդ գլխում: Հիշյալ գլխի 8-րդ հոդվածում նշված է, որ հաստատութեան ղրամագլուխը կազմված է կտակարարի ունեցվածքի ողջ ակտիվից՝ անկախ զրա բնույթից և տեղակայման վայրից, և թի

¹ «Արև», թիւ 12.506, 27 Յունուար, 1960, «Այգ», թիւ 1298, Մայիս 23, 1957, *Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 185-186.*

² Մանրամասն տե՛ս *Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 179-184, «նթան» շաբաթաթերթ, թիւ 120, 121, Փարիզ, 26 Սեպտեմբեր, 3 Հոկտեմբեր, 1957:*

կտակարարի կամքով այլ նպատակներ նախատեսված չեն: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութունն իրավունք ունի իր լիազորութունների ու կարողութունների սահմաններում եկամուտներ ունենալ և ընդունել բոլոր այն նվիրատվութունները, որոնք կարող են կատարվել Հասարակական գործիչների կամ կազմակերպութունների կողմից:

Հիմնարկության կառավարումն իրականացվում է Տնօրենների ժողովի կողմից, որը բաղկացած է ինն անդամից՝ տեսուչներից¹: Նրանցից մեկը Հաստատության Տնօրենների ժողովի նախագահն է (Հոդված 4): Կանոնադրությամբ շեշտված է նաև, որ Ելնելով Հիմնարկության՝ պորտուգալական լինելու հանգամանքից՝ Տնօրենների ժողովում պետք է գերակշռեն ազգությամբ պորտուգալացիները (Հոդված 11): Կտակարարի ցանկությամբ տեսուչներից մեկը Գ. Կյուլպենկյանի ուղիղ գծով արշունակից Հետնորդն է (Հոդված 12), որն զբաղեցնում է նաև Հիմնարկության պատվավոր նախագահի պաշտոնը, թեև դա կրում է զուտ խորհրդանշական բնույթ (Հոդված 13):

Հիմնարկության Հիմնադրի կողմից ընտրված Տնօրենների ժողովի առաջին անդամների գործառույթները ցմահ էին (Հոդված 18): Ժողովում ցմահ գործառույթներ ունի նաև Գ. Կյուլպենկյանի արնակից Հետնորդը, իսկ մնացած անդամները ենթակա են վերընտրման պաշտոնավարման Հինգ տարի ժամկետը լրանալուց Հետո (Հոդվածներ 20, 21), որից նվազագույնը 19 օր առաջ ժողովը որոշում է թեկնածուներին Հաստատելու կարգն ու զաղտնիքվեարկության միջոցները: Տնօրենների ժողովի անդամի վերընտրության հարցը վճռվում է նշված մարմնում աշխատանքային երկար տարիների փորձ ունեցող երկու տեսուչի, իսկ նույն պարտականութուններին թողնելը՝ ժողովի երկու տարեց անդամի կողմից: Կտակի համաձայն՝ բոլոր տեսուչները վարձատրվում են:

Կանոնադրության 5-րդ գլխում նշված է Հաստատության ֆինանսական միջոցների վերահսկողության մասին: Յուրաքանչյուր տարի Տնօրենների ժողովը պետք է կազմի Հիմնարկության նվիրատվութունների ճշգրիտ գույքացուցակ և սլաութաստի եկամուտ-

¹ Տե՛ս Սվյուոբահայ կազմակերպութուններ, էջ 16:

ների ու ծախսերի պաշտոնական հաշվետվություն: Հիմնարկու-
թյան հաշվետվությունների ստուգումը մշտապես գտնվում է «Ար-
տոնագրված հաշվապահներ» կաղմակերպությունից հսկողության
ներքո (հոդված 23): Ի հավելումս զրա՝ ստեղծվել է նաև հաշվա-
պահական ստուգող հանձնաժողով, որի աշխատանքներում ներ-
գրավված են Պորտուգալիայի «Հանրային հաշվապահություն»,
«Հանրային աջակցություն» կաղմակերպությունների գլխավոր
տնօրենները, Պորտուգալիայի «Բանկերի ազգային խորհրդի և
բանկային գործի ընկերություն», Լիսաբոնի Գիտությունների և Ար-
վեստի ակադեմիաների աշխատակիցները: Այս վերջին երեք
անդամի գործառույթները նախատեսված են Հինգ տարի ժամկե-
տով և ենթակա են վերընտրման ու վերահաստատման (հոդված
24):

Հաշվապահական ստուգող հանձնաժողովը պետք է մինչև յու-
րաքանչյուր տարվա Հունիսի երեսունն ստուգի հիմնարկության
նվիրատվությունների ցանկը և նախորդ տարվա եկամուտների ու
ծախսերի պաշտոնական հաշվետվությունը՝ հիմք ընդունելով «Ար-
տոնագրված հաշվապահների» ղեկույցներն ու փաստաթղթերը
(հոդված 25): Նված հանձնաժողովի ղեկույցը հրատարակվում է
հիմնարկության միջոցներով¹: Հանձնաժողովի բոլոր անդամները
վարձատրվում են, որի չափը որոշվում է հիմնարկության Տնօրեն-
ների ժողովի կողմից (վարձատրության չափը կարող է փոփոխվել
յուրաքանչյուր երեք տարին մեկ):

Կանոնադրության 6-րդ գլխի պահանջներին համապատասխան՝
հիշյալ փաստաթղթի վավերացումից հետո Տնօրենների ժողովի
ցմահ պաշտոնավարողներն ընտրեցին ժողովի մնացած անդամնե-
րին (հոդված 28), իսկ հաշվապահական ստուգող հանձնաժողովը
վերջնականապես ձևավորվեց կանոնադրության վավերացումից
հետո՝ 60 օրվա ընթացքում (հոդվածներ 29, 30): Հիմնարկության
առաջին գույքացուցակի և պաշտոնական հաշվետվության աշխա-
տանքներն ավարտվեցին մինչև 1957 թ. դեկտեմբերի 31-ը²:

¹ Տե՛ս, օրինակ, Calouste Gulbenkian Foundation, Report of the accountancy checking commission. Relating to the year 1961, Lisbon 1962.

² Տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 179-184:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը գտնվում է Լիսաբոնի գրեթե կենտրոնում: Հաստատություն կենտրոնավայրն ու «Գալուստ Կյուլպենկյան» Թանգարանը (բացվել է 1969 թ.¹ ցուցադրություն Հանելով արվեստի գործերի 6 Հաղ.-ից ավելի նմուշ) դրադեցնում են մոտ 25 Հաղ. քառակուսի մետր տարածություն: Թանգարանի շենքում է գտնվում Հիմնարկության ընդհանուր գրադարանը, որտեղ պահվում է շուրջ 125 Հաղ. գիրք¹: Կենտրոնավայրի մասնաշենքը քառահարկ է, ունի 125 մետր երկարություն և 25 մետր ընդհանուր լայնություն: Այդտեղ է նստում Հիմնարկության գեկավարությունը: Մասնաշենքն ունի երկու ստորգետնյա հարկ և ընդարձակ լսարան, որը նախատեսված է տարրեր միջոցառումների համար: Գլխավոր մասնաշենքում են գտնվում նաև Փոքր լսարանը և երկու ցուցասրահ: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության մասն են կազմում Ժ. Աղերեղոզը Պերդիդանի անվան Արդիական արվեստի (բացվել է 1983-ին) և մշակույթի կենտրոնները: Այս վերջինն ունի գերժամանակակից սարքավորումներով հագեցած և մշակութային տարրեր միջոցառումների համար նախատեսված ընդարձակ սրահ, ինչպես նաև ժողովասրահներ ու գրադարաններ, որոնք բաց են հանրության առջև և նախատեսված գեղարվեստական դաստիարակության համար²: Հաստատությունում գործում են նաև սիմֆոնիկ, երգի, պարի (բալետի խումբը փակվել է 2006 թ.) տարրեր խմբեր: Երաժշտության բաժինը հովանավորում և խրախուսում է կոմպոզիտորների ստեղծագործական գործունեությունը: Պորտուգալիայի Օերաչ քաղաքում է գտնվել «Գալուստ Կյուլպենկյան» գիտությունների ինստիտուտը, որտեղ Հետադրություններ են կատարվել կենսատեխնոլոգիայի, մանրէակենսաբանության և գենետիկայի բնագավառներում³: Այդ աշխատանքներում ներգրավված էր նաև Հայաստանի Գիտու-

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.org/english/headoffice.asp> խոսքերը կայք էջ կատարվել է 10.09.2006 թ.՝ Չամբերթեն Ա., Մարզը և իր գործը. էջ 51, ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 33:

² Տե՛ս Չամբերթեն Ա., Մարզը և իր գործը. էջ 51-54, ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 33-34:

³ Տե՛ս Դալարյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 8-9, Չամբերթեն Ա., Մարզը և իր գործը, էջ 53-54, ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 8, թ. 33:

Թյունները ակադեմիայի մանրէակենսաբանության ինստիտուտը: Հիմնարկությունն ունի նաև գիտական, տեղեկատվական, կրթական, ֆինանսական, միջազգային, բյուջետային և առողջապահական բաժանմունքներ¹:

Հաստատության համալիր կառույցների շուրջը փռված է գրքերի 7 հեկտարանոց «Գալուստ Կյուլենկյան» պարտեզը (նախկինում՝ Սանտա Գերտրուդեսի այգի), որը 1957 թ. գնվել է Լիսաբոնի Քաղաքային խորհրդից²: Պարտեզի կենտրոնում գտնվում է բացօթյա ամֆիթատրոնը, ուր կազմակերպվում են ջազի տոնակատարություններ և ամառային հանդեսներ, իսկ նրա մուտքի մոտ տեղակայված է զեղարվեստական դաստիարակության կենտրոնը: Գ. Կյուլենկյանի անվան պարտեզը նախագծել և կառուցել են Գոնսալո Ռիբեյրո Տելլեսը և Անտոնիո Վիանա Բարեյրոն: Նրանք սերտորեն համագործակցել են «Գալուստ Կյուլենկյան» հիմնարկության շենքերի ճարտարապետներ Ալբերտո Ժոզե Պեսսոայի, Պեդրո Ֆերեյրա Սիդի և Ռուի Ժերվիս դը Ադուզիայի հետ³:

Ինչպես նշվեց, ներկայումս «Գալուստ Կյուլենկյան» հիմնարկության հանձնախմբեր են գործում միայն Լոնդոնում և Փարիզում⁴: Փարիզի «Գալուստ Կյուլենկյան» մշակութային կենտրոնը (բացվել է 1965 թ.) գտնվում է Իննա պողոտայում տեղակայված Գ. Կյուլենկյանի նախկին ապարանքում⁵: Այդ կենտրոնը 1968 թվականից ի վեր կազմակերպում և վարում է ղանաղան դասընթացներ, գիտաժողովներ, համերգներ, նվագահանդեսներ և ցուցահանդեսներ: Ունի հասարակության համար բաց և մատչելի գրադարան, աշխատանքներ է կատարում պոր-

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=6> [այցելութունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

² Տե՛ս <http://www.gulbenkian.pt/Jardins/> [այցելութունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.], Azeredo de Perdigao J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, p. 137.

³ Տե՛ս Azeredo de Perdigao J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, p. 138, Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 52-53:

⁴ Տե՛ս <http://www.gulbenkian.org.uk>, <http://www.gulbenkian-paris.org> [այցելութունները կայք էջեր կատարվել են 20.07.2008 թ.], Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 54-55:

⁵ Տե՛ս Չամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 54, ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 4, թ. 25:

տուգայա-փրանսիական մշակութային կապերի լուսարանման ուղ-
ղությամբ¹: Հիմնարկության միջոցներով Փարիզում կառուցվել և
«Միջազգային Համալսարանական ոստանին» է նվիրվել *Residence*
Andre de Gouvencia-ի մասնաշենքը, որը տարրեր տարիների ընթաց-
քում ընդունել է Հայ, պորտուգալացի և այլազգի բազմաթիվ
ուսանողներին²:

Լոնդոնի գրասենյակը (բացվել է 1956 թ.) վերահսկում է Հիմ-
նարկության՝ Անգլիայում և Իռլանդիայում ունեցած նյութական ու
դրամական միջոցները³: Այդ կենտրոնը կրթամթոշակներ է բաշխում
պորտուգալացի ուսանողներին, որոնք սովորում են Մեծ
Բրիտանիայի Համալսարաններում, զբաղվում է պորտուգալա-
բրիտանական մշակութային կապերի ուսումնասիրություններով և այլն⁴:
Մերձավոր Արևելքի երկրներից առաջինը, որտեղ «Գալուստ
Կյուլպենկյան» Հիմնարկությունն իրականացրեց բարեգործական
ծրագրեր, Իրաքն էր: Այդպիսի քաղաքականությունը պայմանա-
վորված էր այն հանգամանքով, որ Հաստատությունը Հասույթների
գերակշիռ բաժինը գոյանում էր այդ երկրի տարածքում գտնվող
նավթահորերից⁵: 1960-ական թվականներին Հիմնարկությունը
Բազդադում կառուցել է «Հին արվեստի թանգարանն» ու զլխավոր
մարդաղաչտը⁶:

Անցնելով առաջ՝ նշենք, որ Հաստատությունը նպաստառուների
ցանկում ներառված են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ամերիկայի
Միացյալ Նահանգները, Հարավաֆրիկյան Հանրապետությունը,
Ալբանիան, Գերմանիայի Ֆեդերատիվ և Դեմոկրատական Հանրա-
պետությունները (ներկայիս Գերմանիայի Դաշնային Հանրապե-
տությունը), Սաուդյան Արաբիան, Արգենտինան, Ավստրալիան,
Ավստրիան, Բելգիան, Բենինը, Բրազիլիան, Բուլղարիան, Կամե-
րունը, Կանադան, Ցեյլոնը, Չեխոսլովակիան (ներկայիս Չեխիան և

¹ Տե՛ս **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 54, ՀԱԱ. ֆ. 420, ց. 86, գ. 4՞ թ.
25:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս <http://www.gulbenkian.org.uk> [այցելությունը կայր էջ կատարվել է
20.07.2008 թ.]. **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 55:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս *Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959,*
pp. 155-157.

⁶ Տե՛ս **Ջամբերթեն Ա.**, Մարդը և իր գործը, էջ 56:

Սյուվակիան), Ջիլին, Ջինաստանը, Կոլումբիան, Հարավային Կո-
րեան, Կոստա Ռիկան, Կուրան, Էկվադորը, Եգիպտոսը, Իսպանիան,
Ֆիլիպինները, Ֆինլանդիան, Հունաստանը, Հոլանդիան, Հոնգոլու-
սը, Հունգարիան, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Իրանը, Իսլանդիան,
Իսրայելը, Իտալիան, Ճապոնիան, Հարավսլավիան, Լիբանանը,
Լյուքսեմբուրգը, Մալդիվան, Մալայիան, Մարոկկոն, Մեքսիկան,
Նիվարազուան, Նիդերլանդները, Նոր Զելանդիան, Պակիս-
տանը, Պարագվայը, Քենիան, Ռումինիան, Սան Սալվադորը, Սենե-
գալը, Շրի-Լանկան, Շվեյցարիան, Շվեդիան, Օմանի Սուլթանու-
թյունը, Տոգոն, Թունիսը, Ուրուգվայը, Վենեսուելան, Ջաիրը և
այլն¹:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեության
քսան տարվա ընթացքում (1956-1976 թթ.) տարրեր երկրների
Հայկական Համայնքներին Հատկացված նպաստներն իրենց ծա-
վայներով դիջել են միայն Պորտուգալիային տրված միջոցներին²:
1970-ական թվականների առաջին կեսին Հայությանը Հատկացվող
նպաստներն սկսել են զգալիորեն աճել՝ տարեկան միջին Հաշվով
կազմելով 1.5 միլիոն դոլար: 1983 թ. Հիմնարկության Հրատարա-
կած ընդարձակ տեղեկագրում մանրամասն ձևով ներկայացված են
դանազան երկրների օգտին Հաստատության կողմից 1957-1980 թթ.
ընթացքում կատարված Հատկացումները: Հիշյալ տեղեկագրում
Հիմնարկության ստեղծման պատմությանն ու գործունեության
Համառոտ նկարագրությանը Հատկացվել է 24 էջ, Պորտուգալիա-
յին տրված նպաստների լուսաբանմանը՝ 179, Մեծ Բրիտանիային՝
8, Հայկական Համայնքներին և Հայաստանին՝ 4, աֆրիկյան նորան-
կալս պետություններին՝ 4, Մերձավոր Արևելքի երկրներին և Իրա-
քին՝ 2, միջազգային ծրագրերին՝ 13³: Հաստատության լիկվիդային
միջոցները 1955 թ. Հուլիսի 20-ի 1.924.026-ի փոխարեն 1980 թ.
կազմում էին 32.493.267 կոնսո⁴, իսկ կատարված Հատկացումները

¹ *St'u Fundação Calouste Gulbenkian 1956/1981*, p. 43, 371.

² *St'u Հավելվածում՝ աղյուսակ 2:*

³ Նշված թվերը չեն պարունակում լուսանկարներով էջերը:

⁴ Կոնսոն Պորտուգալիայի արժույթն է. նշված տարիներին 1 կոնսոն Համար-
վեք էր չորս 35 ԱՄՆ դոլարի:

րնդհանուր ծավալը վերադանցում էր 11 միլիոնը (11,206. 378)¹:

Հանրագումարի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է ասել, որ Գ. Կյուլպենկյանն ու Պերդիգանը կարողացան ստեղծել ոչ միայն բարեգործական ամուր կառույց, այլև հուսալի ձևով կառավարվող մի կազմակերպություն, որի գործունեությունն ու կարևոր հարցերը չէին և չեն վճռվում միայն մեկ անհատի կամ կառավարությունների կողմից, այլ փոխկախվածությունն ունենալով մեծ ևն զտնվում միմյանցից, որն էլ ապահովում է հաստատությունների արդյունավետ ու անխափան գործունեությունը: 2004 թ. նվիրատուությունների, դրամական փոխանցումների ու միջոցների համակարգման, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակներով սերտ կապեր հաստատվեցին «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունների և աշխարհի տարրեր բարեգործական կազմակերպությունների միջև: Նույն տարում հիմնարկությունն ընտրվեց «Եվրոպական հիմնադրամների կենտրոնի» վարչական խորհրդի անդամ²: Այդ կենտրոնի նախաձեռնությամբ և եվրոպական բարեգործական հաստատությունների աջակցությամբ իրականացվել է «Եվրոպան աշխարհում» ծրագիրը, որի նպատակն էր եվրոպական հիմնադրամներին ներգրավել Եվրամիություն անդամ երկրների սահմաններից դուրս կատարվող և համաշխարհային նշանակություն ունեցող բարեգործական ծրագրերում³: Կենտրոնի անդամ հիմնադրամները վերահիշյալ նպատակի համար հատկացնում են իրենց տարեկան բյուջեի հինգ տոկոսը, իսկ ոչ անդամ հաստատությունները՝ մեկ⁴: Որպես այդ ծրագրին մասնակցելու առաջին փուլ՝ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը կատարել է 100 հազ. եվրոյի հատկացում՝ օգնելու 2004 թ. Ինդոնեզիայում տեղի ունեցած ցունամիի հետևանքները վերացնող տեղական և միջազգային կազմակերպություններին⁵:

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը, համագործակ-

¹ *Si' u Fundação Calouste Gulbenkian 1956/1981*, p.15.

² *Si' u* http://www.gulbenkian.pt/english/report2004/pp0_13.pdf, p. 7 [այսկությունը կայք էջ կատարվել է 29.05.2006 թ.]:

³ *Si' u* նույն տեղում:

⁴ *Si' u* նույն տեղում:

⁵ *Si' u* նույն տեղում:

ցելով եվրոպական բաղձաթիվ Հիմնադրամների Հետ, մասնակցել է նաև 2004-2005 թթ. ընթացքում կայացած տարրեր գիտաժողովների, որոնցից հիշատակության արժանի է «Եվրոպական նոր սահմաններն ու միության ընդլայնումը. մարտահրավերներ և հետևանքներ» թեմայով կազմակերպվածը¹: Այդ գիտաժողովի նպատակն էր աշխարհի տարրեր մասերում բարեսիրական գործունեություն իրականացնելու համար նոր մեթոդների և մոտեցումների մշակումը՝ որպես հիմք ընդունելով «Համագործակցություն միջազգային Հարաբերություններում» սկզբունքը²:

2005 թ. Հիմնարկության Հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ Տնօրենների ժողովը որոշեց ընդլայնել իր գործունեություն աշխարհագրական սահմանները, իսկ 2006 թ. Հուլիսի 18-ից ձևոնամուխ եղավ որակապես նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը³: Միջմշակութային երկխոսությունների համատեքստում 2005 թ. դեկտեմբերին Հիմնարկության և «Եվրոպական մշակութային պառլամենտ» կազմակերպության համատեղ ջանքերով տեղի ունեցավ «Մշակույթի օժանդակությունը Եվրոպական Միությունը» թեմայով խորհրդաժողովը⁴: Հիմնարկության ղեկավարները մասնակցել են նաև «Եվրոպական Հիմնադրամների կենտրոնի»՝ 2005 թ. ընթացքում կազմակերպած գիտաժողովներին, որոնց ընթացքում քննարկվել է «Մեկ միություն բոլոր քաղաքացիների համար» խնդիրը (խոսքը Եվրամիություն անդամ երկրների քաղաքացիների մասին է)⁵:

Հարկ է ընդգծել, որ մշտապես Հիմնարկության տեսուչների ու շարժումների կենտրոնում են գտնվել մարդկանց տեղաշարժերի ու վերաբնակեցման Հարցերը: 2005 թ. Հաստատությունը մասնակցել է «Ներգաղթի և ինտեգրացիայի եվրոպական ծրագրին», որն իրականացվում էր «Եվրոպական Հիմնադրամների ցանցի» կողմից⁶: Այդ ծրագրի նպատակն էր օգնել բարեկամելու Եվրոպա

¹ Տե՛ս http://www.gulbenkian.pt/english/report2004/pp0_13.pdf, p. 8:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս <http://www.gulbenkian.org/english/report2005/Apresentacao.pdf>, p. 8 (այցելությունը կայք էջ կատարվել է 24.09.2006 թ.):

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

⁶ Տե՛ս նույն տեղում:

ներգաղթողների հանդեպ Եվրամիություն անդամ պետությունների վարած քաղաքականությունը: Ներգաղթողներին նոր միջավայրում ինտեգրելու նպատակով տրամադրվել են նյութական շոշափելի միջոցներ¹:

Այսօր «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Պորտուգալիայի Հասարակական, մշակութային կյանքի կարևորագույն և առաջնային օջախներից է, որտեղ աշխատում է ավելի քան 500 պաշտոնյա²: Հիմնարկության Տնօրենների ժողովի նախագահը 2002 թ. փետրվարի դրությամբ եղել է Վիկտոր Սա Մաչագոն, որին փոխարինել է էմիլիո Ռուի Վիլարը³: Ներկայումս ժողովի անդամներից յոթը կատարում է գործադիր, իսկ երկուսը՝ խորհրդատվական ֆունկցիա: Տեսուչների պաշտոններն ղրաղեցնում են Դիոգո դը Լյուսենան, Իզարել Առտան, էդուարդո Մարսալ Գրիլոն, Թերեզա Գուվեյան, Մարտին Եսայանը, էդուարդո Լորենսոն, Անդրե Գոնսալվես Պերեյրան և Արթուր Սանտոս Սիլվան⁴:

1.3. Հայկական Համայնքների ծառայություն բաժանմունքի ստեղծումը

Ձնայած Գ. Կյուլպենկյանի կտակում Հայկական բաժանմունք ստեղծելու մասին չկա որևէ կետ, սակայն Հիմնարկության Հիմնադրումից ի վեր գործում է նաև այդ մարմինը: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեություն 50-ամյա հորեկյանի առիթով 2006 թ. ուշագրավ տեղեկություն հրատարակեց Կ. Դալլաքյանը, որը վերաբերում է Գ. Կյուլպենկյանի՝ Հիմնարկության կազմում Հայկական բաժանմունք ունենալու մտադրությունը: Խորհրդային տարիներին Հայաստանում պետական բարձր պաշ-

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.org/english/report2005/Apresentacao.pdf>, p. 9.

² 2005 թ. Հիմնարկությունն ուներ 543, իսկ 2006-ին՝ 534 աշխատակից. տե՛ս <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/11.pdf>, p. 8 [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

³ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=6&artId=37> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

⁴ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=6&artId=35> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

տոններ վարած զիտնականը¹ տեղեկացնում է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Վաղգեն Առաջինը տարիներ առաջ իրեն հաղորդել է Պերդիվանի բացած «զաղտնիքը»²: Հիմնարկություն ղեկավարին կաթողիկոսը Գ. Կյուլպենկյանի խոստացած 400 հազ. ԱՄՆ դոլարի գումարն ստանալու նպատակով հանդիպել էր Լիսաբոնում: Ըստ Կ. Գալլաքյանի՝ «...Գ. Կյուլպենկյանը մահվան մահճում շնջացել է Պերդիվանին՝ Հիմնարկություն կազմում Հայկական բաժին ունենալու մասին իր կամքը: Պերդիվանն էլ Գ. Եսայանի Հետ անհապաղ կատարել է բարերարի վերջին կամքը (ընդգծումը՝ Վ. Ղ.)»³:

Ինքնըստինքյան հարց է ծագում, թե ինչու⁴ էր իր կտակում Հայկական հարցերով զբաղվող հանձնախումբ ունենալու մասին ոչ մի ակնարկ չարած բարեգործը վերջին շնչում իր կտակակատարին տալիս նման հանձնարարական կամ ինչու⁵ ինքը՝ Գ. Կյուլպենկյանն անձամբ, մանրամասնորեն չէր զբաղվել այդ հարցով կտակը կազմելու կամ դրան նախորդող տարիների ընթացքում: Պատասխանները կարելի է ածանցել տարբեր հեղինակների և աղբյուրների հաղորդած տեղեկություններից:

Հայ բարերարի՝ իր միջոցներով հօգուտ Հայություն՝ առանձին բարեգործական հաստատություն հիմնելու ցանկություն մասին Հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Լ. Բալազյանը: Նա նշում է, որ Հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը հանդիպել է Գ. Կյուլպենկյանին, երբ նա Բարեգործականի նախագահ էր: Այդ հանդիպման ընթացքում, ըստ Բալազյանի, Գ. Կյուլպենկյանը մեծանուն բանաստեղծի Հետ կիսել էր իր մտորումները, որոնք վերաբերում էին սեփական հարստությունն ու ողջ ունեցվածքը Հայ ժողովրդին ծառայեցնելուն⁶: Խնդրի առումով բավականաչափ ուշադրավ են նաև Ս. Վրացյանի Հետևյալ սողերը, որոնք նա թողել է տնտեսական գործչի Հետ Ալեքսանդր Ուստիսյանի և Մովսես

¹ Կ. Գալլաքյանն զրաղեցրել է ՀՅԱՀ նախարարների խորհրդին առնթվեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի (1963-1970 թթ.), ՀԿԿ Կենտկոմի ազխտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչի (1971-1975 թթ.), ՀԿԿ Կենտկոմի քարտուղարի (1976-1985 թթ.), Սփյուռքահայություն Հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի (1985-1991 թթ.) պաշտոնները և այլն:

² Տե՛ս Գալլաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 8:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 145:

Աճեմյանի ընկերակցությունը ունեցած հերթական հանդիպումից հետո. «Շուրջ մէկ ժամուան տեսակցութեան ընթացքին, Կիւլպէնկեանը, միշտ ուշադիր ու քաղաքավարի, ցոյց տուաւ, որ շատ լավ ծանօթ է հայ կեանքի երևոյթներուն եւ սրտին մօտ կ'ընդունի հայութեան ճակատագիրը»¹:

Լ. Բալազյանը հաղորդում է նաև, որ. «Գյուլբենկյանը շարունակաբար հետաձգում էր կտակը կազմելու գործը, ավելի շուտ՝ բաղում անգամներ վերանայում էր իր ձևաքով գրված առաջին տարբերակը և միլիոնների հասնող հիմնադրամը չէր բացառվում, որ կուղեր հիմնել Մայր Հայրենիքում»²: Այստեղ, սակայն, հեղինակը չի տիրապետել անհրաժեշտ քանակությունը տեղեկատվական պաշարի, այլապես չէր հիշատակի, որ 1930-ական թվականներին Գ. Կյուլպենկյանը գրել է իր առաջին կտակը և այն վերանայել բաղում անգամներ, քանզի Ռ. Հյուինսն ու Ն. Կյուլպենկյանը հաղորդում են, որ մեծահարուստ ծերունին իր առաջին կտակը կազմել և թղթին է հանձնել 1950 թ., որից հետո՝ 1953 թ., վերափոխել է այն³: Այս տեղեկությունը հավաստությունը հաստատվում է հենց Գ. Կյուլպենկյանի՝ վավերացված և գործող օրինական կտակով⁴: Հնարավոր է, որ մեջբերված տողերի հեղինակը նկատի է ունեցել բարերարի՝ թղթին չտրված ծրագրերն ու մտահղացումները, բայց զա արդեն ուրիշ հարց է: Այդ առումով ուշագրավ են Ռ. Հյուինսի հաղորդած տեղեկությունները, որոնց համաձայն՝ 1934 թ., երբ Իրաքի նավթն սկսեց ժայթքել հսկայական քանակությամբ, «սլարոն հինգ տոկոսն» արդեն մտահղացել էր իր գումարներով ու հարստությամբ «Կյուլպենկյան» հիմնարկություն ստեղծելու գաղափարը: Նա նույնիսկ ամերիկյան ճարտարապետ Դելանոյի միջոցով կազմել էր շենքի նախագիծը⁵:

Գալով Լ. Բալազյանի գրքում հիշատակված այն մտքին, թե Գ. Կյուլպենկյանը «...միլիոնների հասնող հիմնադրամը չէր բացառ-

¹ «Ազատ օր», թիւ 3187, 29 Օգոստոս, 1955:

² Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 145:

».

³ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 249-254, Gulbenkian N., Portrait in oil, p. 247.

⁴ Տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 201.

⁵ Տե՛ս Hewins R., նշվ. աշխ., էջ 252:

վում, որ կուգեր Հիմնել Մայր Հայրենիքում»¹, և միայն Ուորհրդային Հայաստանի ղեկավարների «չնորհիվ» (որոնք հրաժարվում էին ընդունել արտասահմանի մեծահարուստ հայերի նվիրատվություններն ստալինյան բռնապետական քաղաքականությունը ենթարկվելու պատճառով) այդ մտահղացումն իրականություն չգարձավ՝ պետք է նշել հետևյալը. արտաքննապես հնարավոր էր, իհարկե, հրաժարվել «կապիտալիստ հայերի» հարստությունն ընդունելուց, սակայն իրական լույսի ներքո ավելի համոզիչ է այլ փաստարկ: Միանգամայն տեղին է այս հարցի կապակցությունը դիմել է. Մելքոնյանի՝ Ի. Ստալինի խոսքերից մեջ բերած այն հատվածին, որում բառացիորեն ասված է հետևյալը. «Եթե հայ կապիտալիստները հիմարություն են թույլ տալիս, օգնելով հայ կոմունիստներին կառուցել սոցիալիզմ, ապա Հայաստանի կոմունիստները թույլ կտան ավելի մեծ հիմարություն, եթե հրաժարվեն այդ օգնությունից»²:

Հայաստանը, որպես Գ. Կյուլպենկյանի հարստության հավանական ժառանգորդ երկիր, դուրս էր հայ մեծահարուստի, այլ ոչ թե Ուորհրդային Հայաստանի ղեկավարության հաշվարկներից, որի պատճառները միանգամայն օրինաչափ էին: Դժվար թե նավթային մազնատն ու բարերարը չգիտակցեր այն պարզ ճշմարտությունը, որ Հայաստանում խորհրդային վարչակարգի տարիներին զոյություն չունեի ոչ բարենպաստ քաղաքական մթնոլորտ և ոչ էլ նպատակահարմար օրենսդրական դաշտ՝ կատարված նվիրատվություններն ընդունելու համար. ավելորդ էր անգամ մտածել մի ողջ կարողություն Հայաստանին կտակելու մասին: Հարկ է հիշատակել, որ նախքան Բարեգործականի նախագահության ստանձնումը Գ. Կյուլպենկյանը չէր ղեկավար գործիչների հետ հանդիպումներից մեկի ժամանակ խոսել է այդ մասին: Դիմենք կրկին Ս. Վրացյանին. «Մտքը եղաւ հայ ազգի ապագայի և Հայաստանի ներկայի մասին, - գրում էր դաշնակցական գործիչը, - Ինք լուր ունէր Հայաստանի գործերէն, գիտէր, թէ ինչ պայմաններ կը տիրեն հոն և այն կարծիքէն էր, թէ արտասահմանէն բան մը կարելի չէ ընել Հայաստանին օգնելու համար, քանի այնտեղ կը տիրէ ոուս համայնավա-

¹ Բալագյան Լ., նշվ. աշխ., կջ 145:

² Մելքոնյան է., շԲԸՄ պատմություն, կջ 282:

րութիւնը»¹: Չի բացառւում, որ Գ. Կյուլպենկյանն ակնարկում էր նաև Նորհրդային Միութեան զրեթե ողջ տարածքում 1930-ականներին սկսված ստալինյան բռնութունների մասին, որոնք նոր-նոր էին միայն թափ հավաքում: Ծոշափովող խնդրի վերաբերյալ իր տեսակետն է արտահայտել նաև Բեյրութի «Ջարթօնքը», որը նշում էր, թե. «Գալուստ Կիւլպէնկեան շիմնարկութիւնը իրրև հայացի պարոյր կամ շրջանակ կրնար և պարտէր ունենալ միմիայն: Հայաստանի Կառավարութիւնը, եթէ անոր ընկերային և քաղաքական տեսարանութիւնները¹ և ըմբռնումները խոտոր չհամեմատէին նման կարևոր ձեռնարկի մը վերին հսկողութեան, վարչութեան և յանձանձումին»²: Ինչևէ: Եթե նույնիսկ այս ամենը զրվեր մի կողմ, ապա Գ. Կյուլպենկյանն իր ողջ հարստութունը կրկին չէր կտակի Հայաստանին, որովհետև ընդգծում էր, թե «Միայն Հայերուն չէ որ պարտական եմ օգնել, այլ օտարներու ալ, մանաւանդ որ անոնցմէ միայն դրամ չահած եմ և անոնց հետ գործի կապեր ունիմ»³:

Հայութեան համար՝ բարեգործական կազմակերպութուն հիմնելու Գ. Կյուլպենկյանի մտահղացման մասին իր էջերում հողված էր տպագրել նաև «Աղղակը»⁴: Թերթն ընթերցողներին տեղեկացնում էր, որ «Հայ Կրեստը (Գ. Կյուլպենկյանը՝ Վ. Ղ.) իր մահէն աւելի քան քառորդ դար առաջ կը մտածէր մշակութային մնայուն հաստատութիւնով մը օժտել սփիւռքի Հայութիւնը»⁵: Այդ առիթով խոսակցութիւններ էր ունեցել Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ Ա. Նատիսյանի և ՀՀ Պատվիրակութեան նախագահ Ա. Ահարոնյանի հետ, որոնք նույնիսկ ծրագիր էին ներկայացրել իրեն: Այն, սակայն, չի իրագործվել⁶, քանի որ բացառապես մեկ անհատի կարողութեամբ հանրային օգուտի մասնավոր համասփյուռքյան կառույց ստեղծելը բավականին դժվար, եթե չստանար անհնարին, գործ էր՝ կապված Հայկական համայնքների՝ աշխար-

¹ «Ազատ օր», թիւ 3187, 29 Օգոստոս, 1955:

² «Ջարթօնք», 1962 Սեպտեմբեր, էջ 336:

³ «Արև», թիւ 11.626, 11 Մարտ, 1957, Մեղրոնյան է., ՀԲԸՄ պատմութուն, էջ

18:

⁴ Տե՛ս «Աղղակ», թիւ 142 (8963), 21 Օգոստոս, 1961:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում:

Հով մեկ ցրված լինելու հանգամանքի հետ: Այդպիսի ծրագրի անիրագործելիությունը պայմանավորված էր նաև մեկ այլ իրողությունով: Գ. Կյուլպենկյանի նման մեծահարուստ մարդու համար անկարելի էր իր ահեղի կարողությունը թողնել Սփյուռքի ազգային որևէ կաղամակերպություն՝ կաթողիկոսարանի, պատրիարքարանի, բարեգործական հաստատություն կամ, առավել ևս, քաղաքական կուսակցություն և հանդիստ խղճով հեռանալ աշխարհից: Ինչպես «Զարթոնքն» էր արդարացիորեն պարզարանում՝ «Վստահությունը չէ որ կը կաղայ հոս ազգին հանդէս, այլ անոր վարչական մեքենան է որ կը կաղայ ու պիտի կաղայ, ցորչափ պետական վերին անաչառ ու խիստ հակակշիռ մը կը պակսի ազգային հաստատությունանց գլխուն»¹: Պետք է ընդգծել, որ այդ հարցի և նման խնդիրների վերաբերյալ ժամանակին խոր մտահոգություն էր հայտնել հենց ինքը՝ Գ. Կյուլպենկյանը, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսին հասցեագրած իր՝ 1921 թ. դեկտեմբերի 15-ի նամակում: Հայ բարերարը կսկիծով էր նշում, որ. «...մեր (հայերի՝ Վ. Ղ.) մէջ կատարուող հանգանակությունանց ներկայ ձևը, որով մի անհատ, կուսակցություն, խմբակցություն եւլն., ուղած ժամանակ եւ ուղած ձևով հանգանակություն կելլայ, եւ այսպէս ժողովւած գումարները կամայական ձևերով կը գործադրուին, ոչ այլ ինչ է. բայց եթէ մեր խնդ ժողովրդի նյութական զոհողությունանց շոսյունն, առանց դրական եւ տևական արդիւնքի»²: Նշված նամակն ուշագրավ է նաև մեկ այլ տեսանկյունից. Գ. Կյուլպենկյանն, արձանագրելով հանդերձ բարեգործության և հայ ժողովրդի կարիքների համար կատարված հանգանակությունների՝ ոչ լիարժեք ձևով իրենց նպատակներին ծառայեցնելու և հասարակական-քաղաքական կաղամակերպությունների կողմից գումարները փոխիացնելու փաստերը, պատրաստակամություն էր հայտնում ստանձնելու ցանկացած ծառայություն, որն իր ազգի համար «...իրական եւ մնայուն արդիւնք կարող է ունենայ»³: Այդպիսի միտք բարերարը հայտնել է և՛ ՀԲԸ Միություն նախագահի պաշտոնից հրաժարվելու, և՛ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զորեքչյանին Մայր տաճարի

¹ «Զարթոնք», 1962, Սեպտեմբեր, էջ 336:

² ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, դ. 731, թ. 5:

³ Նույն տեղում, թ. 6:

նորոգության նպատակով կատարվելիք նվիրատվության ժամանակ, և՛ բազմաթիվ այլ առիթներով: Այլ կերպ ասած՝ թե՛ խորհրդային իշխանություններին, թե՛ Սփյուռքի կազմակերպություններին համաշխարհային համբավ վայելող տնտեսագետն առաջարկում էր ներկայացնել հսկայական գումարներ ու կարողություն տնօրինելու և կառավարելու երաշխիքներ ու մխտանիղմներ, որից կարող էր շահել Հայ ժողովուրդը: Տարաբախտաբար, դրանք կամ չներկայացվեցին կամ էլ չափազանց թերի էին: Ուստի՝ բավարար հիմքեր կան եզրակացնելու, որ Գ. Կյուլպենկյանը մտադրված էր անձամբ մշակել սեփական հարստությունն իր մահից հետո տնօրինելու այնպիսի ծրագիր, որից կարող էին օգտվել նաև իր կարիքավոր Հայրենակիցները:

Մինչև Կ. Գալլաքյանի՝ վերը հիշված տեղեկություն հրապարակումը միանգամայն տրամաբանական էր կարծել, որ Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Ա. Խանջյանի վիրավորական ճառը Գ. Կյուլպենկյանի հասցեին, ժամանակակիցների չափից ավելի պահանջները ՀԲԸ Միությունից և նրա նախագահից, ինչպես նաև Բարեգործականից հեռանալը ճնշող ազդեցություն գործեցին Հայ մեծահարուստի վրա՝ իր կտակում չհիշատակելու հայկական բաժանմունքի ստեղծման մասին: Սակայն այժմ նոր իմաստ են ստանում որոշ աղբյուրների հաղորդած, առաջին հայացքից անսովոր և անտրամաբանական թվացող, տեղեկությունները: Ն. Կյուլպենկյանն, օրինակ, նշում էր, թե հայրը շատ էր վախենում մահից՝ անընդհատ կրկնելով, որ դեռևս բավականաչափ ժամանակ ունի այս աշխարհում: Ըստ Նուբարի՝ հենց այդ պատճառով էլ Գ. Կյուլպենկյանը չկարողացավ վերջնական եզրերի վերածել իր կտակը²: Նման տեսակետի հանդիպում ենք նաև սփյուռքահայ մամուլի էջերում, Գ. Կյուլպենկյանի կենսագրությունն անդրադարձած հեղինակների գործերում և այլն: «Աղղակը» գրում էր, թե «Հայրը (Գ. Կյուլպենկյանի) 106 տարի ապրած էր, իսկ Գալուստ կր յուսար հասնիլ 120-ի»³, «Աղատ օրը»՝ «Կր յուսար (Գ. Կյուլպենկյանը)

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 243 (3116), Երևան, 15.10.1931:

² Տե՛ս Gulbenkian N., *Portrait in oil*, p. 259.

³ «Աղղակ», թիվ. 95 (7902), 29 Յունիս, 1958:

գերադանցել հայրը, որ մեռած էր 102 տարեկանին»¹, Ջ. Լոդվիկը՝ «...նա (Գ. Կյուլպենկյանը) հույս ունի հասնելու իր հարյուրամյակին...»², Ռ. Հյուինսը՝ «Նուրարը համոզված է, որ իր հայրը «չկարողացավ նայել մահվանը» և հավատում էր, որ իր պապի նման ապրելու է առնվազն 106 տարի»³:

Հար և նման տեղեկությունները թույլ են տալիս պնդելու, որ Գ. Կյուլպենկյանը, չսպասելով իր մոտալուտ մահվանը, ձգտել է անձամբ զրադվել իր կտակի որոշ մանրամասնություններ ճշտելու, հստակեցնելու հարցերով: Բարերարի այդ մտադրությունը պարզ երևում է նրա կտակի՝ բարեգործական հաստատություն ստեղծմանը վերաբերող տասներորդ կետի հետևյալ հատվածից. «Կտակարարը (Գ. Կյուլպենկյանը՝ Վ. Ղ.) ցանկանում է և հույս ունի իր կենդանություն օրոք անձամբ հիմնելու վերոհիշյալ հիմնարկությունը («Գալուստ Կյուլպենկյան»՝ Վ. Ղ.)»⁴: Ոչ պակաս կարևոր է կտակից մեջբերված պարբերությունը նախորդող հատվածն, ըստ որի՝ «...կտակարարի մահից անմիջապես հետո կտակակատարները պետք է մշակեն վերոհիշյալ հիմնարկություն կանոնադրությունը, եթե նա նախքան իր մահն այն կազմած չլինի (ընդգծումը՝ Վ. Ղ.)»⁵: Այս հատվածներն էին, հավանաբար, գտնվում Վ. Մալեդյանի ձեռքի տակ, երբ նա գրում էր, թե կտակի առումով խորապես ցավալի է, որ Գ. Կյուլպենկյանը հեռատես ու խորաթափանց մարդ լինելով հանդերձ՝ չկարողացավ իր կենդանություն օրոք ինքն իսկ հիմնել բարեգործական հաստատությունը և իր հայացքներին ու մտահղացումներին համահունչ՝ խմբագրել նրա կանոնադրությունը «...որով կարգ մը հակասություններ պիտի փարատէին և իր նախատեսությունները պիտի ըլլային աւելի համապատասխան իր իտէալներուն և անձնական նախասիրութեանց»⁶:

Ի մի բերելով ասվածը՝ պարզ է դառնում, որ Գ. Կյուլպենկյանը յուրջ մտադրություններ է ունեցել իր հարստությունից էական բա-

¹ «Ազատ օր», թիւ 3180, 20 Օգոստոս, 1955:

² Lodwick J., նշվ. աշխ., էջ 281:

³ Hewins R., նշվ. աշխ., էջ 251:

⁴ Azeredo de Perdigao J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, p. 195.

⁵ Նույն տեղում:

⁶ «Արև», Վահան Մալեդյան, Գալուստ Կյուլպենկյանի հիմնարկություն (Մեծանուն բարերարին կտակը), թիւ 11.618, 1 Մարտ, 1957:

ժին Հանել Հայությանն, ընդ որում՝ Հարատևության սկզբունքով, որը Հնարավոր էր իրականացնել բարեգործական Հաստատություն Հիմնելու միջոցով: Գ. Կյուլպենկյանը, փաստորեն, ձգտում էր ինքն անձամբ կատարել իր անունը կրող բարեգործական կազմակերպության Հիմնարկումը՝ զբաղվելով նրա կանոնադրության, կառուցվածքային և գործունեությունը վերաբերող Հարցերով. սակայն չհասցրեց թղթի վրա ձևակերպել իր որոշ՝ այս դեպքում Հիմնարկության կազմում Հայկական բաժանմունք ունենալու մասին մտադրությունը և մահվան շեմին Պերդիգանին տված բանավոր Հանձնարարականը դարձավ խճանկարն ամբողջացնող անփոխարինելի Հատիկ: Հատկանշական է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Վաղգեն Առաջինը Գ. Կյուլպենկյանի մահվան Երկրորդ տարելիցի կապակցությամբ էջմիածնում կատարված Հոգևհանգստի պատարազի ժամանակ ընդգծել է Հետևյալը. «Մենք վստահ ենք և խորապէս Համոզուած, թէ մեծանուն Հայ բարեգործին Գայուստ Կիւլպէնկեանի կտակով կեանքի կոչուած Հիմնարկութիւնը, զլիաւորութեամբ մեծայարգոյ Տիար Տոբթ. Ժօզէ Ազէրէսօ Փէրտիկասօի և Տիար Գէորգ Եսայեանի, առաջին գծի վրայ պիտի դասէ Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայ Ժողովուրդի կարիքները. ըլլայ էջմիածին թէ ըլլայ սփիւռքի մէջ...»¹:

Պերդիգանը Հայկական բաժանմունքի ստեղծման առիթով պարզաբանում էր, որ Գ. Կյուլպենկյանը ճշտումներ չի կատարել իր կտակում և Հիմնարկության ղեկավարների Հայեցողությունն է թողել Հաստատության կառուցվածքի ու գործունեությունը վերաբերող Հարցերի վերջնական կարգավորումը²: Ուշագրավ է, մանավանդ, Պերդիգանի խոսքն առ այն, թե ինչը և Գ. Կյուլպենկյանին Հարազատ ու մտերիմ մարդիկ՝ Գ. Եսայանն ու Ռ. Կյուլպենկյանը, ճիշտ ուղու վրա են՝ իրականացնելու բարերարի բաղձանքները³: Պաշտոնական ղեկույցում Հիմնարկության ղեկավարն արդեն նկարագրում էր այն քայլերը, որոնք կատարվել էին Հայկական բաժանմունքի ստեղծման ուղղությամբ: Նա շեշտում էր, որ գոյություն ունեին ազդու և Հիմնարար պատճառներ՝ Հիմնարկության գործու-

¹ «Խթան», թիւ 117, 5 Սևտեմբեր, 1957:

² Տե՛ս «Արև», թիւ 13.762, 10 Մարտ, 1964:

³ Տե՛ս նույն տեղում:

ներության ոյորտում ներառելու Հայկական Համայնքներն ու Ֆրանսիան, որովհետև Գ. Կյուլպենկյանը Հայ էր և միշտ ակտիվորեն հետաքրքրվել է իր ժողովրդի ճակատագրով, հետաքրքրություն, որը դրսևորվել է նյութական ու բարոյական աջակցություններով¹:

Քանի որ Հայկական Համայնքները սփռված էին ամբողջ աշխարհով մեկ՝ միմյանցից բաժանված ահռելի տարածություններով, ուստի նպատակահարմար չէր Հայկական ձևոնարկումների համար Պորտուգալիայից դուրս մասնաճյուղ ունենալը: Այդ պատճառով էլ Մերձավոր Արևելքի և Հայկական ծրագրերի համար բաժանմունքներ հիմնվեցին հիմնարկություն կոնստրուկտիվայնում, որոնց համար ընտրվեց Հատուկ որակավորված աշխատակազմ: Այն, ինչպես արդեն նշվել է, սկզբնական շրջանում գործում էր Գ. Եսայանի ղեկավարությամբ: «Աղատ օրն» իր՝ 1970 թ. մայիսի 29-ի համարում գրում էր, որ եթե «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն տարեկան ծախսվող շուրջ 6 միլիոն ԱՄՆ դոլարի մեկ քառորդը բաժին է ընկնում Հայությունը, ապա դա Գ. Եսայանի ջանքերի շնորհիվ է²: Խնդրին էր անդրադարձել նաև «Խիթանն», ըստ որի՝ Գ. Եսայանն էր իր ներկայությունը վառ պահում Հայի ոգին «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության մեջ՝ աշխուրջ հսկելով բոլոր Հայկական ձևոնարկների վրա՝ էջմիածնից մինչև Սփյուռքի հեռավոր անկյունը³: Գրեթե նույն կարծիքին էր «Զարթոնքը»՝ հավելելով, որ Գ. Եսայանի և Ռ. Կյուլպենկյանի նախաձեռնած Հայկական ծրագրերի իրականացմանը մեծապես օժանդակում էին նաև հիմնարկության Տնօրենների ժողովի անդամները, «...որոնք գիտեն թե Գալուստ Կիլպենկյանի միտով, արիւնով, սրտով ու հոգիով Հայ էր և ըստ այնմ, կարելիութեան սահմանին մէջ, վառ կը պահեն անոր յիշատակի տաճարին մէջ Հայ ճրագը»⁴: Ուշագրավ է, որ «Զարթոնքը» Հաստատությունից Տնօրենների ժողովին առաջարկում էր որպես Հայ ժողովրդի ներկայացուցիչ իր կազմում ընդգրկել նաև

¹ *Sl'u Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 39-40.*

² *Sl'u «Աղատ օր»,* թիւ. 7666, 29 Մայիս, 1970:

³ *Sl'u «Խիթան»,* թիւ 162, 17 Յուլիս, 1958:

⁴ «Զարթոնք», 1962, Սեպտեմբեր, էջ 337:

ՀԲԸ Միության նախագահին¹:

Հիմնարկության ղեկավարությունը հայությունը սաշտոնապես հայտարարեց, որ. «...Հայկական գործերով զրազող յանձնախումբ մը պիտի-կազմուի, որ խորհուրդ պիտի տայ խնամակալութեան, անոնց գործադրութեան մէջ: Այս յանձնախումբը պիտի զրազի ի մասնաւորի հետեւեալ ծրագիրներով.

- Օգնութիւն բարեսիրական, կրթական և ուրիշ նման հաստատութիւններու որոնք կը ծառայեն Հայ համայնքներու և անհատներու:
- Օժանդակութիւն չքաւոր Հայ համայնքներու վերահաստատման:
- Օգնութիւն Հայ չքավոր անհատներու:
- Օգնութիւն, նիւթական միջոցներով, Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ:
- Օժանդակութիւն Հայ մշակոյթի և Հայերէնի բարձրագոյն ուսման. նաև օգնութիւն Հայ ուսանողաց բարձրագոյն ուսման:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Կեդրոնական Խնամակալութիւնը, իր որոշումներուն համաձայն - որոնք յայտարարուած էին 1956ին - կը մատնանշէ որ իր եկամտաւին կարելի էր մէկ մասը պիտի յատկացուի վերոյիշեալ ծրագիրներու գործադրութեան»²:

Հարկ է ընդգծել, որ թեպետ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմ-

¹ Տե՛ս նույն տեղում: Թեպետ ՀԲԸ Միության նախագահներից որևէ մեկը երբևէ չդարձավ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովի անդամ, սակայն Բարեգործականի հետ սերտ հարաբերություններ ունեցող անձինք (Վ. Մավյան), ինչպես նաև Պ. Նուբարի հետնորդներից Ա. Զամբերթենին աշխատանքի ընդունվեցին Հաստատության Հայկական բաժանմունքում (Ա. Զամբերթենի փոյրը՝ Ինգրիդը, 1974 թ. ամուսնացավ Հիմնարկության Հայկական բաժանմունքի ներկայիս տնօրեն Զ. Եկավյանի հետ, տն՛ս Պողոսեան Ս., նշվ. աշխ., էջ 20): Հարկ է նաև նշել, որ Հիմնարկության ղեկավարության բարեկամական հարաբերությունները ՀԲԸ Միության հետ հաճախ սուր փննադատության են ենթարկվել ՀՀԳ-ի մամուլի օրգանների կողմից (տե՛ս, օրինակ, «Յուսարեր», թիւ 67, 19 Յունիս, 1959):

² «Արև», թիւ 11.674, 9 Մայիս, 1957, «Ազգակ», թիւ 60 (7500), 9 Մայիս, 1957, «Այգ», թիւ 1298, 23 Մայիս, 1957:

նարկությունը բարեգործական և զիտամշակութային կազմակերպություն է¹, սակայն Հիմնադրումից ի վեր Հայ ժողովրդի Համար կատարում է կենսական նշանակություն ունեցող քաղաքական գործ՝ նպաստելով նրա աղգային, Հոգևոր ղիմագծի պահպանմանն ու միասնության կայացմանը: Սփյուռքի մամուլում հաճախ է շեշտվել այդ հանգամանքը և նշվել, որ. «Մշակութային ձեռնարկներու օժանդակելու իրողութիւնը, եթէ Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութիւններու Համար բարոյական արարք մըն է և մարդասիրական գործ մը, զիտակից և ուշիմ Հայուն Համար այլ նշանակութիւններ ունեցող միջոց (ընդգծումը բնագրում է) մըն ալ է: Հետևաբար, պայքարիլ նմանօրինակ Հիմնարկութիւններու դէմ, կը նշանակէ պայքարիլ այդ միջոցին (ընդգծումը բնագրում է) դէմ»²: Մեկ այլ տեղ հանդիպում ենք Հետևյալ տողերին. «Եթէ ճիշդ է, որ մասնաւորապէս Սփյուռքի մէջ Հայապահպանման ամէնէն ամուր ու վստահելի կուուանը Հայ մշակոյթն է, Հայ մամուլն ու զիրքը, մայրենի լեզուն և անոր միջոցով Հայրենի սրբազան աւանդութեանց պահպանումը, այն ատեն Համոզումով կրնանք Կիւլպէնկեան Հիմնարկութեան յատկացումները նմանեցնել մեծ ու Համատարած ցանքի մը, որ վաղ թե ուշ անխուսափելի կերպով պիտի ծլի ու ծաղկի»³: Հարցին զրեթե նույն

¹ Ձնայած բարեգործական Հիմնարկություններն իրենց բարեսիրական գործունեության պատճառով չեն կարող քաղաքական կազմակերպություններ լինել, սակայն որոշ դեպքերում և որոշ պետություններում նրանց թույլատրվել է մասնակիորեն մուտք գործել այնպիսի նեղ բնագավառներ, որոնց կառավարումն ուղղակիորեն կապված էր պետության գործառույթների հետ: Բարեսիրական կազմակերպությունների՝ որևէ ձևով որևէ կառավարության անմիջական նյութական օգնություն ցուցարկելը մեծացնում էր զանազան քաղաքական ուժերի կողմից կատարված փաստն իրենց օգտին ծառայեցնելու ուսիլը. օրինակ, 1969 թ. ԱՄՆ-ի կոնգրեսն ընդունեց օրենք, որով թույլատրվում էր բնտրողների ցուցակների կազմման նպատակով օգտագործել բարեգործական Հաստատությունների միջոցները. «...կառավարությունն (ԱՄՆ-ի՝ Վ. Ղ.) ինչն է, - գրում էր «Ֆորդ» Հիմնարկության նախագահ Մակ Ջորջ Բանդին, - շատ հաճախ զգում Հիմնարկության («Ֆորդ»՝ Վ. Ղ.) օգնության կարիքն այն մասնահատուկ ծրագրերի ղեկավարում, որոնց իրականացման Համար պետության զրամական միջոցները բավարար չեն. մեկը ևս մշտապես ջանում ենք օգնել այն գործընթացներին, որոնց շնորհիվ Հնարավոր է Հայտնարկել Հանրային կառավարման նոր և ավելի նպատակահարմար ձևեր» (տե՛ս The Ford Foundation Annual Report: 1969, p. XVIII):

² «Արև», թիւ 12,420, 16 Հոկտեմբեր, 1959:

³ «Ազատ օր», թիւ 6478, 13 Յունիս, 1966:

տրամաբանությունը է անդրադառնում նաև «Ազգակր»՝ եզրափակելով, որ. «...Գ. Կիլյալենկեան Հիմնարկությունը տարիներ է ի վեր Հայ կեանքի կրթական ու մշակութային անդաստանին մէջ առատորէն բարիք կը սերմանէ: Կր Հաւատանք, ի խորոց սրտի կր Հաւատանք, որ ցանուած այդ աղնիւ Հունտերը պիտի ծյին ու ծաղկին»¹:

Հայկական բաժանմունքի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով Հիմնարկության Տնօրենների ժողովի անդամները պարբերաբար շրջայցեր են կատարել տարրեր երկրների Հայկական Համայնքներ: 1957-1971 թթ. ընթացքում նրանք եղել են Իրաքում, Լիբանանում, Հորդանանում, Թուրքիայում, Հունաստանում, Ավստրիայում, Եգիպտոսում, Սիրիայում, Վենեսուելայում, Իրանում և Հարավային Ամերիկայի երկրներում²:

1957 թ. մայիսին Պերդիգանը, Ռ. Կյուլպենկյանը և Դոմինգոս դը Սուդա Հոյթթայնը (Հիմնարկության Տնօրենների ժողովի անդամ էր) այցելել են Թուրքիա, Լիբանան, Հորդանան և Իրաք, եղել Կ. Պոլսի ու Երուսաղեմի Հայոց պատրիարքարաններում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական նստավայրում³: Այդ շրջայցից Հետո Հայկական բաժանմունքն իր նպատակների գերակշիռ բաժինն սկսեց Հատկացնել Միջին և Մերձավոր Արևելքի Հայ Համայնքներին: Հիմնարկության ղեկավարությունը նշում էր, որ «Հաստատելու Համար այն վայրերը ուր Հայ Համայնքներու (Մերձավոր Արևելքի) Հարցերը ալ աւելի կարևոր են և ուր մասնաւոր նկատառումներ պէտք են այդ Հարցերու լուծումին Համար, և իբր արդիւնք եղած քննություններուն, Խնամակալ Վարչական Ժողովը որոշեց, Հիմնարկութեանս գործունէութեան կարևոր մէկ մասը կեդրոնացնել և նախասիրությունը տալ Միջին Արևելքի գործունէութեանց»⁴, չեղարկելով, իհարկե, որ Հիմնարկության նպատակն է նաև ուշադ-

¹ «Ազգակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation. Armenian Department, *Twenty years of activity, 1956-1976*, p. 2.

³ Տե՛ս «Արև», թիւ 11.684-11.695, 21 Մայիս-3 Յունիս, 1957, թիւ 11.831, 12 Նոյեմբեր, 1957, «Այգ», թիւ 1298, 23 Մայիս, 1957:

⁴ «Ալիք», թիւ 249 (5890), 14 Նոյեմբեր, 1957, «Արև», թիւ 11.831, 12 Նոյեմբեր, 1957, «Այգ», թիւ 1446, 13 Նոյեմբեր, 1957:

րության արժանացնել և նկատողության առնել աշխարհի այլ կողմերից հնչող հայկական համայնքների խնդրանքները¹:

Վերոհիշյալ ճանապարհորդություններից հետո դրամական հատկացումներ կատարվեցին Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին, Բաղդադի Կեղրոնական վարժարանին և Հայկական եկեղեցու շինարարությանը, Բասրայի, Քիրքուքի Հայկական վարժարաններին և այլն²: Հայկական բաժանմունքի նպաստներից օգտվեցին նաև Բեյրութի «Հովակիմյան-Մանուկյան» վարժարանը, Թուրքիայում՝ Սուրբ Խաչ դպրեվանքը, «Եսայան» լիցեյը, «Արամյան» և «Մեսրոպյան» վարժարանները: Բաժանմունքը միջոցներ հատկացրեց Բեյրութում Աղունիևի Հայկական հիվանդանոցի Գալուստ Կյուլպենեկյանի անվան կրծքի Հետադոտական կենտրոնի ստեղծմանը, կարիքավոր Հայերի Համար կացարանների կառուցմանը և այլն³: Հիմնարկության ղեկավարութունը հետազայում ընդարձակել է Սիրիայի և Լիբանանի հայ համայնքներին տրվող նպաստների ծավալը: 1960-ական թվականներից հատկացումներ են կատարվել նաև Իրանի Հայկական կազմակերպություններին⁴: Պերդիգանի առաջին ղեկույցները վկայում են, որ 1955-1962 թթ. Հայկական կազմակերպություններին արված հատկացումները կազմել են տարեկան շուրջ 6-7 հարյուր հազար դոլար⁵:

Հարկ է նշել, որ Հայությանը «Գալուստ Կյուլպենեկյան» հիմնարկության հատկացրած միջոցների հարցը լայնորեն քննարկվել է սփյուռքահայ մամուլում: «Արևը» 1959 թ. նշում էր, որ. «Այս հիմնարկութեան («Գալուստ Կյուլպենեկյան»՝ Վ. Ղ.) գլուխը կեցող Տիար Գէորգ Եսայան, փեսան ողբացեալ բարերարին (Գ. Կյուլպենեկյանի՝ Վ. Ղ.) և անոր օգնական Տիար Ռոպէր Կիւլպէնեկեան, իրենց կարգին հարիւր առ հարիւր հայ ըլլալով, ընական է պիտի չանտեսէին Հայութիւնը, և նոյնիսկ կ'ակնկալուէր որ անոնք քիչ մը աւելի ուշ դարձնէին ղէպի իրենց կարօտեալ աղբը: Բոլոր Հայերուն

¹ Տե՛ս «Այր», թիւ 249 (5890), 14 նոյեմբեր, 1957, «Արև», թիւ 11.831, 12 նոյեմբեր, 1957, «Այգ», թիւ 1446, 13 նոյեմբեր, 1957:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 79-86.

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 79-87.

⁵ Տե՛ս նույն տեղում, նաև՝ Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 159.

այս ականակալութիւնը՝ ուրախութեամբ կը հաստատենք որ իրականացաւ: Ու այսօր՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, իր ծանր կշռող իրականութեամբ, ներկայ է հայ կեանքէն ներս»¹: «Ազատ օրը», 1964 թ. ներկայացնելով կատարված հատկացումներն, արձանագրում էր, որ դրանք «...պատկանելի են բառին ամբողջական իմաստով և աննախընթաց են հայ իրականութեան մէջ»², իսկ «Ազգակն», ընթերցողների ուշադրությունը հրավիրելով հիմնարկության կողմից մինչև 1962 թ. Հայկական Հաստատությունների օգտին կատարված նվիրատվությունների ծավալի վրա (3.972.000 դոլար), եզրակացնում էր, որ այդպիսի «...պատկանելի յատկացումներու ընդհանուր գումարը աննախընթաց է հայ կեանքին մէջ»³: Հետաքրքրական է նշել, որ կոչ անելով ուշադրությամբ և մանրակրկիտ ձևով քննել բովանդակ Սիւրյուռքի մէջ հիմնարկության Հայկական բաժանմունքի կատարած հատկացումներն, «Ազատ օրն» ընդգծում էր, թե դրանք ուղղակի կամ անուղղակի կերպով. «...կեղրոնացած են հայ կեանքին մէջ լոյս ու գիտութիւն (ընդգծումը բնագրում է) տարածելու նպատակին շուրջ: Հարիւր հազարներ յատկացուած են գոյութիւն ունեցող զպրօցական խարխուլ շէնքերը վերանորոգելու, կամ նորերը շինելու համար: Հարիւր հազարներ յատկացուած են արժանաւոր ու վկայեալ Հայ ուսանողներուն բարձրագոյն կրթութիւն տալու համար: Հարիւր հազարներ յատկացուած են գոյութիւն ունեցող Հայ վարժարանները գիտական գործիքներով և արդիական մեքենաներով օժտելու համար»⁴: Նույն թերթը 1967 թ. մայիսի 10-ի իր համարում անդրադարձել է նաև հիմնարկության՝ մինչև 1964 թ. կատարած փաստացի վճարումներին՝ ներկայացնելով, որ. «...1956էն մինչև 1963ի վերջը՝ այսինքն և օթնուկէս տարուան մէջ, վարիչները բաշխած են 15ուկէս միլիոն սթերլին հետևեալ ձևով (գումարները կլորցուած են). – Փորթուկալի տրուած է 6.300.000 անդլ. ոսկի (40.5 առ. Հարիւր), Իրաքի՝ և Մերձատր Արևելքի միւս երկիրներուն՝ 3.750.000 անդլ. ոսկի (24 առ. Հարիւր), Հայ Համայնք-

¹ «Արև», թիւ 12.419, 15 Հոկտեմբեր, 1959:

² «Ազատ օր», թիւ 5794, 13 Մարտ, 1964:

³ «Ազգակն», թիւ 152 (9281), 3 Սեպտեմբեր, 1962:

⁴ «Ազատ օր», թիւ 6478, 13 Յունիս, 1966:

ներուն՝ երկու միլիոն ոսկի (13 առ Հարիւրէն քիչ մը պակաս), Մեծ Բրիտանիոյ և Հասարակապետութեան երկիրներուն՝ 1.900.000 (12 առ Հարիւր), զանազան երկիրներու՝ 1.600.000 (10.5 առ Հարիւր)»¹: Իր Հաջորդ Համարներից մեկում «Ազատ օրը» բերում է հետևյալ տվյալները. «...Հիմնարկութեան բաժնած դրամներուն 48 առ Հարիւրը տրուած են Փորթուկալի, 27 առ Հարիւրը Միջին Արևելքի զանազան երկիրներուն, մասնաւորաբար Իրաքի, 10 առ Հարիւրը՝ ամբողջ աշխարհի հայկական համայնքներուն, 10 առ Հարիւրը՝ Անգլիական Հասարակապետութեան, (որովհետև, Կիւլպէնկեան անգլիահպատակ քաղաքացի էր) և 5 առ Հարիւրը ուրիշ երկիրներում»²: Անշուշտ, Հիմնարկութեան նպաստները սոսկ չոր թվեր չէին, որոնք տարեցտարի գրանցվում էին հայկական կազմակերպությունների հաշվեմատյաններում. «Միշտ կաշխատինք, կուղենք որ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի հայկական բաժանմունքը չնմանի կաթսայի մը որ միայն դրամ կուտայ, - 2005 թ. «Մարմարային» տված իր հարցազրույցում պարզարանում էր Զ. Եկավյանը, - Կուզեմ որ բոլորին մէջէն այդ միտքը, այդ զաղափարը դուրս գայ: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի հայկական բաժանմունքը Հնարամիտ է և ստեղծագործող»³: Այս զնահատականն, ինչ խոսք, Հիմնավորված էր հաստատությունների ղեկավարների և աշխատակիցների երկարամյա քրտնաջան աշխատանքով:

Պետք է շեշտել, որ որևէ կրթական կամ մշակութային կազմակերպության հատկացում կատարելու ժամանակ «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկության ղեկավարությունը հաշվի էր առնում տվյալ հաստատության՝ աճող հայ նոր սերունդներին հայեցի դաստիարակելու և հայապահպանությունների գործին սատարելու իրական հնարավորություններն ու կարողությունները: Խտրականություն չէր դրվում զավանակական տարբերությունների վրա: Հատկացում-

¹ «Ազատ օր», թիւ 6752, 10 Մայիս, 1967:

² Նույն տեղում, թիւ 7335, 15 Ապրիլ, 1969:

³ «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոբեր Հատտեճյանին Զ. Եկավյանի տված հարցազրույցն ամբողջությամբ արտատպվել է «Ազգ» օրաթերթի՝ 2005 թ. նոյեմբերի 26-ի համարում (տե՛ս Զավէն Եկավեան, «Մասրոպ Մաշտոցի այբուբենն է հավատամբս», «Ազգ», 216, (3382), Երևան, 26 նոյեմբեր, 2005, նաև՝ <http://www.azg.am/AR/20051126> 11 |աղյուցակները կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.):

ները կատարվում էին. «...ողջամտորէն՝ նկատի առնելով կարիքը, քննելով օգտակար ըլլալու Հնարաւորութիւնները, նպաստընկալ թեկնածու նկատելով ոչ թէ այս կամ այն նախասիրուած «կողմ»-ը. այլ ամէն Հայ շրջանակի բոլոր Հանրային կազմակերպութիւնները: Յատկացումներու արժանացած են զանազան Հայ վարժարաններ... Եւ այս բոլորը, կատարելապէս ու բացարձակօրէն անտես ընելով այն իրողութիւնը, որ Հայ Համայնքն ալ, ինչպէս ամէն Համայնք, ունի սա կամ նա շրջանակը՝ Հետևորդներով ու Համակիրներով: Եթէ տրուած է աջին, ապա տրուած է ձախին: Եթէ Այր Բէնեանը արժանացած է յատկացումի, ապա յատկացումի արժանացած է նաև անոր «Հակադիր» Բէն Այրէանը: Այսպէս է, որովհետև Հիմնարկութեան բացառարար մէկ ու միակ մտահոգութիւնը եղած է օգնել, շինարար և զրական գործ կատարել, Հասնիլ Հոն, ուր վաւերական կարիք կայ, ամբացնել Սփիւռքի ազգային, կրթական, մշակութային և այլ Հաստատութիւնները, սատարել Հայապահպանման մեծ ու բախտորոշ առաքելութեան»¹: Իսկ «Ազգակը» գրում էր, որ «...Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հիմնական ծրագիրն է Հայ Մանուկին դպրոցական և մանկապարտիզպանական կեանքը ընդհանուր յայտարարի բերել, որպէսզի այս առատութեան դարուն երկխան դուրկ չմնայ դպրոցական վայելքէ»²:

Չլինելով Հայկական կազմակերպություն՝ Հիմնարկությունն, այնուամենայնիւ, իր Հիմնադրումից կարճ ժամանակ անց քաջածանոթ էր Սփյուռքի՝ կրթութեան և այլ բնագավառներում ունեցած գրեթե բոլոր խնդիրներին: «Ազգակի»՝ Հարցին նվիրված Հոգվածում կարդում ենք. «...Վստահօրէն գիտէնք, թէ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը իր կազմով Հայ ազգային մարմին մը չէ: Բայց, անոր ցարդ ունեցած իմաստուն գործունէութիւնը կը Հաստատէ, որ ինք չա՛տ լաւ կ'ըմբռնէ տարագիր Հայ ժողովուրդի ազգային գոյապահպանման մտահոգութիւնները և ատոր Համար ալ իր Հայկական յատկացումներու 90 տոկոսը կեղրոնացուցած է կրթական մշակութային ձևներով»³:

¹ «Ազատ օր», թիւ 5794, 13 Մարտ, 1964:

² «Ազգակ», թիւ 20 (9149), 29 Մարտ, 1962:

³ Նոյն տեղում, թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964:

1956-1962 թթ. ընթացքում Հիմնարկությունը դեռևս չէր զոր-
ծակցում Հայաստանի Հետ, որի մասին վկայում են գիտական Հաս-
տատություններին Հատկացված փոքրածավալ նպաստները¹: Այդ
տարիներին, բացի Ամենայն Հայոց կաթողիկոսությունը կատարած
Հատկացումներից, Մատենադարանին զրականություն ձևով բերե-
լու նպատակով տրամադրվել է միայն 3 Հադ. դոլարի նպաստ²:
Հայաստանի Հետ Համագործակցությունն սկսվեց 1964 թ., երբ
Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով Հայաս-
տան ժամանեցին Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը³: Կ. Դալլաբ-
յանը նշում է, որ նրանք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն
Առաջինի հյուրերն էին՝ վերջինիս գահակալության 10-րդ տարե-
դարձի առիթով: Կատարություն հանձնարարությունամբ ՀՆՍՀ Նա-
խարարների խորհրդին առնթևեր Հայ եկեղեցու գործերի խոր-
հուրդն ընդունելություն կազմակերպեց կաթողիկոսի պատվին: Այդ
ընդունելություն ժամանակ էլ Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը
Հայտնեցին, որ Հաստատության ղեկավարությունը որոշել է
նպաստներ Հատկացնել Հայաստանի կազմակերպություններին:
«Անմիջապես հրապարակվեցին տարրեր Հասցեատեղեր,- հաղոր-
դում է Կ. Դալլաբյանը,- և Հայտարարվեց ավելի քան 200.000 դո-
լարի նպաստի Հատկացման որոշումը»⁴:

Կասկածից վեր է, որ 1960-ականներին սկսված Հայ ազգային
դարձոնքն ու խորհրդային չափավոր դեմոկրատացման քաղաքա-
կան խմորումները չէին կարող վրիպել թե՛ Պերդիգանի, թե՛ Ռ.
Կյուլպենկյանի ուշադրությունից, որոնք արդեն ճանաչված գործիչ-
ներ էին ոչ միայն Պորտուգալիայում, այլև Եվրոպայի, Մերձավոր
ու Միջին Արևելքի, Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի երկրներում
ու Հայ Համայնքներում: Նրանք ծրագրել էին ամուր կապեր ստեղ-
ծել Հայաստանի Հետ, որի բազմաթիվ գիտական, առողջապահա-
կան, կրթական և մշակութային կազմակերպություններ Հնարա-

¹ *Sl'u Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p.85.*

² *Sl'u նույն տեղում, նաև՝ «Արև», թիւ 13,281, 10 Օգոստոս, 1962:*

³ *Sl'u Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, Twenty years of activity, 1956-1976, p. 3.*

⁴ *Դալլաբյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 16: Sl'u նաև նույն Հեղի-
նակի՝ Հուշապատում, էջ 90:*

վորություն կունենային ոչ միայն զինվելու արտասահմանյան ժամանակակից, որակյալ ու թանկարժեք տեխնիկայով, այլև դարկ տալու զիտական հետադուրութուններին, կրթության զարգացմանը, մշակութային ձեռնարկումներին և այլն: Հետաքրքրական է, ի դեպ, նշել, որ 1960-ականներին, երբ խորհրդային արտադրության զիտատեխնիկական շատ սարքավորումներ հեռու էին որակյալ և կատարյալ լինելուց, իսկ արտասահմանյան տեխնիկայի մասին խորհրդային հանրապետություններում հիմնականում տեղեկանում էին ամսագրերից և լրատվամիջոցներից, Հայաստան մեծ քանակությամբ մուտք էին գործում այնպիսի ընկերությունների արտադրանքներ, ինչպիսիք են SIEMENS-ը, TOSHIBA-ն, SONY-ն և այլն: Քիչ չէին նաև դեպքերը, երբ տեղում չէին կարողանում գործարկել ստացված սարքավորումները, և դրանք ուղարկելուց դատ, Ռ. Կյուլպենկյանը, Վ. Մավյանն ու Կ. Քեչիչյանն ստիպված էին Հայաստան գործուղել համապատասխան ընկերությունների ու կազմակերպությունների մասնագետների, որը վկայում է նրանց՝ երկրին օգնելու հարցում ունեցած անկեղծ և անմնացորդ նվիրվածության մասին:

Հայաստանում իրենց ցույց տրված ընդունելությունից և տեղում գոյություն ունեցող քաղաքական իրավիճակից Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը բավականին դրական տպավորություններ էին ստացել, որն արտահայտվեց Մատենադարանին, Գիտությունների ակադեմիային և Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեին նպաստներ հատկացնելու որոշման մեջ¹: Այդ նպաստներն առաջին քայլերն էին, որոնք նախորդեցին հետագա տասնամյակներում հիմնարկության կողմից այստեղ իրականացված լայնամասշտաբ բարեգործական ծրագրերին: Հայկական բաժանմունքի ձեռնարկումները յրջորեն խթանեցին Հայաստանում զիտական մտքի առաջընթացին, կրթության որակի բարձրացմանն ու երկրի առողջապահական հաստատությունների արդիականացմանը:

Հետագա տարիներին Հայաստան այցելեցին նաև Վ. Մավյանն ու Զ. Եկավյանը: Նրանց այցերն ինչպես աշխատանքային, այնպես էլ ջերմ բարեկամական շփումներ էին հայրենիքի և նրա զիտնա-

¹ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 875, ց. 5. գ. 1, թ. 1-4:

կաններն ու մտավորականների հետ: Ռ. Կյուլպենկյանն ու Վ. Մավ-
յանը բաղձիցս են հրավիրվել Հայաստան՝ մասնակցելու Համազ-
գային նշանակություն ունեցող Հանդիսությունների ու միջոցա-
ռումների, ինչպիսին էին, օրինակ, Երևանի 2750-ամյակի առիթով
կազմակերպված տոնակատարությունը, Կոմիտասի, Եղիշե
Ջարենցի և Հովհաննես Թումանյանի ծննդյան տարեդարձերի նշու-
մը և այլն¹: Հայրենիքի վերաբերյալ իր տպավորությունների մասին
Ռ. Կյուլպենկյանը գրում էր. «...Մեզի համար մեծ բաւարարութիւն
էր տեսնել Հայաստանի պատմական, դարաւոր ժառանգութիւննե-
րու կողքին բարձրացող և օրէ օր զարգացող նորը՝ գիտական, մշա-
կութային և կրթական տարրեր մարդերու մէջ: Մեզ տպաւորեցին
մանաւանդ խոր հմտութիւնն ու իրենց ասպարէզներուն հանդէպ
ունեցած նուիրումը գիտնականներուն, արուեստի և մշակոյթի
գործիչներուն»²:

Մոտենալով այս գլխի ավարտին՝ հարկ է կատարել նաև որոշ
եզրահանգումներ: Նախ, առավել քան կարևոր է նշել, որ Գ. Կյուլ-
պենկյանի կտակակատարներն անչեղորեն կատարեցին Հայ մեծա-
հարուստի կտակի բոլոր պահանջները և ի դրու գտնվեցին
աշխատելու նույնիսկ քաղաքական անկայուն իրավիճակներում
Հայտնված երկրներում³:

Հիմնարկություն դեկավարությունն սկսեց լրջորեն հե-
տաքրքրվել ոչ միայն Սփյուռքի, այլև Հայաստանի գիտական,
կրթական, առողջապահական և այլ կազմակերպությունների
խնդիրներով: Պերդիգանի, Գ. Եսայանի և Ռ. Կյուլպենկյանի առա-
ջին կարևոր գործերից էին Հայկական Համայնքներ և Հայաստան
կատարած այցերը: Ծրջյով կրթական, մշակութային, գիտական ու
առողջապահական Հաստատություններով՝ նրանք ծանոթանում
էին տիրող իրավիճակին ու կարիքներին: Ընդ որում, պետք է ընդ-
գծել, որ լինելով նոր հիմնադրված բարեգործական Հաստատու-

¹ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 875, ց. 2, գ. 532, թ. 5, 16, գ. 534, թ. 32-34:

² Նույն տեղում, գ. 534, թ. 13:

³ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեության համար լուրջ
խոչընդոտներ էին ստեղծում Սուեզի ճգնաժամն (1956-1957 թթ.) ու Կասնի գլխա-
վորած հեղափոխությունն Իրաքում (1958 թ.), Մերձավոր Արևելքում ընթացող
արաբ-իսրայելական սպառնալուծները և այլն:

Թյան ղեկավարներ և նախկինում չունենալով որևէ նման կա-
ռույցում աշխատանքային գեթ մեկ օրվա փորձ՝ Պերդիգանը, Գ.
Եսայանն ու Ռ. Կյուլպենկյանը գործեցին բավականաչափ խոհեմ
ու արդյունավետ մեթոդներով, որոնք ուղենիշ դարձան Հիմնար-
կության հետագա ողջ գործունեությունից համար:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ խորհրդային իշ-
խանությունները հաստատությունից ղեկավարներին ընդունեցին
կառույցի Հիմնադրումից զրեթև ութ տարի հետո միայն՝ համոզ-
վելով, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը քաղաքա-
կան կազմակերպություն է, չի հետապնդում որևէ նմանատիպ շահ
և կարող է նույնիսկ Սփյուռքը մայր հողին կապող կամրջի դեր
կատարել: Այդ իսկ պատճառով խորհրդային իշխանությունները
երբևէ չխոչընդոտեցին Հայաստանում Հիմնարկության իրակա-
նացրած ծրագրերին:

Սորհրդահայ մամուլում, սակայն, բառ անգամ չենք գտնում
«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության մասին: Սփյուռքում
լույս տեսնող թերթերն էին, որ բազմիցս անդրադարձան նրա գոր-
ծունեությունը: Սփյուռքահայ մամուլում, ի ղեպ, Հիմնարկության
գործունեությունը փորձ է արվել լուսարանել հնարավորինս անա-
չառ դիրքերից, որը վկայում է այդ հաստատության և նրա ղեկա-
վարների՝ խմբային շահը համընդհանուրին ստորագասկյու
վճռականության մասին. վճռականություն, որն ամուր Երաչխիք
դարձավ բարեգործական ծրագրերը համահայկական դարձնելու
համար: Այդ խնդիրն էր քննարկում «Ազդակը», երբ գրում էր, որ
«...Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունն գործադիր մարմինը իր
յատկացումները զրեթև ամբողջութեամբ կեղրոնացուցած է կրթա-
կան ու մշակութային նպատակներու շուրջ, բովանդակ սփյուռքի
մէջ, և համադրային չափանիշով»¹: «Յաճախ պատահած է,- շա-
րունակում էր թերթը,- որ հասարակական կեանքի մէջ համեստ
գործ մը կատարողներ խլացուցիչ աղմուկ բարձրացուցած են, դա-
նազան միջոցներով հանրային ուշադրութեան արժանանալու,
փառքի, հռչակի տիրանալու վրան բաց՝ ձգտումով: Ատոր ճիշդ ու
ճիշդ հակառակն է Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկութիւնը, որ իր

¹ «Ազդակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964:

գոյութիւնը կը զգացնէ ոչ թէ տանիրներու վրայէն կատարած քարոզչութեամբ, փողով ու թմբուկով, այլ՝ իր կատարած պատկանելի յատկացումներով կրթական գործերու համար, մանկապարտէզներն սկսեալ մինչև համալսարանները»¹:

Խնդիրը նույն տեսանկյունից էր քննում «Յուսարերը», որի խմբագրականը արտատպվել էր նաև «Ազատ օրում»: Թերթը գրում էր, որ բարեգործութիւնը պետք է ղիմանա երկու փորձութեան. «Առաջին փորձութիւնը,- գտնում էր «Յուսարերը»,- կը կայանայ անոր մէջ, որ երբ մահկանացուներէ բաղկացած հաստատութիւն մը մեծագումար օժանդակութիւններ կ'ընէ հոս ու հոն, ապա կ'ուղէ որ այս մասին ազմուկ բարձրանայ, բոլորը ոչ միայն զիտնան, թէ ինչ առատաձեռն նուէրներ է ըրած, այլև գովարանեն թէ՛ կատարուածը, թէ՛ կատարողը: Երկրորդ փորձութիւնը առաջինի հետեւանքն է, թերեւ,- նշում էր թերթը և շարունակում,- Արդարև, ի տես, ևս ի յուր շոայրուած փառարանքին, փառարանուողը կրնայ նախասիրութիւններ մշակել: Եւ ինք իսկ չանդրադառնալ թէ որքան արագորէն այս տրամադրութիւնը կողմնակալութեան ևւ աչառութեան կը փոխակերպուի»²: Ուղիղ համեմատական անցկացնելով «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան գործունեութեան և նշված փորձութիւնների միջև՝ «Յուսարերը» գրում էր. «Բացարձակ առարկայութեամբ մօտենայով՝ Գ. Կյուլպենկեան հիմնարկութեան ԳՈՐԾին (չարվածքի ձևը բնագրում է) մէջ, կը տեսնենք, որ ան ի սպառ ղերծ մնացած է այս երկու փորձութիւններէն ալ: Այս իրողութեան հիման վրայ, ո՛չ գովք, ո՛չ ալ փառարանութիւն պիտի շոայենք, այլ պիտի արձանագրենք մեր անվերապա և ու բացարձակ զնահատութիւնը՝ կատարուած գերազանցօրէն ազգաշէն ու մարդկային գործին համար... յատկացումները կատարուած են առանց ակնկալութեան, թէ ծափ պիտի դարնուի և օրհներգութեան հրապարակային «մրցում» սարքուի... կատարուած գործը զնահատութեան արժանի կը հանդիսանայ ոչ միայն իր նիւթական չափանիշով, այլև իր վաւերապէս բարոյական էութեամբ»³:

¹ «Ազգակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964:

² «Ազատ օր», թիւ 5794, 13 Մարտ, 1964:

³ Նույն տեղում:



Ընտանեկան լուսանկար Գալուստ և Նվարդ Կյուլպենկյանների ամուսնության
արամանդյա հոբելյանի առթիվ (1952 թ.)

Նստած՝ Գալուստ և Նվարդ Կյուլպենկյանները, կանգնած ծախից աջ
Գևորգ Եսայանը և իր կինը՝ Ռիտան, Ռոբերտո Կյուլպենկյանը,
Միքայել Եսայանը, Նուբար Կյուլպենկյանն ու իր կինը՝ Մարին:



Գալուստ Կյուլպենկյանի արձանը իր հիմնած հիմնարկության առջև
(Լիսաբոն)



Էմիլիո Ռուի Վիլար
«Գալուստ
Կյուլպենկյան»
հիմնարկության
Տնօրենների ժողովի
նախագահ



«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության
կենտրոնական շենքը (Լիսաբոն)



«Գալուստ Կյուլպենկյան»
հիմնարկության Լոնդոնի
ներկայացուցչությունը



«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Փարիզի մշակութային կենտրոնը



«Գալուստ Կյուլպենկյան» թանգարանի սրահը (Լիսաբոն)



«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ժամանակակից արվեստի կենտրոնը (Լիսաբոն)



Զավեն Եկալյանի այցելությունը «Դպրոցասեր» վարժարան (Փարիզ, 2007 թ.) (նկարում ձախից Դայ առաքելական եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդ Ս. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը, Զավեն Եկալյանը և ճարտարապետ Զավեն Սուրադյանը)

Նույնատիպ տաղերի ենք հանդիպում «Ազատ օրվա» 1966 թ. հունիսի 13-ի համարում, որտեղ նշված է, թե. «Անոնք որ մօտեն կը հետևին Հիմնարկութեան գործունէութեան ևւ պաշտօնական տեղեկագիրներուն, անվարան կերպով կը վկայեն, որ հեռատես իմաստութեամբ է, որ կը կատարուին հայ կեանքի բոլոր յատկացումները»¹: Հիմնարկութեան գործունէութեան նման ոճը պահպանվեց իր հիմնադրումից հետո անցած ողջ տասնամյակների ընթացքում: Հարկ է նաև նշել, որ թեպետ 1970-ական թվականներին ի վեր հաստատութեան ներսում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ², սակայն կառույցի ղեկավարությունը երբևէ չի դադարեցրել իր օգնությունը Հայաստանին ու հայ ժողովրդին: Միանգամայն իրավացի էր հիմնարկութեան Հայկական բաժանմունքի ներկայիս տնօրենը, երբ նշում էր, որ հաստատութեան Տնօրենների ժողովի այդպիսի վարքագիծն արդյունք էր պորտուգալացիների կողմից հայ ժողովրդի նկատմամբ տաճած խոր հարգանքի³:

Մեկ նկատառում ևս. Հայկական մամուլի կամ, ընդհանրապես, Հայ իրականությունը մեջ հետաքրքիր պատկեր է ուրվագծվում, երբ համեմատություն մեջ ենք դնում Գալուստ Կյուլպենկյան մարդու և համանուն հիմնարկութեան բարեսիրական գործունէությունը: Թե՛ Կյուլպենկյան բարերարը, թե՛ համանուն հիմնարկությունը բարեգործություններ կատարելիս խտրականություն չէին դնում վարչակարգերի, ազգությունների, մարդկանց գույնի և հավատի միջև: Մասնավորապես, Գ. Կյուլպենկյանը Խորհրդային Հայաստանին նվիրատվություններ կատարելու ժամանակ երբեք և որևէ առիթով իր բարեգործությունները չպայմանավորեց այնտեղ առկա հասարակարգով. նույնիսկ չայրեց իր քաղաքական կամուրջները խորհրդային վարչակազմի հետ, երբ Ա. Խանջանն անհարկի վիրավորեց իր անձը: Այդպիսի վարքագիծ մազնատը դրսևորում էր

¹ «Ազատ օր», թիւ 6478, 13 Յունիս, 1966: «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան գործունէությունը 1962 թ. տրված բարձր գնահատականի մասին տե՛ս նաև «Ջարթօնք», 1962, Սեպտեմբեր, էջ 350:

² Փակվել են Նավթային, Մերձավոր Արևելքի և այլ. թվով հինգ. բաժանմունքներ, կրճատվել է հիմնարկութեան աշխատակիցների թիվը և այլն:

³ Տե՛ս «Ազգ», 216, (3382), 26 նոյեմբեր, 2005:

նաև Սփյուռքում գործող քաղաքական կուսակցությունների և Հասարակական բաղմամբով կաղմակերպությունների Հանդեպ: Գ. Կյուլպենկյան բարերարին ու գործչին լավագույնս է ընտրվազրկ Ամենայն Հայոց կաթողիկոս Վաղղեն Առաջինը՝ նշելով, որ «Հանգուցեայր (Գ. Կյուլպենկյանը՝ Վ. Ղ.) որպէս Հայ մարդ, գուցէ իրաւունք ունենար դառնացած ևս յուսախար եղած ըլլալու այս աշխարհէն, մանաւանդ մեծ ազգերէն: Սակայն անոր մեծ սիրտը մարդասիրութեամբ և լաւատեսութեամբ ջերմացած, իր մտածումը առաջնորդեց դէպի այնպիսի գործ մը, որ մեր գիտակցութեան առջև կը հանդիսանայ որպէս բարոյական յաղթական կոթող: Մենք մխիթարուած ենք, որ մեր զաւակներէն մին այդպիսի սիրտ ունեցաւ»¹:

Պետք է արձանագրել, որ մինչև Գ. Կյուլպենկյանի մահը, սփյուռքահայ մամուլը Հայ բարերարին կատարված նվիրատվությունների ու բարեգործությունների համար շնորհակալություն հայտնելու փոխարեն իր էջերում գրեթե միշտ տպագրում էր նրա հասցեին ուղղված քննադատական հոդվածներ՝ համարելով, որ մի ողջ երկիր պահելու ունակ Հայր սևիական ժողովրդի կարիքները հոգալու նպատակով պարտավոր էր ծախսել իր հարստություն մեծ մասը, եթե ոչ ամբողջը: Նմանատիպ տրամաբանություններ և երբեմն չափից ավելի պահանջներով ու քննադատություններով գրառվել են «Յառաջը», Հիմնարկություն գործունեության սկզբնական շրջանում՝ «Արևը», «Ազատ օրը», «Ազդակը» և այլ թերթեր:

Բարերարի մահից և նրա անունը կրող բարեգործական կառույցի Հիմնադրումից բառացիորեն մի քանի տարի անց սփյուռքահայ Հասարակական-քաղաքական շրջաններում սկսում է ձևավորվել ու ամրապնդվել մի կարծիք, համաձայն որի՝ Հարկ է արժանին հատուցել բոլոր այն մարդկանց, գործիչներին ու կաղմակերպություններին, որոնք, թեկուզև չնչին, իրենց լուծման ունեն հայություն ապագայի կերտման գործում: Նշվածը հետաքրքրական է, մանավանդ, այն առումով, որ կատարվեց 1950-1960-ական թվականներին, երբ խորհրդային Հայաստանում կարմիր իշխանությունները կանաչ լույս վառեցին երկրում գործել ցանկացող

¹ «Խիան», թիւ 117, 5 Սեպտեմբեր, 1957:

սփյուռքահայ և օտար մշակութային, հասարակական կազմակերպությունների համար, իսկ Սփյուռքն անցել էր իր մղձավանջային, ձևավորման փուլն ու մտել զարթոնքի ժամանակաշրջան: Խնդրո առարկա կարծիքը ձևավորվեց որոշ նոր, ծանրակշիռ հանդամանքների ի հայտ գալու պատճառով:

Հայտնի է, որ 1920–1930–ական թվականներին Ցեղասպանություն ենթարկված, հայրենիքից բռնագաղթված և հայրենազրկված արևմտահայութան՝ աշխարհի չորս ծագելու հայտնված ստվար զանգվածների համար առաջին խնդիրն ու օրվա հրամայականը ֆիզիկական գոյության պահպանումն էր: Օտար երկիրների տակ ծվարած հայ ժողովրդի բեկորների մեծ մասը գյուղացիներ և արհեստավորներ էին, որոնք խորթ էին ընդունող հասարակութանը, տեղյակ չէին նրա նիստ ու կացին, բարքերին, մշակույթին, չէին տիրապետում լեզվին և լավագույն դեպքերում կատարում էին մասնագիտական որակավորում չպահանջող, ծանր, առողջության ու կյանքի համար վտանգավոր աշխատանքներ: Իրավիճակն ավելի բարդացավ 1929–1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով: Խորհրդային Հայաստանն այդ տարիներին ոչ միայն անկարող էր որևէ օգնություն հասցնել արևմտահայության մեծաքանակ, թափառական ու թշվառ զանգվածներին՝ տեղավորելով նրանց իր սահմաններում, այլև ինքն էր թաղված բազմաթիվ կարիքների մեջ:

Հիշյալ տարիներին սփյուռքահայ հասարակական, քաղաքական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ հազարավոր հայերի սովից, հիվանդություններից, ցրտից ու այլ վտանգներից վերկելու համար կամա–ակամա իրենց հայացքներն ուղղեցին դեպի հայկական և օտար բարեգործական կազմակերպություններն ու տարբեր երկրներում քիչ թե շատ ազդու քաղաքական կամ տնտեսական դիրքեր գրաված մեծահարուստ հայերը՝ նրանցից ակնկալելով գումար ու նյութական միջոցներ, որոնք, որքան էլ շատ լինեին, հակված ենք մտածելու, կրկին չէին բավարարելու հայության անհամար խնդիրների լուծմանը: Այդ պայմաններում քաղաքական ուժերի և անհատ գործիչների կողմից, բնականաբար ու մեղմ ասած, չէին ընդունվելու և չընդունվեցին այն մերժումները կամ օգնություն հասցնելու համար անկարող

՝ լինելու պատճառաբանությունները, որոնք ղուրկ չէին ծանրակշիռ հիմքերից: ՀԲԸ Միությունն, օրինակ, անկարող էր կատարել իր նյութական բոլոր միջոցները, ներառյալ անձնոճխելի դրամազուլտսը, հայության խնդիրների լուծմանը ծառայեցնելու տարրեր ուժերի կողմից ներկայացվող պահանջները, չնայած այն հանգամանքին, որ չափից ավելի դժվար էր սովի ու ցրտի ճիւղաններում գալարվող բազմահազար մարդկանց փրկել ցանկացող կազմակերպություններին պարզաբանել, որ Միություն հիմնադիրները «...ստեղծելով գլխավոր հիմնադրամ և դարձնելով այն անձնոճխելի, ոչ միայն ձգտում էին ապահովել կազմակերպության մշտական, հարատև գործունեությունը, այլև անհրաժեշտություն դեպքում անհասպաղ և գործնական օգնություն հասնել հայ աղետյալներին»¹:

Գրեթե նույնն էր իրավիճակը հայ անհատների, մասնավորապես՝ Գ. Կյուլպենկյանի պարագայում: Բարերարը, նախ, որքան էլ հարուստ լիներ, անկարող էր միայն իր միջոցներով հոգալու հայության անթիվ կարիքները, և նորություն ասած չենք լինի, եթե նշենք, որ գրեթե բոլոր մեծահարուստների նյութական հիմնական կարողությունները նրանց տնտեսական գործունեության կարևորագույն, եթե ոչ գլխավոր գրավականն ու երաշխիքն են: Պատմությունը հայտնի են սակավաթիվ դեպքեր, երբ որեէ մեծահարուստ իր կենդանություն օրոք հրաժարվել է սեփական ողջ կարողությունից. ընդ որում, նման դեպքերը տեղի են ունեցել առավելապես անձնական պատճառներով՝ աշխարհայացքի, համոզմունքների, դավանած գաղափարների փոփոխություն, աշխարհիկ կյանքից հրաժարում և այլն: Ներկայացված հիմքերը, սակայն, ինչպես նշվեց, չընդունվեցին դրամ ակնկալողների կողմից: Ավելին, հայ քաղաքական գործիչներն ու կուսակցություններն սկսեցին տեղի-անտեղի սուր, կրակոտ, հաճախ անձնական վիրավորանքների հասնող խոսքերի տարափ տեղայ հայ մեծահարուստների, Բարեգործականի և նրա անդամների զլխին՝ մամուլը դարձնելով իրենց խոսափողը: 1930-ական թվականների ողջ ընթացքում հայկական թերթերում հաճախակի կարելի էր հանդիպել այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք էին՝ «...կարող էր ավելին տալ կամ անել,

¹ Մեղրոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 40:

րայց չարեց...», «...Հայության ծով կարիքների Հանդեպ քարսիրտ է...», «անհոգի կապիտալիստ», «մալեղ-խլեղներ» և այլն:

1920-1930-ականների մուսլ պատկերը փոխվեց 1950-1960-ականներին. երբ ասպարեղ իջավ սփյուռքահայության նոր, երիտասարդ սերունդը, որն ուներ կրթություն, մասնագիտություն, բարձր վարձատրվող աշխատանք և ի վիճակի էր արդեն սեփական ուժերով բավարարելու իր կենսական գրեթե բոլոր պահանջները: Հայաստանն, իր Հերթին, սատար կանգնեց սփյուռքահայության նոր սերունդների կրթության ու դաստիարակության գործին. բարձրագույն կրթություն ստանալու նպատակով բազմաթիվ երկրներից Հայաստան ժամանեցին Հայ երիտասարդներ: Հայաստանից սկսեց պարբերաբար գիր ու գրականություն առաքվել Սփյուռքի Հայկական դպրոցներ ու կրթօջախներ: Սփյուռքահայության ֆիզիկական գոյության ամենօրյա ու առօրյա պայքարն իր տեղը դիջեց մայրենի լեզուն, մշակութային և հոգևոր արժեքներն, ընդհանրապես, ազգային դիմագիծը սպառնալու գիտակցության ամրապնդմանը, որը պահանջում էր գաղափարական միասնություն, ուժերի և կարողությունների միավորում: Հատկանշական է, որ 1953 թ. ՀԲԸ Միության նախագահությունն ստանձնեց Հայտնի մեծահարուստ Ա. Մանուկյանը՝ Հայտարարելով, որ «Իմ երազս է Միութեան նիւթական միջոցները բազմացնել, որպէսզի շատ մը կենսական պէտքեր - որոնց մանրամասնութեան մէջ չեմ մտնել, բայց որոնց գլուխը կը գտնուի մեր մշակոյթը, Հայ գիրն ու գրականութիւնը - չ'անտեսուին այլևս»¹:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ու դրան հաջորդած տարիներին ստեղծվեցին և իրենց գործունեություն աշխարհագրական սահմաններն ընդլայնեցին Հայկական նոր բարեգործական կազմակերպություններ՝ «Ճինիշեան», «Հովնանեան», Հայ կրթական և այլն, որոնց նվիրատվություններն ու կատարած հատկացումները նպատակաուղղված էին ուժացման, Հայ հոգևոր, մշակութային արժեքներին պառնացող վտանգների դիմադրամանն ու չեզոքացմանը:

Պատահական չէր, Հետևապես, որ «Գալուստ կյուլպենկյան» ոչ Հայկական կազմակերպության Հայնպնստ ձեռնարկումները

¹ Մելքոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 430:

չվրիպեցին և չէին էլ կարող վրիպել Հայկական մամուլի ուշադրու-
թյունից, որի բերանով ողջ Հայությունը ևրախտիքի ու շնորհակա-
լության խոսք ուղղեց Հաստատության Հայ և օտարազգի
ղեկավարներին ու աշխատակիցներին:

ԵՐԿՐՈՐԳ ԳԼՈՒՆ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

2.1. Կրթամշակութային օջախների շինարարություն և վերանորոգում

Սիրիա և Լիբանան

Ինչպես նշվեց, «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության ղեկավարները Հայկական բաժանմունքի ստեղծման առիթով Հայտարարել էին, որ իրենց առաջնային նպատակներից մեկը Հայ կրթությունից և գիտությունից զարգացմանը սատարելն էր: Այդ տեսանկյունից, բնականաբար, Հատկանշական է, որ բաժանմունքի պատասխանատուների ուշադրության կենտրոնում Հայտնվեցին Սփյուռքի գրեթե բոլոր կրթական և մշակութային կենտրոններն ու Հաստատությունները:

Ինչ խոսք, որ նախքան Հատկացումներ կատարելը, Հիմնարկության տեսուչները պետք է լուրջ ուսումնասիրություններ կատարեին Հայկական Համայնքներում՝ ծանոթանալու նրանցում սիրող իրավիճակին, կրթության որակին ու կարիքներին, առանց որի անհնար կլիներ նպատակաուղղված և լայնածավալ բարեսիրական գործունեություն իրականացնելը: Այստեղ պետք է արժանին Հատուցել միաժամանակ թե՛ Պերդիդանին, թե՛ Գ. Եսայանին ու Ռ. Կյուլպենկյանին, որոնք իրենց ողջ եռանդն ու կարողություններն ի սպաս դրեցին տարբեր երկրների Հայ Համայնքների բազմաբնույթ կարիքների մանրակրկիտ ուսումնասիրությունը: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովը նշում էր, որ «...կրթական և տնտեսական վերահաստատման զետեի վրայ

զանուող դանազան կարևոր ծրագիրներու առնչութեամբ, ներկայիս խոր ուսումնասիրութիւններ կը կատարուին...ծրագիրները կը կարօտին սակաչն շատ զգոյշ ուսումնասիրութեան մը, որդեգրուելիք ուղղութեան և որոշ պայմաններու վերաբերմամբ»¹:

1957 թ. մայիսին Պերդիգանը, Փպմեյայի դուքս Դոմինգոս զը Սուդան և Ռ. Կյուլպենկյանը քննական ընդարձակ շրջապտույտ կատարեցին Մերձավոր Արևելքի երկրներով՝ լինելով նաև Թուրքիայում: Այցելութունների ընթացքում Հանդիպումներ եղան Երուսաղեմի, Կ. Պոլսի Հայոց պատրիարքների և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի Հետ, սերտ կապեր հաստատվեցին «...Լիրանանի, Յորդանանի, Իրաքի և Թուրքիոյ կարևոր անձնավորութեանց և Հայ Համայնքներու Հետ»²:

Հարկ է նշել, որ ի տարբերութուն Իրաքի և Թուրքիայի, որտեղ Հիմնարկութեան ղեկավարները Համագործակցում էին Հայոց պատրիարքների Հետ, Լիրանանում և Սիրիայում Հիմնվեցին Հաստատութեան ներկայացուցչական մշտական մարմիններ (Comité Educationel de la Fondation Calouste Gulbenkian au Liban: c/o M. A. Topjian; P.O.B. 715; Beyrouth (Liban), Comité Educationel de la Syrie de la Fondation Calouste Gulbenkian: c/o M. K. Nersoyan; P.O.B. 757; Alep; Syrie (R.A.U.) - «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան Լիրանանի կրթական մարմին. պատասխանատու՝ Մ. Ա. Թուփչյան, փոստային Համարը՝ 715, Բեյրութ (Լիրանան), «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան Սիրիայի կրթական մարմին. պատասխանատու՝ Մ. Կ. Ներսոյան, փոստային Համարը՝ 757, Հալեպ (Սիրիա)»³, որոնց անդամներն, ընտրված լինելով «... մտքի և բազկի գործունէութեան զանազան մարդէրեն»⁴, սերտ շփումների մեջ մտան տեղի Հայ Համայնքների Հետ և կարճ ժամանակ անց քաջածանոթ էին կրթութեան ընդհանրապես նրանց ունեցած խնդիրներին: Նմանատիպ մարմին գործում էր նաև Բրազիլիայում:

¹ «Յառաջ», 35րդ տարի, թիւ 8410, նոր շրջան, 15րդ տարի, թիւ 4311, Փարիզ, 5 Յունիս, 1959:

² «Ակիբ», թիւ 249 (5890), 14 Նոյեմբեր, 1957:

³ Տե՛ս «Յառաջ», 37րդ տարի, թիւ 9065, նոր շրջան. 17րդ տարի, թիւ 4866, 29 Մարտ, 1961:

⁴ «Ազգակ», թիւ 20 (9149), 29 Մարտ, 1962:

Սփյուռքի դպրոցներից «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հովանավորությունն առաջիններից արժանացածը ՀԲԸ Միության՝ բարերար Լազար Նաճարյանի նվիրատվությամբ և Նյու Յորքի «Տիկնանց կեղ. Յանձնախումբի» Հանգանակած միջոցներով Հայկալուս 1954 թ. բացված «Լազար Նաճարեան» վարժարանն էր¹: 1959 թ. Հիմնարկության նպաստով ընդարձակվեց կրթական այս Հաստատության շենքը և նույն թվականին այն վերածվեց երկրորդական վարժարանի, որն սկսեց կրել «Լազար Նաճարեան - Գալուստ Կյուլպենկեան» անունը: Է. Մելքոնյանի հրապարակած տվյալների համաձայն՝ 1959 թ. վարժարանում սովորում էր 585 աշակերտ, 1960-ին՝ 669, իսկ 2001-ին՝ 1.500, «...ինչի շնորհիվ այն դարձավ ՀԲԸ Միության ամենախոշոր դպրոցը սփյուռքում»²: Ընդհանրապես, տեղին է ասել, որ Հայկական դպրոցներին նպաստներ Հատկացնելու Հիմնարկության քաղաքականությունը խարսխված էր, ինչպես Պերդիգանն էր նշում, աշակերտության թվաքանակի վրա, որով Հաստատության ղեկավարությունը փորձում էր պատասխանատվություն ստանձնել առավելագույն թվով սփյուռքահայ աշակերտների որակյալ կրթության համար³:

«Լազար Նաճարեան» վարժարանի նոր մասնաշենքի կառուցման առթիվ «Արևը» զրուս էր. «Գ. յարկ մը բարձրացած է նախկին երկյարկանի շէնքին վրայ: Կեղր. Վարչութեան (ՀԲԸ Միության՝ Վ.Ղ.) թեյադրութեամբ Գ. յարկը յատկացուած է երկրորդականի աշակերտներուն և այդ բաժինը կոչուած է Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱԼՈՒՍ ԿԻԻԼ ՊԷՆԿԵԱՆ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՎԱՐՎԱՐԱՆ (չարվածքի ձևը բնագրում է), ի յիշատակ ազգային մեծ բարերար և Հ.Բ.Ը. Միութեան երբեմնի նախագահ երջանկայիշատակ Գալուստ Կյուլպենկեանի»⁴: Ըստ նույն թերթի հաղորդած տվյալների՝ վարժարանի նոր շենքում սովորում էր 150 աշակերտ, իսկ կրթական այդ Հաստատության սաների ընդհանուր թիվը նրա գործունեության առաջին տարվա 83-ի փոխարեն 1959 թ. արդեն Հասել էր 700-ի⁵:

¹ Տե՛ս Մելքոնյան է., ՀԲԸՄ սլատմություն, էջ 431:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Azeredo de Perdigo J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, p. 162.

⁴ «Արև», թիւ 12.502, 22 Յունուար, 1960:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Բարեգործականի այս կրթօջախը Հետագա տասնամյակներում ևս եղել է «Գալուստ Կյուլյենկյան» Հիմնարկության և նրա Հայկական բաժանմունքի պատասխանատուների Հոգածությունն առարկան: Հիմնարկության Հրատարակած տեղեկագրերի էջերում պարբերաբար Հանդիպում ենք այդ վարժարանի օգտին կատարված մեծածավալ նվիրատվությունների¹: 2001 թ. «Լազար Նաճարևան - Գալուստ Կյուլյենկևան» վարժարանի Համար նոր մասնաշենք կառուցելու նպատակով Հիմնարկությունը կատարել է 240 Հազ. դոլարի Հատկացում², իսկ 2003-ին կառուցել նոր՝ վեցհարկանի մասնաշենք, որի երկու հարկը Հատկացվել է Միքայել Եսայանի անվան մանկապարտեզին³: Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության Համար նախատեսված այս կառույցն ունի 12 սենյակ, ընդարձակ խաղաղաչտ և ծածկած մարդաղաչտ, որը կրում է Ջ. Եկավյանի որդու՝ Նարեկի անունը⁴:

1965 թ. «Գալուստ Կյուլյենկյան» Հաստատությունը 17 Հազ. դոլարի օգնություն էր ցուցաբերել ՀԲԸ Միություն մեկ այլ՝ Փիլիպական արատներ ունեցող և չքավոր Հայ երեխաների Համար Հայկալում առողջարան կառուցելու ծրագրին⁵:

Ուշագրավ է այն փաստը, որ Հիմնարկության գործունեությունն առաջին իսկ տարիներից նրա ղեկավարները որդեգրեցին Հայկական տարրեր կազմակերպությունների, մասնավորապես ՀԲԸ Միության Հետ սերտ Համագործակցության քաղաքականություն: Ինչպես է. Մելքոնյանն է վկայում. «...Գ. Կյուլյենկևան Հիմնարկությունը կարևորում էր Սիրիայում ՀԲԸ Միության Հաստատու-

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants, 1963-1965, p. 95.

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 21-29:

³ Տե՛ս ՀԲԸ Միության կայք էջերը՝ <http://www.agbu.org/pressoffice/article.asp?ID=128>, <http://www.agbu.org/pressoffice/article.asp?ID=201> [այցելությունները կայք էջեր կատարվել են Համապատասխանաբար 25.10.2005 և 05.08.2006 թթ.]:

⁴ Տե՛ս նույն տեղում, նաև՝ Մուրադյան Սեդա, Սիրիայի Հայկական բարեգործական ընդհանուր միություն պատմությունը. «Հայոց պատմության Հարցեր», 2008, № 9, էջ 189 (նշված Հեղինակի Հոդվածում «Միքայել Եսայան» մանկապարտեզի Նարեկ Եկավյանի անվան ծածկած մարդաղաչար ներկայացված է որպես «Նարեգ Եսայան», որը վրիպակ է):

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 2, թ. 1-4:

Թյունները: Բավական է նշել, որ նախորդ տարիների ընթացքում նրա տրամադրած միջոցներով Հնարավոր էր դարձել Միության վարժարանների վերանորոգումն ու կահավորումը, կենտրոնական ջնուցումն ու համակարգիչների ձեռքբերումը և այլն: Նման գործակերպը, որն ընդհանրապես բնութագրական էր այդ Հիմնարկությանը, և ոչ միայն Սիրիայում, առավել ընդգծված ձև ստացավ նրա Հայկական բաժնի նախագահ Միքայել Եսայանի և նույն բաժնի տնօրեն Զավեն Եկավյանի օրոք: Հայեպում Միության նոր կենտրոնի կառուցումը եղավ այդ գործելակերպի յուրահատուկ շարժաթևակետը, նկատի առնելով, որ Գ. Կիւլպենկեան Հիմնարկությունը ստանձնեց Թե' ողջ Համալիրի կառուցումը և Թե' նրա կահավորումը և անհրաժեշտ սարքավորումներով ապահովումը¹:

Բարեգործականի հետ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության իրագործած համատեղ ծրագրի վառ օրինակ է նաև 1957 թ. Բեյրութում բացված ՀԲԸ Միության «Երուանդ Տեմիրձեան» վարժարանի քառահարկ շենքի կահավորումը, որն իրականացվեց Գ. Եսայանի և Ռ. Կյուլպենկյանի անմիջական նախաձեռնությամբ²: 1960 թ. Հիմնարկությունը ձեռնամուխ եղավ Սիրիայի և Լիբանանի գրեթե բոլոր Հայկական վարժարանների Հիմնանորոգման աշխատանքներին: Հայանպաստ ծրագրերի պատասխանատուներն, ի դեմս Գ. Եսայանի և Ռ. Կյուլպենկյանի, նշում էին, որ «Լիբանանի և Սուրիոյ Հայկական վարժարաններուն մասին Լիբանանի մեր Կրթ. Յանձնաժողովին կողմէ պատրաստուած վիճակագրական տուեայներու լոյսին տակ, Հիմնարկութիւնս անհրաժեշտ գտաւ իր նիւթական օժանդակութիւնը ընծայել այս երկիրներու Հայկական վարժարաններու շէնքերուն նորոգութեան, որոնցմէ կարելոր մաս մը հինցած և ներկայիս դադրած է ի վիճակի ըլլալէ իր նպատակին ծառայելու»³: Սիրիայի վարժարաններին հատկացված գումարը կազմում էր 31.750, իսկ Լիբանանինը՝ 28.500 դոլար⁴: 1960-1962 թթ. ընթացքում նշված երկրների Հայկական դպրոցներին տրվել է 16 հազ. դոլարի հավելյալ օգնություն⁵:

¹ Մեկրոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 432:

² Տե'ս նույն տեղում, էջ 439:

³ «Յուսարեր», Թիւ 248, Գահիրե, 22 Յունուար, 1960:

⁴ Տե'ս նույն տեղում:

⁵ Տե'ս Calouste Gulbenkian Foundation. Grants 1956-1962, p. 83.

Վերն արդեն նշեցինք, որ Հայկական բաժանմունքի բյուջեի մեծ մասը ծախսվում էր Մերձավոր Արևելքի Հայկական կրթօջախների կարիքների համար: Հիմնարկությունն այդպիսի գլխավոր դերը ունի, ի դեպ, եթե սկզբնական շրջանում ազդեցություն էր տեղի հայ համայնքների ստվարածավալ լինելու հանգամանքի հետ, ապա 1970-ական թթ. կեսերից անմիջականորեն ընդունվում էր Հիշյալ տարածաշրջանից ծայր առած Հայաթափությունն ղեկավարող պայքարի անհրաժեշտությունից: Ուստի, պատահական չէր, որ 1956-1962 թթ. ընթացքում Հայկական բաժանմունքի կողմից Հայկական կրթամշակութային կազմակերպություններին հատկացված շուրջ 1.5 մլն. դոլարից 1 մլն.-ը (979.812) ծառայեց Մերձավոր Արևելքի երկրներում Հայկական դպրոցների կառուցմանն ու նորոգմանը, ինչպես նաև մշակութային այլ հաստատությունների կարիքներին¹: Կատարված հատկացումների հասցեատերերի շարքում էին Բաղդադի «Հայ երիտասարդաց ընկերակցությունը», «Սրբոց թարգմանչաց» վարժարանը, Քիրքուբի, Բասրայի, Լիբանանի և Սիրիայի գրեթե բոլոր Հայկական դպրոցներն ու մանկապարտեզները:

Առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում Պերդիդանի, Գ. Եսայանի և Ռ. Կյուլպենկյանի՝ 1950-ականների վերջերին Լիբանանում իրականացրած Հայկական մանկապարտեզների շինարարությունն ու նորոգման ծրագիրը: Նախ, որպես նպաստառու ընտրված այդ հաստատությունների թիվն, անշուշտ, աննախընթաց էր տարածաշրջանի Հայության համար՝ 55², որոնց 1960-1962 թթ. ընթացքում հիմնանորոգման նպատակներով հատկացվեցին շոշափելի միջոցներ՝ 109.598 դոլար³: Ծրագրի յուրօրինակությունն այն էր, որ նորոգվում ու կառուցվում էին ոչ միայն նոր շենքեր, դրանք ապահովվում անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և տեխնիկայով, այլև մանկապարտեզներում աշխատող դաստիարակներին հիմնարկությունը յայն հնարավորություններ էր ընձևում վերապատրաստելու ինչպես Բեյրութում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում ու Ֆրանսիայում: Մերձավոր Արևելքի Հայկական մանկապարտեզների հովանավորությունը շարունակվեց նաև հետագայում:

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 79-85:

² Տե՛ս «Ազգակ», թիւ. 284 (8797), 3 Փետրուար, 1961:

³ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 82-84.

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Լիբանանում մեծագույնար հատկացումներ է կատարել «Երուանդ Հիւսիսեան» Հայագիտական Ուսմանց կենտրոնին, որը Հիմնվել էր 1964 թ. ՀԲԸ Միության փոխնախագահ Երվանդ Հյուսիսյանի նյութական միջոցներով¹: է. Մելքոնյանը նշում է, որ «Իր տեսակի մեջ եզակի այս Հաստատությունը նախատեսված էր տեղի Համալսարանների Հայ ուսանողների, Միության և այլ դպրոցների ուսուցիչների, ինչպես նաև ընդհանրապես երիտասարդ մտավորականների համար, որտեղ կարդացվում էին դասախոսութայուններ Հայ ժողովրդի պատմութայան և մշակույթին վերաբերող տարրեր թեմաներով»²: Խնդրո առարկա երկրում աչքաթող չէին արվել նաև մյուս Հայկական կրթօջախները: Ավելին, տարեցտարի ընդարձակվել են թե՛ դրանց ցանկերը, թե՛ տրամադրվող նյութական միջոցների ծավալները: «Արևից», օրինակ, տեղեկանում ենք, որ շենքերի կառուցման, վերանորոգման, կահավորման, դասընթացներ կազմակերպելու և այլ նպատակներով 1957 թ. հատկացում էր արվել Բեյրութի «Յովակիմեան-Մանուկեան», իսկ 1962-ին՝ «Հայկազեան» վարժարաններին³: Հիմնարկութայան՝ 1965 թ. տեղեկագրում նշված է, որ «Նշան Փալանճեան» ճեմարանը, շնորհիվ կատարված դրամաշնորհի, իր շենքերում ավելացրել է նոր հարկարաժիներ (ճեմարանին արվել էր 20 հազ. դոլարի հատկացում)⁴, իսկ Բեյրութի Բուրջ Համուդ թաղամասում գտնվող Հայ Կաթողիկէ Անարատ Յղութեան Բոյրերու «Սրբուհի Ազնէս» վարժարանը կարողացել է կառուցել իր մանկապարտեզի նոր շենքը⁵: 1966-ին Հիմնարկութայան նպաստներից օգտվել է Բուրջ Համուդի Հայ Կաթողիկէ «Սուրբ Մեսրոպ» վարժարանը, որի արդյունքում Հիմնովին նորոգվել և վերակառուցվել են վարժարանի շենքերը (20

¹ Տե՛ս Մելքոնյան է., ՀԲԸՄ պատմութայուն, էջ 440, «Այդ», թիւ 3627, 29 նոյեմբեր, 1964:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Արև», թիւ 11.831, 12 նոյեմբեր, 1957, թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962:

⁴ 1967 թ. այս կրթօջախի համար Հիմնարկութայան կողմից կատարվել են նոր դրամաշնորհներ, որոնք ծառայել են Հաստատութայան շենքերի ընդարձակմանը (տե՛ս «Համադղայինի Նշան Փալանճեան ճեմարանը: Անցյալն ու ներկան: Հունձքր: 1970-71 տարեշրջան», Պեյրութ, 1971, էջ 7):

⁵ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 875, ց. 5, գ. 2, թ. 1-4:

հաղ. դոլար)¹: «Պայքարը» հաղորդում է, որ 1968-ին Հայ Աւետարանական միութեան Կեդրոնական Բարձրագոյն վարժարանին մանկապարտեզի հարկարածին կառուցելու նպատակով տրվել է 10 հաղ. դոլար, Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան նոր կենտրոնի համար կառուցվել ու կահավորվել է մարդասրահ (50 հաղ. դոլար), դպրոցական գույքով ապահովվել է Հայ Կաթոլիկ եկեղեցու պատրիարքարանի «Կարտինալ Աղաճանեան Սանուց Տան» շէնքը (10 հաղ. դոլար), 1969-ին կառուցվել է Այնճարի (Լիբանան) «Յառաջ» ազգային վարժարանի երկրորդական բաժնի նոր շէնքը: Նույն նպատակով միջոցներ են տրվել Էշրեֆիևի և Թրատի (Բեյրութ) Հայ Աւետարանական վարժարաններին (Համապատասխանաբար 6 և 6.500 դոլար) և այլն²:

Լիբանանում քաղաքացիական պատերազմի նախօրեին և դրա ընթացքում Հիմնարկութեան Հայանպաստ գործունեութիւնը չզարեց. ընդհակառակը՝ ընդլայնվեց և ընդգրկեց Հայկական նորանոր կազմակերպութիւններ: Ավելացվեցին նաև այդ կազմակերպութիւններին տրվող նպաստների ծավալները: 1974 թ. «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութիւնը մասնակցեց ՀԲԸ Միութեան՝ Անթիլիասի «Պօղոս Կարմիրեան» վարժարանի (20 հաղ. դոլար) և «Թոգնոց Բոյն» Հայկական որրանոցի (46.500 դոլար) նոր շէնքերի շինարարութեանը, զգալիորեն նպաստեց Հազմիևի (Լիւանան) «Մխիթարեան» վարժարանի դասասնեյակների ավելացմանը և այլն³: Քաղաքացիական կռիւների՝ Լիբանանի համար բախտորոշ օրերին Ռ. Կյուլպենկյանն ու Վ. Մավյանն իրենց ողջ ուշադրութիւնը սևեռեցին այստեղ. դադարեցվեցին կամ հազվադեպ դարձան նրանց այցերը Թուրքիայի, Իրանի, Բրազիլիայի և այլ երկրների Հայ համայնքներ պատերազմի բոցերում Հայտնված Լիբանանում հնարավորինս արդյունավետ գործելու նպատակով: Հաստատութեան ղեկավարների այդ քայլը խնայեց թե՛ ժամանակ, թե՛ զգալի միջոցներ, որոնք ևս ծախսովեցին լիբանանահայութեան համար: ՀԲԸ Միութեան և քարեզործական տարրեր կազմակերպութիւնների հետ համատեղ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութիւնը Լիբանանում քաղաքացիական պատերազմի տարիներին պատկա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 5, թ. 1-3:

² Տե՛ս «Պայքար», թիւ 23 (19300), Յունուար 28, 1970:

³ Տե՛ս «Արև», թիւ 16.757, 28 Փետրուար, 1974:

ուրի հատկացումներ է կատարել Ազգային առաջնորդարանին, Հայ Կաթոլիկ եկեղեցու պատրիարքարանին, Ավետարանական միությանը, «Թէքէնան» վարժարանին, «Նշան Փալանճեան» ճեմարանին, Հայ Երիտասարդաց Ընկերակցութեանը, կրթական և մշակութային բազմաթիւ միությունները:

Պատերազմի ավարտից հետո հիմնարկութունը մեծ թափով լծվեց Հայկական վարժարանների, մշակութային և մարզական կենտրոնների վերանորոգման ու կառուցման աշխատանքներին, որը նաև Ջ. Եկավյանի վարած ճիշտ քաղաքականության և անդույ աշխատանքի արդյունք էր: Ծննդերի վերաշինման նպատակով միայն 1996 թ. Մերձավոր Արևելքի 80 Հայկական դպրոցի համար «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութունը կատարել է 800 հազ. դոլարի հատկացում¹: Այդ հաստատություններից շատերը երկարատև պատերազմների ու ավերածությունների պատճառով հայտնվել էին նյութական ծանր կացության մեջ և շինությունների անհապաղ նորոգման կարիք ունեին: Հարկ է նշել, որ հիմնանորոգվում էին ոչ միայն Մերձավոր Արևելքի բազմաթիւ Հայկական դպրոցներ, այլև կառուցվում էին վարժարանների նոր շէնքեր: Կրթօջախներն ստանում էին որակյալ, թանկարժեք գույք, տպագրական, լուսապատճենահանման և այլ սարքավորումներ: Ընդ որում, Սիրիայի Հայկական դպրոցները հատկացված տեխնիկայի օգնությամբ հնարավորություն ստացան տեղերում իրականացնելու դասագրքերի տպագրություն²:

Տեղին է ընդգծել, որ վարժարաններ կառուցելուց կամ նորոգելուց դատ, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայազգի ղեկավարներն ու աշխատակիցներն անընդհատ հետևել են դրանց գործունեությանը, հսկել, որպեսզի այնտեղ սովորող մանուկներն ու պատանիներն իրենց ուսումնառության ընթացքում չհանդիպեն որևէ խոչընդոտի՝ լինել դա ուսման վարձերի, գրքերի, գրենական պիտույքների, թե համապատասխան մասնագետների պակասի կամ այլ խնդիր: 1998 թ., օրինակ, Ջ. Եկավյանի և Ա. Չամքերթեանի նախաձեռնությամբ իրականացվեցին Բելյուրթի, Հայկալի և Կ. Պոլսի Հայկական վարժարանների համագործակցության

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 4-6:
² Տե՛ս նույն տեղում, թ. 1-2:

ծրագրեր: Սերտ գործակցություն Հաստատվեց Բուրջ Համուդի «Սուրբ Մեսրոպ» և Դամասկոսի «Կիլյապի Կյուլպէնկեան» վարժարանների միջև, որի արդյունքում տեղի ունեցան ոչ միայն փոխանակումներ, ուսուցիչների և աշակերտների փոխայցելություններ, այլև Հայ երեխաները Հնարավորություն ստացան այլ դպրոցներում ուսանելու այնպիսի առարկաներ, որոնք չէին դասավանդվում սեփական կրթօջախներում¹:

1990-ականներից Հետո Սիրիայի և Լիբանանի Հայկական դպրոցներին նորոգման, գույք և սարքավորումներ գնելու նպատակով Հատկացված նպաստներն ղգալիորեն աճել են: Օրինակի համար նշենք, որ ութ տարվա ընթացքում (1995-2003 թթ.) դրանք զերադանցել են շուրջ վեց ու կես մլն. դոլարը²: Հիշյալ երկրներում Հիմնարկություն միջոցներով վերանորոգված ու բարեկարգված կրթօջախների և մշակութային կազմակերպությունների թիվն անցնում էր ութ տասնյակից³: Բավարարվենք միայն առավել նշանավորների Հիշատակամար, որոնց արվել են մեծագումար նվիրատվություններ: Դրանք էին. Սիրիայում՝ Հալեպի «Արարատ» մարդական-մշակութային միությունը, «Կարեն Եփփե» ճամբարը, «Լ. Նաճարեան - Գ. Կիլյապէնկեան», «Կրթասիրաց», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Հայ կաթողիկ, Դամասկոսի «Կիլյապի Կիլյապէնկեան», Լաթաքիայի «Նահատակաց», Քեսարի «Ռուսումնասիրաց», Արամո գյուղի «Աղգային», Դերիկի «Աղատութիւն», Ղամիշլիի «Եփրատ» վարժարանները, մտավոր արատներ ունեցող երեխաների կրթությունը և դաստիարակությունը զբաղվող «Ինճիճիկեան» մշակութային կենտրոնը (Քեսար), իսկ Լիբանանում՝ Բեյրութի «Համազգային» մշակութային - կրթական միությունը, «Մեսրոպեան - Գևորգ Եսայեան» (Բուրջ Համուդ թաղամաս), «Սահակեան - Մկրտիչեան», Այնճարի «Գալուստ Կիլյապէնկեան», «Հայ որրերի» վարժարանները, Զալկայի Սուրբ Խաչ Հայ կաթողիկ դպրոցը և այլն⁴:

2002 թ. Հալեպում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկություն

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 3, թ. 10:

² Տե՛ս նույն տեղում, դ. 2, թ. 1-43, դ. 3, թ. 5-16:

³ Տե՛ս նույն տեղում, դ. 3, թ. 11:

⁴ Տե՛ս նույն տեղում:

և ՀԲԸ Միությունից համատեղ ջանքերով հիմնադրվեց «Բաց» համալսարան, որը հնարավորություն ուներ ընդունելու 500-ից ավելի ուսանողներին: Հիշյալ կրթահամալիրի ստեղծման մեջ իր լուծան ուներ նաև տեղի հայ համայնքը¹: Համալսարանի վարչական խորհրդի նախագահ ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը: Հայ երիտասարդների բարձրագույն կրթության համար նախատեսված այս կրթական հաստատության հիմնադրումը մեծ իրադարձություն էր ոչ միայն Սիրիայի հայ համայնքի, այլև ողջ Սփյուռքի համար: Ձեռնարկումն, ի դեպ, իր որակական բնույթով աննախադեպ էր հայկազհայության կյանքում: Ցավալիորեն, արժեքավոր այս ծրագրի հետագա շարունակությունն իրականություն չդարձավ և դադարեցվեց 2006 թ.:

Իրան

Ոչ պակաս կարևոր էին «Գալուստ Կյուպենկյան» հիմնարկության՝ Իրանում իրականացրած դպրոցաշինությունների և կրթական ծրագրերը: Հիմնարկության ղեկավարներն Իրանում հաշվի էին առնում ոչ միայն տեղի հայկական կաղամակերպությունների և համայնքի առաջնորդների կարծիքները, այլև կոնկրետ որևէ ծրագրի շրջանակում համագործակցում էին ՀԲԸ Միության հետ: Անշուշտ, սխալ ուղու վրա էր «Արևը», երբ նշում էր, թե «...յա սիտի բլլար, որ Գ. Կիւպէնկեան Հիմնարկութիւնը օգտուէր Հ.Բ.Ը. Միութեան կէս դարու փորձառութենէն և, ի հարկին, դիմէր անոր վարիչներու կարծիքին, որեւէ յատկացում չուէարկելէ առաջ»²: Հիմնարկության և Բարեգործականի համագործակցությունն արդեն իրողություն էր. «Կեղք. Վարչությունը (ՀԲԸ Միության՝ Վ. Ղ.)-կարդում ենք «Այգում»,- խոր երախտագիտությունամբ կ'արձանագրէ Կիւպէնկեան Հիմնարկութեան ինստակայութեան անդամ Տիար Գ. Էսայեանի և անոր Հայկական Բաժնի վարիչ Տիար Ռ. Կիւպէնկեանի՝ Միութեանս կրթական ձեռնարկներուն հանդէպ ցոյց

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 11:

² «Արև», թիւ 12.419, 15 Հոկտեմբեր, 1959:

տուած ջերմ հետաքրքրությունն ու հողածուլթիւնը»¹:

1964 թ. «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան պատասխանատուները տեղեկացրին ՀԲԸ Միութեանը Գ. Կյուլպենկյանի կնոջ՝ Նվարդ Կյուլպենկյանի անվամբ Թեհրանում դպրոց կառուցելու իրենց որոշման մասին՝ Հայտնելով, որ այդ նախատակի համար կատարվելու է 100 հազ. դոլարի հատկացում²: Ըստ է. Մելքոնյանի՝ «Հիմնարկութեանը տարեկան 15.000 դոլար պետք է հատկացնէր դպրոցի այլևայլ կարիքների համար, միայն թէ հողատարածքը պետք է գնվեր Միութեան կողմից (ընդգծումը՝ Վ. Ղ.): 1967 թ. Նուարդ Կիւլպէնկեան վարժարանի նորակառույց չորսհարկանի շէնքը ընդունեց իր առաջին, թվով 226 աշակերտները՝ մեկ նախապատրաստական և նախակրթարանի չորս դասարաններում»³:

Աթենքի «Ազատ օրն», անտեղյակ այդ համատեղ ծրագրի մանրամասներին, Հիշյալ դպրոցի Հիմնադրումն ամբողջութեամբ վերագրում էր ՀԲԸ Միութեանն՝ արձանագրելով, որ այն բացվեց Թեհրանում Բարեգործականի՝ Ամերիկայի Կենտրոնական վարչութեան ջանքերով ու հսկողութեամբ, իսկ Փարիզի Ռենսիի արվարձանում գործող «Դպրոցասէր Տիկնանց» վարժարանը, հակառակ ստացած խոստումներին, երկար ժամանակ Հույսերով օրորվելուց հետո զրկվեց տիկին Կյուլպենկյանի անունը հավերժացնելու պատվից⁴: Թերթը վրիպում էր նաև, երբ շեշտում էր, թէ ի սկզբանէ «Նուարդ Կիւլպէնկեան» կրթօջախի Հիմնադրման համար նախատեսված գումարը հատկացվելու էր «Դպրոցասէր Տիկնանց» վարժարանին, քանզի չգիտեր, որ նախօրոք որոշված էր այդ կրթօջախը տեղակայել Մերձավոր Արևելքի երկրներից որևէ մեկում⁵: Այդ մասին Հիմնարկութեանը Հայտարարել էր զեռուս 1957 թ.՝ ման-

¹ «Այգ», թիւ 3337, 15 Ապրիլ, 1964:

² Տե՛ս Մելքոնյան է., ՀԲԸՄ պատմութեան, էջ 460, «Այգ», թիւ 3337, 15 Ապրիլ, 1964: Է. Մելքոնյանն ու «Այգ» օրաթերթը խնդրո՞ւն : : : : արկա հատկացման չափը ներկայացրել են 150.000 ԱՄՆ դոլար, որը վրիպման արդյունք է (տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, Twenty years of activity, 1956-1976, p. 12):

³ Մելքոնյան է., ՀԲԸՄ պատմութեան, էջ 460:

⁴ Տե՛ս «Ազատ օր», թիւ 6753, 11 Մայիս, 1967:

⁵ Փարիզում Նվարդ Կյուլպենկյանի անվամբ յիջելի և մշակութային կենտրոնի կառուցման ծրագիրը նախաձեռնվեց միայն 40 տարի անց՝ 2007 թվականին (տե՛ս էջ 126-127):

րամասնելով, որ. «Տիկին Նուարդ Կիւլպէնկեանի յիշատակին՝ հիմնարկութիւնը որոշած է կառուցանել և կահաւորել Հաստատութիւն մը, որ պիտի արժէ 100.000 տոլար: Այս Հաստատութիւնը, որ յատուկ է Հայ մանուկներու, պիտի շինուի Միջին Արեւելքի մէջ, և բացի հիմնադրամէն՝ տարեկան պիտի ստանայ 15.000 տոլարի պիւտճէ»¹:

Նշված ծրագրի նկարագրութիւնն ամբողջական չի լինի, եթէ չասվի, որ այն ուներ նախապատմութիւն: Ռ. Հյուինսն իր «Պարոն Հինգ տոկոսը» գրքի «Օժիտը» (Dowry) գլխում պարզարանում է, որ Գ. Կյուլպենկեանն, այն բանից հետո, երբ գործարար աշխարհում կորցրեց Հոր կողմից իրեն նվիրված 30.000 ֆունտ ստեռլինգն, օսմանյան կառավարութիւնից նավթի արդյունահանման կոնցեսիաներ ձեռք բերելու նպատակով օգտագործեց իր կնոջ՝ Նվարդ Կյուլպենկեանի օժիտը, որը կազմում էր 9.500 ֆունտ ստեռլինգ²:

Նվարդ Կյուլպենկեանը ցանկանում էր, որպեսզի այդ գումարը, որը տարիների ընթացքում բերելու էր շոշափելի եկամուտ, ծառայեր Հայ երեխաների կրթութիւնն ու դաստիարակութիւնը՝ նշելով, որ «...այն իր մահից հետո պետք է նպատակաուղղվի Հայկական որրանոցի հիմնադրմանն ու այն մշտական եկամուտով ապահովմանը»³: Նուրար Կյուլպենկեանն այդ առիթով Հայտնում էր Հետեյալը. «...նա (Նվարդ Կյուլպենկեանը՝ Վ. Ղ.) իր սիրտը նվիրել էր մանկահասակ Հայ երեխաների Համար երկսեռ դպրոցի կամ որրանոցի կառուցմանը (Հստակ չգիտեր, թե որը հիմնել՝ Ն. Կ.), որտեղ նրանք կարող էին սովորել Հայոց լեզուն, ավանդույթները, պատմութիւնն ու ժողովրդական բանահյուսութիւնը»⁴: Ըստ Նուրարի՝ մոր վերջին ցանկութիւնն, իր իսկ կամքով, Հնարավոր էր իրականացնել միայն նրա ոսկեղենի վաճառքից զոյացած կանխիկ գումարով, որը կազմել է շուրջ 18.000 ֆունտ ստեռլինգ⁵:

¹ «Արև», թիւ 11.672, 7 Մայիս, 1957, «Աղգակ», թիւ 72 (7572), 23 Մայիս, 1957, «Ալիք», թիւ 249 (5890) 14 Նոյեմբեր, 1957:

² Sևս Hewins R., նշվ. աշխ., էջ 38-41:

³ Նույն տեղում:

⁴ Gulbenkian N., Portrait in oil, pp. 238-239.

⁵ Sևս նույն տեղում:

Չնայած Նուրար Կյուլպենկյանը մոր վերջին ցանկության իրագործումը կապում էր իր և քրոջ անունների հետ, սակայն դժվար թե այդ ծրագիրը հաջողություն ունենար հիմնարկության Տնօրենների ժողովի անդամների շահագրգռության բացակայության դեպքում: Այն թվերը (100 և 15 հազ. դոլար), որոնք խնդրո առարկա հաստատության հիմնադրման համար հիշատակում է Նուրար Կյուլպենկյանը, միանգամայն բավարար են՝ եզրակացնելու, որ եթե չլիներ Գ. Կյուլպենկյանի կարգադրությունն, ապա հայ նավթարդյունաբերողի մահից հետո վերը նշված հատկացման որոշումը հաղիվ թե այդքան շուտ կայացվեր (1957 թ.): Խնդրի կապակցությամբ Նուրար Կյուլպենկյանը գրում էր. «Հայրս ցանկացավ ստանձնել որրանոցի կառուցման գործը, սակայն ես պնդեցի, որ դա քրոջս և իմ պարտականությունն է...որրանոցը պետք է կառուցվի մորս ոսկեղենի վաճառքից գոյացած 18.000 ֆունտ ստեռլինգով, հավելած այն 100.000 և հաստատության պահպանման համար տարեկան հատկացվելիք 15.000 դոլարը, որն այդ նպատակով (որրանոցի կառուցման՝ Վ.Ղ.) կարողացա կորզել Կյուլպենկյան հիմնարկությունից»¹: Այս հարցում Նուրարի հետ համամիտ է նաև Ռ. Հյուինսը՝ նշելով, որ Գ. Կյուլպենկյանի կտակում ոչ մի հիշատակություն չկա որրանոցի կառուցման վերաբերյալ, և մինչև Նուրարի ճնշումը հիմնարկությունն այդ նպատակով գումարներ չէր հատկացրել²: Նուրարի «ճնշման» առումով հեղինակն, իհարկե, սխալվում էր: Հիմնարկության՝ վերոնշյալ նպատտի հարցում վճռական դերը պատկանում էր Գ. Եսայանին: Այդ մասին տեղեկանում ենք Նուրար Կյուլպենկյանի՝ հեզնական ոճով գրված հետևյալ տողերից. «...վախենում եմ, որ այս հաստատության («Նուարդ Կիլպէնկեան») վարժարանի՝ Վ. Ղ.) հիմնադրման կապակցությամբ անսխորժություն եմ ունեցել քրոջս և նրա ամուսնու հետ, սակայն հույս ունեմ, թե այդ վերջին խոջընդոտները շուտով կհարթվեն: Թվում է՝ դատապարտված եմ միճելու կենդանի մնացածների հետ՝ պաշտպանելու մեռածների շահերը, որն իմ կողմից, հավանաբար, բավականին դոնքրիչտական և ոչ գործնական արարք է: Իսկապես,

¹ Gulbenkian N., *Portrait in oil*, pp. 238-239.

² Sև's Hewins R., նշվ. աշխ., էջ 40:

որքան տարրեր է իմ կեցվածքը քրոջս և փեսայիս կեցվածքներից, ուլքեր ունեն ավելի գործնական տեսակետներ և որպես հետևանք՝ գումարային առումով համեմատաբար ավելին են կատարել»¹: Զուգահեռաբար հարկ է նշել, որ իրականությունը դեմ մեղանչած կլինենք, եթե ամբողջությունը հերքենք Նուրար Կյուլպենկյանի մասնակցությունը «Նուարդ Կիլպենկեան» կրթօջախի հիմնադրման աշխատանքներին: Ի թիվս այոց, պետք է ուղղակի արժանին հատուցել նաև այդ մարդուն՝ նշելով, որ նա իսկապես շահագրգռված էր իր մոր վերջին ցանկություն իրականացման խնդրով և վարժարանի ճակատագրով:

«Նուարդ Կիլպենկեան» վարժարանն իր գործունեությունը ընթացքում հանդիպել է բազմաթիվ արգելքների ու խոչընդոտների և հաղթահարել դրանք, որի արդյունքում էլ կարողացել է լիովին ծառայել և այսօր էլ շարունակում է ծառայել իր առջև դրված գլխավոր նպատակին՝ հայ մանուկներին դաստիարակել ու կրթել իրենց մայրենի լեզվով: 1998 թ. վարժարանն ավարտել է 74 սան²: Հիշյալ վարժարանից հետո Իրանում կառուցվում ու վերանորոգվում են բազմաթիվ կրթական ու մշակութային շինություններ: Շոշափելով, ընդհանրապես, 1960-ականներին Սփյուռքում ընթացող դպրոցաշինությունների հարցը՝ «Աղղակը» հաղորդում էր, որ Լիրանանի հայությունն առաջին կարգի վրա էր 70-ի հասնող իր դպրոցների մեծ քանակով, որից հետ չէր մնում Իրանի հայ համայնքը. «...Ամէն օր կը կարդանք կամ ներկայ կ'ըլլանք նոր վարժարանի մը բացման արարողությունն (Իրանում)», - գրում էր թերթը³: Կարիք չկա ընդգծելու, որ գործընթացում ներգրավված էին նաև «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ղեկավարներն ու աշխատակիցները:

Իրան այցելությունների ընթացքում Պերդիպանն ու Ռ. Կյուլպենկյանը մշտապես եղել են հայկական դպրոցներում, ծանոթացել

¹ Gulbenkian N., Portrait in oil, p. 239.

² Տե՛ս Մելքոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 460:

³ «Աղղակ», թիվ 244 (11509), 19 Դեկտեմբեր, 1969: Իրանի հայ համայնքի՝ 1960 - ական թվականներին գործող կրթօջախների մասին տե՛ս Մակարեան Ասատուր Յ., «Սփյուռքի հայ դպրոցները և անոնց կրթական գործը/ Իրանահայ գաղութը և իր վարժարանները», «Զարթոնք», 1962, Սևպտեմբեր, էջ 357-358:

նրանց կարիքներին ու խնդիրներին¹: Հիմնարկութեան՝ տարրեր տարիների ընթացքում լույս ընծայած պաշտոնական տեղեկագրերում, ինչպես նաև Սփյուռքի մամուլի էջերում որպես նպաստառու Հաստատությունների Հանդիպում ենք Իրանի Հայկական կրթամշակութային այնպիսի օջախների անունների, ինչպիսիք են «Զուրար-Նաիրին» (Թեհրան), «Մեծն Շահ Արբասը» (Նոր Զուղա), «Հայկադեան-Թամարեան-Սահակեան» (Թավրիզ), «Արաքս» ազգային վարժարանները, «Սիփան» մշակութային միությունը (Թեհրան) և այլն²:

Հորդանան

Գ. Եսայանն ու Ռ. Կյուլպենկյանը, Հակոտակ Հորդանանի Հայ Համայնքի փոքրաթիվությունը, Հարկ Համարեցին միջոցներ տրամադրել նաև նրա կրթական, մշակութային և մարզական կազմակերպություններին: Փարիզի «Յառաջը», ընդհանրվ Հորդանանի Հայություն թիվը (8.000), նշում էր, որ տեղի Հայ Համայնքն «Ունի իր ազգային-մշակութային ներքին համեստ կեանքը: Տնտեսապէս միջակ է վար է ընդհանրապէս: Ճանչցուած է իրրև Հաւատարիմ Համայնք»³: Է. Մեքրոնյանի Հազորդած տվյալների Համաձայն՝ մինչև 1940-ական թթ. Հորդանանում բնակվում էր շուրջ 6 Հազ. Հայ, սակայն 1948 թ. սկսված արարա-խարայկական պատերազմն ստիպեց շատերին Հեռանալ այդ երկրից, որտեղ ներկայումս «...սպրում է մոտ 3 Հազ. Հայ»⁴: Նույն թվերն է Հազորդում նաև Կ. Դալլաքյանը՝ նշելով, որ. «Փոքրաթիվ այս Համայնքը (շուրջ 3.0

¹ Տե՛ս «Ազատ օր», թիւ 8079, 16 Հոկտեմբեր, 1971:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 97, «Պայքար», թիւ 23 (19300), Յունուար 28, 1970, ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 3, թ. 1-3, գ. 4, թ. 1-3, գ. 6., թ. 1-3, գ. 7, թ. 1-3:

³ «Յառաջ», 31րդ տարի, թիւ 7762, նոր շրջան, 12րդ տարի, թիւ 3573, 20 Դեկտեմբեր, 1956: Հորդանանի՝ 1960-ական թվականներին գործող Հայկական կրթական Հաստատությունների մասին տե՛ս Մակարեան Ա. Յ., «Սփյուռքի Հայ զազույթները և անոնց կրթական գործը/ Յորդանանի Հայ զազույթը և իր վարժարանները», «Զարթոնք», 1962, Սեպտեմբեր, էջ 356:

⁴ Մեքրոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 461:

Հաղար մարդ՝ Կ. Դ.) ձևավորվել սկսել է Հիմնականում Հիսնական թվականներին, Մերձավոր Արևելքի դանազան երկրներից եկած Հայության Հաշվին»¹:

Հիմնարկություն գեկավարությունը խնդրո առարկա երկրում որոշ ուսումնասիրություններ կատարելուց Հետո 1960-1962 թթ. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին ՀԲԸ Միություն՝ Ամմանի «Խիզաչան-Կիւլպէնկեան» Հայկական մանկապարտեղի ու տարրական դպրոցի վերակառուցման նպատակով Հատկացրեց 14.950 դոլար²: Հարկ է նշել, որ այս Հաստատություն Հաճախող երևյաանների թիւը միշտ փոքր է եղել: 2005 թ. դրությամբ այն կազմում էր շուրջ 130³:

1964 թ. փետրվարի 23-28-ը Երուսաղեմ կատարած այցի ժամանակ Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը Հայոց պատրիարք Եղիշե Տերտերյանի ընկերակցությունում նախ եղել են «Խիզաչան-Կիւլպէնկեան» կրթօջախում, ապա ընդունվել Հորդանանի Հուսեյն թագավորի կողմից: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հորդանանի Հայկական կրթական, մշակութային Հաստատություններին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության ցուցարբրած օգնության և այն շարունակական դարձնելու մասին Հարցեր: «Նախագահ Աղերեսո Փերտիկաօ առիթէն օգտուելով,- գրում է Ա. Զամբերթենը,- իր Հիացումը յայտնեց Թագաւորին, անոր գեկավարություն տակ Յորդանանի արձանագրած յառաջադիմության Համար, որուն Համար ալ ան Նորին ՎեՀափառությունն յանձնեց 25,000 Յորդանանեան տինարի գումար մը, յատկացուելու կրթական Հաստատության մը Համար»⁴: Նշված գումարով Ամմանի պետական Համալսարանում կառուցվել է «Կիւլպէնկեան» սրահ⁵: Հորդանանին, ինչպես նաև այդ երկրի Հայկական կազմակերպու-

¹ Դալլաքյան Կ., Հայ սիյուրի պատմություն, էջ 206:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation. Grants 1956-1962, p. 82, «Արեւ», թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962: «Կիւլպէնկեան-Խիզաչան» վարժարանը Հիմնադրվել է Ամմանում՝ 1961 թ. Հուլիսի 2-ին, բարերար Վահրամ Յուզրայանի 20 Հազ. դոլարի նվիրատությունամբ (ավելի մանրամասն տե՛ս «Զարթոնք», 1962, Սեպտեմբեր, էջ 356):

³ Տե՛ս Մելքոնյան Է., ՀԲԸՄ պատմություն, էջ 461:

⁴ Զամբերթեն Ա., Երուսաղեմ և Կիւլպէնկեաններ, էջ 109-110:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Թյուններին մատուցած ծառայությունների համար 1965 թ. Ժ. Աղերեղոս զը Պերդիգանը Հուսեյն Թագավորի կողմից պարգևատրվել է պետական ամենարարձր կարգի՝ «Հաշեմական աստղ» շքանշանով¹: Հատկանշական է, որ այդ առիթով Պերդիգանը նշել է, թե իր ստացած շքանշանի միջոցով նախ և առաջ հարգանքի, երախտագիտության խոսք է ուղղվել Գ. Կյուլպենկյան բարերարին ու նրա անունը կրող Հիմնարկությանը: Հաստատության Տնօրենների ժողովի նախագահն արդարացիորեն ընդգծում էր, որ «... ես լուրջ վարիչն եմ իր (Գ. Կյուլպենկյանի՝ Վ. Ղ.) հաստատած այս Հիմնարկին, ան՝ որ այնքան բարիք տարածած է իր շուրջը, ո՛չ միայն Փորթուկալի մէջ..., այլ նաև ուրիշ տեղեր, սկսելով Միջին Արևելքէն, մանաւանդ աշխարհով մէկ տարածուած Հայ Համայնքներու մէջ»²: Պերդիգանին և Ռ. Կյուլպենկյանին «Սուրբ Հարություն» շքանշանով 1964 թ. պարգևատրել էր նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքը, որի միջոցով էլ հաստատության ղեկավարները շարունակեցին կապ պահպանել Հորդանանի իշխանությունների և հայկական կազմակերպությունների հետ՝ իրենց նպաստը բերելով տեղի կրթամշակութային հաստատությունների նյութական աջակցության ծրագրերին: Հիշատակության արժանի է, օրինակ, 1974 թ. Ամմանի Հայ «Ազգային մարզական միություն» նոր կենտրոնի կառուցմանը «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության ցուցարևրած օգնությունը, որի համար կատարվել էր 10 հազ. դոլարի հատկացում³:

Թուրքիա

Հիմնարկության՝ Կ. Պոլսի Հայ Համայնքի կարիքները հոգալուն միտված քաղաքականությունը եղել և մնում է նրա մշտական ավանդույթը: Դրա հիմնական պատճառն այն է, որ Կ. Պոլսը Գ. Կյուլպենկյանի ծննդավայրն է և հենց այդտեղ էլ՝ Սուրբ Փրկիչ Հիվանդանոցի բակում է գտնվում նրա ընտանիքի դամբարանը: Կ.

¹ Տե՛ս Զամբերթեն Ա., Երուսաղեմ և Կյուլպենկյաններ, էջ 114:

² Նույն տեղում:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 564, թ. 1-2:

Պոլսում Հայկական բաժանմունքի առաջին նպաստառու կրթական հաստատությունների ցանկում էին «Արամեան-Ռունճեան», «Պողոսեան-Վառվառեան», «Սահակեան/Նունեան-Վարդուհեան», «Մեսրոպեան» դպրոցներն ու Սուրբ Խաչ եկեղեցու դպրեվանքը¹, որոնց օգտին մինչև 1950-ականների վերջերը կատարվել էր «Ռոթսուն քիլօ ձոյ ոսկիի յատկացում մը, որը կը հաւասարի մօտավորապէս 40.000 անգլ. ոսկիի, ընդհանուր բարելւրջումի, շէնքերու յաւելումներու և նորոգութիւններու...»²:

Գ. Եսայանն ու Ռ. Կյուլպենկյանը Թուրքիայի Հայկական վարժարանների կարիքների քննություն և հետագայում տեղում տարաբնույթ ծրագրեր իրականացնելու նպատակով սերտ կապ էին պահպանում Կ. Պոլսի Հայոց պատրիարքի հետ: «Ազդակը» պարզարանում էր, որ «Պատրիարքը պիտի ապահովէ Կիւլպէնկեան Հիմնարկութեան օժանդակութիւնը Թուրքիոյ Հայ Համայնքին... Պատրիարքը պիտի քննէ այդ Հիմնարկութեան բերկիք նպաստը Թուրքիոյ Հայ Համայնքին»³: Այնուհետև նույն թերթը տեղեկացնում էր, որ «...Կիւլպէնկեանի հարստութենէն Թուրքիոյ Հայերուն ինկած ժառանգութիւնը կը բարձրանայ 170 քիլօ ոսկիի»⁴:

Ստամբուլի Հայկական կրթօջախներին հատկացվող միջոցները տարեցտարի դալարորեն աճեցին: Ընդլայնվեց նաև նպաստառու հաստատությունների ցանկը: Հիմնարկություն զործունեություն ողջ ընթացքում շենքերի կառուցման, վերանորոգման, ինչպես նաև դրանք զույքով և համապատասխան տեխնիկայով ապահովելու նպատակով լայնամասշտաբ հատկացումներ արվեցին Սուրբ Խաչ դպրեվանքին, «Պողոսեան-Վառվառեան», «Մեսրոբեան», «Սահակեան / Նունեան-Վարդուհեան», «Եսայեան», «Արամեան», Կեղրոնական, «Լուսավորչեան» վարժարաններին, «Գարակէօղեան» զիչերօթիկ, «Մահրամէթեան» երկրորդական, «Ներսե-

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 80-85.

² «Յատաջ», 34րդ տարի, թիւ 8330, նոր շրջան, 14րդ տարի, թիւ 4131, 28 Հոկտեմբեր, 1958, «Խթան», թիւ 124, 172 24 Հոկտեմբեր, 1957, 30 Հոկտեմբեր, 1958:

³ «Ազդակ», թիւ 183 (7683), 1 Հոկտեմբեր, 1957:

⁴ Նույն տեղում:

սևան» տարրական դպրոցներին և այլն¹:

1970-ականների վերջերից «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութան ղեկավարների այցերը Թուրքիա, ինչպես արդեն նշվեց, դադարում են: Այդպիսի իրավիճակը ձգվում է շուրջ 20 տարի: Ստամբուլի Հայութունն ու կրթական Հաստատությունների աշխատակիցները Հիմնարկութան և Հայկական րաժանմունքի պատասխանատուներին կրկին առիթ ունեցան Հանդիպելու 1997 թ.²: Հետագայում Ջ. Եկավյանի այցերն այդ երկիր սկսեցին կրել պարբերական բնույթ³: Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրթաֆյանը, կարևորելով Հայապահպանության մեջ Սփյուռքի վարժարանների դերը և ղնահատելով սփյուռքահայ կրթական օջախների գոյատևման համար Հայկական րաժանմունքի ու նրա տնօրենի կատարած աշխատանքները, շեշտում էր, որ «... Կիւլպէնկեան Հիմնարկը մօտիկ Հետաքրքրութիւն կը ցուցաբերէ սփիւռքահայ կրթական յարկերու և Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի նկատմամբ, որուն մէջ իր զրական ղերն ունէր Տքթ. Զաւէն Եկաւեան, որպէս վարիչը՝ Հիմնարկի Հայկական Բաժնին»⁴:

Հարկ է ընդգծել, որ Ստամբուլի Հայկական կրթամշակութային Հաստատություններն 80 տարուց ավելի է, ինչ չեն վայելում ՀԲԸ Միություն Հովանավորությունը և այդ բացը տեղում լրացնում է «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը: Կ. Պոլսի ավելի քան 19 Հայկական դպրոց, որոնք, ըստ Հիմնարկության ներկայիս ղեկավարների, աշակերտություն թվաքանակով 1990-ականներին դիջում էին միայն Սիրիայի, Լիբանանի և Միացյալ Նահանգների Հայ ազգային վարժարաններին, 1996 թվականից Հետո սկսեցին ավելի

¹ *St'ya Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 80-85, Grants 1962-1963, pp. 89-96, ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 5, թ. 1-3, «Արև», թիւ 11.831, 12 նոյեմբեր, 1957, թիւ 13.004, 12 Սևպտեմբեր, 1961, թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962, «Պայքար», թիւ 23 (19300), Յունուար 28, 1970, «Ազատ օր», թիւ 5767, 11 Փետրուար, 1964, թիւ 6053, 20 Յունուար, 1965, «Ազգակ», թիւ 284 (8797), 3 Փետրուար, 1961, «Յուսարեր», թիւ 248, 22 Յունուար, 1960:*

² *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 5-8:*

³ *Տե՛ս «Ազգ», 216, (3382), 26 նոյեմբեր, 2005:*

⁴ <http://www.melkonyanforever.org/Yegavian%20in%20Istanbul.pdf> [այցելությունը կայք էջ կառարվել է 20.07.2008 թ.]:

Հաճախակի օգտվել «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության մեծագույնար նվիրատվություններին¹:

Իրաք

Իրաքի պարագայում Հիմնարկության գործունեությունն առաջ է տարվել երկու ճակատով: Առաջինում զուտ Հիշյալ երկրի առաջընթացին նպաստող ծրագրերն էին, երկրորդում՝ տեղի Հայ Համայնքի դարգացմանը նպատակաուղղված Հատկացումները: Իրաքում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեությունն առաջին տարիները Համընկան Կասեմի գլխավորած Հեղափոխության (1958 թ.) և քաղաքական ու սոցիալ-տնտեսական բարեփոխումների ժամանակաշրջանին:

Սկզբնական շրջանում նշված երկրում Հիմնարկության կողմից իրականացվող բարեփոխական ծրագրերն, ընդհանուր առմամբ, Հանդիպում էին խոչընդոտների: «Արևը» Հազորգում է, որ Լիբանանի Հայկական վարժարաններին կատարած Հատկացումներին զուգահեռ՝ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Իրաքի Հայերին ևս Հասցրեց իր նշանակալի նպաստը, որը գործածվելու էր կրթական նպատակներով. «Այդ օրերուն,՝ տեղեկացնում էր թերթը,՝ երկրին ղեկը կը գտնուէր տխրահռչակ Նուրի Սայիտի և իր մանկապիկներուն ձեռքը: Ու զրկուած զրամը ծախսուեցաւ բոլորովին այլ նպատակներու, ղժբախտարար»²: Պերդիգանի տվյալներով 1956-1959 թթ. ընթացքում Մերձավոր Արևելքի երկրներին Հատկացված 113,594 կոնտոյից³ զատ, Իրաքն ստացել է նաև 110,736 կոնտո, որը չէր ներառում այդ երկրի Հայ Համայնքի օգտին արված Հատկացումները⁴:

1956-1965 թթ. ընթացքում վերանորոգման և տեխնիկական վերադինման աշխատանքների Համար մոտ 60 Հազ. (58,100) դոլա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 5-8:

² «Արև», թիւ 12,419, 15 Հոկտեմբեր, 1959:

³ Նշված տարիներին 1 կոնտոն Համարժեք էր շուրջ 35 ԱՄՆ դոլարի:

⁴ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-62, p. 7, Azeredo de Perdigao J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 155.

րի նպաստ հատկացվել է Բաղդադի «Թարգմանչաց-Սվաճեան Միացեայ», 84 Հադ.՝ «Սուրբ Մարիամ» և «Սուրբ Ներսես», 45.360՝ Բասրայի Հայկական վարժարաններին¹, 68.952՝ Քիրքուքի Հայկական դպրոցը նորոգելու նպատակով տեղի Հայոց եկեղեցուն և այլն²: Հետագա տասնամյակներում Իրաքի Հայկական կրթամշակութային գրեթե բոլոր կազմակերպությունները շարունակեցին օգտվել Հիմնարկության նպաստներից: Նույնիսկ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության եկամուտների գլխավոր աղբյուրի՝ Իրաքի նավթային ընկերության ազգայնացումից Հետո Իրաքում շարունակվեցին Հաստատության բարեգործական ծրագրերը, որոնք նպատակաուղղված էին կրթական և մշակութային օջախների կառուցմանն ու վերաշինմանը:

Ֆրանսիա

Փաստ է, որ արևմտյան շատ երկրներում, որտեղ Հայերին ընդունող Հասարակությունները զերազանցապես քրիստոնյա են, Հայությունը շատ արագ և Հեշտությունը է ինտեգրվում տեղի ժողովուրդներին: Մեծանում է ազգամշակութային ճուլման վտանգը: Այդպիսի իրավիճակից խուսափելու արդյունավետ ճանապարհ էր Հայ ազգային կրթօջախների և մշակութային Հաստատությունների ամրապնդումն ու դրանց ցանցի ընդլայնումը, որին էլ Ֆրանսիայում Հայկական բաժանմունքի ղեկավարներն ու աշխատակիցները նպատակաուղղեցին կատարված հատկացումները: Բացի այդ, Ֆրանսիայի Հայությունը Պերդիգանի, Գ. Եսայանի, Ռ. Կյուլպենկյանի, իսկ Հետագայում նաև Վ. Մավյանի և Զ. Եկավյանի ընկած ուշադրությունը կարելի է բացատրել որոշ այլ պատճառներով, որոնք ժամանակին ուղղակի չէին կարող վրիպել նրանց տեսադաշտից՝ հատկապես այն առումով, որ նշված գործիչներից շատերը երկար տարիներ բնակվել էին Հիշյալ երկրում:

Հիշատակենք այդ պատճառներից երկու կարևորագույնը.

¹ Տե՛ս «Ազատ օր», թիւ 6054, 21 Յունուար, 1965, Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 80, Grants 1963-1965, pp. 92-96.

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 92.

ա) Փարիզը հայ քաղաքական մտքի և մշակութային կյանքի առաջնային ու անփոխարինելի կենտրոններից էր. բ) Ֆրանսիայում կար հայության հոծ դանդված, որն Առաջին աշխարհամարտի տարիներից ի վեր անընդհատ համայրվել է մերձավորարևելյան տարածաշրջանից և Հայաստանից կատարված արտագաղթների հաշվին: Կ. Դալլաքյանը նշում է, որ 1920-ական թվականների 30-50 հազարի փոխարեն 21-րդ դարասկզբին Ֆրանսիայում բնակվում էր շուրջ 400 հազար հայ, որոնք զերազանցապես կուտակված էին Փարիզում ու նրա շրջակայքում, Լիոնում և Մարսելում¹:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Ֆրանսիայում բարեգործական, հայանպաստ ծրագրեր սկսեց իրականացնել 1957 թվականից հետո²: Հայկական բաժանմունքի գործունեության առաջին իսկ տարիներից լայնածավալ հատկացումներ կատարվեցին Ֆրանսիայի հայկական վարժարաններին, մշակութային ու կրթական հաստատություններին: Հայ երևիսանների և երիտասարդների կրթությունը հարցերով զբաղվող դանազան ֆրանսահայ կազմակերպություններ զգալի տեղ ունեին Հիմնարկության ծրագրերում: Ֆրանսիայի հայկական կրթամշակութային օջախներին անհրաժեշտ միջոցների տրամադրման և նրանց նյութական պայմանների բարելավման նպատակով «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը գործակցել է ոչ միայն ՀԲԸ Միության, այլև «Հայ աղքատախնամ ընկերություն», «Հայ կապույտ խաչի միություն», Սևրի «Սամուել Մուրատևան» Մխիթարյանների վարժարանի, «Երկիր և մշակույթ» կազմակերպության հետ և այլն:

Ֆրանսիայում Հիմնարկության առաջին նպաստառու հաստատություններից էին Փարիզի «Հայ սկաուտների», Մարսելի «Երիտասարդաց» ընկերակցություններն ու «Հայ կապույտ խաչի միությունը», որոնք հատկացված միջոցների հաշվին նորոգման և տեխնիկական վերադիման աշխատանքներ են կատարել Հայ պատանիների համար նախատեսված ամառային դասընթացների ճամբարներում³: Կատարված հատկացումներից այլազան տարիների ընթացքում օգտվել են նաև ՀԲԸ Միության հովանավորու-

¹ Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 220:

² Տե՛ս «Արև», թիվ 11.672, 7 Մայիս, 1957, ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 4, թ. 25:

³ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 79-83.

Թյամբ գործող «Դպրոցասէր Տիկնանց»՝ Ռենսիի, Մխիթարյաննե-րի «Սամուել Մուրատեան»՝ Սերի վարժարանները, «Սուրբ Ան-տուան» Հայ ավետարանական մշակութային ընկերակցությունը, «Ֆրանսահայ երիտասարդական միությունը» (Jeunesse Arme- nicone de France - JAF), «Անարատ Յղութեան Հայ կաթողիկէ Բույրերի» միությունը և այլն¹: Հատկացված միջոցները նպատա- կատուողվել են դպրոցների և մանկապարտեղների շենքերի կառուց-մանն ու նորոգմանը:

«Դպրոցասէրի»՝ պարբերաբար ֆինանսական ճգնաժամերի մեջ հայտնվելու փաստը Հայկական բաժանմունքին ստիպեց 1976 թ. նրա համար կատարել 30 Հազ. դոլարի հատկացում, որով նորոգվեց վարժարանի կենտրոնական շենքը²: Հետագա տարիներին այս հաստատութայն անվանը հանդիպում ենք տարբեր ձևո-նարկումների առիթով: Հիմնարկութայն աշխատակիցներն, առաջ-նային պլան մղելով գիտակրթական հաստատութայնները տեղե-կատվական տեխնիկական սարքավորումներով և անհրաժեշտ գույքով զինելու խնդիրը, Ֆրանսիայի Հայկական դպրոցներին նույնպես հատկացրել են որակյալ տեղեկատվական սարքավոր-ումներ: 1997 թ. այդ ծրագրի մեջ ներառվել է նաև «Դպրոցասէ-րը»՝ ստանալով թանկարժեք գույք և տեխնիկա³: 2006-ին ՀԲԸ Միութայն և «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութայն փոխհա-մաձայնութայնը նշված կրթական հաստատութայն համար կա-ռուցվեց նոր շենք: Այդ նպատակով Հիմնարկութայնը ծախսեց 1 մլն. 700 Հազ. եվրո⁴:

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 85, նաև՝ Մեկքոնյան Է., ՀԲԸՄ պատմութայն, էջ 492, «Պայբար», թիւ 23 (19300), Յունուար 28, 1970:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 117, թ 1:

³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 5-6:

⁴ Այս տեղեկութայնը մեզ է տրամադրել Հայկական բաժանմունքի տնօրեն Զ. Եկավյանը: 2008 թ. «Դպրոցասէրի» համար կառուցվելիք նոր՝ «Նուարդ Կիւլ-պենկեան» ֆրանս-հայկական լիցեյի և մշակութային կենտրոնի՝ 2 մլն. 100 Հազ. եվրո արժողութայնը ծրագրի ծախսերի շուրջ 60 տոկոսի պարտավորութայնը կրկին ստանձնեց Հիմնարկութայնը, 8-ը՝ Ֆրանսիայի Հայկական ֆոնդը, 12-ը՝ տեղական իշխանութայնները, 20-ը՝ այլ կազմակերպութայններ ու անհատներ (վերջիններիս շարքում էին Շարլ Ալեյնպուրը, ՀԲԸ Միութայն՝ Եվրոպայի մասնա-ճյուղի տնօրեն Արեսի Գովցյանը, Կլոդ Մութաֆյանը, Ֆրանսիայում ՀՀ նախկին

1966 թ. 51,250 դուարի Հատկացում կատարվեց Սևրի «Սամուէլ Մուրատեան» վարժարանին, որն այն ծառայեցրեց իր նոր մասնաշենքի կառուցմանը¹: Այդ կրթօջախը պաշտոնապես Համարվել է ֆրանսիական դպրոց, որտեղ դասընթացներ էին կազմակերպվում նաև Հայերեն լեզվով: Վարժարանում սովորում էին Հայ երևեսաներ Հունաստանից, Իտալիայից, Անգլիայից, Լիրանանից, Թուրքիայից և այլ երկրներից: Հարկ է բնդգծել, որ Հաստատությունը գիշերօթիկ էր: Աշակերտները գտնվում էին նպաստավոր կենցաղային պայմաններում և ապահովված էին ուսման Համար անհրաժեշտ գրեթե բոլոր միջոցներով²: Հետագա տարիներին ևս չարունակվել է «Սամուէլ Մուրատեան» վարժարանի հովանավորությունը, որին Հատկացված գումարները գերազանցապես ծառայել են շենքերի բնդարձակմանն ու նորոգմանը, ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ, գույք և այլն³:

Լայնածավալ դրամաշնորհներ են արվել նաև «Ֆրանսահայ մշակութային» և «Երիտասարդական» միություններին: Առաջինն ստեղծվել է 1949 թ. և գործունեություն է ծավալում մինչև օրս: Այն իր մասնաճյուղերն ունի Լիոնում, Մարսելում, Դեսսինում, Վալանսում և Ֆրանսիայի մյուս Հայաչատ վայրերում: «Ֆրանսահայ երիտասարդական միությանը» (Հիմնվել է 1945 թ.) Հատկացումներ կատարելը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Հիշյալ կազմակերպությունը Համարվել է Ֆրանսիայի Հայ Համայնքի երիտասարդական առանցքային կենտրոններից մեկը, որը «...գործնականում շատ ավելի լայն հարաբերություններ էր պահպանում թե՛ միջազգային ու ֆրանսիական կազմակերպությունների, թե՛ հա-

դեսպան էղուարդ Նալբանդյանը, Ֆրանսիայի Հայկական ֆոնդի տնօրեն Պետրոս Թերդյանը, Լիվրի-Գարգան Համայնքի ղեկավար Ալեն Կալմատը, Իլ դը Ֆրանսի նահանգային Նորհրդի նախագահ Ժան Պոլ Հյուշոնը, փոխնախագահ Էլիզաբեթ Գուրելիչը և ուրիշներ) (տե՛ս «Դպրոցասէր» վարժարանի կայք էջը՝ <http://www.tebrotzassere.com/cms/files/TebPlaqueWeb.pdf>, նաև՝ http://www.arme-news.com/article.php3?id_article=39281 [այցիկությունները կայք էջեր կատարվել են 20.07.2008 թ.]):

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 5, թ. 1-3: «Աղատ օր», թիւ 6694, 24 Փետրուար, 1967:

² Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 235:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, դ. 614, ց. 9, դ. 117, թ. 1:

մայնքի (Ֆրանսահայ՝ Վ. Ղ.) այլազան ուղղութիւններէ երիտա-
սարդական միավորումներէ հետ»¹: Նշված կազմակերպութիւննե-
րը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան հիմնադրման հետեւ
սկզբից շատ հաճախ են հայտնուել Հայկական բաժանմունքի գոր-
ծունեութեան ուղեւորում²:

1996-1998 թթ. ընթացքում հասկնալ մասնաշնչը կառուցելու
նպատակով «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութիւնն զգալի
նյութական միջոցներ (200 հազ. դոլար) տրամադրեց 1988 թ. Լիո-
նում հիմնադրված «Մարգարեան-Փափագեան» հայկական տար-
րական դպրոցին³: Նոր մասնաշնչը ունենալու պահանջն առաջացել
էր աշակերտներէ թվի աճից, որը կատարվել էր Մերձավոր և Միջին
Արեւելքից Լիոնի հայ համայնքի շարքերը համալրած հայերի
երեխաների հաշիւին⁴: Ծննքի կառուցումից հետո «Մարգարեան -
Փափագեան» դպրոցն ուներ 300 աշակերտ⁵:

Հունաստան

Ի տարբերութիւն հիմնարկութեան՝ Հունաստանում իրակա-
նացրած մեծածախ խնամատարական ծրագրերի, այս երկրի հայ-
կական կրթական և մշակութային կազմակերպութիւնները հնա-
րավորութիւն չունեցան բառի իսկական առումով օգտակար հաս-
տատութեան համապատասխան օժանդակութիւններէ: Պատ-
ճառները կարելի է պայմանավորել որոշ հանգամանքներով:

Հայտնի է, որ Հունաստանի հայ համայնքը 1950-ականների
վերջերից հայտնվել էր ներքաղաքական առճակատումների թեժ
գծում, որը ջլատում էր համայնքի ուժերը և խոչընդոտում նրա
կյանքի բնականոն ընթացքին: Հայ առաքելական եկեղեցու պա-
ռակտումից հետո՝ 1956 թ., կրթ Հունաստանի թեմը դուրս եկավ

¹ Գալլաքեյան Կ., Հայ սփյուռքի պատմութիւն, Լջ 234:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 82-83, Grants 1963-1965, p. 93. «Ազգակ», թիւ 286 (8799), 6 Փետրուար, 1961, ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 614, թ. 1-3:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 4, գ. 3, թ. 7:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նախկայությունից և ընդունեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Հոգևոր ու վարչական իշխանությունը, Հունահայ Համայնքը բաժանվեց երկու մասի: Ստեղծվեց իրարից անկախ երկու Հոգևոր թեմ, որոնք սուր պայքար սկսեցին միմյանց դեմ: Այդ պայքարի մեջ ներքաշվեցին նաև գերազանցապես Հունաստանի Հոգևոր թեմերի կողմից վերահսկվող Հայկական դպրոցները¹: Արդյունքում, Հակամարտությունը դրսևորվեց նաև Համայնքի կրթական ոլորտում: Կ. Դալլաքյանը հարցի կապակցութեամբ նշում է, որ «80-ական թվականների վերջերին երկու աթոռների գերազույն մակարդակով ձեռք բերված Համագործակցությունը, ինչպես ամենուրեք, Հունաստանում ևս դեռևս իր Համապատասխան դրական անդրադարձը չի գտել ավելի ստորին թեմերի և եկեղեցական Համայնքների գործունեության մեջ: Սուր Հակամարտությունը շարունակվում է՝ Հանդես գալով իրրև ներհամայնքային քաղաքական պայքարի դրսևորման ձև»²:

Հատկանշական է, որ եկեղեցական-քաղաքական պայքարի առաջնորդող ուժերն էին Հայ Հեղափոխական դաշնակցությունն և Ռամկավար ազատական կուսակցությունները, որոնք այստեղ ևս ունեին իրենց կրթական, մշակութային կազմակերպություններն ու միությունները (ՀՀԴ-ն դպրոցներ ուներ Աթենքում և Սալոնիկում, գործում էր «Համադղային» մշակութային միության մասնաճյուղը, ՌԱԿ-ի Հովանու տակ էր «Արարատ» մշակութային-մարդական միությունը, «Կայսակյան» տարրական վարժարանը և այլն)³: Նշված կազմակերպությունները նույնպես ուղղակի, թե անուղղակի կերպով ներգրավված էին ներհամայնքային առճակատումներում, որը ծայր աստիճան բարդացնում և հարցականի տակ էր դնում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության՝ տեղում իրականացվելիք կրթական ծրագրերի Հնարավորությունը:

Որ Հաստատության ղեկավարներն, ի դեմս Ռ. Կյուլպենկյանի, իսկապես չահազրգոված էին Համայնքի Հայկական կազմակերպություններին հովանավորելու խնդրով, հստակ երևում է «Արևի» հրատարակումներից: 1961 թ. Ռ. Կյուլպենկյանն այցելել էր Աթենք՝

¹ Տե՛ս Մեղրոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 493:

² Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 245:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 246:

չրջկու հայկական դպրոցներով և ծանոթանալու դրանցում տիրող իրավիճակին: Գործչին դիմավորել և այցի ընթացքում ընկերակցել են ՀՀԳ-ի ներկայացուցիչները, որին խանդով և հիվանդագին է վերարևրվել ՌԱԿ-ի մամուլի օրգան «Արևը»՝ այցի յուսարանմանը նվիրված իր հոդվածը խորագրելով «Տիար Ռոպեր Կիւլպէնկեան ուրացողներով շրջապատուած»¹: Հոդվածում, մասնավորապես, կարդում ենք. «Դաշնակցական լիտերները և անոնց հետ գործակցող ծանօթ ուրացողները, շրջապատած են զինքը. (Ռ. Կյուլպենկեյանին՝ Վ. Ղ.) և հազարումէկ առասպելներ պատմած են անոր... Դաշնակ «չէֆ»ները, Տիար Ռոպէր Կիւլպէնկեանէն խնդրած են, որ Կիւլպէնկեան հաստատութիւնը նիւթապէս օգնէ իրենց եկեղեցիներուն և վարժարաններուն, և այս առթիւ, օգտուելով Տիար Ռոպէր Կիւլպէնկեանի անգլիախօս ըլլալէն և ազգային հարցերէն անտեղեակ ըլլալու կրկնակ հանգամանքէն, ինքզինքնուն «գոհ» ի երևույթը տուած են: Անոնք յայտնած են թէ՛ Հ.Բ.Ը. Միութիւնն ալ կը մերժէ օգնել իրենց վարժարաններուն, ու խնդրած են Տիար Կիւլպէնկեանի միջամտութիւնը, Կիւլպէնկեան հաստատութեան և Հ.Բ.Ը. Միութեան մօտ»²: Թերթը, բնականաբար, շփոթվում էր՝ նշելով, թե Ռ. Կյուլպենկյանը տեղյակ էր ազգային խնդիրների մասին: Պարզապես հիմնարկութեան հայազգի տեսուչը հստակ տեղեկացված էր Հունահայ համայնքում կատարվող վերջին իրադարձություններից: Հետևաբար, նրա այցը համայնքում տիրող իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակ էր հետապնդում: Դա հնարավորություն կտար կողմնորոշվելու ապագայում Հունաստանի հայերի համար կատարվելիք ծրագրերի որակական ու բովանդակային հարցերում: «Արևն» ընթերցողներին մոլորութեան մեջ էր պցում նաև՝ հաղորդելով, որ «Ձենք գիտեր թէ Տիար Ռոպեր Կիւլպէնկեան ինչ պատասխանած է, միայն սա գիտենք թէ ուրացողներու շրջանակը ամէն ինչ բրած է սիրաշահելու համար Տիար Ռ. Կիւլպէնկեանը»³: Ջարմանալի է, եթե թերթը ծանոթ էր դաշնակցականների խնդրանքներին, ինչպե՞ս կարող էր անտեղյակ լինել դրանց արձագանքներին, երբ հենց նույն հոդվածում՝ մեջ-

¹ Տե՛ս «Արև», թիւ 12.830, 15 Փետրուար, 1961:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

բերված տողերին ^{1/1} Հանրոգող պարբերություն մեջ, «Արևի» հոդվածագիրը կամա-ակամա վկայում է այդ մասին՝ տեղեկացնելով, որ Ռ. Կյուլպենկյանը դրական պատասխաններ էր տվել բարձրացված հարցերին:

Հունաստանում գտնվելու ժամանակ Հիմնարկության հայազգի ղեկավարը հանդիպել է նաև հունահայ գաղութի Առաջնորդական տեղապահ Տեր Մևսրոս պապ քահանա Տեր-Հակոբյանի, Հ. Ֆլներճյանի և ՀԲԸ Միություն՝ տեղի մասնաճյուղի անդամների հետ, «Գարակէօղևան» բարեգործական հաստատություններ կայացուցիչ Ե. Ճիճիդյանի ուղեկցությամբ այցելել ՀԲԸ Միություն՝ Աթենքի վարժարան (չենքը վարձակալված էր և գտնվում էր քաղաքի Ամարուսի արվարձանում): Վարժարանում Ռ. Կյուլպենկյանը ներկաներին կոչ է արել մի կողմ դնել եղած տարաձայնությունները և հանդես գալ որպես միասնական կուռ համայնք: «Արևն» անհարկի քննադատում էր այդ կոչը և համարում, որ դա Հիմնարկության ղեկավարի՝ պահի տակ ունեցած տպավորությունների արդյունք էր: Ըստ թերթի՝ «Տիար Ռ. Կիւլպէնկեան, հաւանօրէն տպաւորուած ուրացողներու ծանօթ շրջանակի կեղծ ու պատիր արտայայտութիւններէն, պահ մը խօսած է նաև համերաշխութեան մասին... Տիար Ֆլներճեան, համերաշխութեան խօսքին մասին արտայայտուելով յայտնած է թէ՛ անկարելի է այդ մարդոց հետ (դաշնակցականների՝ Վ. Ղ.) որևէ համերաշխութիւն»¹:

Փաստորեն, Հունաստանի պարագայում Հիմնարկության ղեկավարությունը պետք է վարեր չափազանց ղզույշ քաղաքականություն: Մեր կարծիքով, եթե հաստատությունը հովանավորեր «հակամարտող» կողմերից որևէ մեկի կամ, թեկուզ, բոլորի կրթական օջախները, ապա այսպես, թե այնպես դիտվելու էր որպես առճակատման մեջ «ներքաշված կողմ»: Դա քաջ զիտակցում էին ոչ միայն Ռ. Կյուլպենկյանը, Գ. Եսայանն ու Վ. Մավյանը, այլև Տնօրենների ժողովը, որին էլ պատկանում էր ծրագրերի մշակման և վերջնական հաստատման իրավունքը:

ՀԲԸ Միությունն, իր հերթին, փորձում էր հայկական դպրոցները հանել եկեղեցական պայքարի շրջագծից՝ ամենևին չկասկա-

¹ «Արև», թիւ 12.830, 15 Փետրուար, 1961:

ծելով, որ այդ պայքարը կարող էր լուրջ վնաս հասցնել նրանց գործունեությունը: Ասվածի համար օրինակ կարող են ծառայել Բարեգործականի Հովանավորությունը Աթենքի Ֆիլսոֆիա-Տուրզուլի և Գոթինա թաղամասերում գործող Աղզային և Հայ ավետարանական վարժարանները: Հունահայ համայնքի եկեղեցական-քաղաքական պայքարն իր սուր կողմով հարվածեց նաև այդ վարժարաններին: Է. Մելքոնյանը խնդրի կապակցությունը մեջ է բերում ՀԲԸ Միություն՝ 1958 թ. տեղեկագիրը, որում, մասնավորապես, նշված էր. «Աթենքի մեր մասնաճիւղը ամէն ջանք ըրաւ որպէսզի կրթական գործը զերծ պահուի եկեղեցական պայքարներու ազդեցութենէն: Ծրագրեց դպրոցներու (Աղզային և Հայ ավետարանական վարժարաններ)՝ Վ. Ղ.) վերահսկողութիւնը յանձնել համայնքին ազգ. մարմիններէն անկախ հոգարարություն մը եւ Կեդր. Վարչութիւնը լիովին համաձայն գտնուեցաւ այս կարգադրութեան: Դժբախտաբար, այս բարի նպատակով կատարուած երկար բանակցութիւնները բազմաթիւ արդիւնքը չունեցան, Ազգ. Առաջնորդարանը իրենց ձեռքը ունեցողներուն անդիջող կեցուածքին հետեւանքով: Անոնք առանց այլեւայլի կը պնդէին որ դպրոցներու յատկացումին 8.000 տուարի գումարը իրենց պէտք է յանձնուի եւ հոգարարությունը իրենք միայն պէտք է անուանեն»¹: Ինչ խոսք, որ բավականին բարդ էր այդպիսի մթնոլորտում ստանձնել հայկական դպրոցների նյութական հովանավորությունը: Չնայած Ռ. Կյուլպենկյանի, Գ. Եսայանի և Վ. Մավյանի ջանքերով Հայ ավետարանական վարժարանն արժանացավ ուշադրության և 1967 թ. այդ կրթօջախի նոր շէնքի կառուցմանը Հայկական բաժանմունքը հատկացրեց ութ հազ. դոլար², սակայն, ցավալիորեն, նման հատկացումները հազվադեպ դարձան Հիմնարկության գործունեություն հետագա ընթացքում, որն առիթ է տալիս մտածելու, թե «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը ևս սպառնում էր Հունահայ համայնքի ներքաղաքական պայքարի հորձանուտում հայտնակու իրական փոսնդը: Դժվար թե Ռ. Կյուլպենկյանն ու Հիմնարկության ղեկավարությունը կարողացած կամ ծանոթ չլինեին Սփյուռքի մամուլում 1950-1960-ականներ-

¹ Մելքոնյան Է., ՀԲԸՄ պատմություն, էջ 493-494:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 4, թ. 1-3:

րին Հաճախակի Երևացող այնպիսի խմբագրականների, ինչպիսին օրինակ Հետեյալ րովանդակությամբ Հատվածն է. «...Հանգուցեալ Տիար Գալուստ Կիւլպէնկեան ջերմ էջմիածնական մըն էր, եւ անոր յիշատակին դէմ անարգանք եւ սրբապղծութիւն է, նիւթապէս օգնել Ս. էջմիածինը քանդելու աշխատող խմբակին, եւ անոր վարած վարժարաններուն, ուր միայն կը պատրաստուին Հայ սրբութիւնները քանդելու պատրաստ թունաւորուած դաշնակ սերունդ մը: Այս պարագան կը յուսանք որ շատ լաւ գիտէ՝ Կիւլպէնկեան Հաստատութեան Հայկական բաժնի վարչութիւնը»¹: Իսկ «Հակառակ կողմը» կարծիք էր հայտնում, թե Հիմնարկութեան ղեկավարութիւնն, իբր, իրեն խորհրդականներ էր ընտրել ՀԲԸ Միութեան շարքերից՝ կատարված Հատկացումների առյուծի բաժինն ուղղելով վերջինիս կրթական Հաստատութիւններին²:

Թերթկով Հիմնարկութեան՝ չուրջ կեսդարյա գործունեութեանը նվիրված տարբեր հրատարակութիւնների և փաստաթղթերի էջերը՝ Հանդիպում ենք չնչին թվով զրամաչնորհների, որոնք արվել են Հունաստանի Հայկական կրթական, մարզական և մշակութային միութիւններին³: Քիչ թե շատ ուշադրութեան արժանի են Հունաստանում Հայ երևեսանների համար ամառային դասընթացների նպատակով ճամբարներ կազմակերպող մարմիններին 1963-1965 թթ. ընթացքում կատարված Հատկացումները (30 Հաղ. դոլար), Աթենքի «Մշակութային կենտրոնին» 1997 թ. նվիրված գույքը, Հաշվողական տեխնիկան և այլն:

Ի մի բերելով ասվածը՝ պետք է նշել, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հաստատութեան Տնօրենների ժողովն ամեն գնով կփորձեր խուսափել և խուսափեց Հայութեանը հուզող եկեղեցական-քաղաքական պայքարից ու զրա մեջ ներքաշվելուց: Հունաստանի Հայկական դպրոցները, որոնք ևս գտնվում էին նշված պայքարի հակադիր ճակատներում, հնարավորութիւն չունեցան պարբերաբար օգտուելու Հիմնարկութեան մեծագումար նվիրատուութիւններից: Պատճառը վերջինիս ղեկավարութեան վարած քաղաքակա-

¹ «Արև», թիւ 12.830, 15 Փետրուար, 1961:

² Տե՛ս «Յուսարեք», թիւ 67, 19 Յունիս, 1959:

³ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 875, ց. 5, դ. 1, թ. 1-4, ֆ. 420, ց. 86, դ. 3, թ. 6:

նությունն էր՝ Հնարավորինս Հեռու մնալ քաղաքական որևէ երանգ պարունակող իրադարձությունից և դրա մեջ հայտնված կաղմակերպություններից¹: Պատահական չէր, Հետևապես, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Հունաստանում իր գործունեության Հիմնական շեշտը դրեց Հայ զաղթականների ու ծերերի խնամատարական ծրագրերի վրա՝ համագործակցելով առավելապես երկրի կառավարության և Միացյալ ազգերի կաղմակերպության Հետ:..

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեության առաջին իսկ տարիներից նրա ղեկավարներն, ի դեմս Պերդիդանի, իրականացնում էին մի քաղաքականություն, որն անմիջապես բխում էր Հաստատության՝ այնտեղ ունեցած ֆինանսական շահերից: Այդ երկրի բանկերում էին պահվում և եկամուտ բերում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության պահուստային ֆոնդի արժեթղթերը²: Ավելին, Պերդիդանը Միացյալ Նահանգներում բարեսիրական գործունեություն ծավալելը պայմանավորում էր Պորտուգալիայի՝ ԱՄՆ-ի Հետ ունեցած բարեկամական հարաբերություններով³: Հետաքրքրական է նշել, որ 1960 թ. Նյու Յորքում ստեղծվեց բարեգործական մի Հաստատություն, որը պաշտոնապես կոչվում էր «Gulbenkian Foundation, Inc.»: Այդ կաղմակերպությանը «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության կողմից 1961 թ. տրվեց 2 մլն. դոլար, որը կաղմեց նրա Հիմնական դրամազուլսը, իսկ ստացվող Հասույթներից բաշխումներ կատարվեցին

¹ Հատկանշական է, որ Ժ. Ազերեզո դը Պերդիդանն ու Ռ. Կյուլպենկյանը մերժել էին նաև «Արևի» խմբագրության աշխատակիցների խնդրանքը՝ ֆինանսավորելու թերթի հրատարակությունը: Նրանք ընդդժեկ էին, որ Հիմնարկությունը նյութապես չէր աջակցելու Հայ սարբերական մամուլին (տե՛ս «Արև», թիւ 13.762, 10 Մարտ, 1964):

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 184.

³ Տե՛ս նույն սեղում:

գիտական և մշակութային Հաստատությունների¹: Դրանց մեջ, սակայն, չի հիշատակվում Հայկական որևէ կազմակերպություն²:

ԱՄՆ-ի Հայությունն սպարազայում Հիմնարկությունը կրթական, գիտական և մշակութային կառույցների հովանավորության հարցերի լուծման համար փորձում էր կապվել և սերտորեն համագործակցել Հայկական Համայնքների հետ: Այդ մասին են վկայում Դևտրոյթի ու նրա չրջակայքի Հայ Համայնքի և վարժարանների օգտին կատարված շոշափելի հատկացումները: Հիմնարկության Հայազգի ղեկավարների համար հիշյալ վայրերում Հայ Համայնքի Համագործակցությամբ կրթական և մշակութային Հաստատություններ հիմնելն ու նորոգելը նպատակ էր հետապնդում Ամերիկայում գործող Հայկական բարեգործական Հաստատություններին և մեծ կարողության տեր Հայ անհատներին մղել նմանատիպ քայլերի Միացյալ Նահանգների Հայաչափ վայրերում ու մշակութային կենտրոններում: Այդ խնդրի արժարժմանը հանդիպում ենք Դևտրոյթի Հայ առաքելական եկեղեցու ընկերակցությունը հիմնարկության՝ 1961 թ. ընթացքում կատարած Հատկացման նկարագրության մեջ. «67,500 - Վաթսուներօթը հազար Հինգհարիւր տուրք յատկացուեց ի նպաստ Մեծագոյն Տիթրոյթի Հայ Համայնքին համար կառուցուելիք վարժարանի մը և զրադարանի մը, որ պիտի կոչուի մեր Հիմնադրին անունով «Տիթրոյթի Գալուստ Կիւլպէնկեան Վարժարան»: Հիմնարկութեանս կողմէ յատկացուած այս գումարը կը ներկայացնէ ամբողջական ծախքերուն կէսը, ծրագիրը ըլլալով

¹ *St'ya Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 184.*

² Նշված բարեգործական Հաստատության կողմից 1961 թ. նպաստներ են տրվել Նյու Յորքի «Միջազգային տուն» կրթամշակութային կազմակերպությանը, Միջազգային կրթության ինստիտուտին, «Հարվարդ» բարձրագույն դպրոցի (ԱՄՆ) Միջազգային ուսանողական ուստանին, U.N.E.S.C.O.-ի (United Nations Educational, Scientific and Cultural Organization-ՄԱԿ-ի) կրթության, գիտության և մշակութային հարցերով զբաղվող հանձնաժողով) Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման միջազգային կենտրոնի՝ Հոոմի մասնահյուսիս, Զիկագոյի Համալսարանի (ԱՄՆ) Միջազգային ուսանողական ուստանին, «Օնոարիո Թագավորական Թանգարանին» (Կանադա), Բադելի (Շվեյցարիա) Միջազգային ևրաժշտական միությունը և այլն (ավելի մանրամասն տե՛ս *Azaredo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 184*):

աւելի ընդարձակ և բովանդակելով նաև շինութիւնը եկեղեցւոյ մը, մշակութային սրահի մը և ընթերցարանի մը, որոնց ծախսերը պիտի հոգացուին Տիթրոյթի Հայկական Համայնքին կողմէ: Որոշելով մասնակցել այս ծրագրին իրականացման, Հիմնարկութիւնս, ըրաջտարար, իր գործունէութեան սովորական թատերավայրէն դուրս եկաւ, ինչպէս ըրած էր Հարվարտ Համայսարանի Հայկարանական ամպիոնի մը կաղմակերպութեան Համար, այն յոյսով որ այս ուղեցոյց ծրագիրը պիտի խրախուսէ Միացեալ Նահանգներու ուրիշ Հայաշատ Համայնքներ նմանօրինակ նախաձեռնութիւններու լծուելու»¹:

Ամերիկահայութեան նկատմամբ Ռ. Կյուլպենկյանի, Մ. Եսայանի, Վ. Մավյանի, Խսկ Հետազայում նաև Զ. Եկալյանի որդեգրած գործունէութեան ուղեգիծն էապես տարրերվում էր մյուս երկրների Հայ Համայնքների Հանդէպ նրանց դիրքորոշումներից: Այդ ամենը բխում էր Հիշյալ գործիչների՝ ամերիկահայութեան նկատմամբ ունեցած որոշ առարկայական պատկերացումներից, որոնք ձևավորվել էին ժամանակի և իրականութեան թելադրանքով: Իրականութեան, որը Հստակորեն նկարագրում է Կ. Գալլարյանը. այն է. «...ամերիկյան կացութեանը, որ պարտադրում է գրեթե ամբողջ ժամանակը Հատկացնել անհատական ձեռներեցութեանը՝ նյութական բարվոք վիճակ ապահովելու. Համար, ըստ էութեան, չի խրախուսում Հավաքական գոյակցութեանը»²: Արդյունքում, ամերիկահայերի թվաքանակի Հետ ուղիղ համեմատականով Միացյալ Նահանգներում գործում էին սակավաթիվ՝ շուրջ 100 ազգային-մշակութային, կրթական Հաստատութեաններ³: Այդ կաղմակերպութեանների ծախսերն, ըստ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան ղեկավարութեան և Հայկական բաժանմունքի պատասխանատու վարիչների, հնարավոր էր հոգալ տեղի Հայերի միջոցներով: Հաստատութեան տեսուչների և աշխատակիցների այդպիսի մոտեցումներից 1966 թ. դժգոհում էր «Ազատ օրը», որն անդրադառնալով Հայկական կրթական օջախների Հովանավորութեան Հարցին և

¹ «Ազգակ», թիւ 284 (8797), 3 Փետրուար, 1961, Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 82.

² Գալլարյան Կ., Հայ սփյուռքի պատմութեան, էջ 260:

³ Տե՛ս նույն տեղում:

դրա հետ կապված խնդիրներին՝ զարմանում էր, թե «...ի՞նչ հիմնական պատճառ կայ, որ ամերիկահայ կրթական գործը ցարդ չէ արժանացած Կիւլպէնկեան Հիմնարկութեան գուրգուրանքին: Ի՞նչ մեղք գործած է ամերիկահայ զաղութը այս անտեսումին համար» և շարունակում. «...Անշուշտ, կարելի է ըսել ու պատճառարանել, որ Ամերիկայի մէջ միլիոնատէր Հայեր կան ևւ թող անոնք օգնութեան հասնին այդ նպատակին: Հարուստներ, նոյնիսկ միլիոնատէրեր բոլոր զաղութներու մէջ ալ կան: Բայց, յարգելով բացառութիւնները, խորունկ դառնութեամբ պէտք է արձանագրել, որ այդ կրեստներուն սիրտը քարացած է Հայ ժողովուրդի ծով կարիքներուն, ի մասնաւորի ամերիկահայ կրթական գործին հանդէպ: Միւս կողմէ, յայտնի իրողութիւն է, որ Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող շարաթօրեայ թէ կիրակնօրեայ բոլոր դպրոցները կը պահուին համեստ ժողովուրդի համեստ լուծանքով: Աւելին, յայտնի իրողութիւն է, որ Գայիֆորնիոյ մէջ նոր հաստատուած Մեսրոպեան և Սրբոց Նահատակաց կրկու դպրոցներն ալ նիւթական տազնապի մէջ են ևւ ատոր համար ալ սրտազին կոչ կ'ընեն ժողովուրդին, իրենց գոյութիւնը պահելու համար»¹: Այնուհետև հողվածագիրը կարևորում էր ամերիկահայ նոր սերունդների դաստիարակութեան խնդիրը և կոչ անում «Գալուստ Կյուլպենկեան» Հիմնարկութեանն ազգային, հոգևոր իշխանութիւնների միջոցով իր նյութական օգնութիւնը հասցնել ամերիկահայ կրթական գործին և դպրոցներին՝ միտքն ավարտելով հետևյալ տողերով. «Եթէ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը իր խնամքն ու հոգածութիւնը տարածէ նաև ամերիկահայ կրթական գործին վրայ, անտարակոյս որ փառքի նոր պսակ մըն ալ կ'աւելցնէ Համազգային մեծ բարերար Գալուստ Կիւլպէնկեանի անունին ու յիշատակին վրայ»²:

Ափսոսանքով պետք է արձանագրել, որ ԱՄՆ-ում Հիմնարկութեան բարեգործութիւնները պարբերական ընույթ չէին կրում և մեծ ծավալների չհասան: Այստեղ իրականացված դպրոցաչինութեան յավագույն ծրագրերի շարքը կարելի է դասել Հայկական բաժանմունքի կողմից, արդեն Հիշատակված, Գետրոյթի՝ Ա. Մանուկյանի նախագահութեամբ (հետագայում նրան փոխարինեց

¹ «Ազատ օր», թիւ 6478, 13 Յունիս, 1966:

² Նույն տեղում:

որդին՝ Ռիչարդ Մանուկյանը)¹ գործող Հայ առաքելական եկեղեցու ընկերակցությունը կատարված դրամաշնորհը²: 1964 թ. նորակառույց Ալինեան շենքում տեղակայված գրադարանը նոր դրքերով հարստացնելու նպատակով Հինգ Հազ. դոլար տրվեց Բոստոնի «Սուրբ Գրիգոր» վարժարանին³: ԱՄՆ-ի հայկական մշակութային կենտրոնների և վարժարանների անունների ենք հանդիպում նաև Հիմնարկություն՝ 1969 և 1975 թվականների տարեկան գործունեությունն ածարձակ տեղեկագրերում: Ըստ այդ փաստաթղթերի՝ 1969 թ. Ուոթերթաունի «Սուրբ Յակոբ» եկեղեցու վարչությունը «Հայ մշակութային և երիտասարդական կենտրոնի» ստեղծման համար տրամադրվել է Հինգ Հազ., իսկ Լոս Անջելեսի «Մեսրոպեան» և «Սրբոց Նահատակաց Գեորգիան Երկրորդական» վարժարաններին՝ յուրաքանչյուրին քսան Հազ. դոլար, որով նշված կրթօջախները կառուցել են նոր մասնաշենքեր⁴:

Յավայի է, անշուշտ, այն փաստը, որ ամերիկահայությունն բաղմամբով դպրոցներ, մշակութային և աղագային միություններ ու կենտրոններ դուրս մնացին Հիմնարկության գործունեությունն ղաշտից, սակայն հարկ է նշել, որ դրանում լուրջ դեր խաղաց Հայկական բաժանմունքի բյուջեի սահմանափակ լինելու փաստը: 2000 թ. փոփոխություններ կրեց Միացյալ Նահանգների հայկական դպրոցներին ցուցաբերվող «Գալուստ կյուլպենկյան» Հիմնարկության նյութական աջակցությունն ծրագրերը, որը կարճ ժամանակ անց դադարեցվեց: Այդ քայլը հաստատությունն ղեկավարությունը պայմանավորեց ԱՄՆ-ի համեմատական տնտեսական կայունությունն⁵: Խնդրո առարկա երկրի հայ աղագային, կրթական և մշակութային օջախների համար կատարվող հատկացումները վերահասցեագրվեցին Թուրքիայի և Մերձավոր Արևելքի հայկական վարժարաններին⁶:

¹ Տե՛ս Մեղրոնյան է., ՀԲԸՄ պատմություն, էջ 484:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 82.

³ Տե՛ս Ֆ. 875, ց. 5, գ. 1, թ. 1-4, «Ազատ օր», թիւ 6053, 20 Յունուար, 1965, Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 96.

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 6, թ. 1-3, ց. 6, գ. 614, թ. 1-3, «Պայքար», թիւ 23 (19300), Յունուար 28, 1970:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 18-19:

⁶ Տե՛ս նույն տեղում:

Հարավային Ամերիկայի երկրներ

Հատինական Ամերիկայի երկրներում Հիմնարկու թյունը համեմատաբար մեծ ծավալներով հատկացումներ կատարել է Բրազիլիայի կրթական, գիտական և մշակութային հաստատություններին, ինչպես նաև տեղի հայ համայնքի դպրոցներին ու վարժարաններին: Արգենտինայի և Ուրուգվայի գիտակրթական, մշակութային հաստատություններին արված նպաստները հազվադեպ էին և ոչ մեծագույն: Համեմատության համար հիշատակենք, որ 1956-1965 թթ. ընթացքում Բրազիլիային հատկացված միջոցները կազմում էին ավելի քան ութ ու կես հազար կոնտո, իսկ Արգենտինային և Ուրուգվային միասին վերցրած՝ շուրջ երկուս ու կես հարյուր¹: Հիմնարկության այդպիսի վարքագծի պատճառները բացահայտում էր Պերդիգանը, որը Բրազիլիան դիտում էր որպես «...պորտուգալական երկրորդ պետությունն Ատլանտյան օվկիանոսից այն կողմ ներկայացնող ընդարձակ քույր երկիր»²: Նա տեղեկացնում էր, որ Հիմնարկությունն աստիճանաբար ընդարձակել է իր գործունեության դաշտը դեպի աշխարհի այլ տարածաշրջաններ և քանի որ այդ նպատակով առանձնացված միջոցները սահմանափակ էին, ապա որոշվել է չեչտն առավելապես դնել մշակութային ձևերի վրա³: Ծարունակելով միտքը՝ Պերդիգանը հայտնում էր, որ «...եթե վարվենք այլ կերպ, մեր ջանքերը վատնած կլինենք զանազան ուղղություններով և անարդյունք»⁴: Խոչորամասշտաբ նվիրատվություններն ու հատկացումները Հարավային Ամերիկայի երկրներում, ըստ Պերդիգանի, կարող էին սպառել Հիմնարկության՝ աշխարհի տարբեր երկրներում բարեգործական ծրագրեր իրականացնելու հարցերով զբաղվող Միջազգային բաժանմունքի բոլոր նյութական միջոցները, քանզի ինչպես Բրազիլիան, այնպես էլ Հարավային Ամերիկայի մի շարք երկրներ, Հիմնարկության ղեկավարի դնահատմամբ, չափազանց մեծ էին,

¹ *St'ya Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 126-134, Grants 1963-1965, pp. 137-154.*

² *Azeredo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 178.*

³ *Տե՛ս նույն տեղում:*

⁴ *Տե՛ս նույն տեղում:*

իսկ կարիքներն էլ՝ բաղձաթիվ¹: Զուգահեռաբար նշենք, որ 1955-1959 թթ. ընթացքում Հիշյալ բաժանմունքին Հատկացվել էր 5.530 կոնտո, իսկ 1960-1962 թթ. ընթացքում՝ 105.748²: Հավելենք նաև, որ նույն այդ ժամանակահատվածում Պորտուգալիային Համապատասխանաբար տրվել է 171.245 և 234.384 կոնտո³:

Իր գործունեությունն ողջ ընթացքում Հիմնարկությունը Բրազիլիայում իրականացրել է կրթական, գիտական և մշակութային բաղձաթիվ ու բաղձաբնույթ ծրագրեր⁴: Ինչ վերաբերում է նվաճելի կրկրների հայկական կրթօջախներին տրված նպաստներին, ապա հարկ է նշել, որ դրանք, ի տարբերություն Արևելքի երկրների, լայնամասշտաբ չէին: Արգենտինայի՝ Համեմատաբար մեծ Հայ Համայնքը (70-80 հազար մարդ), որն ուներ կրթամշակութային կենսունակ միություններ («Շարժում», «Արմենիա», «Արգենտինահայ մշակութային միություն» և այլն)⁵, Հաճախակի էր դուրս մնում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության գործունեության աշխարհագրական սահմաններից: Իրավիճակը զրեթև նույնն էր Ուրուգվայի պարագայում: Տարիների ընթացքում այդ երկրների հայկական Համայնքներում իրականացված ծրագրերից Հիշատակություն արժանի են 1966 թ. Բուենոս Այրեսի «Մխիթարեան» և «Նրիմեան» վարժարանների նոր շենքերի կառուցումը (առաջինին արված Հատկացումը կազմում էր 50 հազ., երկրորդին՝ 10 հազ. դոլար), 1967 թ. «Հայկական Երաժշտության րարեկամներ» միությունը (Բուենոս Այրես) կատարված նպաստը (3 հազ. դոլար), «Նուպարեան ազգային վարժարանին» (Մոնտևիդեո, Ուրուգվայ) նոր շենքի կառուցման Համար 1973 թ. տրամադրված գումարը (15 հազ. դոլար), նույն վարժարանին և «Մարի Մանուկեան» (Բուենոս Այրես) կրթական Հաստատությունը 1995 թ. ընթացքում Հատկացված դպրոցական գույքը և այլն¹: Արգենտինայի պարագայում իրա-

¹ *Sl'u Azeredo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 178.*

² *Տե՛ս նույն տեղում, էջ 198:*

³ *Տե՛ս նույն տեղում:*

⁴ *Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 128-134, Grants 1963-1965, pp. 137, 153, Fundação Calouste Gulbenkian 1956/1981, pp. 43, 356 և այլն:*

⁵ *Տե՛ս Հայ սփյուռք Հանրագիտարան, էջ 104-105, Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 277-278:*

վիճակը փոքր-ինչ փոխվել է 1997 թ., երբ Հիմնարկության նպաստներից օգտվեց այդ երկրի 8 Հայկական դպրոց (Վիսենտե Լոպեսի, «Պահչէճևան», «Մխիթարեան», ՀԲԸ Միության «Մարի Մանուկեան», Արմենիո-Արգենտինա, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Քրիմեան», «Արծրունի»), որտեղ սովորում էր ավելի քան 2.500 երեխա²:

Ինչպես արդեն նշվել է, Բրազիլիայում ևս Հայկական բաժանմունքը Հիմնել էր իր ներկայացուցչությունը, որը տեղում քննում էր Հայկական Հաստատությունների իրավիճակը, կազմում և Հիմնարկության տնօրինությունն էր ներկայացնում դրանց վերաբերող ղեկույցներ ու Հաշվետվություններ: Հիմնարկության գործունեությունը՝ 1961-1962 տարեշրջանում տարրեր չափերի նպաստներ են ստացել Մարաշի Հայրենակցական միությունն ու «Ժողե Բոնիֆասիո» վարժարանը, որոնք կարողացել են բարելավել իրենց շենքային պայմանները և դիմել ժամանակակից տեխնիկական սարքավորումներով⁴: Հայկական բաժանմունքի պատասխանատուները Հայկական դպրոցներից զատ, իրենց նպաստներով կարևորում ու խրախուսում էին նաև Բրազիլիայում Հայկական մշակութային կենտրոնների Հիմնադրման աշխատանքները: Բաժանմունքի ղեկույցներից մեկում կարդում ենք. «Այս Հայաշատ կեղրոնին մէջ (Սան Պաուլոյի Հայ Համայնքի՝ Վ. Ղ.) մշակութային կեղրոնի մը ստեղծման Համար Զանքեր թափուած են, զլխաւորաբար Մարաշցիներու Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ: Նոր շէնքի մը կառուցման Համար ծախսուած է 15.000 տոլար տեղական Հասոյթներով և անոր ամբողջացման ու աւարտման Համար 20.000 տոլարի պէտքը տեսնուած է: Հիմնարկութիւնը այս գումարին կէսը ապահովեց 10.000 (տասը հազար) տոլարի յատկացումով մը»⁵:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 4, թ. 1-3, դ. 5, թ. 1-3, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 1, «Արև», թիւ 16.757, 28 Փետրուար, 1974:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 3, թ. 5-6:

³ Տե՛ս Հայ պիլուոք Հանրադիտարան, էջ 120:

⁴ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation. Grants 1956-1962, pp. 82-83, «Արև», թիւ 13.004, 12 Մեպտեմբեր, 1961, թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962:

⁵ «Արև», թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962:

Ավելի ուշ՝ 1995 թ., Զ. Եկայանի ջանքերով Արղենտինայի, Ուրուգվայի և Բրազիլիայի հայկական դպրոցներն ստացան Համակարգիչներ, տպագրական ու պատճենահանման սարքավորումներ¹: 2001 թ. 50 հազ. դոլարի օգնություն տրվեց Սան Պաուլոյի «Դուրյան» ազգային վարժարանին², իսկ «Ժողև Բոնիֆասիո» կրթօջախի համար 2002 թ. Հիմնարկության միջոցներով (15 հազ. դոլար) կառուցվեց նոր դրադարան³:

Հայաստան և այլ երկրներ

Չնայած Հայաստանում շեշտադրումը կատարված էր գիտական ու առողջապահական հիմնարկների տեխնիկական դինվաժուիթյան վրա և այստեղ չկառուցվեցին կամ չվերանորոգվեցին դպրոցներ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ, սակայն դրանց այլադան տարիների ընթացքում տրվեցին գույք, արդիական տեխնիկական, տպագրական սարքավորումներ և այլն: Նպաստների հասցեատերերի շարքում էին Երևանի պետական համալսարանը, Ս. Արուվյանի անվան մանկավարժական, օտար լեզուների, բժշկական ինստիտուտները և այլն⁴: Ամենից էականը, սակայն, այն էր, որ Հիմնարկության հայկական ծրագրերի պատասխանատուներն ի վիճակի եղան հաստատության ղեկավարությանն ապացուցելու Հայաստանն իրենց ծրագրերում ներառելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Հայաստանում մշակութային հաստատությունների նյութական աջակցության ծրագրերի առումով Հիշատակության արժանի են 1969 թ. Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Երևանում Հիմնարկության միջոցներով «Կոմիտասի տուն» համերգասրահի կառուցումը (ընդհանուր արժեքը կազմել է 250 հազ. դոլար) և նույն թվականին Հայաստանի պատմական Հուշարձան-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 3, թ. 1:

² Տե՛ս նույն տեղում, դ. 2, թ. 23:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 33:

⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 875, ց. 2, դ. 669, թ. 11:

ների պահպանություն կոմիտեին Ամբերդի և Գնդեվանքի վերակառուցման նպատակով տրված 40 հազ. դոլարի գումարը¹:

Հայաստանի ազգային արխիվի՝ Սփյուռքահայությունների հետ մշակութային կապի կոմիտեի և կառավարության ֆոնդերում պահվում են նյութեր, որոնք վկայում են, թե որքան պատասխանատվությամբ են վերարերվել Ռ. Կյուլպենկյանը, Վ. Մավյանն ու Զ. Եկավյանը Հայաստանի յուրաքանչյուր կրթական կամ մշակութային հաստատությունն արվող հատկացմանը. կատարվել են ոչ միայն դրամաշնորհներ, այլև բժախնդիր ուշադրությամբ ուսումնասիրվել են տարատեսակ ու բազմաթիվ ընկերություններ և դրանցից գնվել, Հայաստան են առաքվել պահանջված գործիքներն ու սարքավորումները: Որպես օրինակ կարելի է բերել Ռ. Կյուլպենկյանի՝ Սփյուռքահայությունների հետ մշակութային կապի կոմիտեին ուղղված այն բազմաթիվ նամակներից մեկը, որում նա հայտնում էր հետևյալը. «Նկատի ունենալով բազմաուրույնները Հայթայթիկի առարկաներու ինչպէս նաև մեծ թիւը վաճառողներուն որոնք կը գտնուին 11 տարբեր երկիրներու մէջ, Հարկ տեսայ նախ հետազոտութիւն մը կատարել որոշելու համար թէ ո՞րն է գնումի և առաքման լաւագոյն եղանակը: Բնականաբար ժամանակ առաւ այս գործը տրուած ըլլալով պարագաները, սակայն որդեգրուած գործելակերպը զոհացուցիչ կը թուի ըլլալ ներկայիս»²:

Հայաստանի անկախության հռչակումից հետո «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունն ընդլայնեց այստեղ իրականացվող բարեգործական և մարդասիրական օգնության ծրագրերի ծավալները, որոնք պայմանավորված էին երկրում ստեղծված աղետալի սոցիալ-տնտեսական իրավիճակով: Առաջնային սլան մղվեցին Հայաստանին բժշկական սարքավորումներ և ղեղորայք տրամադրելու ծրագրերը:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 6, թ. 1-3, ց. 2, դ. 534, թ. 26-44, ց. 5, դ. 6, թ. 1-3, Calouste Gulbenkian Foundation, Armenian Department. Twenty years of activity, 1956-1976. p.11, «Պայքար», թիւ 23 (19300), Յունուար 28, 1970:

² ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, դ. 261, թ. 18:

Հաղվաղեալ և փոքրածափայ Հատկացումներ են կատարվել եվրոպական մի շարք երկրների, Կանադայի և Ավստրալիայի Հայկական դպրոցներին ու կազմակերպություններին: Կարևոր ձևանարկումներ կարևորի է համարել 1975 թ. Վիեննայի Մխիթարյան միարանությունից հանձնարված «Հայկական միացյալ հանձնախմբին» 1974 թ. տրված նպաստը (8 հազ. դոլար), որը ծառայեց քաղաքի «Հայկական կենտրոնի» շենքում նոր դասարանների կառուցմանը, 1997 թ. Սերբիայում Հունաստանի և Ֆրանսիայի Հայ համայնքների հանդանակած միջոցներով բացված Հայկական դպրոցին տրամադրված անհրաժեշտ գույքը, տեխնիկական սարքավորումները և այլն¹:

Հիմնարկության Հատկացումները Եգիպտոսի Հայկական դպրոցներին Սիրիայի և Լիբանանի Համեմատություններ, կարելի է ասել, աննշան էին: Հիշատակելի են Հաստատությունից միջոցներով 1960 թ. Մխիթարյան միարանություն՝ Ալեքսանդրիայի (Եգիպտոս) վարժարանի նորոգումը, 1970 թ. «Տիգրան Երկաթ» մշակութային միություն (Ալեքսանդրիա) բարեկարգումը և այլն²:

Ավարտելով ենթագլխի շարադրանքը՝ հարկ է նշել, որ 1997 թ. դրությամբ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության նպաստունկալ Հայկական վարժարանների շուրջ երկու-երրորդը (60 տոկոս) գտնվում էր Սիրիայում, Լիբանանում և Թուրքիայում, մոտ 16 տոկոսը՝ եվրոպական երկրներում, գրեթե նույնքան՝ ԱՄՆ-ում և Կանադայում, իսկ 7 տոկոսը՝ Հարավային Ամերիկայում և Ավստրալիայում: Թվերի այդպիսի հարաբերակցությունը, բացառությամբ ԱՄՆ-ի, գրեթե նույնությամբ պահպանվեց նաև հետագայում:

¹ Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 614, թ. 1-3, գ. 564, թ. 1-2, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 5-6:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 83, «Աղղակ», թիւ. 284 (8797), 3 Փետրուար, 1961, ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 7, թ. 1-3:

2.2. Կրթաթոշակների և դրամաշնորհների ծրագիր

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության այս ծրագիրը գործում է նրա Հիմնադրումից ի վեր: Դրամական նպաստներ են տրվել ոչ միայն առաջադիմությամբ աչքի ընկած հայ ուսանողներին, այլև սոցիալապես անապահով հայ ընտանիքների զավակներին: Հիմնարկության կրթաթոշակների ծրագրից օգտվել և շարունակում են օգտվել աշխարհի զանազան երկրների հայկական և օտար տարրական, միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ մանուկները, պատանիներն ու աղջիկները, ճեմարանների, դպրեվանքների սաները և այլն: Տարրեր տարիների ընթացքում զգալի դրամական պարգևներ ու նպաստներ են արվել նաև հայ մանկավարժներին ու դիտնականներին: Կրթաթոշակների համար յուրաքանչյուր տարի ծախսվել է մեկից մոտ մեկուկես մլն. դոլար, որը կազմում էր Հայկական բաժանմունքի ողջ բյուջեի շուրջ մեկ երրորդը:

Դպրոցական կրթաթոշակներ

Հայկական վարժարանների սաներին դրամական նպաստների ու պարգևների արժանացնելու հարցում թե՛ Գ. Եսայանը, թե՛ Ռ. Կյուլպենկյանը, որոնց ջանքերի շնորհիվ նմանատիպ հատկացումներն իրականություն դարձան, կարևորում էին ոչ միայն հայ երեխաների կենսապայմանների բարելավման խնդիրն, այլև ընդգծում էին, որ հայեցի դաստիարակության նշանաբանով կրթությունն ասպարեզում բարեխիրական գործունեություն ծավալելն ուղղակի օրվա հրամայականն էր, քանի որ հիշյալ ասպարեզն, ըստ նրանց, հանդիսանում էր «...իրրև. կարևորագույն ազդակը աշխարհացրի. Հայութեան պահպանումին և յառաջադիմութեան»¹: Ֆրանսիայի «Սամուէլ Մուրատեան» վարժարանի «Կիլպէնկեան» սաների առիթով «Յառաջն» անդրադառնում էր Հիմնարկության

¹ «Ազդակ», թիւ. 284 (8797), 3 Փետրուար, 1961:

տնօրինությունն առաջ քաշած պայմաններին և նշում, որ կրթաթոշակ ստանալու համար պատանին պետք է լիներ հայ չքավոր ընտանիքի դավակ՝ ուշիմ, աշխատասեր ու բարեկիրթ¹: Յուրաքանչյուր սան, որը չէր հանձնում տարեկերջյան քննությունները՝ զրկվում էր կրթաթոշակից:

Հիմնարկություն Տնօրենների ժողովը հայկական վարժարանների սաներին նպաստներ հատկացնելու որոշումը կայացրեց 1959 թ. և չնայած արված հայտարարությունը, թե «...հայ վարժարաններում մէջ չքաւոր աշակերտներու համար կրթաթոշակներու վճարումը պիտի շարունակուի մինչև 1962-63 տարեշրջանին վերջը», այն դարձավ Հիմնարկության և Հայկական բաժանմունքի ամանդական ծրագրերից մեկը²: Ավելին, եթե 1959-1963 թթ. ընթացքում զպրօցական կրթաթոշակներին հատկացվել էր 490 հազ. դոլար, ապա միայն 1964 թ. նույն նպատակներով կատարված հատկացումների ծավալը կազմեց 350 հազ.³: Վերոհիշյալ որոշումից անմիջապես հետո 120 հազ. դոլարի կրթաթոշակ տրվեց աշխարհի 14 երկրի 247 վարժարան հաճախող 3.635 հայ աշակերտի⁴: Նժարն այստեղ ևս թերված էր Մերձավոր Արևելքի հայկական վարժարանների կողմը: Իրենց՝ լիրանանահայությունն ուղղված պաշտոնական հաղորդագրություն մեջ հաստատություն տեսուչները նշում էին. «...1959-60 կրթական տարեշրջանին համար, գոյութիւն ունեցող բոլոր հայ վարժարաններուն մէջ, թիւով 59, որդեգրած է («Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը՝ Վ. Ղ.) 695 Կիւլպէնկեան Սաներ, անոնց տրամադրելով 70.700 լիր. ոսկի (23 հազ. ԱՄՆ դոլար՝ Վ. Ղ.), որպէս կրթաթոշակ»⁵: Մնացյալ գումարից 25 հազ. դոլար ստացել էին Սիրիայի, 23 հազ.՝ Թուրքիայի, 2.600՝ Հունաստանի, 3.165՝ Իրաքի, 6.050՝ Ֆրանսիայի, 720՝ Եթովպիայի, 1.420՝

¹ Տե՛ս «Յտոաջ», 35րդ տարի, թիւ 8316, նոր շրջան, 15րդ տարի, թիւ 4217, 10 Փետրուար, 1959:

² Տե՛ս «Արև», թիւ 12.503, 23 Յունուար, 1960, «Ազգակ», թիւ 285 (8798), 4 Փետրուար, 1961:

³ Տե՛ս «Ազատ օր», թիւ 6053, 20 Յունուար, 1965:

⁴ Տե՛ս «Ազգակ», թիւ 285 (8798), 4 Փետրուար, 1961:

⁵ «Ասպարէղ», թիւ 3833, Գլենդեյլ, 12 Փետրուար, 1960:

Հնդկաստանի, 2.420¹ Իտալիայի, 7.175² Իրանի բոլոր Հայկական դպրոցները և այլն¹: Մինչև 1976 թ. 20 երկրի 265 Հայկական վարժարանում սովորել և ավարտել է ավելի քան 70.000 «Կիլոպէնկեան» սան, որոնց Հիմնարկությունը Հատկացրել է 3.900.000 դոլարի կրթաթոշակ²:

Հայկական վարժարանների սաներին տրվող նպաստները, 1990-ական թվականներից սկսած, անհամեմատ աճեցին: Միայն 2002 և 2003 թթ. դրանք տարեկան կտրվածքով գերազանցեցին մեկուկես մլն. դոլարը, իսկ կրթաթոշակներից օգտվող աշակերտությունյան թիվը նախորդ տարիների համեմատությամբ Հասավ իր առավելագույն մեծությունը՝ 3.800³: Ուշադրություն է արժանի այն Հանգամանքը, որ Փինանսավորվել են բոլոր կարգի և ենթակայության կրթական հաստատությունները: Համասփյուռքյան ոչ մի բարեգործական կազմակերպություն չի ունեցել և չունի նման մոտեցում: «Ճինիչեան» բարեգործական հաստատության գործունեություն վերաբերյալ, օրինակ, «Ազդակը» 1972 թ. գրում էր. «...նկատի ունենալով, որ կրթաթոշակ տրամադրող Հիմնարկներ գոյություն ունին, Ճինիչեան Հիմնարկը նպաստի իրրեւ սկզբունք առած է ընկերային պայմաններու բարելաուամը»⁴: Իսկ 1950 թ. Լոս Անջելեսում Հիմնված Հայ կրթական Հիմնարկությունը 1970 թ. Հայտարարել էր, որ իր նպատակն է բարեսիրական գործունեություն ծավալել, իր իսկ ընդլայնված, «...Միացեալ Նահանգներու և այն երկիրներու մէջ, որոնք բարեկամ են Մ. Նահանգներու»⁵:

2006 թ. Հայկական վարժարանների սաներին տրված կրթաթոշակների ընդհանուր գումարը նախորդ տարվա համեմատությամբ զբաղեցրել է տասնութ տոկոս աճ: Աշխարհի շուրջ 20 երկրի 97

¹ Տե՛ս «Յուսարեր», թիւ 248, 22 Յունուար, 1960, «Արև», թիւ 12.503, 23 Յունուար, 1960:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, *Twenty years of activity, 1956-1976*, p. 6.

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 30, 39:

⁴ «Ազդակ», թիւ 198 (12375), 27 Հոկտեմբեր, 1972:

⁵ Նույն տեղում, թիւ 19 (11588), 26 Մարտ, 1970:

մանկապարտեզ, տարրական ու միջնակարգ դպրոց ստացել է 3.755 երևելայի Համար նախատեսված 1.453.014 եվրոյի նպաստ²: Խնդրո առարկա տարում Հիմնարկության Տնօրենների ժողովի Հատուկ ուշադրություն է հեռուրոնում են եղել Սիրիայի և Լիրանանի Հայկական կրթօջախները, քանդի արարա-իսրայելական բախում-ների սատոճառով մերձափորարեկյան տարածաշրջանը Հերթական անգամ Հայտնվել էր քաղաքական ու տնտեսական խոր ճգնաժամի մեջ, որի Հետևանքով կտրուկ բարձրացել էին նաև աշակերտներից դանձկոց ուսման վարձերը: Նշված երկրների Հայկական վարժա-րանների սաներին, Հայկական բաժանմունքի բոլոր ջեով նախա-տեսված 50 Հազ. դոլարից դատ, Հիմնարկության ղեկավարությունը Հատկացրել է նաև 200 Հազ. դոլարի կրթաթոշակ³:

1997-2006 թթ. ընթացքում 20-ից ավելի երկրում գործող շուրջ 180 Հայկական նախակրթարանի և վարժարանի ավելի քան 40 Հա-դար երևելա է արժանացել «Կիլլալէնկեան» սան լինելու պատվին, որոնց Համար կատարված ծախսերը գերադանցել են 17 մլն. դո-լարը⁴: Բարձր կրթաթոշակներ են տրվել ոչ միայն Սիրիայի ու Լիրանանի, այլև Հորդանանի, Կ. Պոլսի, Եգիպտոսի, Բուլղարիայի, Ռումինիայի, Սերբիայի և Կիպրոսի Հայկական վարժարանների սաներին⁵:

Համալսարանական կրթաթոշակներ

Հայ ուսանողներին Հատկացվող «Կիլլալէնկեան» կրթաթո-շակների ծրագիրը Հաստատվել է 1957 թ.: Մինչև 1962 թ. այդ ծրա-գրի շրջանակներում կատարվել է 555 Հազ. դոլարի Հատկացում⁶:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/07.pdf>, p. 22
(այցելությունը կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.):

² Նույն տեղում:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 1-39, գ. 3, թ. 3-24:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 19, գ. 3, թ. 11:

⁵ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 86.

Հետագայում աստիճանաբար ընդարձակվել են ինչպես Հիմնարկու թղթան կրթաթոշակների ծրագրի աշխարհագրական սահմաններն, այնպես էլ զրանից օգտվող ուսանողների անվանացանկերը: Եթե 1960-ին նպաստներ էին տրվել 14 երկրի 103 Հայ ուսանողի, ապա արդեն 1963 թ. ուսանողների թիվը կրկնապատկվել է՝ տարվա ավարտին Հասնելով 219-ի, որոնք ներկայացնում էին 17 երկիր¹: Համեմատական կարգով նշենք, որ այդ նույն տարիներին ՀԲԸ Միութունն ուներ 101-ից 103 թոշակընկալ սան²:

Հետաքրքրական և հիշատակելի է տարբեր երկրների Հայ ուսանողներին Հիմնարկութան ղեկավարութան, մասնավորապես՝ Գ. Եսայանի ու Ռ. Կյուլպենկյանի ներկայացրած պահանջը, որն անփոփոխ մնաց նաև Հետագայում՝ Մ. Եսայանի, Վ. Մավյանի և Ջ. Եկավյանի պաշտոնավարութան օրոք: Հատուկ շնչովում էր, որ «... Լիրանանի, Միաց. Արար. Հանրապետութեան, Իրաքի, Յորդանանի, Իրանի, Կիպրոսի և Թուրքիոյ թեկնածուներուն ոչ մէկ Համալսարանական փոխատուութիւն պիտի կատարուի եւրոպական և ամերիկեան Համալսարաններուն մէջ իրենց ուսումը շարունակելու Համար, ըստի այն պարագայէն ուր ընտրուած ուսումները անհրաժեշտ կը դարձնեն արձանագրութիւնը այս վերջին Հաստատութիւններուն մէջ: Այս պարագային, յարգելով Հանդերձ թեկնածուներուն նախընտրութիւնը, Հիմնարկութիւնը իրեն կը վերապահէ Համալսարանին ընտրութիւնը փոփոխութեան ենթարկել»³: 1963-1964 ուսումնական տարում «Կիւլպենկեան» կրթաթոշակներից օգտվող Համալսարանական ուսանողներից 83-ը Լիրանանից էին, 16-ը՝ Թուրքիայից, 26-ը՝

¹ Տե՛ս «Այլը», թիւ 52 (6564), 7 Մարտ, 1960, «Ազգակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964:

² Տե՛ս «Յառաջ», 37րդ տարի, թիւ 9077, նոր շրջան, 17րդ տարի, թիւ 4878, 13 Ապրիլ, 1961, «Այլ», թիւ 3341, 19 Ապրիլ, 1964:

³ «Յառաջ», 37րդ տարի, թիւ 9065, նոր շրջան, 17րդ տարի, թիւ 4866, 29 Մարտ, 1961:

Ֆրանսիայից, 22-ր՝ Միացյալ Նահանգներից, 11-ն՝ Անգլիայից, 10-ն՝ Ավստրիայից, 9-ր՝ Իտալիայից, 8-ր՝ Գերմանիայից, 7-ը՝ Սիբիրիայից, 7-ը՝ Բրազիլիայից, 6-ը՝ Հունաստանից, 4-ն՝ Իրանից, 4-ը՝ Եգիպտոսից, 3-ը՝ Կանադայից և մեկական մարդ Հայաստանից, Հորդանանից ու Արգենտինայից¹:

Կրթաթոշակների միջոցով փորձ էր արվում խրախուսել Հատկապես մանկավարժական կրթությունը: Հիմնարկություն դեկավարներն ընդգծում էին, որ «Ուսման բոլոր ճիւղերը ընդունելի են, բայց նախապատուութիւնը պիտի տրուի այն թեկնածուներուն որոնք կը փափարին պատրաստուիլ մանկավարժական ասպարէզին և յանձնառու կ'ըլլան պաշտոնավարելու Հայկական դպրոցներու մէջ»: Անշուշտ, պատահական չէր Հաստատություն դեկավարություն այդպիսի դիրքորոշումը, քանզի 1950-1960-ական թվականներին Սփյուռքի վարժարաններում առկա էր որակյալ մասնագետների պակասի խնդիր: «Հայ դպրոցը կը պարզուրի պատրաստուած ու նուիրեալ ուսուցիչներէ՝ բարոյական ու նիւթական զնահատանքի պակասէն,- գրում էր «Ջարթօնքն» ու ահագանգում,- ...նոր ուսուցիչներ խոյս կուտան կրթական ասպարէզէն, Հարկադրաբար, Հացի պայքարէն մտրակուած»²: Պետք է արձանագրել, որ անցած տարիների ընթացքում Հնարավոր չնկատված նականապես յուժեղ այդ խնդիրը ոչ միայն Սփյուռքի, այլև Հայաստանի կրթական Հաստատություններում³: Այսօր իսկ զգաստացնող են զեռ 1962 թ. «Ջարթօնքի» էջերում տպագրված տողերն առ այն, որ «Ազգային կազմակերպութիւններն ու կրթասէր բարերարները պէտք է յստակօրէն ըմբռնեն, որ Հայ ուսուցիչը - որ

¹ Տե՛ս «Ազգակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964, «Ազատ օր», թիւ 5767, 11 Փետրուար, 1964, «Այգ», թիւ 3312, 13 Փետրուար, 1964:

² «Յառաջ», 37րդ տարի, թիւ 9065, նոր շրջան, 17րդ տարի, թիւ 4866, 29 Մարտ, 1961:

³ «Ջարթօնք», 1962, Սևակմերեր, էջ 367:

⁴ Բացառություն կարող կարելի է տանաձայնել խորհրդային կրթական Համակարգը, որը կենսունակ գտնվեց 1960-1980-ական թվականներին Հազիմահաբելու ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի բաղձաթիվ կրթական Հաստատությունների առջև ծառայած նյութական գծավարությունների զերակլիո մասը:

ցեղին գոյատևման մեծագույն ազդակն է - սկստք ունի յուրջ ուշադրութեան և չնոգածութեան: Ազգային հսկայ գումարները ոչինչ կ'արժեն, երբ Հայ գրի ու Հայ ոգիի դարբինը խոտոված Հոգիով դպրոց կը մտնէ»¹:

Կար մեկ խնդիր ևս, որի լուծմամբ յրջորեն հետաքրքրված էին Ռ. Կյուլպենկյանն ու Գ. Նսայանը. խնդիր, որը ժամանակին հաճախ էր արծարծվում սփյուռքահայ մամուլում: Խոսքը բարձրագույն մասնագիտական կրթութիւն ստացած Հայ նոր սերունդների՝ «Հայկականութիւնից» հեռանալու և մեկուսանալու, ավելին՝ ձուլվելու վտանդի մասին էր: Պերդիդանի և Ռ. Կյուլպենկյանի ուշադրութիւնն այդ հարցի վրա հրավիրող «Աղատ օրը» նշում էր, թե «Հանրածանօթ իրողութիւն է, որ Սփյուռքի բոլոր գաղութներուն մէջ Համալսարանական նոր սերունդը կը Հետեի շահարեք, առատ վարձատրութիւն և հանդիստ կեանք խոստացող ասպարէզներու»²:

Հարկ է նշել, որ 20-րդ դարակեսին երկրորդական վարժարաններն ավարտելուց հետո սփյուռքահայ երիտասարդութեան ոչ փոքր զանգվածներ էին հետևում այնպիսի մասնագիտութիւնների, որոնք մամուլի ներկայացմամբ «...դոյն կապ և աղերս չունին Հայրենասիրական, գոյապահպանման նպատակներու հետ»³ և հաճախ պատճառ էին դառնում, որպեսզի Հայ շրջանավարտները Հայտնվեն ամբողջութեամբ օտար շրջանակներում, բարեկամական և ամուսնական նոր կապեր հաստատեն օտարների հետ՝ աստիճանաբար մոռացութեան տալով իրենց ծնունդ տվող ժողովրդին, որին ըստ «Աղատ օր» թերթի՝ «...կը պատկանին իրենց ցեղային, ժառանգական ընդունակութեանց հետ նաև այնքան ծախսալի համալսարանական կրթութիւնը»⁴: Հայկական գրեթե բոլոր համայնքներում, մասնավորապէս Ֆրանսիայում, Գերմանիայում և Ամերիկայում, 1960-1970-ական թվականներին ստեղծվել էր մի խափ, որին խորթ էր ազգային մտածելակերպը. Հայ համայնքների տարարնույթ, բազմաթիվ կարիքներին օգնութեան հասնելու ցան-

¹ «Զարթոնք», 1962, Սեպտեմբեր, էջ 367:

² «Աղատ օր». Թիւ 6478, 13 Յունիս, 1966:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

կույթունն ու շահագրգռությունը: «Հետաքրքրությունամբ նայեցէք ձեր շուրջը, - գրում էր «Ազատ օրը», - և անխուսափելիորէն պիտի տեսնէք, որ Հանրային օգնությունամբ ազատ ասպարէզի, դիրքի և Հարստութեան տիրացած մասնագէտներ կան, որոնք խուլ ու մունջ կը ձեւանան ազգային կոչերուն ու ձեռնարկներուն հանդէպ, և մեծամիտ ամբարտաւանությունամբ մը կը մերժեն տայ իրենց օգնությունը նոյնիսկ այն կրթական ու բարեգործական բնկերությունաց, որոնց նպաստընկալ ուսանողները եղած են իրենք»¹: Նույն թերթն այնուհետև մասնավորեցնում էր խնդիրը և ընդգծում, որ անհրաժեշտ է կրթաթոշակների ծրագիրն իրականացնել այնպիսի մեթոդներով, որպէսզի համալսարանավարտ «Գալուստ Կյուպենկյան» սաները չխուսափեն իրենց ժողովրդին ծառայելուց՝ իր խմբագրականն ավարտելով հետեյալ տողերով. «...յնուկով Հիմնարկութեան գործունէությունն վրայ, խորապէս կը Հաւատանք, որ կեղրոնական գործադիր մարմինը եթէ գրադի առաջադրուած հարցով, կրնայ գտնել լաւագոյն ձևն ու միջոցը, որպէսզի շրջանաւարտ սաները երբ գործի և Հարստութեան տիրանան, բարոյապէս թէ նկութապէս երախտահատոյց ըլլան Հայ ժողովուրդին և Հայ Հայրենիքին»²:

Հարցին գրեթէ նույն ոգով էր մոտենում «Արևը», երբ նշում էր, թէ կրթաթոշակների խնդիրն «...ամէն ժամանակ դրազեցուցած է արտասահմանի հայությունը»³: Թերթի Հաղորդամբ մամուլով ու բեմով բազմաթիվ մտավորականներ էին արտահայտվել այդ խնդրի վերաբերյալ: Ընդ որում, դիրքորոշումներն այդ հարցում եղել են հակոտնյա. ոմանք պաշտպանում էին այն Հայ ուսանողներին, ովքեր իրենց մասնագիտությունն ստանալուց հետո դրազված էին բացառապէս իրենց նեղ անձնական, կենցաղային խնդիրները լուծելով և օտար հասարակություններում փառքի ու ճանաչման հասնելու հարցերով: Այդ համատեքստում քննադատվում էին կրթաթոշակներ հատկացնող տարրեր բարեգործական կազմակերպություններ, որոնք Հայ ուսանողների առջև, բացի զերազանց սովորելու պահանջից, դնում էին այլ պայմաններ: Շեշտադրումը

¹ «Ազատ օր», թիւ 6478, 13 Յունիս, 1966:

² Նույն տեղում:

³ «Արև», թիւ 13.016, 26 Սեպտեմբեր, 1961:

կատարվում էր ուսումնատենչ Հայ երիտասարդների և աղջիկների կրթության ծախսերն առանց նախապայմանների Հոգալու անհրաժեշտության վրա: Այդ մոտեցմանը կտրուկ դեմ էր «Արևը», որը հայտնում էր, թե «...Պրիչներ ցառով դիտել տուած են այն ապերախտութիւնը, դոր շատ մը սաներ ցուցարերած են դիրենք նպաստաւորող Հաստատութեանց Հանդէպ: Եւ տարիներ շարունակ, ամէն անգամ որ խօսուած ու գրուած այս մասին, գրեթէ միևնոյն բաներն ասուած են, առանց որ այդ յեղյեղուող արտայայտութիւններն ունենան իրենց օգտակարութիւնը»¹: «Զարթօնքը» նույն խնդրի առնչությամբ նշում էր, որ Սփյուռքում Հայեցի դաստիարակության և կրթության Հանդէպ տիրող անտարբերությունն է պատճառ դառնում, որպէսզի Հայ Համալսարանավարտ սաները «...դառնան հսակեղրոն մտաւորականներ, օգտակար՝ միայն իրենց անձինն ու թերևս իրենց անմիջական շրջապատին»²:

Դժվար է, անուշտ, ասկ, թե ինչ ազդեցություն գործեցին սփյուռքահայ մամուլի անդրադարձները «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության վարիչների վրա, սակայն փաստ է, որ նրանք որդեգրեցին խնդրի լուծման միջին եղանակ՝ առանց պայմանի կրթաթոշակների գրությունը փոխարինելով բարձրագոյն ուսման փոխառվության գրությամբ³: Կրթաթոշակները Հայ ուսանողներին սկսեցին տրվել Հինգ տարվա ընթացքում վերադարձման սլայմանով, եթե վերջիններս իրենց ուսման ժամանակաշրջանի չափով չաշխատեին Հայկական կրթական կամ մշակութային Համապատասխան որևէ Հաստատությունում: Ծրագրի պատասխանատուները կարևորում էին այն հանգամանքը, որ կրթաթոշակները Հայ երիտասարդներին հատկացվում էին որպէս փոխառվություն: Այն երիտասարդներն, ովքեր Հիմնարկության տնօրինությանն էին ներկայացնում նշված կազմակերպություններում իրենց աշխատանքային փորձը Հաստատող Հիմնավոր փաստաթղթեր կամ Հավաստիացումներ՝ ազատվում էին վերոհիշյալ գումարի մարման պարտականությունից⁴:

¹ «Արև», թիւ 13.016, 26 Սեպտեմբեր, 1961:

² «Զարթօնք», 1962, Սեպտեմբեր, էջ 367-368:

³ Տե՛ս «Արև», թիւ 13.016, 26 Սեպտեմբեր, 1961:

⁴ Տե՛ս նույն տեղում, նաև՝ «Յատաջ», 37րդ տարի, թիւ 9065, նոր շրջան, 17րդ տարի, թիւ 4866, 29 Մարտ, 1961:

«Արևուր» գտնում էր, որ նշված պայմանը կամ Հայ ուսանողներին տարրերը բարեկարգածական կազմակերպությունների կողմից հասկացվող դրամական նպաստների ծրագրի բարեփոխումը նախ. «...կրնայ սան-սանու հին դպրոցները թէ՛ իր պարտաւորութիւնները լոկ բարոյական չեն, այլ նաև նիւթական: Այսպէսով, մեր յառաջիկայ սերունդներուն սորվեցուցած կ'ըլլանք թէ իրենց եղած նիւթական զոհողութիւնները զիրենք ձրիակերներ դարձնելու մտքով չեն ըլլար, այլ ուսման շրջանէն անմիջապէս ետք՝ նիւթական պարտաւորութեանց լուծին վարժեցնելու նպատակով», ապա՝ «...փոխատուութիւնը կը դառնայ նուէր, երբ ուսումնաւարտ ուսանողն ի վիճակի կ'ըլլայ ներկայացնելու վաւերագիր մը, ըստ որուն կը պաշտօնավարէ Հայկական կրթական Հաստատութեան մը մէջ»¹: Նման որոշման կողմնակից թերթը Հուլիս էր Հայտնում, որ. «...այդ կանոնագրութեան տառն ու ոգին կարելի ըլլայ պահպանել ընդմիջտ, որպէսզի նուազի թիւը ապերախտ սան-սանուհիներու որոնք, Հայուն դրամով դարգացում ստանալէ ետք, Հայուն չեն ուղած ծառայել օր մը անգամ: Լիայոյս ենք որ այդ կանոնագրութեան հարազատ գործադրութեամբ, աւելի մեծ թիւով Հայ երկսեռ երիտասարդներ կարելիութիւն պիտի ունենան օգտուելու, քանի որ նպաստաւորուողը, ինքը եւս, օգնած պիտի ըլլայ իր կարգին ուրիշներու, այլասիրութեան զեղեցիկ օրինակ մը ցուցարեւելով: Լիայոյս ենք նաև, որ Հայկական կրթական Հաստատութեանց ծառայելու պատրաստակամութիւնն այ պիտի մեծնայ, հետեւաբար Հոն նոր ոյժերուն բերած նպաստը մեծապէս պիտի գնահատուի»²:

Պարզութիւնը, որով վերոհիշյալ նորութիւնները ներկայացվեցին Սփյուռքի լայն հանրութեանը, ակներև էր ու տպավորիչ: Շոշափված հարցերի վերաբերյալ արտահայտվել էին Հայկական բարեկարգածական այլ Հաստատութիւնների վարիչներ եւս, սակայն նրանք հստակորեն չէին բանաձևել իրենց կրթաթոշակների ծրագրի պահանջներն ու նպատակներն, ինչպես դա արեց «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկութեան բարձրագույն ղեկավարութիւնը: Պատահական չէր ՀԲԸ Միութեան ներկայացուցիչների մտահոգութիւնն առ այն, որ պետք է. «Փնտռել ու քննել թէ ինչու՞ ուսուց-

¹ «Արև», թիւ 13.016, 26 Սեպտեմբեր, 1961:

² Նույն տեղում:

չական ասպարէզը պարապ է: Ի՞նչ կ'ըլլան տարիներ շարունակ Միութեան նպատներով ուսանած երիտասարդները»¹:

Հետագա տարիներն ապացուցեցին, որ Հիմնարկութեան բոլոր Հայադղի դեկավարներն անխտիր անհանգստացած և շահագրգռված էին ոչ միայն աճող Հայ նոր սերունդների որակյալ բարձրագույն մասնագիտական կրթութեան, այլև նրանց աղգային դիմագիծը պահպանելու և սեփական ժողովրդի ճակատագրին տեր կանգնելու գիտակցութեան ձևավորման խնդրով: Նրանք իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան բազմաթիվ Հայ երիտասարդների ապագայի կերտման գործում և նմանատիպ մեթոդներով զորացրին Հայ Համայնքների դիրքերն իրենց ընդունող Հասարակութուններում: Հիշարժան է, որ Վ. Մավյանը նույնպես իր ուսանողական տարիներին օգտվել է Հիմնարկութեան կրթամթոշակներից²:

Հայկական բաժանմունքի բոլոր պատասխանատուները, վարիչներն ու տնօրենները մանրակրկիտ քննութեան էին ենթարկում աշխարհի տարբեր ծայրերից Լիսաբոնում Հավաքվող կրթամթոշակների դիմումները և կրթման անհատական, խոշոր դրամական պարգևներով ևն փորձել խրախուսել այն ուսանողներին, ովքեր ուսման մեջ գրանցել էին գերազանց առաջադիմութուն: Որպես նման պարգևի օրինակ կարելի է հիշատակել 1961 թ. Բրազիլիայի Հայկական բարձրագույն կրթութեան Հանձնաժողովի միջոցով 2.500 դոլարի փոխանցումը բրազիլահայ մի ուսանողի³: Հիմնարկութեան Տնօրենների ժողովն իր այդ քայլը պարգարանում էր հետևյալ ձևով. «Այս յատկացումը որ ներկայիս մէկ տարուան և մէկ անգամուան Համար կատարուած է և փորձառական Հանգամանք ունի, պիտի տրուի թեկնածուի մը որ փայլուն յաջողութեամբ աւարտած է Համալսարանական ուսումը և կը փափաքի կատարելագործել իր մասնագիտութիւնը»⁴:

Հիշատակութեան արժանի է նաև Լիսաբոնի ֆիզիկական կրթութեան աղգային ինստիտուտում 12 Հայ երիտասարդի ուսման տալու Հիմնարկութեան նախաձեռնութունը, որի Համար կատար-

¹ «Խթան», թիւ 79, 8 նոյեմբեր, 1956:

² Տե՛ս «Արև», թիւ 12,631, 26 Յունիս, 1960:

³ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 83.

⁴ «Արև», թիւ 13,004, 12 Ապրտեմբեր, 1961:

վել էր 56 Հադ. դոյարի Հատկացում¹: Հայկական բաժանմունքը նույնիսկ հրատարակել էր այդ երիտասարդների անունները՝ Պետիկ Վարժապետյան, Հրաչ Տեր-Սարգսյան, Արա Գյուլյան, Վարդգես Էսքիրաշյան, Արիս Գլղաղյան, Սարգիս Զեյթունցյան և ուրիշներ, որոնք պարտավորվել էին իրենց ստացած գիտելիքներն ի սպաս դնել Հայ մանուկների և պատանիների ֆիզիկական կրթությանն ու դաստիարակությանը²: Նրանք ընտրվել էին Հայ մարմնամարզական ընդհանուր միություն (ՀՄԸՄ)՝ Ալեքսանդրիայի, Հայ երիտասարդաց ընկերակցություն (ՀԵԸ)՝ Հայկալի և Բեյրութի մասնաճյուղերից³: Հիշյալ ծրագրի մանրամասների վերաբերյալ ուշագրավ հաղորդման ենք հանդիպում «Արևի» էջերում, որտեղ կարևորվում էր Հայ մարդիչներ պատրաստելու խնդիրը: «Բոլորս ալ համողուած ենք թէ այլևս Հայ երիտասարդին մարզական կրթութիւնը անհրաժեշտ է և օգտակար,- գրում էր թերթը,- Մեր երկիրներուն մէջ տեղի ունեցած տարեկան ողիմպիականներն ու մարզահանդէսները արդեօք ի՞նչ չափով քաջայլեր հանդիսացած են և կը հանդիսանան մարզական շարժումներուն: Արդեօք որևէ լայնածաւալ շարժում մը ստեղծա՞ծ է: Փորթուկայցիներու նման ունեցա՞ծ ենք մարզական բարձր մակարդակի հասած երիտասարդութիւն մը, ինչպէս նաև մարմնակրթանքի և մարդիչութեան մասնայատուկ հաստատութիւններ: Ունեցա՞ծ ենք, Ողբ. Յակոբ Աճէմնանէն դատ, Հայ երիտասարդին մարմնակրթանքին համար իսկապէս գոհուած Հայ մարդիչներ...Մարդիչ ըլլալու համար Լիդպոնի մէջ չորս տարի ուսանի՞լ...: Որքան տարօրինակ թուեցաւ մեզի առաջին առթիւ երբ լսեցինք լուրը...Սակայն, այսօր հեռու ենք այդ ծիծաղելի մտածումէն, քանի կը տեսնենք թէ «մարդիչ» կոչուելու տիտղոսը այնքան ալ դիւրին չէ ձեռք բերել»⁴:

Հարկ է շեշտել, որ սփյուռքահայութեան կյանքում իր տեսակի մեջ եղակիներից համարվող այս ձևոնարկումը մեծարժեք էր, երբ նկատի ենք ունենում այն փաստը, որ հայկական վարժարաններում

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 84.

² Տե՛ս «Արև», թիւ 12.816, 30 Յունուար, 1961, Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, Twenty years of activity, 1956-1976, p. 7.

³ Տե՛ս «Արև», թիւ 12.816, 30 Յունուար, 1961:

⁴ Նույն տեղում:

անհրաժեշտ քանակությամբ դասաժամեր չէին հատկացվում երև-
խաների ֆիզիկական դաստիարակությանն, իսկ սպորտային «..ա-
կումբները պետք եղած կերպով...» ի վիճակի չէին քաջալերելու հայ
մարդիկներին հաջողությունները¹:

Հայկական բաժանմունքի գործունեություն 20-ամյա հորեյանի
առիթով Հիմնարկություն հրատարակած փոքրածավալ գրքույկ-
տեղեկագիրը հետաքրքրական տվյալներ է պարունակում մինչև
1975 թ. Հայ ուսանողներին հատկացված կրթաթոշակների ընդհա-
նուր գումարի մասին: Ըստ այդմ, եթե կրթաթոշակների ծրագրի
մեկնարկի ժամանակ՝ 1957 թ., «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնար-
կության համալսարանական թոշակընկալ սաների թիվը կազմում
էր 27, իսկ կատարված հատկացումների ծավալը՝ շուրջ 45 հազ.
դոլար, ապա 1975-1976 ուսումնական տարեշրջանում նշված գու-
մարն ավելացել է գրեթե տասն անգամ՝ հասնելով 400 հազ. դոլա-
րի, որից օգտվել է աշխարհի տարբեր երկրների 169 համալսարա-
նում ուսանող 558 հայ երիտասարդ²: Նույն տեղեկագրի համա-
ձայն՝ 1957-1976 թթ. ընթացքում կրթաթոշակների ծրագրին տրա-
մադրված 6.080.000 դոլարից շահած հայ ուսանողների թիվը կազ-
մել է 3.500³:

Համալսարանական կրթաթոշակներին հատկացվող միջոց-
ների աճը շարունակվեց 2. Եկավյանի պաշտոնավարություն ըն-
թացքում, որում տեսանելի էր վերջինիս խաղացած նշանակալի
ղերը: 1995-ից մինչև 2006 թվականն ընկած ժամանակահատ-
վածում Հիշյալ նպատակներով կատարված հատկացումները շոշա-
փելիորեն գերազանցեցին նախորդ տասնամյակների ցուցանիշ-
ներին՝ հնարավորություն ընձևոնելով ավելի մեծ թվով ուսանողների
ներգրավվելու այս ծրագրում: Նշված տարիներին ավելի քան 5
հազար ուսանողի տրվել է շուրջ տասը մլն. դոլարի կրթաթոշակ⁴:
Այդ երիտասարդներն ընտրվել էին Սիրիայից, Լիբանանից,

¹ Տե՛ս «Արև», թիւ 12.816, 30 Յունուար, 1961:

² Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, *Twenty years of activity, 1956-1976*, p. 8, նաև՝ «Արև», թիւ 11.831, 12 Նոյեմբեր, 1957, ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, 4. 564, թ. 1-2:

³ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, *Twenty years of activity, 1956-1976*, p. 8.

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, 4. 2, թ. 1-5, 13-39, 4. 3, թ. 12-24:

Թուրքիայից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Գերմանիայից, Պորտուգալիայից, Կանադայից, ԱՄՆ-ից, Բրազիլիայից և այլ (ԹՎՈՎ շուրջ 30) երկրներից¹: Զուգահեռաբար անհրաժեշտ է նշել, որ 1980-ականների վերջերից մեծացավ ծրագրի մեջ ընդգրկված Հայաստանի քաղաքացիների թիվը, որը խոսում է Հայկական Բաժանմունքի տնօրենի անմիջական շահագրգռվածության և անշահախնդիր կեցվածքի մասին՝ օգնելու ոչ միայն Հայաստանում ուսանող, միջոցներից դուրկ երիտասարդներին, այլև նրանց հնարավորություն տալ ուսումը շարունակելու աշխարհի հոչակավոր զիտական կաճառներում: Վերն արդեն նշվեց, օրինակ, որ 1963-1964 ուսումնական տարվա ընթացքում կրթաթոշակ էր Հատկացվել Հայաստանի ընդամենը մեկ քաղաքացու, իսկ 1968 թ. Երևանի պետական համալսարանի չրջանավարտներին և երիտասարդ զիտնականներին եվրոպական համալսարաններում ու զիտական այլ հաստատություններում վերապատրաստվելու նպատակով Հատկացված կրթաթոշակների թիվը կազմում էր 5²: 1995 թ. Հայաստանից մեկնած և արտերկրում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության միջոցներով սովորող քաղաքացիների թիվը Հասել էր 43-ի, իսկ 1996-ին՝ 50-ի³: Աճի այս միտումը շարունակվեց նաև Հետագայում:

Կրթաթոշակներ և նպաստներ դպրեվանքերի ուսանողներին, Հայ մանկավարժներին ու գիտնականներին

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության կրթաթոշակների ծրագրի բաղկացուցիչ մասն էին կազմում հոգևոր ճանարանների և դպրեվանքերի ուսանողների օգտին կատարված Հատկացումներն ու նպաստները: Հիմնարկության՝ 1960 թ. տեղեկագրի մեջ այդ առիթով կարդում ենք. «Հայկական ուսումնարաններու օժանդա-

¹ Տե՛ս նույն տեղում, նաև՝ <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/07.pdf>, pp. 22-23 [այցելությունը կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.]:

² Տե՛ս «Աղդակ», թիւ 281 (9721), 11 Փետրուար, 1964, «Ազատ օր», թիւ 5767, 11 Փետրուար, 1964:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 1-4:

կուլթեան ընդհանուր ծրագրին մէջ և իրենց կոչումին արժանի կրօնական պաշտօնականներու պատրաստութեան նպաստելու նպատակով Հիմնարկութեանս Վարչ. Ժողովը որոշեց հաստատել կրթաթոշակներ յօգուտ դպրեմանքերու, առանց յարանուական խտրութեան»¹: Առաջին հատկացումները կատարվեցին էջմիածնի և Անթիլիասի դպրեմանքերին, որից օգտվեց 10 ուսանող²: Կարճ ժամանակ անց Հիմնարկութեան Տնօրենների Ժողովն ընդարձակեց ոչ միայն նպաստընկալ դպրեմանքերի ցանկն, այլև զգալիորեն ավելացրեց կրթաթոշակների ծավալները: 1961 թ. կրթաթոշակներ տրվեցին Երուսաղեմի «ժառանգավորաց» (10 հազ. դոլար), Կ. Պոլսի Սուրբ Ոսկ (10 հազ. դոլար), Մխիթարյանների՝ Վենետիկի (6 հազ. դոլար), Վիեննայի (6 հազ. դոլար) դպրեմանքերի, Բեյրութի Հայ կաթողիկէ միաբանութեան Զմմաոի (4 հազ. դոլար) ընծայարանի և Հայ Աւետարանական Աստուածարանական վարժարանի (4 հազ. դոլար) ուսանողներին³:

Նշված հոգևոր-կրթական հաստատութիւնների մեծ մասի ուսանողները հետագա տարիներին շարունակեցին պարբերաբար օգտվել «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան կրթաթոշակների ծրագրից, բացառութեամբ 2002 թ., երբ էջմիածնի, Անթիլիասի և Երուսաղեմի դպրեմանքերը դուրս մնացին ծրագրից Հայկական բաժանմունքի սահմանափակ միջոցների պատճառով: Հավելենք, որ այդ նույն տարում Հիմնարկութիւնը կրճատել էր տարրեր երկրներում իրականացվող ծրագրերի ծավալը, քանզի ունեցել էր եկամուտների չափ ցածր ցուցանիշ՝ կապված նավթի և արժեթղթերի համաշխարհային շուկայում տեղի ունեցող զործրեթացների հետ:

Տարբեր տարիների ընթացքում դպրեմանքերին և ճեմարաններին կրթաթոշակների նպատակով «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան հատկացրած միջոցները չգերազանցեցին 150 հազ. դոլարը, իսկ նպաստառու ուսանողների թիվը տատանվում էր 30-50-ի միջև: Համեմատաբար մեծագումար հատկացումներն այս նպատակով կատարվել են 2000 թ.՝ 135 հազ. դոլար, որից օգտվել

¹ «Ազգակ», թիւ 285 (8798), 4 Փետրուար, 1961:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Արև», թիւ 13.004, 12 Սեպտեմբեր, 1961:

է Էջմիածնի, Անթիլիասի, Երուսաղեմի, Ջամատի, Վենետիկի և Վիեննայի դպրեվանքերի 45 ուսանող¹:

Անվտխարինելի էր Հիմնարկութեան՝ Հայ մանկավարժներին և զիտնականներին ցուցարեւած օգնութիւնն ու աջակցութիւնը: Այդ մարդկանց Համար չէին կատարվում լոկ Հատկացումներ, այլ եվրոպական երկրների Համապատասխան կենտրոններում կազմակերպվում էին վերապատրաստման դասընթացներ, ճիգեր էին գործադրվում՝ նրանց մասնակից դարձնելու միջազգային զիտաժողովների ու խորհրդաժողովների, զրամական շոշափելի պարզւնների միջոցով երախտիքի խոսք էր ասվում կրթութեանն ու գիտութեանը նրանց մատուցած արժեքավոր ծառայութիւնները Համար և այլն:

Յիշարժան ձեռնարկում է Սիրիայի և Լիբանանի Հայկական վարժարանների 19 տնօրնի և 40 մանկավարժի՝ Սևրում (Ֆրանսիա) Մանկավարժական միջազգային կենտրոնի՝ 1960-1965 թթ. ընթացքում կազմակերպած վերապատրաստման ամառային դասընթացների մասնակցութիւնը²: Անգլիայում Հայ ուսուցիչների Համար նմանատիպ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու նպատակով Հիմնարկութիւնը Համազործակցում էր «Բրիտանական խորհուրդներ» (British Councils) կազմակերպութեան Հետ³: Ռ. Կյուլպենկյանի և Գ. Եսայանի նախաձեռնութեամբ ու Հոգաժութեամբ 1960 թ. ամռան ընթացքում փորձնական կարգով Բելյուրթի «Նշան Փալանճեան» ճեմարանից, Հայ Աւետարանական և «Երուսաղ Տեմիրճեան» վարժարաններից վերապատրաստման նպատակով մասնագետներ զորժուղվելիցն Անգլիա (յուրաքանչյուր Հաստատութիւնից մեկ մարդ)⁴: Ձեռնարկման Հաջողութեան մասին է խոսում այն փաստը, որ 1963-1965 թթ. Հիշյալ նպատակով Հայկական լատանմունքի ղեկավարութիւնը կատարեց ավելի խոշոր Հատկացում՝ 40.414 դոլար⁵: Ծոշափելի էր Հիմնարկութեան

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 19:

² Տե՛ս «Ազատ օր», թիւ 6054, 20 Յունուար, 1965, «Ազգակ», թիւ 285 (8798), 4 Փետրուար, 1961, «Արև», թիւ 13.004, 12 Սեպտեմբեր, 1961, թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962, ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 1, թ. 1-4, դ. 2, թ. 1-4:

³ Տե՛ս «Արև», թիւ 12.504, 25 Յունուար, 1960:

⁴ Տե՛ս «Ասպարէզ», թիւ 3833, 9 Փետրուար, 1960:

⁵ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 94.

ղեկավարների աջակցությունը Թրքահայ Ուսուցչաց Միություններ, որի շնորհիվ բազմաթիվ ուսուցիչներ և դաստիարակներ էին կարողանում մասնակցել պետական վկայականներ ստանալու նպատակով Կ. Պոլսում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին¹:

Հայ մանկավարժներին ու գիտնականներին, սակայն, ղգայի չափերով խրախուսական պարգևներ սկսեցին տրվել 1990-ականների վերջերից: Միայն 1998-2006 թթ. ընթացքում Հիմնարկությունը դրամաշնորհներից օգտվել են Հայաստանի և Մերձավոր Արևելքի երկրների 600-ից ավելի գիտնականներ, մանկավարժներ ու մտավորականներ, որոնց ցուցարկոված օգնությունը գերադանցել է երկու մլն. դոլարը²: Ուշադրություն կենտրոնում էր պահվում, Հատկապես, Հայաստանի գիտնականների և մտավորականների կենսապայմանների բարելավման խնդիրը: Հայկական բաժանմունքի տեղեկագրերից մեկում այդ առիթով շեշտված է, որ «Չնայած Հայաստանում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական նոր դժվարությունները Հաճախ պատճառ են դառնում մեծ չափերով արտագաղթի, գիտական ներուժը, սակայն, պետք է քաջալերված լինի մնալու երկրում»³: Այդ նպատակով 1998 թ., օրինակ, դրամաշնորհներ արվեցին Երևանի պետական Համալսարանի 158 և Գիտությունների ակադեմիայի 27 գիտնականի: Հատկապես ընդհանուր գումարը կազմում էր 113.250 դոլար⁴: Պետք է ընդգծել, որ Հայաստանի անկախությունից Հետո երկրի մտավոր ու գիտական ներուժին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունից ցուցարկած օգնությունը գերազանցապես Մ. Եսայանի, Զ. Եկալյանի և Ա. Չամբերթենի ջանքերի արդյունք էր:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 5, թ. 1-3: Նշված աջակցությունն արժեքավոր է, Հատկապես, այն առումով, որ Թուրքիայի կառավարությունը 1960-ական թվականներին ուսուցիչներին արգելել էր առանց վերապատրաստման և ատեստավորման պետական վկայականների դասավանդել դպրոցներում, որն ավելի էր ծանրացրել մանկավարժների կարիք ունեցող Կ. Պոլսի Հայկական վարժարանների վիճակը:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 13-43, գ. 3, թ. 13-24, նաև՝ <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/07.pdf>, pp. 23-26 [այցելությունը կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.]:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 8, նաև՝ <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/07.pdf>, p. 23 [այցելությունը կայք էջ կատարվել է 07.08.2008 թ.]

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 13:

2.3. Աջակցություն Հայկական Հոգևոր Հաստատություններին

Այս ենթագլխի շարադրանքը նպատակահարմար է սկսել էջմիածնի Մայր տաճարի նորոգման նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոսությունն արված 400 Հաղ. դոլարի նվիրատվությունից¹: Այդ գումարը նախատեսված էր Գ. Կյուլպենկյանի կտակով, որտեղ, մասնավորապես, ասված էր. «Կտակարարը (Գ. Կյուլպենկյանը՝ Վ. Ղ.) ցանկացել է իր ծնողների հիշատակը հավերժացնելու նպատակով իր կենդանության օրոք Հատկացում կատարել էջմիածնի տաճարի վերանորոգման աշխատանքների համար: Տեղական պայմաններն ու տարրեր բարդություններ խոչընդոտել են այդ ծրագրի իրականացմանը: Այդ պատճառով կտակարարը ցանկանում է, որպեսզի իր հավատարմատարները վերոհիշյալ նպատակի իրականացման համար նախատեսեն երեք հարյուրից չորս հարյուր հազար դոլարի գումար: Նա ցանկանում է, որպեսզի այդ գումարը, տեղական պայմանները բարելավվելուն պես, օգտագործվի նորին Սրբ. Օծուխյուն կաթողիկոսի համաձայնությունով: Սակայն կտակարարն ընդգծում է, որ ոչինչ չպետք է ձեռնարկվի նախքան նորին Սրբ. Օծուխյան և խորհրդային կառավարություն (Հայաստանի՝ Վ. Ղ.) միջև համաձայնության կայացումն ու վերջինիս կողմից պարտավորություն ստանձնումն առ այն, որ կտակարարի կողմից նվիրված դրամական միջոցներն ամբողջությամբ և բացառապես պետք է ծառայեն տաճարի վերանորոգմանը: Մինչև օրս Հնարավոր չի եղել ձեռք բերել որևէ նման համաձայնագիր կամ պարտավորություն: Այդ կապակցությամբ հավատարմատարները պետք է կատարեն Հաշվետվություն ճշգրիտ վերստուգում և անհրաժեշտության դեպքում ճարտարապետ ուղարկեն աշխատանքների վայր»²:

1957 թ. Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը Հայտարարեցին, որ

¹ Լ. Բալազյանը նշում է, որ Ամենայն Հայոց կաթողիկոսությանը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը մինչև 1960 թ. հատկացրել է 2.800.425 դոլար (տե՛ս Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 174), որը չի համապատասխանում իրականությունը:

² Azeredo de Perdigo J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 200-201, Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, Twenty years of activity, 1956-1976, p.12.

«...բարեբարին (Գ. Կյուպենկյանի՝ Վ. Ղ.) կտակին մասնաւոր պահանջին համաձայն, երեք հարիւր հազարէն մինչև չորս հարիւր հազար տոլար պիտի յատկացուի Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ Մայր Տաճարին, Ս. Էջմիածնայ վերանորոգման և բարեկաման համար: Կը յուսացուի մօտ օրերս պատգամաորութիւն մը զրկել Ս. Էջմիածին, խորհրդակցելու համար Վեհափառ Հայրապետին հետ, և տեղւոյն վրայ ուսումնասիրելու պէտքերը և զանոնք տեղեկագրելու Կեդրոնական Խնամակալութեան»¹:

Այդ պատվիրակութունը, որը բաղկացած էր հիմնարկութեան ներկայացուցիչներ՝ Փարիզի պետական համալսարանի դասախոս, ճարտարապետ էդուարդ Ութուջյանից և Լոնդոնի համալսարանի դասախոս, պրոֆեսոր Սիդնի Քեյնից, 1957 թ. օգոստոսին ժամանեց Հայաստան²: Պատվիրակութեան անդամները հանդիպումներ ունեցան Հայոց կաթողիկոսի հետ, որից հետո կազմեցին և հիմնարկութեան Տնօրենների ժողովին ներկայացրին Մայր տաճարին նվիրված ընդարձակ տեղեկագիր և նորոգման ծախսերի նախահաշիվ³: Հիմնարկութեան բարձրագույն ղեկավարութեան որոշմամբ կտակով նախատեսված գումարն սկսեց մաս առ մաս փոխանցվել Էջմիածնին: Այդ մասին Հաստատութեան՝ 1958 թ. տեղեկագրում նշված է. «Սուրբ Էջմիածինէն իրենց վերադարձին, Սրբ Սիտնի Քեյնի և Պ. Է. Իւթիւճեանի միասնաբար ներկայացուցած տեղեկագիրը լիովին ուսումնասիրուեցաւ: Էջմիածինէն ստացուած տեղեկագիրներու և նախահաշիւներու լոյսին տակ, ութսուն հազար և յիսուն հազար տոլարի փոխանցումներ տեղի ունեցան 1958 Մայիս և Սեպտեմբեր ամիսներուն: Յաւելուածական փոխանցումներ, կախնալ նմանօրինակ տեղեկագիրներու և նախահաշիւներու ստացումին պիտի կատարուին Հետզհետէ»⁴: 1959-ի Հունիսին կաթողիկոսութեանը տրվեց ևս 50 հազ. դոլար և կատարված փոխան-

¹ «Ազգակ», թիւ 60 (7500), 9 Մայիս, 1957:

² Տե՛ս «Ալիք», թիւ 249 (5890), 14 Նոյեմբեր, 1957:

³ Տե՛ս նույն տեղում, նաև՝ «Յառաջ», 34րդ տարի. թիւ 8331, նոր շրջան, 14րդ տարի, թիւ 4132, 29 Հոկտեմբեր, 1958, «Նթան», թիւ 117, 5 Սեպտեմբեր, 1957:

⁴ «Յառաջ», 34րդ տարի, թիւ 8331, նոր շրջան, 14րդ տարի, թիւ 4132, 28 Հոկտեմբեր, 1958:

ցումների ընդհանուր գումարը կազմեց 180 Հադ.¹: Նույն թվականի Հոկտեմբերին Պերդիդանն ու Ռ. Կյուլպենկյանը է. Ութուջանին կրկին գործուղեցին էջմիածին «...քննելու Համար կատարած նորոգութիւնները և անոնց մասին Վարչութեանս ուղղած տեղեկագիրը պատրաստելու Համար»²:

Հիշարժան է, որ Գ. Կյուլպենկյանն Ամենայն Հայոց կաթողիկոսութեանն ղգալի նյութական միջոցներ (150 Հադ. դուար) նվիրարեւելու ցանկություն էր Հայտնել ղեռուս 1947 թ.³: Նա ՀԲԸ Միութեան միջոցով առաջարկել էր Հայաստանի կառավարութեանն իր Հետ կնքել Համաձայնագիր, որն իշխանությունները մերժել էին⁴: Դժոգակով Հաշվետվութուն ներկայացնելու Գ. Կյուլպենկյանի պահանջից՝ Հայաստանի Նախարարների խորհուրդը Հայտնում էր ՀԲԸ Միութեան ներկայացուցիչ Ա. Գարակոյանին, թե կառավարութունը չի կարող սլայմանագրեր կնքել անհատների Հետ և «...տաճարի վերանորոգման Համար կառավարութեան կողմից սլայմանագիր ստորագրելը կնշանակեր Հայ Եկեղեցու սուվերեն իրավունքներու խախտում»⁵: Իսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Վեցերորդը փորձում էր Համոզել Գ. Կյուլպենկյանին, որ Հատկացվող գումարն առանց Հայաստանի իշխանությունների Հետ Համաձայնագրի էլ կարող էր ծառայել իր նպատակին: Նա առաջարկում էր նվիրատուի գլխավորութեամբ ստեղծել Հանձնաժողով, որի կազմի մեջ կմտնեին ՄԼԾի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքներն ու Հոգևոր թեմերի առաջնորդները⁶: Գ. Կյուլպենկյանը, սակայն, Հետաձգեց նվիրատվութեան մասին իր որոշման ի կատար ածումը. «...Ես չեմ որ մտափոխ եղած եմ,- Վ. Մայեղյանին Հասցեագրած իր նամակում շեշտում էր բարերարը,- այլ ակնյայտ է Երևանի կառավարութեան Վոլթ-Ֆասը, որով Երևանին վերագրելի է դրժումը: Ինձի Համար անկարելի է ընել որևէ բան, որքան չունիմ Երևանի կառավարու-

¹ Տե՛ս «Արիք», թիւ 20 (6532), 26 Յունուար, 1960:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Արև», թիւ 11.212, 29 Հոկտեմբեր, 1955:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Մեղքոնյան է., ՀԲԸ Միությունը... էջ 116-117, տե՛ս նաև «Արև», թիւ 11.214, 1 Նոյեմբեր, 1955, Ստեփանյանց Ս., նշվ. աշխ., էջ 202, ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 211, թ. 37:

⁶ Տե՛ս «Արև», թիւ 11.214, 1 Նոյեմբեր, 1955:

Թեան յանձնառութիւնը, յստակ, վճիտ և «business-like» (գործնական): Անցեալի փորձառութիւններս, զոր զուք շատ լաւ գիտէք, ինծի զգուշաւորութիւն կը պարտադրեն, և չեմ ուզեր ենթարկուիլ անհաճոյ կնճռոտութիւններու, մանաւանդ որ ոչ միջոցը ունիմ, ոչ ժամանակը և ոչ ալ առողջութիւնը, այդ խոչընդոտները հարթելու համար: Զեր առաջարկը, որ Վեհ. Կաթողիկոսը զնէ անհրաժեշտ շինանիւթերը 100.000 տոլարի, և մնացեալն ալ յատկացնէ բանուորներուն իրր աշխատավարձ, ինծի լաւ կը թուի, բայց համոզուած եմ, որ մէկ կողմանէ ցոյց տրուած բարի կամեցողութեան պակասը տեղի պիտի տայ չփոթութեան և դժուարութեանց»¹:

Կաթողիկոսին Գ. Կյուլպենկյանը պատրաստակամություն էր հայտնում ցանկացած ժամանակ կյանքի կոչել իր որոշումը, և թե կառավարութեան կողմից տրվելը զումարը նպատակային ձևով ծախսելու երաշխիք՝ գրելով, որ «Ոչինչ ինծի պիտի առթէ աւելի մեծ գոհունակութիւն մը քան առաջադրուած ձեռնարկին իրականացումը: Սակայն նախնապէս, շատ կը վախնամ, նկատի ունենալով անցեալի փորձառութիւնս, որ այս ծրագրին գործնական մասը բախի դժուարութեանց և չփոթութեան, մանաւանդ որ չեմ կրնար հասկնալ, թէ ինչու Երևանի Պատուարժան կառավարութիւնը չի յօժարիր հաստատել համաձայնութիւն մը զոր իրեն հետ համախոհարար կարգադրած է Հ.Բ.Ը. Միութիւնը: Անձնապէս, և ամէն ժամանակ, յոյժ բարեկամական յարաբերութիւններ ունեցած եմ պետական իշխանութեանց հետ, որով խորունկ է զարմանքս, տեսնելով, որ կը մերժեն ստորագրել երկուստեք ընդունուած համաձայնագիր մը, որ էսպէս բարեսիրական հանգամանք ունի: Այս կէտը ընականարար շուարումի և վարանումի մատնած է զիս, և արդէն սովորութիւն չունիմ քայլ մը առնելու ցորքան գործի մը լիակատար յաջողութիւնը երաշխաւորուած չեմ տեսներ»²:

Թեև Գ. Կյուլպենկյանի հարաբերությունները չլսողացին Հայաստանի կառավարութեան հետ, սակայն դադարեցվեցին թղթակցությունները: Իշխանություններն անզրդվելի էին՝ բարերարի հետ ստորագրելու խնդրո առարկա համաձայնագիրը, իսկ Գ. Կյուլպենկյանն էլ սպասում էր ավելի նպատատալոր ժամանակների և

¹ Տե՛ս «Արև», թիւ 11.220, 8 նոյեմբեր, 1955:

² Նույն տեղում:

նշում, որ ոչ հեռավոր ապագայում հնարավոր կլինի իրականացնել Մայր տաճարին կատարվելիք իր նվիրատուությունների ցանկում¹։ Տարիները, սակայն, անցան առանց շոշափելի արդյունքների։

1954 թ. մայիսին մահացավ Գևորգ Վեցերորդը, իսկ նորրևտիք կաթողիկոս Վազգեն Առաջինը շտապեց նամակներ ուղարկել Գ. Եսայանին ու Վ. Մայեղյանին և խնդրել նրանց լուրջ անհանգստություն, շահագրգռություն ցուցարևրել հարցի շուտափույթ, դրական լուծման համար²։ Գ. Եսայանին կաթողիկոսը ներկայացրել էր 15 կետից բաղկացած ծրագիր, որով նախատեսված էր վերանորոգել ոչ միայն Մայր տաճարն, այլև նրան հարակից եկեղեցական շինությունները³։ Վ. Մայեղյանն արդարացիորեն շեշտում էր, որ անհրաժեշտ է «...նպաստաւոր շուտափույթ հետևանք տալ ն. Վեհափառութեան անձկագին խնդրանքին, կտակային տրամադրութեանց յայնախոհ գործադրութեամբ իսկ, յայտարարելով որ այս դժբախտ գործը արդէն շուրջ տասր տարիներ ձեծուած է, և հիմա ժամանակը եկած է որ հարցը իր բարեբաւտիկ լուծումը գտնէ»⁴։

1960 թ. Վազգեն Առաջինն այցելեց Լիւսարոն, հանդիպումներ ունեցավ Պերդիգանի, Գ. Եսայանի և Ռ. Կյուլպենկյանի հետ՝ նրանց ներկայացնելով տաճարի վերանորոգման իր նոր ծրագիրն ու նախահաշիվը։ Հիմնարկություն դեկավարությունն այդ կապակցությունամբ հայտնում էր, որ «Պատասխանելով Կեղր. Վարչութեանս հրաւերին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա բարեհաճեցաւ այցելել Հիմնարկութեանս, ի Լիդպոնա, ընկերակցութեամբ իր հետեւորդներուն, Վրաստանի Առաջնորդ Տ. Կոմիտաս Եպիսկ. Տէր Ստեփանեանի, Գաւազանակիր Տ. Եղիշէ Վրդ. Սարգիսեանի և Հոգևոր Խորհուրդի քարտուղար Պ. Հայկ Առաքելեանի»⁵։ Այցի ընթացքում տեղի ունեցած բանակցությունները բավական հաջող ելք են ունեցել, որի մասին տեղեկանում ենք հենց հաստատություն դեկավարություն հաղորդագրությունից, որտեղ, մասնավորապես, ասված էր հետևյալը. «Առկախ և գործադրութեան

¹ Տե՛ս «Արև», թիւ 11.220, 8 Նոյեմբեր, 1955:

² Տե՛ս նույն տեղում, թիւ 11.630, 15 Մարտ, 1957:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ «Յատաջ», 36րդ տարի, թիւ 8911, նոր չրջան, 16րդ տարի, թիւ 4712, 28 Սեպտեմբեր, 1960:

վրայ եղող զանազան ծրագիրներ քննուեցան Հասկացողութեան և գործակցութեան բարձր ոգիով մը»¹:

Վաղգեն Առաջինի Հետ ռանակցություններից Հետո մինչև 1962 թ. Հիմնարկության՝ Ամենայն Հայոց կաթողիկոսությանը փոխանցած գումարը կազմեց 270 Հազ. դոլար²: Տաճարի վերանորոգմանը Հետևելու նպատակով Հաստատության Տնօրենների ժողովը շարունակում էր Հայաստան գործուղել է. Ութուջյանին և Ս. Քեյնին³: Աշխատանքներն ավարտվեցին 1964 թ., որը Համընկավ Հայոց կաթողիկոսի գահակալության 10-րդ տարեդարձի Հետ: Այդ առիթով Հայաստանում կազմակերպված տոնակատարություններին Վաղգեն Առաջինի հրավերով մասնակցեցին նաև Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը⁴:

Ամենայն Հայոց կաթողիկոսության Հետ Հայկական բաժանմունքի գործակցությունը շարունակվեց և ավելի խորացավ Վ. Մավյանի գործունեության ընթացքում: «Գևորգյան» ճեմարանի սաներին Հատկացված կրթաթոշակներից և կաթողիկոսության Համար ձեռք բերված Հայագիտական գրականությունից դատ, Հիմնարկությունը շարունակել է իր աջակցությունը Մայր տաճարի և նրան Հարակից շինությունների նորոգման ծրագրերին: 1974 թ. Ռ. Կյուլպենկյանի և Վ. Մավյանի ջանքերով Հայկական բաժանմունքը 50 Հազ. դոլարի ներդրումով մասնակցեց Ղազարապատ շենքի Հարևանությամբ նոր, երկհարկանի շենքի շինարարության աշխատանքներին⁵:

Հիմնարկության ղեկավարությունն ու Հայկական ծրագրերի պատասխանատուները բազմիցս Հայտարարել էին, որ պատրաստվում են լուրջ աջակցություն ցուցաբերել նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանն ու նրա թեմերին, Հայ կաթողիկ և ավետարանական եկեղեցիներին, նրանց այլազան միավորումներին ու կազմակերպություններին: Հաստատության տեսուչներն ընդգծում էին,

¹ «Ազգակ», թիւ 286 (8799), 6 Փետրուար, 1961:

² Տե՛ս Azebedo de Perdigao J., Chairman's Report II, 1st January-31st December 1962, p. 173.

³ Տե՛ս «Արև», թիւ 12.520, 12 Փետրուար, 1960:

⁴ Տե՛ս Azebedo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 173, Գալլաքյան Կ., Հուշապատում, էջ 90:

⁵ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 875, ց. 6, գ. 564, թ. 1-2:

որ. «Մասնաւոր ուշադրութեան առարկայ են Հայ եկեղեցիներու և դպրոցներու կարիքները Մերձաւոր Արեւելքի մէջ: Նմանապէս Փարիզի և Ֆրանսայի այլ քաղաքներուն մէջ: Նաև Երուսաղէմի և Իսթանպուլի Հայ Առաքելական Պատրիարքութեանց կարիքները, ի մասնաւորի, եկեղեցիներու և դպրոցներու համար»¹:

1958 թվականից Երուսաղէմի Հայոց պատրիարքարանն սկսեց օգտվել Հիմնարկութեան նպաստներից: Մինչև 1962 թ. այս պատրիարքարանին տրվել է շուրջ 600 Հազ. դոլարի գումար, որը ծառայել է Երուսաղէմի Սուրբ Հարութեան տաճարի, Սուրբ Հակոբյանց վանքի վերանորոգմանն ու կարիքավոր Հայերին կացարաններով ապահովելու ծրագրերին²: Հարկ է նշել, որ Ս. Հարութեան տաճարի վերանորոգման նպատակով անհրաժեշտ միջոցների գոյացման համար Հայութեանը հատուկ կոչով դիմել էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը՝ կարեւորելով, որ «...խրաբանչիւր Հայ, կրօնական թէ աշխարհական, պարտին միացնել իրենց ոյժերը, որպէսզի Երուսաղէմի Աթոռը կարենայ ի կատար ածել իր պարտականութիւնները Սուրբ Յարութեան Տաճարէն ներս ընթացող նորոգութեանց գործերուն մէջ»³: Այդ կոչին առաջինն արձագանքողներից էր «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունն ի ղեմս իր Տնօրենների ժողովի նախագահի, Հայազգի տեսուչների և աշխատակիցների: Նվիրատվություններ և Հատկացումներ կատարեցին նաև ՀԲԸ Միությունը, «Հոռարդ Գարակէօղևան» բարեգործական Հաստատությունը, Հայ բարերարներ, կաղմակերպություններ և այլն: 1976 թ., երբ ծագել էր Ս. Հարութեան տաճարի գմբեթի նորոգման խնդիրը, Հիմնարկությունը կրկին ստանձնեց ընդհանուր ծախսերի՝ Հայոց պատրիարքարանին բաժին ընկած գումարի մեկ երրորդը՝ կատարելով 100 Հազ. դոլարի նվիրատվություն⁴: 1978-1980 թթ. կատարվեց ևս 180 Հազ. դոլարի Հատկա-

¹ «Ազդակ», Թիւ 60 (7500), 9 Մայիս, 1957:

² Sև'ս Azeredo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 173, Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 79, 82, 127. «Խլթան», Թիւ 172, 30 Հոկտեմբեր 1958, «Արև», Թիւ 12.504, 25 Յունուար, 1960, Թիւ 13.347, 29 Հոկտեմբեր, 1962:

³ Զամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպենկյաններ, էջ 120:

⁴ Sև'ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, դ. 117, թ. 2:

ցում¹: Հարկ է նշել, որ տաճարի հայկական մասի վերանորոգման համար, որը տևեց շուրջ քսան տարի (1961-1980 թթ.), ծախսված ավելի քան երեք մլն. դոլարից 480 հազ. տրամադրել էր «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը: Ծուրջ 700 հազ. դոլար հատկացվել էր տարրեր հայկական համայնքների և կազմակերպությունների կողմից²: Հատկանշական է, որ վերանորոգման աշխատանքները տեղում ղեկավարում էր հիմնարկության ներկայացուցիչը՝ է. Ութուջանը, որի գործընկերներն էին շինությունների լատին և հունական մասերի նորոգման պատասխանատուներ, ճարտարապետներ Ժան Թրուվոն և Անաստաս Օրլանտոսը³: Ա. Չամբերթենը տեղեկացնում է, որ «Բսան տարիներու ընթացքին ան (է. Ութուջանը՝ Վ. Ղ.) 25 անգամներ ճամրած է Փարիզ-Երուսաղէմ-Լիզպոն»⁴:

Երուսաղէմի Հայոց պատրիարքությունը հատկացվում էին ոչ միայն նյութական միջոցներ, այլև նրա հետ հաստատվել էր սերտ գործակցություն, որի շնորհիվ Պերդիգանն ու Ռ. Կյուլպենկյանը կարողացան ղրաղվել արարա-խորայնական պատերազմի պատճառով դադարակալ և անօթեան դարձած հայերի ճակատագրով՝ ձեռնամուխ լինելով նրանց համար բնակարանների շինարարությունն ու բազմաթիվ կարիքների լուծմանը: «Դժուարին օրեր էին, կարողում ենք Ա. Չամբերթենի գրքում, - մանաւանդ երբ աչքի առաջ ունենանք տարածաշրջանի (մերձավորարևելյան՝ Վ. Ղ.) քաղաքական լարուած վիճակը: ...\$ 33,000 Ամերիկեան Տոլար վճարուած էր Կիւլպէնկեան Հիմնարկին կողմէ (Երուսաղէմի Հայոց պատրիարքարանին՝ Վ. Ղ.) 1960-1961 տարուան ընթացքին հետևեալ խորագրին տակ. «Պատասպարանք և Մարդասիրական Ծրագիրներ»: 1967 Յունիսին ծայր կ'առնէր Վեցօրեայ Պատերազմը (արարա-խորայնական՝ Վ. Ղ.) և Պատրիարքարանը անգամ մը եւս կ'ենթարկուէր նիւթական ծանր կացութեան, և դարձեալ Հիմնարկն էր («Գալուստ Կյուլպենկյան»՝ Վ. Ղ.), որ կը հասնէր օգնութեան»⁵: Հետագա տարիներին համագործակցությունը «Գալուստ Կյուլ-

¹ Տե՛ս Չամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 143:

² Տե՛ս նույն տեղում, նաև՝ «Մարմարա», 10 Դեկտեմբեր, 1965:

³ Տե՛ս Չամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 120:

⁴ Նույն տեղում, էջ 143:

⁵ Նույն տեղում, էջ 103:

պենկյան» Հիմնարկության և Երուսաղեմի Հայոց պատրիարքության միջև ավելի ամրապնդվեց ու խորացավ, որը շարունակվում է առ այսօր: Այդ մասին են վկայում կողմերի միջև տեղի ունեցած բազմաթիվ փոխայցելությունները: Վերն արդեն հիշված՝ 1957 թ. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան Հիմնարկության ղեկավար գործիչների առաջին այցելությունը Հաջորդեցին Ռիտա Կյուլպենկյան-Եսայանի (Գ. Կյուլպենկյանի դստեր) և նրա որդի Մ. Եսայանի՝ 1961, Պերդիգանի, Ռ. Կյուլպենկյանի՝ 1963, 1964 թթ. այցելություններն ու հանդիպումները Հայոց պատրիարքի և միաբանություն անդամների հետ¹: 1965 և 1976 թթ. Հիմնարկության ղեկավարների հրավերով Լիսաբոն է մեկնել Երուսաղեմի Եղիշ արքեպիսկոպոս Տերտերյան պատրիարքը²: Այդ շփումների շնորհիվ ապահովվեց ոչ միայն Ս. Հարությունյան տաճարի վերանորոգման համար անհրաժեշտ գումարների մի ստվար մասն, այլև իրականացվեցին Երուսաղեմի Ժառանգավորաց և Սրբոց Թարգմանչաց Հայկական վարժարանների հիմնանորոգման, նոր դասասնյակների կառուցման, դրանք նորագույն տեխնիկայով վերադիման աշխատանքներն, իսկ 1985 թ. 50 հազ. դոլար հատկացվեց Հրեշտակապետաց եկեղեցու նորոգությունը³:

Երուսաղեմում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության և նրա Հայկական բաժանմունքի աշխատակիցների հատուկ ուշադրություն կենտրոնում է եղել Հայոց պատրիարքարանի «Գալուստ Կյուլպենկյան» զբաղարանը, որտեղ պահվում է շուրջ 150.000 գիրք, 4.000 ձեռագիր մատյան, 4.000 արխիվային փաստաթուղթ և այլն⁴: Պետք է նշել, ի դեպ, որ ձեռագրերի ցուցակը հրատարակվել է Հիմնարկության միջոցներով⁵: Հայոց պատրիարքարանի այս զբաղարանին Գ. Կյուլպենկյանն իր կենդանության օրոք հատկաց-

¹ Տե՛ս Զամբերթեն Ա., Երուսաղեմ և Կիւլպենկեաններ, էջ 104-117:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 146-147, 152-155:

⁴ Տե՛ս <http://www.armenian-patriarchate.org/page11.html> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.], Զամբերթեն Ա., Երուսաղեմ և Կիւլպենկեաններ, էջ 87-91, Գալաթյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 208:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 7-15, նաև՝ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր արք. Պողոսեան, Երուսաղեմ, Հտ. 1-5, 1966-1971:

նում էր տարեկան նպաստներ, որոնք նրա ցանկությամբ շարունակվեցին նաև Հետագայում: Քարերարի կտակում նույնիսկ հատուկ՝ տասներկուերորդ կետով ամրագրված էր այդ ցանկությունը, որն ի կատար է ածվել նրա կտակակատարների ու Հիմնարկությունից Տնօրենների ժողովի կողմից¹: Երբ լրացավ «Գալուստ Կյուլպենկյան» զրազարանի հիմնադրման 70-ամյակը, Մ. Եսայանի և Զ. Եկավյանի նախաձեռնությամբ մասնաշնչքը հիմնանորոգվեց և վերադրվեց նորագույն տեխնոլոգիաներով²:

Գալով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հիմնարկության հատկացրած նպաստների հարցին՝ հարկ է շատ հակիրճ անդրադառնալ մեկ խնդրի: 1956 թ. Հայ եկեղեցու պառակտման պատճառով դժվար կացություն էր ստեղծվել նաև «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Տնօրենների ժողովի և Հայկական ծրագրերի պատասխանատուների համար, որոնք հետևում էին սկսված եկեղեցական-քաղաքական պայքարին ու ղեպքերի դարձացմանը: Հաստատությունից դեկավարները որոշեցին 1958 թ. նպաստներ չհատկացնել Հիշյալ կաթողիկոսությունը, Հայ օգնությունից միությունը և որոշ այլ կազմակերպությունների՝ սպասելով Սփյուռքում ստեղծված քառասյին իրավիճակի կարգավորմանն ու կողմերի քաղաքական դիրքորոշումների հստակեցմանը³: Այդ քայլով նրանք Հայ քաղաքական ուժերին պարզորեն հասկացրին նաև, որ չեն ցանկանում, որպեսզի Հիմնարկության անունը որևէ ձևով Հոլովի Սփյուռքում և Հայաստանում տեղի ունեցող քաղա-

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, p. 196.

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 7-15, **Չամբերթեն Ա.**, Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 91:

³ Հայտնի է, որ Հայ առաքելական եկեղեցու պառակտման արդյունքում Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ մինչ այդ գտնվող բազմաթիվ թեմեր սկսեցին ընդունել Անթիլիասի կաթողիկոսական աթոռի գերակայությունը: Ստեղծված իրավիճակը բարդություններ էր ստեղծում նաև եկեղեցական թեմերի տնօրինության տակ գտնվող բազմաթիվ Հոգևոր-մշակութային կազմակերպությունների և ազգային կրթօջախների համար, որոնք նույնպես Հայտնվել էին բարիկաղների հակառակ կողմերում: Հունաստանի Հայկական դպրոցների օրինակով արդեն խոսվել է եկեղեցական-քաղաքական պայքարի բացասական հետևանքների մասին (տե՛ս նաև Գալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, էջ 151-155):

քական իրադարձությունների համատեքստում: Դժվար էր, իհարկե, այս պայմաններում խուսափել սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների քննադատություններից, որոնցով, մասնավորապես, զրադվեցին «Արևն» ու ՀՀԴ-ի օրգան «Յուսարերը»: Վերջինս, օրինակ, դժգոհելով, որ Հիմնարկության՝ 1958 թ. նպաստառուների ցանկում չեն հայտնվել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ու Հայ օգնության միությունը, գրում էր. «...Արդևօք պատուարժան խնամակալությունը ազդուած է օրուան վէճերէն եւ որոշ զի՞րք բռնած... կ'ուղէինք գիտնալ, թէ կա՞յ պատճառ մը, որ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը վերապահ կամ անտարբեր դարձուցած է այս հաստատութեանց հանդէպ»: Այնուհետև բացահայտ խանդով, որն առաջացել էր Հիմնարկության և ՀԲԸ Միության միջև հաստատված համագործակցությունից, «Յուսարերը» շարունակում էր. «Տարակոյս չկայ, որ Կիւլպէնկեան Հիմնարկութեան խնամակալութիւնը, մեծ մասով օտարներէ բաղկացած, ունի իր խորհրդականները: Այս խորհրդականներուն մէջ Բարեգործականը դեր մը ունի՞ թէ չունի: Ունի՞նք դեր մը Բարեգործականի «որդեգիր»-ները, խայտարղէտ գործիչներն ու գործակալները, թէ չունին: Ապահովարար ունին դեր մը եւ, կարելի է կասկածիլ, բացասական դեր մը: Պիտի զգուշացնէինք խնամակալութիւնը այդ պղտոր աղբիւրէն ջուր խմելէ, եթե կ'ուղէ առողջ մնալ ու շահիլ Հայ ժողովուրդի համակրանքն ու վստահութիւնը»²:

Սփյուռքում 1950-ականների վերջերից սրված ներքաղաքական պայքարի և կողմերի՝ միմյանց անխնա քննադատելու, մերժողականության ծանր մթնոլորտում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը չխառնվեց հայկական համայնքների ներքին վեճերին՝ իր կեցվածքով միմյանց նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելու օրինակներ ցուցաբերելով: Այս հաստատությունն իր հատկացումներում երբևէ և որևէ ձևով խտրականություն չզրկեց հայկական կաղմակերպությունների միջև, իսկ նրա ղեկավարները միշտ սթափ և ըմբռնումով մոտեցան իրենց հասցեին հնչած քննադատություններին: Հետագա տասնամյակների ընթացքում ոչ միայն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հայտնվեց հաս-

¹ «Յուսարեր», թիւ 67, 19 Յունիս, 1959:

² նույն տեղում:

տատուիթյան նվիրատուիթյունների տեղեկագրերում, այլև բազմաթիվ ու բազմարևույթ այլ հոգևոր, մշակութային և գիտական կազմակերպություններ: Թե՛ Դերզիզանը, թե՛ Գ. Եսայանն անտեղյակ չէին Լիրանանում տեղի ունեցող իրադարձությունների ու եկեղեցական տազնասպին: Ավելին, 1957 թ. նրանք այցելել էին Անթիլիաս և տեսակցություն ունեցել Զարեհ Ա կաթողիկոսի, իսկ այնուհետև Լիրանանի Հայոց առաջնորդ Գերշ. Տ. Սորեն արքեպիսկոպոս Բարոյանի, Դրան եպիսկոպոս Գերշ. Տ. Արտակ Սրբազան Մանուկյանի, պետական երեսփոխաններ Մովսես Տեր-Գալստյանի, Տիգրան Թոսպաթի և այլոց հետ¹: Հիմնարկության ղեկավարները Հաշվի նստեցին կատարվածի հետ և ձևոնպահ մնացին Հայոց եկեղեցու պառակտմանը քաղաքական գնահատականներ տալուց:

Հայոց հոգևոր Հաստատությունների Համար «Գալուստ կյուլպենկյան» հիմնարկության ամենից արժեքավոր ձևոնարկումը տպարաններ հիմնելն ու դրանք նորագույն սարքավորումներով դինելն էր, որը հնարավորություն տվեց Սվյուռքում դարկ տալու տպագրության գործին: «Քաջալերված են մասնաւորապէս եկեղեցապատկան տպարանները,- գրում էր «Ազատ օրը», - զանոնք օժտելով արդիական մեքենաներով»²: 1960-1962 թթ. ընթացքում տողաչար մեքենաներ նվիրվեցին Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանին, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանություններին: Այդ Հատկացումների ընդհանուր գումարը կազմել է 81,792 դոլար³: Հիշյալ Հաստատություններն, ըստ Պերզիզանի, ակտիվ հրատարակչական գործունեություն էին ծավալում կրթական և գիտական ոլորտներում, որն էլ առիթ տվեց հիմնարկության ղեկավարությանը՝ ստանձնելու նրանց տպարանների հովանավորությունը⁴: Ա. Չամքերթեանը, Երուսաղեմի Հայկական տպարանի օրինակով կարևորելով հրատարակչական գործը, նշում է, որ «...19-րդ և 20-րդ դարու չհրա-

¹ Տե՛ս «Ասպարեզ», թիւ 3257, 2 Յուլիս, 1957:

² «Ազատ օր», թիւ 6478, 13 Յունիս, 1966:

³ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 82-85.

⁴ Տե՛ս Azeredo de Perdigao J., Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 175.

տարակուած հեղինակները վերջապէս կ'արժանանային տպագրութեան, նման Պետրոս Գուրեանի և Թէոդիկի»¹:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութեանը Հատկացված միջոցները Հիմնականում նպատակաուղղվել են նրա զրադարանի և այլ շէնքերի նորոգմանը, գործող դպրեմանքի ու վարժարանների տարատեսակ կարիքների բավարարմանը և այլն: Այս կաթողիկոսութեան Համար մեծ նշանակութիւն ունեցավ 1967 թ. «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան մասնակցութիւնը կաթողիկոսարանի նոր տպարանի կառուցմանը: Պակաս կարևոր չէր նաև Հիմնարկութեան միջոցներով (150 Հազ. դոլար) 2002 թ. կաթողիկոսարանի արխիվային մասնաշէնքի վերանորոգումը, որտեղ պահվում են օսմանյան տիրապետութեան, ֆրանսիական մանդատի ժամանակաշրջանի և Գ. Կյուլպենկյանի գործունեութեանը վերաբերող կարևոր փաստաթղթեր²:

Գերազանցապես շինարարական և շէնքային պայմանների բարելավման, նոր գույքի ու տեխնիկայի ձեռքբերման նպատակով Հիմնարկութեան մեծագումար նպաստներից պարբերաբար օգտվել են նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, Իրաքի Հայոց թեմի առաջնորդարանը (ենթարկվում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին) և Ազգային կենտրոնական վարչութիւնը, ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդարանը, Մխիթարյան միարանութիւնը, Հայ ավետարանական եկեղեցին, Բեյրութի Հայ կաթողիկոսութեանն ու նրա Զմմառի վանքը:

2.4. Առողջապահական և խնամատարական ծրագրեր

Բավականին շոշափելի է Հիմնարկութեան՝ Հայկական առողջապահական Հաստատութիւններին ու բուժհիմնարկներին ցուցարներած օժանդակութիւնը: Բժշկական սարքավորումներ ու զեղորայք են տրվել ինչպիսի Սփյուռքի, այնպես էլ Հայաստանի հիվանդանոցներին և բժշկական գիտահետազոտական կենտրոններ-

¹ Զամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 76:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 4, թ. 1-3, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 30-36:

րին: Բացի այդ, Հայաստանի բժիշկներն ու գիտնականները Հնարավորութուն են ստացել իրենց պորտուգալացի գործընկերների հետ Հետազոտություններ կատարել Լիսաբոնի «Գալուստ Կյուլպենկյան» գիտությունների ինստիտուտում: Տարիների ընթացքում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ենթակայությունում գործող բժշկական և գիտական կենտրոնների գիտաշխատողները սերտորեն գործակցել են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի մանրէակենսաբանություն ինստիտուտի հետ: 1999 թ. 1?5 Հազ. դոլար է տրամադրվել Փարիզի Գրետեյլ հիվանդանոցի և Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Համատեղ իրականացվող գենետիկայի լաբորատորիայի ստեղծման ծրագրին¹: Հիշարժան է նաև 2002 թ. քաղցկեղի դեմ պայքարին սատարելու նպատակով Հայկական բաժանմունքի 9.476 եվրոյի նպաստը ժնևի առողջապահական կենտրոնների Հետազոտական լաբորատորիաներին²: Հատկացումը նպատակաուղղված էր Ջորջ Մանուկյանի Հետազոտությունների խթանմանը, որոնք միտված էին չարորակ ուռուցքի կանխարգելմանը և իրականացվում էին Կիպրոսի «Հերակլիոն» Համալսարանի աջակցությամբ³:

1950-ականների վերջերից Հատկացումներ են արվել Բաղդադի, Բեյրութի, Կ. Պոլսի, Երուսաղեմի և այլ քաղաքների Հայկական բուժհաստատություններին ու կազմակերպություններին: Թանկարժեք բժշկական գործիքներ ու սարքավորումներ են ստացել Բեյրութի Ադունիս, Սպահանի (Իրան) Ֆերեյդան հիվանդանոցները, Մարսելի (Ֆրանսիա) «Հայ Երիտասարդաց», Թեհրանի (Իրան) «Հայ Համալսարանավարտների» ընկերակցությունները, «Հոուարդ Գարակեօղևան» բարեգործական Հաստատությունը, Իրաքի չքավոր Հայերի առողջապահության Հարցերով զբաղվող կազմակերպությունները և այլն⁴:

Մեծածախալ և արժեքավոր Հատկացումները, սակայն, առա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 15:

² Տե՛ս նույն տեղում, թ. 30-36:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, pp. 80, 87, Grants 1963-1965, pp. 89-98.

վելապես կատարվել են Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ Հայկական Հիվանդանոցին: Վերջինս, որ այսօր համարվում է Սփյուռքի առողջապահական հաստատություններից ամենահինն ու հռչակավորը, անգնահատելի ծառայություններ է մատուցում ոչ միայն տեղի Հայ Համայնքին, այլև հարևան երկրներից բուժման նպատակներով Կ. Պոլիս ժամանող Հայերին: Հարկ է նշել, որ Սուրբ Փրկիչ Հիվանդանոցին զգալի նյութական միջոցներ են հատկացրել ու հովանավորել նաև Գ. Կյուլպենկյանի ծնողները:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հիմնադրման առաջին իսկ օրերից Պերդիգանի և Ռ. Կյուլպենկյանի զլխավորությամբ հաճախակի այցեր են կատարվել Կ. Պոլսի՝ նշված Հայկական Հիվանդանոց: Նպատակը՝ առկա խնդիրների տեղում ուսումնասիրությունն էր: Սկզբնական շրջանում Սուրբ Փրկիչ Հիվանդանոցին տարեկան նպաստներ հատկացնելու Հիմնարկության ղեկավարությունը որոշումները խարսխված էին Գ. Կյուլպենկյանի կտակի տասներկուերորդ կետի վրա: Հետագայում, երբ կտակարարի ցանկությամբ Հիվանդանոցին փոխանցվեցին Կ. Պոլսի իր սեփականությունը Հանդիսացող Սելամետ-Հան շենքերը, Հիմնարկության Տնօրենների ժողովն, ի դեմս Պերդիգանի, իր հատկացումներն այս հաստատությունը պայմանավորեց այն հանգամանքով, որ «...[Ե]րովանդակ Եւրոպայի, [Ե] Միջին Արևելքի Հայկական Հաստատություններու շարքին մէջ Ս. Փ. (Սուրբ Փրկիչ՝ Վ. Ղ.) Հիւանդանոցը լաւագոյնն է ամէն տեսակէտով ևւ կրնայ օրինակ Հանդիսանալ միւսներուն»¹:

1957 թ. մայիսի 17-ին Կ. Պոլիս այցելության ընթացքում Պերդիգանը, Ռ. Կյուլպենկյանն ու Դոմինգոս դը Սուդան Հանդիպում են ունեցել նաև Ս. Փրկիչ Հիվանդանոցի տնօրինության և աշխատակազմի հետ: Հանդիպման ընթացքում Պերդիգանը ներկաներին փոխանցել է, որ այս բուժհիմնարկին «Գալուստ Կյուլպենկյան» Հաստատության ցուցաբերած օգնությունը շարունակվելու է նաև հետագայում²:

¹ Քէօսէեան Վ., նշվ. աշխ., էջ 209, տե՛ս նաև Azeredo de Perdigao J., *Chairman's Report, 20th July 1955-31st December 1959*, pp. 196-197.

² Տե՛ս Քէօսէեան Վ., նշվ. աշխ., էջ 209:

Հիվանդանոցի Համար կատարված առաջին Հատկացումներով զնվեցին ունեցողների ապարատ, միջուկային գործիքներ և լաբորատոր սարքավորումներ¹: 1959-ից մինչև 1965 թվականը Հիմնարկության՝ Ս. Փրկչին արած նպաստները գերազանցեցին 100 Հազ. դոլարը²: Տարեցտարի ավելացնելով Հիվանդանոցին տրվող միջոցների ծավալը՝ Վ. Մավյանի պաշտոնավարության ընթացքում Հիմնարկության ղեկավարությունը դրանք Հասցրեց տարեկան մոտ 50.000 դոլարի³: Պետք է ընդգծել, որ այս գործչի շնորհիվ Ս. Փրկչի Հիվանդանոցը մշտապես իր թիկունքում զգացել է «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության և նրա Հայկական բաժանմունքի շունչը: Վ. Մավյանը Հաճախ է այցելել այդ Հիվանդանոց, շփումներ ունեցել նրա Հոգաբարձուների խորհրդի անդամների և բուժանձնակազմների հետ: Վարուժան Բյուսեյանը նշում է, որ. «Ս. Փ. Հիվանդանոցը միշտ Կիւլպէնկեան Հիմնարկի մասնաւոր հետաքրքրութեան ու հոգածութեան արժանացած է: Ներկայացուցիչները, ղանազան առիթներով Հաստատութեան այցելութիւններ տուած են ու կուտան: Այս կարգէն էր Կիւլպէնկեան Հիմնարկի Հայկական բաժնի վարիչներէն Պրն. Վահրամ Մավեանի 27 Մարտ 1978-ին տուած այցելութիւնը», որի ընթացքում նա «...տեղեկութիւններ ստացաւ. Հաստատութեան կացութեան ու կարիքներուն մասին, ապա խմբովին շրջագայեցան Հիւանդանոցը: Հիւրը, տիրող կանոնաւորութեան և աչքառու մաքրութեան Համար իր շնորհաւորութիւնները յայտնեց ու գոհ տպաւորութեամբ մեկնեցաւ»⁴:

Ս. Փրկչի Հիվանդանոցի Հովանավորության ծրագիրը որակական ու ծավալային փոփոխությունների ենթարկվեց Չ. Եկավյանի ղեկավարության շրջանում և շնորհիվ: Այդ փոփոխությունները տեսանկյունի դարձնելու համար նշենք միայն, որ 1998 թ. Հիվանդանոցին Հատկացված միջոցները կազմել են 210 Հազ. դոլար, որով Հիմնվել և բուժսարքավորումներով զինվել է Հաստատության նոր

¹ *Sl'u Calouste Gulbenkian Foundation, Grants, 1956-1962, p. 80, Grants, 1963-1965, p. 90.*

² *Տե՛ս նույն տեղում:*

³ *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 4, թ. 1-3, ց. 7, թ. 1-3, ց. 6, դ. 614, թ. 1-3:*

⁴ *Քէօսէեան Վ., նշվ. աշխ., էջ 295:*

վիրահատարանը¹: 2002 թ. աշնանը Հայկական բաժանմունքի տնօրենի նախաձեռնությամբ Հիմնարկության աշխատակիցներն ուղևորվել են Ստամբուլ, այցելել Ս. Փրկիչ Հիվանդանոց, որից հետո առողջապահական այդ Հիմնարկին բժշկական գործիքներ զննելու նպատակով Հատկացվել է 109.993 Լվրո: Հիվանդանոցին նույնքան գումար էլ Հատկացրել է Լոնդոնի Սուրբ Սարգիս բարեգործական կազմակերպությունը²:

4. Պոլսում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության կողմից առողջապահական Հաստատություններին արված նպաստների Հասցեատերերի շարքում էր նաև Հայ կաթոլիկ Համայնքի Սուրբ Յակոբ Հիվանդանոցը, որին ղգալի նյութական աջակցություն է ցուցաբերվել 1967 թ.: Հատկացված միջոցներով Հիմնվել ու կահավորվել է Հիվանդանոցի ռենտգենյան բաժանմունքը³:

Սովորածավալ էին Հիմնարկության Հատկացումները Հայաստանի առողջապահական Հաստատություններին, որոնք 1964 թվականից ի վեր պարբերաբար ստացել են թանկարժեք բուժսարքավորումներ: Հետաքրքրական է իմանալ, որ երբև՛ն Հայաստանի բուժհիմնարկներն անակնկալի էին գալիս՝ կապված նվիրված տեխնիկայի՝ ԽՍՀՄ արտադրության սարքավորումների Համեմատ ավելի որակյալ և շինություններին անհամապատասխան լինելու փաստի Հետ: 1969 թ., օրինակ, Արովյանի թոքախտաբանության ինստիտուտի ղեկավարությունը խնդրեց Ռ. Կյուլպենկյանին, որպեսզի վերջինս իրենց անհրաժեշտ գործիքների զննման նպատակով զաղարեցնի «Բրիթիշ օքսիջեն» (British oxygen) ընկերության Հետ տարվող բանակցությունները, քանի որ ընկերության սարքավորումների առկայությունը կստիպեր «...Հիմնական վերակառուցման

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 15:

² Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 30-36: Ս. Սարգիս բարեգործական Հաստատությունը Հիմնվել է Գ. Կյուլպենկյանի կողմից՝ Լոնդոնում, Համանուն եկեղեցու կառուցումից հետո (1954 թ.): Այն հոգում է նշված եկեղեցու և Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի «Գալուստ Կյուլպենկյան» գրադարանի կարիքները, բարեգործություններ կատարում Անդլիայի Հայ Համայնքի Համար և այլն (տե՛ս Ջամբերթեն Ա., Երուսաղեմ և Կիւլպէնկեաններ, էջ 91, նաև՝ <http://www.saintsarkis.org.uk> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]):

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 4, թ. 1-3:

ենթարկել հիվանդանոցային շենքի մի մասը՝ առաջ բերելով նոր բարդություններ»¹:

1964-1976 թթ. ընթացքում Հայկական բաժանմունքի նպաստընկալների շարքում էին Երևանի սրտաբանական, բժշկական, ռենտգեն, ֆիզիոլոգիայի և Արուսյան քաղաքի Թոքախտաբանություն ինստիտուտները²:

1992 թ. Զ. Եկավյանի ջանքերով արտասահմանյան երկրների արտադրություն սարքավորումներ ձեռք բերելու նպատակով «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովը վավերացրեց Հայաստանի գիտական, կրթական և առողջապահական Հաստատությունների օգտին կատարված 700 Հազ. դոլարի Հատկացումը, որը ծառայեց Հայաստանի Վիրաբուժական կենտրոնի, Արյունաբանության և արյան փոխներարկման, Բժշկական ռադիոլոգիայի, Տրամաատոլոգիայի և օրթոպեդիայի, Հիդիննայի և պրոֆեսսորնայ Հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտների, Հանրապետական մանկական կլինիկական Հիվանդանոցի, Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի, Հանրապետական և Երևանի քաղաքային սանիտարահամաճարակաբանության կայանների, Երևանի բժշկական ինստիտուտի, Հանրապետական ատամնաբուժական կենտրոնի, «Հայրուժտկանիկա» Հանրապետական արտադրատնտեսական միավորման և Համաճարակաբանության, վիրուսաբանության ու բժշկական մակարուճաբանության ինստիտուտների կարիքներին³:

Հիմնարկության առաջին ղեկավարներն ու աշխատակիցները Մերձավոր Արևելքում զբաղվել են նաև գաղթախնամ գործունեությամբ: Հարկ է նշել, որ Երբ 1948 թ. արարա-խորայնական հակամարտությունն ունեցավ իր առաջին տաք պոթիկումները, Գ. Կյուլպենկյանն անմիջապես օգնության ձեռք մեկնեց ռազմական գործողությունների պատճառով անօթևան ու փախստական դարձած Հայերին: Նրա տրամադրած միջոցներով Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի խնամքի տակ Հայտնված փախստականների

¹ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 534, թ. 58:

² ՏԵՍ Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, *Twenty years of activity, 1956-1976*, p. 10.

³ ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 207, թ. 1-6:

Համար սնունդ էր առաքում ՄԱԿ-ի՝ Մերձավոր Արևելքում պաղեստինյան գաղթականների հարցերով զբաղվող Աշխատանքի և օգնությունների հանձնաժողովը (UNRWA-United Nations Relief and Works Agency for Palestine Refugees in the Near East)¹: Ա. Չամբերթենը նշում է, որ չնայած «...Պրն. Կիլյալենկևան կը գտնուէր Լիդպոն, ոչ թէ Երուսաղէմ, բայց կարծէք ան երբեք չէր Հեռացած Երուսաղէմէ»²: Գ. Կյուլպենկյանն ուշի ուշով հետևում էր Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին և պարբերաբար Երուսաղէմ էր գործուղում իր անձնական ներկայացուցիչ Ն. Էքսերժյանին: Մեծանուն բարերարը մինչև իր մահը շարունակեց լուրջ նյութական օգնություն և աջակցություն ցուցաբերել Պաղեստինի գաղթական Հայերին: «Ապագային անկասկած,- կարդում ենք Ա. Չամբերթենի գրքում,- այս մեծ բարերարը շուտով պիտի Հաստատուէր Հիմնարկ մը շարունակելու իր սկսած գործը երբ այլևս ինք չկար»³: Հիմնարկություն՝ Հայ գաղթականների և չքավորների օգնության ծրագրերը Հետագայում ընդարձակեցին իրենց աշխարհագրական սահմաններն՝ ընդգրկելով Հունաստանը, Ֆրանսիան, Լիրանանը և այլ երկրներ:

1957 թ. «Ազդակը» Հաղորդում էր, որ «...«Գալուստ Կիլյալենկևան Հիմնարկութեան» վարիչները՝ Տօրթ. Փէրտիկասօ, Փալմելայի դուքսն ու Պր. Ռոպեո Կիլյալենկևան, Նախագահական Պալատ (Բեյրութում՝ Վ. Ղ.) իրենց այցելութեան ընթացքին, նախագահ Շամունին յայտնած են, թէ մտադիր են Պէյրութի մէջ Հիմնել Ինքնավար Ընկերակցութիւն մը, իրաւական բնոյթով, Հայկական Հիդաւաններու բնակիչներուն Համար արդիական աւաններու շինութեան անհրաժեշտ գումարը գոյացնելու Համար»⁴: Լիրանանի նախագահի Հետ Պերդիգանի, Ռ. Կյուլպենկյանի և Դոմինգոս զը Սուդայի Հանդիպմանն է անդրադարձել նաև «Ասպարէզը»: Թերթը տեղեկացնում էր, որ Հիմնարկության ղեկավարները, որոնց ընկերակցում էին Լիրանանի Հայոց առաջնորդ Գերշ. Տ. Սորեն արքեպիսկոպոս Բարոյանը, խորհրդարանի անդամներ Մովսես Տեր-

¹ Տե՛ս Չամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիլյալենկևաններ, էջ 97:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ «Ազդակ», թիւ 70 (7570), 21 Մայիս, 1957:

Գալստյանը, Տիգրան Թոսպաթը և Լիրանանուն կարիքավոր Հայերի Համար նախատեսված կացարանների շինությունների Հանձնախմբի նախագահ Վահե Սևթյանը, ջրում ընդունելություն են արժանացել Քամիլ Շամունի կողմից¹: Երկրի նախագահը պատրաստակամություն հայտնեց սատարելու Բեյրութում Հայերի Համար իրականացվելիք բնակարանաշինությունների: Ք. Շամունի Հետ Հանդիպումից Հետո Պերդիգանն ընդգծում էր, որ «...Հանրապետության նախագահը իր Հաւանությունը սուր այս գաղափարին համար և ընդունեց ընկերակցությունների հովանաւորությունը, աւելցնելով թէ Հանգանակության առաջին մասնակցողը պիտի ըլլայ: Իր կարգին՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկությունը Հանգանակության երկրորդ մասնակցողը պիտի հանդիսանայ, և Հաճոյքով Հողորդեցիները նորին Վսեմությունների մեր առաջին յատկացումը 50.000 սթերլին պիտի ըլլայ»²:

Հատկանշական է, որ Հիշյալ խնդրի լուծման նպատակով Հիմնարկությունների ղեկավարությունը Համազործակցեց նաև ՄԱԿ-ի Գաղթականաց Հանձնաժողովի և նրա բարձր կոմիսար, բելգիացի Հայախոս Ժյուլյեր Յակերի Հետ³: Հայ գաղթականների, անօթևանների և չքավորների կարիքները Հոգալու նպատակով տարբեր տարիների ընթացքում շոշափելի միջոցներ տրվեցին նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին, Բեյրութի «Հայ կրթական Հանձնաժողովին» ու Իրաքի «Հայ կանանց միությունը»: Երուսաղեմի պատրիարքարանին, օրինակ, 1959-1965 թթ. ընթացքում Հատկացվել է 87.089 դոլար⁴, «Հայ կրթական Հանձնաժողովին»՝ 30 Հադ., Իրաքի «Հայ կանանց միությունը»՝ 21.560, որոնք նպատակաուղղվել են փախստականների կենցաղային և սոցիալական ծանր պայմանների բարելավմանը⁵: ՄԱԿ-ի Գաղթականաց Հանձնաժողովի Հետ Համազործակցությունը շարունակվեց 1960-1970-ական թվական-

¹ Տե՛ս «Ասպարէզ», թիւ 3257, 2 Յուլիս, 1957:

² «Արև», թիւ 11.692, 30 Մայիս, 1957, տե՛ս նաև Azeredo de Perdigo J., Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, pp. 160-161.

³ Տե՛ս «Արև», թիւ 12.419, 15 Հոկտեմբեր, 1959:

⁴ 1964 թ. Երուսաղեմում շահագործման Հանձնվեց Հայ գաղթական բնտանիքների Համար «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության միջոցներով կառուցված առաջին շէնքը (տե՛ս Զամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 109):

⁵ Տե՛ս «Արև», թիւ 13.004, 12 Սեպտեմբեր, 1961, թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962, Calouste Gulbenkian Foundation. Grants 1956-1962, pp. 79-82, Grants 1963-1965, p. 89.

ների ընթացքում, որի արդյունքում Բեյրութում Հայ գաղթականների և չքավորների համար կառուցվեցին ոչ միայն բնակելի նոր շինություններ ու տներ, այլև նոր արհեստանոցներ, որով փորձ էր արվում թևթևացնել տարածաշրջանի հայերի գործադրկություն խնդրի ծանրությունը¹: Հարկ է նաև նշել, որ ՄԱԿ-ի Գաղթականաց Հանձնաժողովը 1960 թ. Ռ. Կյուլպենկյանին նշանակել էր Պորտուգալիայում իր առաջին ներկայացուցիչը: Այդ պաշտոնը նա վարեց մինչև 1974 թ.²:

Ձգալի կարևորություն էր ներկայացնում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն՝ ՄԱԿ-ի և Ֆրանսիայի Հայ ադրատախնամ ընկերություն հետ համատեղ իրականացված ծրագիրը, որի շրջանակներում 1958-1964 թթ. ընթացքում Հունաստանում բնակարան տրվեց 60 ծեր հայ փախստականի, Մոնմորանսիում (Ֆրանսիա) կառուցվեց Հայ մտավորականների համար նախատեսված Հանգստյան տուն, Սեն Ռաֆայելում (Ֆրանսիա) 40 տարեց հայերի համար՝ ծերանոց և ճաշարան³: Նույն ծրագրով կարիքավոր հայերի համար Սալոնիկում կառուցվեցին տներ, Հայկում Հիմնանորոգվեց Հայկական ծերանոցը, բնակարանով ապահովվեց Հունաստան ներգաղթած 85 Հայ ընտանիք և այլն⁴:

2.5. Մշակութային ձեռնարկումներ

Հմուտ և տաղանդավոր նավթարդյունաբերողի Համաշխարհային Հոչակից դատ, Գ. Կյուլպենկյանը վայելում էր արվեստի սիրահարի ու խոր գիտակի համրավ: Նա աշխարհի դանադան անկյուններից գնում և մի հարկի տակ էր հավաքում արվեստի թան-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 6, թ. 1-3, «Արև», թիվ 13.347, 29 Հոկտեմբեր, 1962, Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 89.

² Տե՛ս Էջեր Հայ գաղթավայրերի պատմության, խմբագրություն Բրոնի. Վ. Բ. Բարխուդարյանի և ղոկտ. Զուլն Եկավանի, Ե., 1996, էջ 6:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 1, թ. 1-4, Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 81.

⁴ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 81, «Խթան», թիվ 172, 30 Հոկտեմբեր, 1958, «Արև», թիվ 12. 307, 4 Յունիս, 1959:

կարժեք նմուշներ, որոնք ներկայացնում էին տարբեր ժանրեր՝ նկարչություն, քանդակագործություն, Հնագույն դարեր, դրամներ և այլն: 1969 թ. Լիսաբոնում Հասարակությունն առջև իր գոները բացեց «Գալուստ Կյուլպենկյան» թանգարանը, որտեղ ցուցադրված էին բարերարի՝ արվեստի գործերի անձնական Հարուստ ու խայտարհետ Հավաքածուի գլուխգործոցները՝ Երկու Ռեմբրանդտ, մեկ Ռուբենս, մեկ Վատտո, Հուգոնի «Դիանա ղիցուհին» արձանիկը, եգիպտական 12-րդ դինաստիայի Ամենհանաթ փարավոնի օբսիդաքար գլուխը, Հին եգիպտական արձանիկներ, Հին դրամների ժողովածու, գորգեր, Եկատերինա II կայսրուհուն պատկանող Ֆրանսուա Թոմաս Ժերմենի ֆրանսիական արծաթեղենը և այլն¹: Բոլոր գործերը Գ. Կյուլպենկյանի ցանկությամբ Լիսաբոնում մեկտեղվել էին Փարիզի, Լոնդոնի և Վաշինգտոնի թանգարաններից, որտեղ ներկայացված էին ցուցադրություն: Գ. Կյուլպենկյանի Հավաքածուի Համար թանգարան Հիմնելուց բացի, Հիմնարկության Տնօրենների ժողովն սկսեց իրականացնել նաև տեղական և միջազգային մասշտաբի ու նշանակության մշակութային ծրագրեր՝ Երաժշտական փառատոներ, ներկայացումներ, բաղձաթիվ ու բաղձարնույթ ցուցահանդեսներ և այլն:

Անդրադառնալով «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության կազմակերպած փառատոներին՝ «Ազատ օրն» իր՝ 1967 թ. Հուլիսի 20-ի Համարում «Ժուռնալ դը Ժնեխ» արտատպել էր մի հոդված, որում ուշագրավ էր Հետևյալ Հատվածը. «Լիդպոնի մէջ ծնունդ առած «Կիւլպէնկեան փառատօներ», որ իր տասնըմէկերորդ տարնը կը թեւակոխէ, ներկայիս երկվեցեակ մը ուրիշ երկիրներու մէջ ալ տարածուելով արժանի է կոչուելու «Փորթուկալի փառատօներ»... Կիւլպէնկեան փառատօներ օղակներէն մեկը կը կազմէ՝ «քարիւղի արքայի» առասպելական ժառանգի մատակարարներու կողմէ գեղարուեստի, մշակոյթի, դաստիարակութեան, գիտութեան և բարեսիրական մարդի վրայ իրագործուող ձեռնարկներու Հսկայ շղթային»²: 1969 թ. Գ. Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյա Հոբելյանի առթիվ նույն թերթն իր ապրիլի 15-ի Համարում լուսարանում էր

¹ St'ya Calouste Gulbenkian Foundation, Calouste Gulbenkian Museum, Lisbon, "Pacheco", 1990, 68 pages, «Մարմար», 4325, 4 Ապրիլ, 1956:

² «Ազատ օր», թիւ 6813, 20 Յուլիս, 1967:

Հիմնարկությունն գործունեությունը և նշում, որ այն. «...ունի նաև կարևոր երաժշտական բաժին մը, որ կը պարունակէ երկու երգչախումբեր, սենֆոնիկ նուագախումբ մը և զասական բնմապարիխումբ մը, որոնք կը մասնակցին Լիդպոնի մէջ տեղի ունեցող Կիւլպէնկեան երաժշտական Փառատօնին (Ֆեսթիվալ) որ կը կազմակերպուի ամէն տարի Մայիս և Յունիս ամիսներուն»¹: Շարունակելով միտքը՝ թերթը կարևորում էր, որ «Կյուլպենկյան» փառատօներին «...մասնակցած են համաշխարհային համբաւ վայելող միջազգային արուեստագէտներ ալ, ինչպէս Ջուլիանա Տալիտ Օյսթրալս, դաշնակահար Արթուր Ռուպինշթայն և երաժշտապետ Հերպերթ ֆոն Գարայեան»²:

Հիմնարկությունն հայազգի ղեկավարները միշտ կարևորել են նաև հայ արվեստը արտասահմանում հանրության լայն շրջաններին ծանոթացնելու խնդիրը: 1958 թ. Լիւսարոնում կազմակերպված «Կյուլպենկյան» փառատոնի ժամանակ պորտուգալացիներն առիթ ունեցան ունկնդրելու հայ ժողովրդական և ժամանակակից երգն ու երաժշտությունը: «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան շնորհիւ,- գրում էր «Նիթանը», - հայ երգը հնչեց Փորթուկալի մայրաքաղաքին մէջ»³: Հունիսի 24-ին Լիւսարոնի պետական համերգասրահում տեղի ունեցած համերգի ժամանակ երգչուհի Հայկանուշ Թորոսյանի կատարումներն այնքան են հիացրել հանդիսատեսին, որ նա պահանջել է երգերի կրկնություն՝ հատկապես Կոմիտասի շարականներն ու Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործությունները⁴: Համերգին հաջորդած օրերին պորտուգալական «Ժուռնալ իլյուստրե» և «Ժուռնալ դը Լիդրոն» թերթերն անդրադարձել են հայ երգարվեստին ու երաժշտությանը, բարձր գնահատել հայ մշակույթն ու արվեստագետներին⁵:

Հետագայում Գ. Եսայանի ջանքերի շնորհիւ «Կյուլպենկյան» փառատոններում մշտական տեղ զբաղեցրել են հայկական երաժշտությունը: «Նիթանը» հայ ընթերցողներին պարզաբանում էր, որ պետք է «...երախտապարտ ըլլալ Կիւլպէնկեան Հիմնարկութեան

¹ «Ազատ օր», թիւ 7335, 15 Ապրիլ, 1969:

² Նույն տեղում:

³ «Նիթանը», թիւ 162, 17 Յուլիս, 1958:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

կեղրոնական վարչութեան ազդեցիկ անդամ Պարոն Եսայեանի, որ մեր ստացած տեղեկութեանց համաձայն, ըլլալով նախանձախնդիր մեր բոլոր ազգային աւանդութիւններուն, նախաձեռնութիւնը ունեցած է այս Հայկական բաժինը ապահովելու Կիւլպէնկեան փառատօնին մէջ»¹: Պերդիգանի կինը նույնպէս, որը «Փալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան Երաժշտական բաժնի ղեկավարն էր, զգալի աջակցութիւն է ցուցարեւել Հայկական երաժշտութիւնը եվրոպական երկրներում ներկայացնելու ծրագրերին: Անրտ կապ էր պահպանվում Հայաստանի կոմպոզիտորների և արվեստագետների հետ, որոնք Հնարավորութիւն էին ստանում մասնակցելու արտերկրում կազմակերպվող երաժշտական փառատոններին: Ազգերի միջմշակութային երկխոսութիւնների համատեքստում տարարնույթ երաժշտական ծրագրեր էին իրականացվում UNESCO-ի (United Nations Educational, Scientific and Cultural Organization – Միացյալ ազգերի կազմակերպութեան կրթական, գիտական և մշակութային հարցերով զբաղվող հանձնաժողով) և նրա կողմից հովանավորվող տարրեր մշակութային կազմակերպութիւնների հետ: Կազմակերպվող միջոցառումներում ուրույն տեղ էր հատկացված նաև Հայ երգարվեստին ու երաժշտութեանը: Հիշարժան է այդ առիթով Ռորերտ Աթայանին հասցեագրված Ռ. Կյուլպենկյանի՝ 1970 թ. ապրիլի 23 թվակիր նամակը, որտեղ վերջինս մանրամասնութեամբ նկարագրում էր Հիմնարկութեան Երաժշտական բաժնի՝ Հայ երգարվեստի ուսումնասիրութեանն ու այն օտարներին ներկայացնելու ծրագիրը²:

Հայկական բազմադարյա արվեստը ճանաչելու և գնահատելու տեսանկյունից ինքնին հասկանալի է, որ անփոխարինելի էին Հայաստանի արվեստագետների շփումները սփյուռքահայերի և օտարների հետ: Այդ գործում յուրջ մասնարաժին ունեցան նաև «Փալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան ղեկավարութիւնն ու Հայկական բաժնի պատասխանատուները:

Հայ մշակույթի զարգացմանը միտված Հիմնարկութեան քաղաքականութիւնը որակապէս նոր փոփոխութիւնների ենթարկվեց 20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին, երբ զանազան երկրներ-

¹ «Խթան», թիւ 162, 17 Յուլիս, 1958:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 873, ց. 5, դ. 303, թ. 10:

րում Հաճախակի դարձան Հայոց ցեղասպանութեանը նվիրված թեմաներով ֆիլմերի, ներկայացումների ու միջոցառումների ցուցադրությունները: Դրանց շարքից կարելի է հիշատակել 2001 թ. Հիմնարկության Տնօրենների ժողովի աջակցությամբ ֆրանս-գերմանական «TV Art» Հեռուստարնկերության կողմից Ռիչարդ Կալինովսկու «Գաղանը լուսնի վրա» պիեսի բեմադրության Հեռարձակումը, որն ուժեղ արձագանք ունեցավ եվրոպական Հասարակական-քաղաքական շրջաններում¹: Հիշյալ պիեսը 2003 թ. Լիսաբոնի «Պևակիդա» թատրոնում Ջոան Մոտայի ղեկավարությամբ առաջին անգամ բեմադրվեց նաև պորտուգալացի Հանդիսատեսի Համար²:

1995 թ. «Գալուստ Կյուպենկյան» Հիմնարկությունը Համագործակցել է Գերմանիայի մշակույթի նախարարության հետ, որը նույն թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի պատմությունն ու մշակույթին նվիրված թեմայով («Հայաստան. վերագտած մշակութային երկիր») ցուցահանդես էր կազմակերպել Բոխումի թանգարանում³: 1996 թ. ամռանը Հիմնարկությունն աջակցել է Փարիզի Ազգային զբոսայգիի նախաձեռնած՝ «Հայաստան. Արևելքի և Արևմուտքի միջև» թեմայով ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներին, որոնք Կիլիկյան Հայաստանի մշակութային արժեքներն օտարերկրացիներին ներկայացնելու նպատակ էին հետապնդում⁴: Ցուցահանդեսի պաշտոնական բացումը կատարվել է նախագահներ Ժակ Շիրակի և Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից⁵: Նույն տարվա ընթացքում 10 հազ. դոլար հատկացվել է «Արամ Սաչատրյան» երաժշտական ֆոնդին, որը Մարսելում կազմակերպել էր Հայ ծովանկարիչներին նվիրված «Ծովի երզը» խորագրով ցուցահանդես: Այստեղ ներկայացված աշխատանքներ-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 24:

² Տե՛ս նույն տեղում, թ. 42:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 1-3, նաև՝ http://www.historymuseum.am/pastexhibitions_am.htm [այցելությունը կայր էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 4-6 (ցուցահանդեսի կապակցությամբ հրատարակված Հատորը տե՛ս Armenia entre Orient et Occident. Trois mille ans de Civilisation. Sous la direction R. H. Kévorkian. Paris: Bibliothèque nationale de France, 1996, 256 p.):

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 4-6:

րի մեծ մասը բերվել էր Հայկական թանգարաններից: Պետք է նշել, որ այն բացվել է Մարտիկի բարձրատիճան պետական պաշտոնյաների, ազդեցիկ քաղաքական գործիչների և Հայաստանի Ազգային պատկերասրահի տնօրենի կողմից¹:

2002 թ. Քեսարի (Սիրիա) Հայկական թաղամասի հին շինությունների նորոգման համար «Գայուստ կյուլպենկյան» հիմնարկությունը կատարեց 80 հազ. դոլարի հատկացում²: Այդ թաղամասն իրավամբ համարվում է բացօթյա թանգարան, որն անհպաղ վերանորոգման կարիք ուներ: Հարկ է նշել, որ ինչպես այս ծրագրի ընթացքում, այնպես էլ դրան նախորդած տարիներին հիմնարկություն Հայկական բաժանմունքի ղեկավարներն, ի դեմս Ջ. Եկավյանի և Ա. Չամբրեթենի, համագործակցել են «Երկիր և մշակույթ» կազմակերպություն³ ու նրա հիմնադիր նախագահ, պատմաբան Գեղամ Գևորգյանի հետ, որը Քեսարում հայ կրիտասարգների միջոցով պարբերաբար իրականացնում էր Հայկական Հնագույն կառույցների հիմնանորոգման աշխատանքներ⁴: Վերանորոգումից հետո նշված թաղամասը վերածվեց Հայ ազգագրական յուրօրինակ կենտրոնի, որն այժմ կրում է Գ. կյուլպենկյանի անունը⁵:

Առավել նվազ չափերով հատկացումներ են արվել Փարիզի Սիրիան-Կոմիտաս Հայկական երգչախմբին և Հայաստանի Հանրապետություն կոմպոզիտորների միությունը⁶: 2005 թ. 11.281 կլրո

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 4-6:

² Տե՛ս նույն տեղում, թ. 32:

³ Կազմակերպությունն ստեղծվել է 1977 թ.: Փարիզում: Հնագիտական պեղումներ է կազմակերպել պատմական Հայաստանի չրջաններում: Աշխատանքներ է կատարել Ամբերգում (Հայաստան), Քեսարում (Սիրիա), Սուրբ Թադևոս վանքում (Իրան): 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո օգնություն է ցուցաբերել տուժածներին, մասնակցել Սպիտակի շրջանի Գողարան դյուղի վերականգնման աշխատանքներին: Մասնակցությունը գործում են Երևանում, Լիոնում, Մարսելում (Ֆրանսիա), ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգում, Անգլիայում և Բելգիայում: 1995 թ. կազմակերպել է ցուցահանդես՝ «Հայերի ցեղասպանությունը՝ 1915-16», որը ցուցադրվել է Փարիզում, Լիոնում, Թուրլոզում, Սեն Ծամոնում և Գրենոբլում (ավելի մանրամասն տե՛ս Հայ սփյուռք հանրադիտարան, էջ 642):

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 23-24:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 32:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 17-22:

Հատկացվել է Մեծ Բրիտանիայում և Շվեյցարիայում Հայկական արվեստին նվիրված զանազան միջոցառումների կազմակերպման ծրագրերին¹: Հայաստանում «Ժամանակակից երգի» նոր երգչախումբ ստեղծելու նպատակով Հաստատությունն օժանդակել է սալխարհահռչակ կոմպոզիտոր Պասկալ Դյուսապինի նախաձեռնումներին և այլն²:

Ընդհանրացնելով ասվածը՝ Հարկ է նշել, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկություն Հայկական բաժանմունքի գործունեության նպատակաուղղվածությունը պարզորեն երևում է նրա Հիմնադրումից ի վեր: Բաժանմունքն զգալի ծավալներով նպաստներ է Հատկացրել տարրեր երկրների Հայ Համայնքների բաղձաթիվ կրթամշակութային, հոգևոր և բուժհաստատությունների: Տարեցտարի աճել է ինչպես Հիմնարկության կրթաթոշակների ծրագրից օգտվող Հայ աշակերտների և ուսանողների թիվն, այնպես էլ նրանց տրամադրվող նպաստների չափը: Դրամական խոշոր պարգևների միջոցով խրախուսվել է նաև մանկավարժների ու դիտնականների աշխատանքը:

Հաստատվել և ավանդույթ է դարձել «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Համագործակցությունը Հայ ազգային ու միջազգային բարեգործական կազմակերպությունների Հետ, որի արդյունքում տարրեր երկրներում կառուցվել են Հայկական դպրոցներ, ծերանոցներ, կարիքավոր Հայերի խնամքի կենտրոններ, զաղթականների Համար բնակարաններ և այլն: Հիմնարկության Հայազգի բոլոր դեկավարները վարել են այնպիսի քաղաքականություն, որի նպատակն էր պահպանել Հայության ազգային դիմագիծը Սփյուռքում և Հնարավորինս կանխել քաղաքական անկայունության պատճառով Մերձավոր Արևելքի երկրներից՝ Հատկապես Լիբանանից սկսված Հայերի զանգվածային արտագաղթը: Թեպետ Հատկացումներ են կատարվել Սփյուռքի գրեթե բոլոր կազմակերպություններին, սակայն գործունեության Հիմնական դաշտը եղել և մնում են Սիրիան ու Լիբանանը:

Հիշարժան է նաև այն Հանգամանքը, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության ղեկավարությունն իր ծրագրերում Հատուկ

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 23-28:

² Տե՛ս նույն սեղում, դ. 2, թ. 2:

չեղտադրում է կատարել Հայաստանի վրա: Խորհրդային իշխանութ-
վան տարիներին այստեղ գիտատեխնիկական սարքավորումնե-
րով զինվում էին բազմաթիվ Հաստատություններ, իրականացվում
ուսանողների և գիտնականների՝ Եվրոպական Համալսարաններում
ուսման, վերապատրաստման ծրագրեր և այլն: Բարեգործական
այս Հաստատության գործունեությունն ուսումնասիրողի աչքից չի
կարող վրիպել նաև Հայկական մշակույթին և Հայոց ցեղասպա-
նությանը նվիրված թեմաներով միջոցառումների կազմակերպումն
ու խրախուսումը, ինչի շնորհիվ միջազգային հանրությունը ծանո-
թանում էր Հայ ժողովրդի կերտած հոգևոր ու նյութական մշակու-
թային արժեքներին, հաղորդակից դառնում Հայի տառապանքին,
ցավին և ապագայի նկատմամբ ունեցած անհուն հավատին:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆՊԱՍՏԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ**

3.1. Հատկացումներ գիտական Հաստատություններին

Սփյուռքը չունի բառի ուղղակի իմաստով գիտական Հաստատություններ, որոնց դերը Հաճախ կատարում էին այս կամ այն Հոգևոր կազմակերպությունները, միաբանությունները, օտարերկրյա Հաճախարանների Հայագիտական ամբիոնները, գիտական Հանդեսներն ու ամսագրերը: Այդ պատճառով Հայաստանի Հետ զործակցություն Հաստատելուց Հետո «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը լուրջ նյութատեխնիկական աջակցություն ցուցաբերեց Գիտությունների ազգային ակադեմիային, Երևանի պետական Համալսարանին, Մատենադարանին և Ազգային զրահարանին: 1964 թվականից ի վեր Հիշյալ Հաստատություններին Հատկացվել են Հիմնականում մասնագիտական գրականություն և ղանազան սարքավորումներ: Իրականացվել են նաև Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ ու ծրագրեր¹: Ա. Չամբերթները նշում է, որ «...Կիւլպէնկեան Հաստատութիւնը նաև օգտակար

¹ Ռ. Կյուլպենկյանի և Վ. Մալյանի նախաձեռնությամբ 1968 թ. Հիմնարկության Տնօրենների ժողովը որոշեց արտասահմանյան գիտական կենտրոններում կազմակերպվող գիտահետազոտական աշխատանքներին ու ղասընթացներին Երևանի պետական Համալսարանից թվով մինչև Հինգ Հայ ուսանողի և ղիտնականի սովնանայա մասնակցության նպատակով կատարել սարևկան 12,500 դոլարի Հատկացում: Նշված ծրագրի չրջանակներում իրականացված միջոցառումներից կարելի է Հիշատակել 1975 թ. Սերաշում (Պորտուգալիա) մանրէ ակննսարանության թևմաներով կազմակերպված ղասընթացները, որոնց Երևանի պետական Համալսարանից մասնակցեց Երեք Հայ ուսանող (տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, դ. 532, թ. 14, ց. 6, դ. 564, թ. 48, 59):

եղաւ Մատենադարանին եւ նախկին Սովետական Հայաստանի այլ եւ այլ բանասիրական հաստատութիւններուն, անոնց Հայթայթելով անհրաժեշտ միջոցը՝ օտար զիւրքեր, հրատարակութիւններ եւ ակադեմական թերթեր, այն օրերուն՝ երբ մտաւորականներ չէին կրնար կապ պահել արտաքին աշխարհին հետ»¹:

Հիմնարկութեան գործունեութեան ողջ ընթացքում Գիտութեան ներքին ակադեմիայի տարրեր ինստիտուտներ, ինչպէս նաև Երևանի պետական համալսարանը բազմաթիւ սարքավորումներ են ստացել անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, ճապոնական, բելգիական, չիլիական, գերմանական եւ այլ երկրների բարձրակարգ ընկերութեաններէն²:

Հայաստանի գիտահետազոտական հաստատութեաններին 1960-ական թվականներից հետո հատկացվող նպաստներն զգալիորեն աճել են: Եթէ 1963-ից մինչև 1968 թվականն ընկած ժամանակահատվածում դրանք կազմել են ընդամենը 503 հազ. դոլար, ապա միայն 1981 թ. Հայաստանի գիտական հաստատութեանների համար գործիքներ եւ սարքավորումներ ձեռք բերելու նպատակով Հիմնարկութեան Տնօրենների ժողովը կատարել է 400 հազ. դոլարի հատկացում³: Հաճախ այդպիսի ծավալներով նպաստներ հատկացնելու որոշումները կայացվել են Ռ. Կյուլպենկյանի, Վ. Մամյանի եւ Մ. Եսայանի՝ Հիմնարկութեան ղեկավարութեան հետ տարած բանակցութեանների արդյունքում:

1996 թ. դեկտեմբերի 2-ին Պորտուգալիա պաշտոնական այցի ժամանակ Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի պատվիրակութանը հյուրընկալեց նաև Հիմնարկութեան ղեկավարութեանը: Լ. Տեր-Պետրոսյանին եւ պատվիրակութեան մյուս անդամներին ընդունեց Հաստատութեան նախագահ Ֆերեր Կողեյան⁴: Իր ելույթում նա նշեց ու կարևորեց Հայկական կազմակերպութեանների եւ Հիմնարկութեան միջև գոյութեան ունե-

¹ Զամբերթեն Ա., Երուսաղէմ եւ Կիւլպէնկեաններ, ԼՂ 155:

² Այլազան տարիների ընթացքում Հայաստանի գիտահետազոտական եւ այլ հաստատութեանների օգտին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան կատարած հատկացումների եւ դրանցով ձեռք բերված գործիքների, սարքավորումների մասին տե՛ս Հավելվածում՝ աղյուսակներ 3, 4:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, դ. 669, թ. 11, ց. 9, դ. 140, թ. 28:

⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 6:

ցող ավանդական կապերն, ընդգծեց դրանց խորացման անհրաժեշտությունը Հատկապես Հայաստանի Համար¹:

1990-ականներին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Հայկական բաժանմունքի պատասխանատուների և Հայաստանի գիտնականների ջանքերով իրագործված արժեքավոր ծրագրերից կարելի է հիշատակել Գիտությունների ակադեմիայի մանրէակենսաբանություն ինստիտուտի՝ Փարիզի Մոնդոր բժշկական գիտահետազոտական կենտրոնի Հետ Համատեղ կատարած ուսումնասիրությունները, որոնց նպատակն էր «միջերկրածովյան տենդ» կոչվող հիվանդությունների բացահայտումը²: Ջ. Եկավյանի կողմից նյութապես խրախուսվել և աջակցություն է ցուցաբերվել նաև Մատենադարանում իրականացվող քննական Աստվածաչնչի՝ դասական Հայերենով Հրատարակություն և Վասպուրականի միջնադարյան ձևագրերի հետազոտական աշխատանքներին³:

Երկու տարվա նախապատրաստական մանրակրկիտ աշխատանքներից Հետո՝ 1997 թ. դեկտեմբերին, Գիտությունների ակադեմիային և Երևանի պետական Համալսարանին տրվեցին նորագույն գիտատեխնիկական ու տեղեկատվական սարքավորումներ⁴: Մեկ տարի անց Կոմերդայի Գրաֆիկայի ինստիտուտի տնօրեն Հայր Վալենտին Մարկեզի ջանքերով և Հայկական բաժանմունքի նյութական աջակցությամբ Գիտությունների ակադեմիան ստացավ

¹ 2008 թ. սպրիլի 9-ին ՀՀ նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի երզման արարողությունը պաշտոնական հրավերով ներկա էին նաև «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության նախագահ Էմիլիո Ռուի Վիլարը և ՀՀ-ում Պորտուգալիայի դեսպան Մարսելո Կուրտոն: Նրանց Հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահը քննարկել է Հայ-պորտուգալական Հարաբերություններն ու արձևորել Հիմնարկության օգնությունը Հայաստանին: Է. Ռուի Վիլարն, իր հերթին, ընդգծել է, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Հիմնադրումից ի վեր սերտորեն գործակցում է թե՛ Հայաստանի, թե՛ Հայկական սփյուռքի կազմակերպությունների հետ: Հիմնարկության նախագահը նաև նշել է, որ կառույցի ղեկավարները պատրաստ են ընդարձակելու Համագործակցությունը ՀՀ կազմակերպությունների հետ (տե՛ս Noyan Tapan, Yerevan, April 9, 2008):

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 8:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 2, թ. 6, գ. 3, թ. 8:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 8:

գրահրատարակչական նոր, որակյալ սարքավորումներ¹: Հայկական բաժանմունքի միջոցներով են Երևանում հիմնվել նաև Գիտությունների ակադեմիայի Բժշկական գենետիկայի կենտրոնն² ու Գեղամիջոցների և սննդի որակի վերահսկողություն լարորատորիան:

Իր որակով աննախադեպ քայլ էր «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկություն և Միջուկային Հետազոտությունների և լրոպական կենտրոնի (European Centre for Nuclear Research/CERN, Ժնև, Շվեյցարիա) միջև 2006 թ. հաստատված գործակցությունը, որի նպատակն էր լրացուցիչ վարձատրություն և խրախուսական պարգևների արժանացնել նշված կենտրոնում աշխատող Հայ գիտնականներին: Թեպետ 2006 թ. այդ կենտրոնի 11 Հայ գիտաշխատողի տրվել է ընդամենը 19,895 և կրոյի դրամական պարգև, սակայն էականը հիմնարկության և Հայկական բաժանմունքի ղեկավարության մտայնությունն է՝ շարունակական դարձնելու իրենց աջակցությունը և օգնելու Հայ գիտնականներին հիմնավորապես ներգրավվել վերոհիշյալ կազմակերպության գիտահետազոտական աշխատանքներում³:

3.2. Հայագիտության զարգացմանն ուղղված ծրագրեր

1959 թ. Հարվարդի աշխարհահռչակ Համալսարանում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության և ԱՄՆ-ում գործող Համագլխին Հայագիտական ընկերակցության Համատեղ ջանքերով բացվեց Հայագիտական ամբիոն: Գ. Եսայանն ու Ռ. Կյուլպենկյանը Հայտնում էին, որ «Նկատի ունենալով Հայագիտական ուսմանց Համաշխարհային կարևորությունը և Հետաքրքրությունը, Հիմնարկությունը որոշեց 70,000 (Եօթանասուն հազար) տոլարի գումար մը յատկացնել, ամբողջացնելու Համար ընդհանուրը, որ Հարկաւոր է այսպիսի Հայագիտական Ամպիոնի մը հաստատման»⁴:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 3, թ. 13-14:

² Ներկայումս Հիշյալ կենտրոնը չի պատկանում Գիտությունների ակադեմիային:

³ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/media/files/fundacao/Relatorios/2006-ENG/07.pdf>, pp. 24, 26 [այցելությունը կայր էջ կատարվել է 07.08.2008 թ.]:

⁴ «Արև», թիւ 12,307, 4 Յունիս, 1959:

Ավելի տարողունակ և ընդարձակ ծրագիր էր 1964 թ. Անգլիայի Հոչակավոր Օքսֆորդի Համալսարանում Ռ. Կյուլպենկյանի և Պերդիգանի նախաձեռնությամբ Հայագիտական ամբիոնի Հիմնումը, որն սկսեց կրել Գալուստ Կյուլպենկյանի անունը¹: Ամբիոնի Հիմնադրման առիթով Ռ. Կյուլպենկյանը նշում էր. «...մեր Հիմնարկությունը բրաւ կարգադրութիւն մը՝ Օգսֆօրտ Համալսարանին մէջ Հայագիտական Ամպիոն մը ստեղծելու մտադրութեամբ: Յատկացումին մայր գումարն է 110.000 Անգլիական ոսկի և անոր շնորհիւ Համալսարանը, որուն մասին Հարկ չըլլար որևէ գովեստ ընել, Կ'ունենայ իր մնայուն դասախօս փրօֆէսօրը՝ մասնագէտ Հայագիտութեան: Այսպէսով՝ մեր Հիմնարկութիւնը Հետապնդած կ'ըլլայ իրագործումը ընդհանուր ծրագրի մը որ սահմանուած է բարձրացնելու Հայկական արժէքները»²:

Նմանատիպ Համալսարաններում Հետազայում ևս «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան կողմից և աջակցութեամբ բացվեցին Հայագիտական նոր ամբիոններ: Պերդիգանն այդպիսի ծրագրերի անհրաժեշտութիւնը պայմանավորում էր այն Հանգամանքով, որ Հայկական Համայնքները ցրված էին աշխարհով մեկ և Հայագիտութեան դարգացման նպատակով նրանց Հետ տարվելիք աշխատանքների Հնարավորութիւնը փոքր էր³: Նշանավոր գիտակրթական Հաստատութիւնների շարքից, որտեղ տարբեր տարիների ընթացքում Հիմնարկութիւնը ձեռնամուխ եղավ Հայագիտական ամբիոնների և դրադարանների Հիմնադրմանը, կարելի է Հիշատակել Լոս Անջելեսի (ԱՄՆ, 1969 թ.), Սպահանի (Իրան, 1970 թ.), Լուվենի (Բելգիա, 1970 թ.), Լեյդենի (Հոլանդիա, 1995 թ.), Բոստոնի Տաֆտս (ԱՄՆ, 1995 թ.), Լոնդոնի Համալսարանները, Լիոնի կաթոլիկ ինստիտուտը և այլն⁴:

Հիմնարկութեան մեծարժեք ծրագրերից է նաև Հայագիտական դրականութեան Հատկացումը աշխարհի դանաղան գիտական Հաստատութիւնների՝ ակադեմիաների, Համալսարանների, ինստի-

¹ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 96, ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 1, թ. 1-4:

² ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 251, թ. 3:

³ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Chairma's Report II, 1st January 1960-31st December 1962, p. 175.

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, գ. 6, թ. 1-3, գ. 7, թ. 1-3, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 2:

տուտների և այլն: Այդպիսի գրականութունն ձևոք բերելու նպատակով 1961 թ. Կալիֆոռնիայի Համալսարանի Հայկական գրադարանին Հատկացվել է 5 Հաղ. դոլար¹: 1965 թ. ընթացքում Հայկական բաժանմունքն օժանդակել է Լուվենի Համալսարանի կողմից Հայագիտական Հրատարակությունների և զբքերի ձևոք-բերման աշխատանքներին՝ կատարելով 2 Հաղ. դոլարի Հատկացում²: Նույն նպատակով օգնություն է ցուցաբերվել Բեյրութի «Հայկադյան» քոլեջին և «Երուանդ Հիսիսեան» Հայագիտական կենտրոնին³: 1963-1968 թթ. Հայոց լեզվի դասագրքերի և Հայագիտական ուսումնասիրությունների Հրատարակության, ինչպես նաև նմանատիպ աշխատությունների ձևոքբերման Համար 6 Հաղ. դոլար տրվել է Թեհրանի Հայոց թեմական խորհրդին, 5 Հաղ.՝ Նյու Յորքի «Կոլումբիա», 3 Հաղ.՝ Բոնի (Գերմանիա), 5 Հաղ.՝ Սպահանի, նույնքան էլ՝ Սան Պաուլոյի և Թեհրանի Համալսարաններին⁴: Առանձնակի կարևորություն էր ներկայացնում 1969 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի Համար կատարված Հատկացումը (10 Հաղ. դոլար), որով գնվել և նշված գրադարանին է նվիրվել Հայագիտական Հարուստ գրականություն⁵:

1965-1966 թթ. միջոցներ Հատկացվեցին նաև Բրիտանական Հնագիտության ինստիտուտին (5 Հաղ. դոլար), որը պրոֆեսոր Սևթոն Լլոյդի զլխավորությամբ պեղումներ էր կատարում Ուրարտական թագավորության պատմական տարածքներում և Թուրքիայի Հարավարևմտյան շրջաններում⁶:

Հայագիտության զարգացմանը նպատակաուղղված և առաջ տարվող քաղաքականությունն էական բովանդակային փոփոխությունների չենթարկվեց Գ. Եսայանից, Ռ. Կյուլպենկյանից և Վ. Մավյանից Հետո: Ավելացվեցին միայն այդ նպատակով կատարվող

¹ Տե՛ս «Արև», թիւ 13.004, 12 Սևպտեմբեր, 1961:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 2, թ. 1-4, Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 95, 97.

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, pp. 92-97, ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 2, թ. 1-4, դ. 5, թ. 1-3:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 6, թ. 1-3:

⁶ Տե՛ս նույն տեղում, դ. 2, թ. 1-4, դ. 3, թ. 1-3, նաև՝ Calouste Gulbenkian Foundation, Grants 1963-1965, p. 91.

Հատկացումները: Մ. Եսայանի և Զ. Եկավյանի օրոք «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունն զգալիորեն օժանդակել է Հայագիտական Հետազոտությունների միջազգային ասոցիացիայի (Association Internationale des Etudes Arménicnnes) նախաձեռնումներին¹: Հիմնարկության Հայկական ծրագրերի պատասխանատուներն իրենց նյութական և մասնագիտական աջակցությամբ նոր թափ Հաղորդեցին Հայագիտական միջազգային գիտաժողովների կազմակերպման աշխատանքներին:

1990-ականներին սերտ կապեր Հաստատվեցին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության և տարրեր երկրների Համալսարանների միջև, որից հետո կազմակերպվեցին բազմաթիվ գիտաժողովներ ու միջոցառումներ: Հիշատակության արժանի են 1996 թ. 200 գիտնականի մասնակցությամբ Լուվենի (Բելգիա) կաթոլիկ Համալսարանում Հայագիտական միջազգային գիտաժողովի անցկացումը, 1999 թ. Սորբոնի Համալսարանում (Փարիզ) հրավիրված Հայագիտության 5-րդ Համագումարը, նույն թվականին Հայագիտական Հետազոտությունների միջազգային ասոցիացիայի՝ Ավստրիայում կազմակերպած, ինչպես նաև Հայկական հոգևոր արժեքների ժառանգությանը նվիրված 2001 թ. Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի «Էկումենիկ» («Ecumenical») Համալսարանում (Բոսսի (Bossey) ամրոց, Շվեյցարիա) տեղի ունեցած միջազգային գիտաժողովները, Հայ նոր սերունդների դաստիարակության ու կրթության հարցերին նվիրված 2004 թ. Անթիլիասում կայացած Համասփյուռքյան խորհրդաժողովը և այլն²: Տեղի ունեցող գիտաժողովներին ու խորհրդաժողովներին ակտիվորեն մասնակցում և Հայագիտական թեմաներով զեկուցումներ էր կարդում նաև Զ. Եկավյանը:

«Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության՝ գիտական այլևայլ օջախների հետ Համագործակցության օրինակներ կարող են ծառայել նաև դասական Հայերենի ուղղագրական բառարանի կազմման ու հրատարակության համար 1996 թ. Լեյդենի և Երուսաղեմի

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 2:

² Տե՛ս նույն տեղում, թ. 5, 10, նաև՝ http://armenianstudies.csufresno.edu/sas_news/letter/Spring_2001/page2.htm, <http://www.armenianprelacy.org/100704c.htm> [այցելությունները կայք էջեր կատարվել են 21.10.2006 թ.]:

Հրեական Համալսարանների մասնակցութեամբ իրականացված Համատեղ ծրագրերը, Հաստատութեան աջակցութիւնը Լուվենի, Օքսֆորդի, Տաֆտս Համալսարանների նախաձեռնած Հայագիտական Հետազոտութիւններին և այլն¹:

1997 թ. 2. Եկալյանի նախաձեռնութեամբ Հիմնարկութեան Տնօրէնների ժողովը միջոցներ Հատկացրեց Համացանցում Հայագիտական կայք էջերի ստեղծման ծրագրին, որի առաջին փուլում ընդգրկվեցին Մխիթարյան միարանութեան՝ Վենետիկի և Վիեննայի, ինչպես նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գրադարանները²: 2001 թ. Բեյրութի Հայկական Համադպային գրադարանին և նրա «Քագին» գրական Հանդեսին տրվեց 10 Հազ. դոլար, որով ձեռք բերվեց նոր տեխնիկա և գրադարանը միացվեց Համացանցին: Անհրաժեշտ է Հիշատակել, որ այդտեղ պահվում է շուրջ 40 Հազ. գիրք³:

Հետաքրքիր և արդյունավետ ծրագիր էր 2002 թ. Հայկալի Հայկական դպրոցներում Հայոց լեզվի ուսուցման նպատակով «Արևիկ 1» և «Արևիկ 2» լազերային սկավառակների պատրաստումն ու թողարկումը, որի գլխավոր պատասխանատուն էր Ա. Չամբերթեանը: Այդ աշխատանքներում ներգրավվել են նաև Հայկալի Հայ Հոգևորականներն ու մանկավարժները⁴: Ծրագրի մասնագիտական Հարցերով խորհրդատու է ընտրվել լեզվաբան Կարո Առաքելյանը Բեյրութից, իսկ տեխնիկական մասը ղեկավարել է Միքայել Սարգսյանը: Սկավառակների պատրաստի փաթեթը Սփյուռքի Հայկական դպրոցներում կիրառվել է 2003 թվականից⁵:

Հայկական բաժանմունքի միջոցներով և Կլոդ Արմեն Մութաֆյանի ու Մերուժան Կարապետյանի ջանքերով 2002 թ. Երևանում բացվեց Հայագիտական Հետազոտութիւնների արդի կենտրոնը, որի նախապատրաստական աշխատանքներն ընթացել էին շուրջ երկու տարի⁶: Կենտրոնի Հիմնական խնդիրը Հայագիտական ուսումնասիրութիւններում նորագույն տեխնոլոգիաների կիրառումն էր: Կապ Հաստատվեց նաև Հայկալի «Հայկական բաց Համալ-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 5:

² Տե՛ս նույն տեղում, դ. 3, թ. 8:

³ Տե՛ս նույն տեղում, դ. 2, թ. 24:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 33:

⁵ Տե՛ս նույն տեղում, նաև՝ <http://www.azad-hye.net/news/viewnews.asp?newsId=876je95> [այցելութիւնը կայք էջ կատարվել է 22.10.2007 թ.]:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 33-34:

սարանի» Հետ¹: Մ. Կարապետյանի ղեկավարած այդ կենտրոնը 2003 թ. ստացավ ժամանակակից որոշ սարքավորումներ, որոնց օգնությամբ հրատարակությունն են պատրաստվել 15 հայազգիտական աշխատություն պարունակող լազերային սկավառակներ²: Աշխատություններից չատերը հրատարակված են³: Կենտրոնի պատասխանատուների և գիտաշխատողների կողմից էլեկտրոնային հրատարակությունն են պատրաստվել նաև «Աղղարարն» ու «Աղղազրական հանդեսը» (26 հատոր)⁴:

3.3. Հայազգիտական հրատարակություններ

Հայազգիտական աշխատությունների լույսընծայման, ինչպես նաև Հայ արվեստի ու գրականության զարգացմանը դարկ տալու նպատակով 1959 թ. «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովն ստեղծեց սեփական Հայկական մատենաչար, որի կապակցությամբ հաստատություն բարձրագույն ղեկավարությունն արել էր Հետևյալ Հայտարարությունը. «Հայկական ուսումներու յառաջադիմութեան օժանդակելու նպատակով Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը հաստատած է մատենաչար մը՝ «Հայկական Մատենաչար Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» անունով: Այս մատենաչարին մէջ լոյս կը տեսնեն, ընդհանուր առմամբ, Հայ մշակոյթի և Հայ քաղաքակրթութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ և մասնաւորաբար Հայ լեզուին,

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 33-34:

² Տե՛ս նույն տեղում, թ. 42:

³ Տե՛ս Այվազեան Արմէն, Հայոց եկեղեցին XVIII դարի Հայ ազատագրական շարժման քառուղիներում, Ե., 2003, Այվազեան Արգամ, Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, Հատոր Ա, Զուլա, Ե., 2004, նույնի՝ Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, Հատոր Բ, Ազուլիս, Անթիլիսա, 2005, Ռաչիկեան Շուշանիկ, Լազարեանների հաշուեմատանը (1741-1759), Ե., 2006, Մալխասեան Արմեն, Հայերեն ձևադրերի կազմերը և արձանագրություն Հիշատակարանները, ատենախոսություն սեղմազիր պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման, Ե., 2005, Մարգարյան Հայրապետ, Նշանավոր իշխանական տները Հայաստանում ԺԲ դարում-ԺԴ դարի առաջին կեսին, Ե., 2007 և այլն:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 42:

Հայոց պատմութեան և Հայ գրականութեան մասին երկասիրութիւններ, կարևոր Համարուած Հայազիտական գործերու թարգմանութիւններ Հայերէնէ օտար լեզուներու կամ օտար լեզուներէ Հայերէնի: Մատենաշարը կը հրատարակէ նաև անտիպ Հին ընագիրներ կամ կը վերահրատարակէ սպառած և անվիճելի արժէքներ կայացնող գործեր»¹:

Հիմնարկութեան ղեկավարներն այնուհետև անդրադառնում էին իրենց առաջիկա ծրագրերին՝ մասնավորեցնելով, որ շուտով պետք է հրատարակվեն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրութիւնը» (18-րդ դար, գրված Զուղայի բարրառով և անգլերենի թարգմանված բժիշկ Կ. Մինասյանի կողմից, պրոֆ. Լ. Լոքարտի առաջարկով և ծանոթագրութիւններով), Հակոբ Մանանդյանի «Տիղրան Բ-ն և Հոռոմը» (ֆրանսերենի թարգմանված Հ. Թորոսյանի կողմից), ավելի քան երեսուն տարի անտիպ մնացած Վիլհելմ Մյլիթարյան միարանութեան ձևագրացուցակը (կազմված Համազասպ Ոսկյանի կողմից), Կալիսթենեսի «Վարք Ալեքսանդրի»-ն (աշխատասիրութեամբ Ներսես Ալիսյանի), պրոֆ. Յոզեֆ Կարստի՝ «Կիլիկյան Հայերենի պատմական քերականութիւնը»², Եղնիկի ընագրի ֆրանսերեն թարգմանութիւնը (կատարված Լուի Մարիեսի կողմից) և այլն³:

Սփյուռքահայ մամուլն արագորեն արձագանքեց մատենաշարի ստեղծմանն ու բարձր գնահատեց նրա ղեկը գիտական ու մշակութային նոր, առատ բերք հավաքելու գործում: Եթե 1956 թ. «Ալիքը» գրում էր, որ «...Հայ գրողը պէտք ունի մեկենասների օժանդակութեան, զանգուածին ներկայացնելու համար իր մտքի արդիւնքը»⁴, ապա արդեն 1959 թ. «Արևը» լուսարանում էր Հիմնարկութեան Հայկական մատենաշարի հետ կապված աշխատանքները՝ հայտարարելով, որ «...մեր իրաւունքն է և մեր կարողու-

¹ «Յուսարեր», թիւ 153, 1 Հոկտեմբեր, 1959:

² Հիմնարկութեան ղեկավարութեան որոշմամբ գնվել է այս աշխատութեան ձևագիրը: Պետք է նշել, որ «Կիլիկյան Հայերենի պատմական քերականութիւնը» հրատարակվել է 1901, վերահրատարակվել՝ 1970 թ. (տե՛ս *Historische Grammatik des Kilikisch-Armenischen von Dr. Josef Karst, Berlin, 1970*):

³ Տե՛ս «Յուսարեր», թիւ 153, 1 Հոկտեմբեր, 1959, նաև՝ Գույումջյան Գ., «Կյուլպենկյան Հիմնարկութեան» Հայկական մատենաշարը, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1968, № 1, էջ 237:

⁴ «Ալիք», թիւ 222 (5572), 10 Հոկտեմբեր, 1956:

Թեանց սահմանին մէջն է՝ մենք մեզ, մեր պատմութիւնը և մեր մշակոյթը, վերջապէս մեր արժանաւորութիւնը ծանօթացնել աշխարհի հանրային կարծիքին, որպէսզի, հարկ եղած պարագային, մարդիկ չմտածեն կամ չըսեն թէ Հայկական Դատը «արուեստականօրէն ստեղծուած դատ մըն է»... Արդ, այս մարդին մէջ, և միայն մշակոյթի ճամբով, Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Մատենաշարը (ընդգծումը ընդգրկում է) կոչուած է կատարելու ազգային մեծ գործ»¹:

Հարկ է նշել, որ չնայած Խորհրդային Հայաստանում գոյութիւն ունեւր սուր զրաքննութիւն, սակայն պետական հոգածութեան շնորհիւ լույս էին տեսնում բազմաթիւ արժեքավոր գործեր: Այլ էր իրավիճակն Սփյուռքում, որտեղ զրջի բազմաթիւ մարդիկ էին անսլաշտպան մնում՝ Հնարավորութիւն չունենալով հրատարակելու իրենց աշխատութիւնները: ՀԲԸ Միութիւնն իր մտավորականների օգնութեան ֆոնդով և հրատարակչական գործերով մեծ ամբողջութեամբ բերեց այդ վերքին, բայց սխալված չենք լինի, եթէ նշենք, որ ՀԲԸՄ-ն միայնակ չէր կարող գոցել գոյութիւն ունեցող բացը: Հետեւաբար, «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան Հայկական մատենաշարի ստեղծումն առիթ ընծայեց, որպէսզի բազմաթիւ վաստակաշատ գիտնականներ ու մտավորականներ, թանկարժեք շատ երկեր ու գիտական հետազոտութիւններ չմնան ստվերում կամ մատնվեն անուշադրութեան: Հայ պատմագիրն ու բանասերը Հնարավորութիւն ստացան ավելի մեծ խանդավառութեամբ աշխատելու՝ վստահ լինելով, որ իրենց մտքի, քրտինքի, պրպտումների արդյունքն անսպայման պետք է գնահատվի ու վարձատրվի: Մատենաշարի մտ կեսդարյա գոյութեան շնորհիւ աշխարհը նոր Հնարավորութիւններ ստացավ ճանաչելու և գնահատելու հայ ժողովրդի անցյալը, հոգևոր ու պատմամշակութային արժեքները, գիտութեան մեջ ունեցած նվաճումներն ու հետանկարները: «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան նյութական միջոցներով և Հաստատութեան աշխատակիցների մասնագիտական աջակցութեամբ հայերեն ու օտարալեզու հայագիտական գործերի լույս ընծայումը մեծարժեք ներդրում էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև գիտութեան ու մշակութիւնի համաշխարհային գանձարանում: 1961 թ.

¹ «Արև», թիւ 12.419-12.420, 15-16 Հոկտեմբեր, 1959:

դրույթամբ հրատարակվել կամ հրատարակույթյան մեջ էին Պ. Գիլանենցի «Ժամանակագրությունը» (անգլերեն), Ն. Մանանդյանի «Տիրաբան Բ-ն և Հոռոն» (ֆրանսերեն), Ն. Թովոյանի կազմած Արմաշի վանքի, Ն. Ոսկյանի՝ Վիլնյայի Մխիթարյան միաբանության, Մեսրոպ վրդ. Քելիշյանի՝ Զմամոսի վանքի և Անտոնյան միաբանության ձեռագրացուցակները, Ն. Ակինյանի թարգմանությունները Կալիսթենեսի «Վարք Այլքսանդրի», Ն. Աղոնցի «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» (անգլերեն) աշխատությունները, Լ. Մարիեսի՝ Եղնիկի բնագրի, Ի. Քելիշյանի՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգություն» ֆրանսերեն թարգմանությունները և այլն¹։

Մինչև 1990-ական թվականները հրատարակչական գործին տարեկան կտրվածքով հատկացվում էր 30-ից մոտ 100 հազ. դոլար, որից հետո այն գերադանցեց 150 հազարը։ Այդ գումարի մեջ հաճախ չէին մտնում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, Մխիթարյան միաբանությունն, ինչպես նաև Սփյուռքի բազմաթիվ հայագիտական կենտրոնների ու հաստատությունների գիտական աշխատությունների հրատարակման համար արված նպաստները։ 1964 թ., օրինակ, հրատարակչական նպատակներով կատարված 40 հազ. դոլարի ընդհանուր հատկացումից դատ, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը «...հայագիտական հրատարակություններում մասնաւոր ծրագրի մը իրագործման համար» տրվեց 50 հազ., իսկ 1973 թ. «...Հայկական խաչքարերու նուիրուած հատորի մը հրատարակութեան համար»՝ 12,500 դոլար²։

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Հայկական մատենաչարի հարստացման համար Մ. Եսայանի և Զ. Եկավյանի միջոցով լուրջ աջակցություն ցուցաբերվեց նաև Հայաստանի գիտնականներին ու մտավորականներին։ Այդ օգնությունն ավելի արժեւորվեց երկրի անկախացումից հետո, երբ բավարար միջոցներ չլինելու պատճառով համապատասխան պետական մարմինները հաճախ ի վիճակի չէին ստանձնելու նոր գրքերի և աշխատությունների հրատարակության ծախսերը։ Բացը հիմնականում լրացնում էին

¹ Տե՛ս «Ազգակ», թիւ 130 (8951), 7 Օգոստոս, 1961, «Այդ», թիւ 3410, 11 Յուլիս, 1964։

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 5, դ. 1, թ. 1-4, «Արև», թիւ 16.757, 28 Փետրուար, 1974։

անհատներ ու բարեգործական կազմակերպություններ, որոնք իրենց կատարած նվիրատվություններով փորձում էին նպաստել Հիշյալ խնդրի լուծմանը: Շնորհիվ Մ. Եսայանի և Զ. Եկավյանի՝ 1990-ականներին լույս ընծայվեցին բաղձաթիվ ստվարածավալ գիտական արժևարժիք գործեր, աջակցություն ցուցաբերվեց գիտահետազոտական զանազան ծրագրերի և այլն:

Հատկանշական է, որ 1996 թ. Հիմնարկությունը միջոցներ տրամադրեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատմություն ինստիտուտի գիտաշխատողներ Մերուժան Կարապետյանին և էլիզարեթ Թաշիրյանին, որոնք հետազոտություններ էին կատարում Վատիկանի և «Պրոպագանդա Յիդելի» ղիվանատներում¹: Այդ հետազոտություններն, ի դեպ, անգնահատելի ծառայություններ էին Հայագիտության դարգացման համար, քանի որ նշված գիտաշխատողների աշխատանքի շնորհիվ Հայտնաբերվեց Վատիկանի ղիվաններում պահվող Հայագիտական հարուստ և թանկարժեք նյութ, որը 1999 թ. ցուցադրվեց Հիշյալ քաղաքում կազմակերպված Հայկական ցուցահանդեսի ժամանակ²:

20-րդ դարավերջին և 21-րդ դարասկզբին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկություն միջոցներով հրատարակվել է ավելի քան 500 անուն Հայագիտական աշխատություն: «Ինժի համար,-

¹ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 420, ց. 86, դ. 2, թ. 6: Վատիկանի և «Պրոպագանդա Յիդելի» ղիվանատներում վերջիններիս կատարած աշխատանքների մասին տե՛ս Կարապետյան Մ., Թաշիրյան Է., Հայագիտական նյութերը Վատիկանի արխիվներում, «ՊԲՀ», 1997, № 1, էջ 111-118, Archives du Vatican et de la Russie.- L'actualité du genocide des arméniens. Préface de Jack Lang, Paris: Edipol, 1999, pp. 109-116, Հոռմի Հայ գաղութի պատմությունից (XVII դար), «ՊԲՀ», 1998, № 1, էջ 165-178, Նորայայտ փաստաթղթեր Նախիջևանի Ժէ դարի առաջին կէսի պատմութեան վերաբերեալ. Օգոստինոս Բաջինց (1584-1653), «Հայաստանի պատմութեան նիւթեր Կենտրոնական Եւրոպայի ղիւաններում», Ե., 2001, էջ 47-65, Աստրախանի Հայոց պատմութիւնից (ԺԸ դարի առաջին քառորդ), «Հայաստանի պատմութեան նիւթեր Կենտրոնական Եւրոպայի ղիւաններում», Ե., 2001, էջ 66-74, Հայ ուխտաւորները և միջերկրական ծովահնութիւնը Ժէ դարի վերջին, «Հանդէս ամսօրեայ», 1999, էջ 441-468, Հայ կաթողիկէ թեմը և էթնոզաւանական դործընթացները Նախիջևանում XVII-XVIII դարերում,- տե՛ս Ճեմճեմեան Ս., Նախիջևանի Հայոց վարժարանը և Հոռմը, Վենետիկ, 2000, էջ 6-21, Կառ. ֆրանսերենով՝ Le diocèse arménien catholique du Nakhitchévan. Formation ethnique et processus ethnoconfessionnels aux XVIIe et XVIII siècles.- Roma-Armenia. Sous la direction de Claude Mutafian, Roma: Edizioni De Luca, 1999, pp. 322.

² Յուցահանդեսի կատալոգը տե՛ս Roma-Armenia. Sous la direction de Claude Mutafian, Roma: Edizioni De Luca, 1999.

2005 թ. նշում էր Ջ. Եկավյանը.- այսօր ամենակենսական հարցը Հայապահպանության թաղարականությունն անջ զիտահետադուտական և Հայագիտական հրատարակություններն են»¹: Դրանց թվարկումն այստեղ, անշուշտ, կգրադեցնի անհամար էջեր: Ուստի, բավարարվենք միայն որոշների հիշատակմամբ, որոնք ոչ միայն մեծարժեք էին իրենց գիտական նորություններով, այլև նոր շունչ ու որակ հաղորդեցին պատմագիտության և լեզվաբանության բնագավառներում կատարվող հետազոտություններին: Մասնավորապես, հիշատակության արժանի են «Մատենագիրք Հայոց» ժողովածուն, որն ընդգրկում է 5-7-րդ դարերի Հայ գրավոր մշակույթի բոլոր նշանակալից հուշարձանների գիտաքննական ու համեմատական բնագրերը², Ռուբեն Ղազարյանի «Գրարարի հոմանիչների բառարան»³-ը, Մխիթարյան միաբանության «Մայր ցուցակ Հայերէն ձևագրաց Մատենագրանին Մխիթարեան ի վեներտիկ»-ի հատորները⁴, Ժիրայր Դանիելյանի «Բանասիրական որոնումներ»⁵-ը, Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները⁶, Լևոն Խաչերյանի «Հայ լեզուաբանությունն առաջացման պատմությունը և քերականագիտական միտքը V-XVI դարերում»⁷, «Հայագիր

¹ Տե՛ս «Աղզ», 216, (3382), 26 նոյեմբեր, 2005:

² Տե՛ս «Մատենագիրք Հայոց» (Համակարգող՝ Կարապետյան Մերուժան), Անթիլիաս, Հտ. Ա-Բ, Ե դար, 2003, 2601 էջ, Հտ. Գ, Զ դար, 2004, 651 էջ, Հտ. Դ-Ե, է դար, 2005, 1403 էջ (գրախօսությունները՝ Տէր-Պետրոսեան Լևոն, Իւզրաչեան Կարէն, Յակոբեան Ալեքսան, կարևոր հրատարակություններ՝ «Յառաջ», 2005, ապրիլի 28, 28 (արտատպությունը տե՛ս «Հասկ», 2005, թիւ 5, 409-415), Դանիէլեան Կարինէ, «Մատենագիրք Հայոց». Հայ գրավոր մշակույթի հանրալիտարան, «Աղզ», 227 (3393), 13 դեկտեմբեր, 2005):

³ Տե՛ս Ղազարյան Ռ., «Գրարարի հոմանիչների բառարան», Ե., 2006, 704 էջ:

⁴ Տե՛ս ՀԱԱ. ֆ. 420, ց. 86, գ. 3, թ. 5-8, նաև՝ Ճեմեմեմեան Հ. Ս., Մայր ցուցակ Հայերէն ձևագրաց Մատենագրանին Մխիթարեան ի վեներտիկ, Հտ. Դ-Ը, վեներտիկ, 1993-1998:

⁵ Տե՛ս Դանիէլեան Ժ., Բանասիրական որոնումներ, Պէյրութ, 1996, 368 էջ:

⁶ Տե՛ս Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգություն և այլ երկասիրությունք, Հաղարամակի հրատարակություն, Անթիլիաս, 2003, նաև՝ Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենան Ողբերգության և Համարարառ, զարար բնագրի Հանդիպողությունամբ, աշխարհարարի վերածնեց Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեան, Հայկ. 2003, 861 էջ:

⁷ Տե՛ս Խաչերեան Լ. Գ., Հայ լեզուաբանությունն առաջացման պատմությունը և քերականագիտական միտքը V-XVI դարերում, Հտ. Ա-550 էջ, Հտ. Բ-619 էջ, Լիսարոն, 1992:

դպրության ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրե-
վանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները
և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիա-
յում»¹, «Հայագիտական ուսումնասիրություններ և հրատարա-
կումներ»², Ժերար Դեղեյանի «Les Arméniens entre Grecs, Mu-
sulmans et Croisés»³ աշխատությունները և այլն:

Հայկական մատենաշարի ստեղծումից ղեկուս մեկ տարի առաջ՝
1958 թ., Ռ. Կյուլպենկյանի և Գ. Եսայանի նախաձեռնությամբ
ստեղծվել էր նաև «Կյուլպենկյան» միկրոֆիլմերի զրադարան: Այս
ձևոնարկման կապակցությամբ Հայկական բաժանմունքի՝ 1962 թ.
տեղեկագրի մեջ կարդում ենք. «...Հիմնարկութիւնը ծրագրած է
պատրաստել միքրոֆիլմերը աշխարհացրիւ հաղարաւոր հայերէն
ձեռագիրներուն որոնք կը գտնուին մեծ զրադարաններու կամ ուրիշ
հաւարածոներու մէջ: Այսպէսով այդ ձեռագիրներուն բովանդակու-
թիւնը մատչելի պիտի դառնայ գիտնականներուն և ուսումնասի-
րողներուն, ինչպէս և փրկուած պիտի ըլլայ կարևոր աղէտներու և
կորուստներու պարագային: Իրրև նախաքայլ 14.000 (տասնչորս
հազար) տողարի գումար մը յատկացուեցաւ այս նպատակին»⁴:
Որպես ծրագրի մեկնարկ՝ միկրոֆիլմի վրա գրանցվեցին հայազեռ,
լեզվարան Նորայր Բյուզանդացու (Ստեփան Գաղեղյան, Ճիզմե-
ճյան, Հարություն Թերղյան, 1844-1916. մահացել է Կ. Պոլսում,
1924 թ. աճյունը տեղափոխվել է Ստոկհոլմ) ձեռագրերը⁵, որոնք
պահվում էին Գյոտերորգի (Շվեդիա) Ազգային գրադարանում⁶:

¹ Տե՛ս Ռաչեղյան Լ. Գ., Հայագիր դպրության ուսումնագիտական կենտրոն-
ները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադե-
միաները և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում, լսմբ.
Զ. Եկավյան, հտ. Ա-699 էջ, հտ. Բ-545 էջ, Լիսարոն, 1998:

² Տե՛ս Ռաչեղյան Լ. Գ., Հայագիտական ուսումնասիրություններ և հրատարա-
կումներ, հտ. Ա-402 էջ, հտ. Բ-160 էջ (403-563), Լիսարոն, 2002:

³ Տե՛ս Dedeyan G., *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, étude sur les pou-
voirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150)*, volume 1- 632 p., volume 2-
172 p. (647-819), Lisbonne, 2003.

⁴ «Արև», թիւ 13,281, 10 Օգոստոս, 1962:

⁵ Լույս են տեսել Ն. Բյուզանդացու «Հայկական բառարանությունք» (1880),
«Բառգիրք ի գաղղիերեն լեզվն ի հայերեն» (1884), «Կորյուն վարդապետ և նորին
Թարգմանությունք» (1900) աշխատությունները: Որոշ երկեր մնացել են անտիպ:

⁶ Տե՛ս Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 84, «Յառաջ», 34րդ
տարի, թիւ 8331, նոր շրջան, 14րդ տարի, թիւ 4132, 29 Հոկտեմբեր, 1958.

1965-1992 թթ. ընթացքում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկու-
 թյան ղեկավարութան նախաձեռնությամբ ու Հատկացրած միջոց-
 ներով ի մի են բերվել և 50 Հատորով հրատարակվել աշխարհի
 գրեթե բոլոր Հայկական ձեռագրերի ցուցակները: Ձեռագրերը
 թարգմանվել են նաև անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզու-
 ներով ու գրանցվել միկրոֆիլմերի վրա¹: Հիմնարկությունն իր աշ-
 խատակիցների և Հայտնի Հայ, օտար գիտնականների² միջոցով
 աշխատանքներ էր կատարում Մատենադարանում, Փարիզի Ազ-
 գային գրադարանում, Երուսաղեմի «Գալուստ Կյուլպենկյան»
 գրադարանի Սուրբ Թորոս ձեռագրատանը, Մխիթարյան միաբա-
 նություն՝ Վենետիկի և Վիեննայի գրադարաններում, Ջամատի վան-
 քում, Կալկաթայի (Հնդկաստան), Հալեպի, Բեյրութի, Վաշինգտոնի,
 Լոնդոնի, Դուբլինի (Իռլանդիա) և բազմաթիվ այլ երկրների գիտա-
 կան կենտրոններում³: Հայկական ձեռագրերի միկրոֆիլմերի պատ-
 րաստմանը տարեկան կտրվածքով Հատկացվում էր 10 Հազ.
 դոլար⁴: Ա. Ջամբերթենը նշում է, որ ձեռագրերի ցուցակագրու-
 թյունն ու հրատարակությունը «...Լիդպոնի Հաստատութեան
 («Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը՝ Վ. Ղ.) շատ սուղ
 արժեք, քանի ան պարտաւորուած էր գնել Հարկ եղած նիւթերը,
 վերարտադրութեան գործիքներն ու պատրաստել միքրոֆիլմերը

¹ Միկրոֆիլմերի վրա գրանցված Հայկական ձեռագրերից կարելի է հիշատա-
 կել Կիլիկյան դարձոցին պատկանող արքայական՝ Կեռան թագուհու (1268-1272
 թթ.) և Վասակ իշխանի (1268 թ.) ձեռագրերը, ծաղկողներ Թորոս Ռոսլինի և Սար-
 գիս Պիծակի նկարազարդած գործերը, Մարկոսի Ավետարանի մեկ էջը (10-րդ
 դար), Կարսի Գաղիկ թագավորի Ավետարանը (11-րդ դար) և այլն (ավելի մանրա-
 մասն տե՛ս **Ջամբերթեն Ա.**, Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 149-151, 155-156):

² Նյութական մեծ Հնարավորություններ էին ստեղծվել Նորայր արք. Պողար-
 յանի, Արրակ Մխիթարյանի, Սիրարիի Տեր-Ներսիսյանի, Հայր Շառլ Ռենուի, Ծաճե-
 արք. Աճնմյանի, Գևորգ Հինդյանի (Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի ընդհա-
 սումնասիրում էին Հայկական ձեռագրերն ու կազմում դրանց ցուցակները (տե՛ս
Ջամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 149, 156-157, նաև՝ **Անթարյան
 Փ.**, Գալուստ Կյուլպենկյան Հայկական մատենաշարի ձեռագրացուցակները, «Բան-
 բեր Երևանի Համալսարանի», 1971, № 2, էջ 238-244):

³ Տե՛ս **Ջամբերթեն Ա.**, Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 80, 149:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 151:

այս ձևազիրներու ուսումնասիրութեան Համար»¹: 1992 թվականից հետո Հիմնարկութիւնն սկսեց իրականացնել Հայկական ձևազրերը նորագույն տեխնոլոգիաներով թվայնացնելու աշխատանքներ:

Վերոհիշյալից դատ, Հիմնարկութեան Տնօրենների ժողովը որոշեց պարբերաբար նյութական օգնութիւն ցուցաբերել Հայագիտական Հանդեսներին ու ամսագրերին: «Հիմնարկութիւնը, նշում էին Ռ. Կյուլպենկյանն ու Գ. Եսայանը, – երեք տարուան Համար տարեկան Հինգ Հարիւր անգլիական ոսկիի յատկացում մը կատարած է Հայագիտական պարբերաթերթ Հանդէս Ամսօրեայի, անոր ծաւալը ընդարձակելու և նոր աշխատակիցներու մասնակցութիւնը ապահովելու Համար»²: Ծոշափելով Հայկական պարբերականների և ամսագրերի տպագրութեան նյութական դժվարութիւնների խնդիրը՝ «Արևը» «Հանդէս Ամսօրեայի» օրինակով ողջունում էր «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկութեան նշված ձեռնարկումը և ընդգծում, որ «...այս օժանդակութիւնը ճիշդ տեղին և ատենին եղած է, կանոնաւորելու Համար «Հանդէս Ամսօրեայի» հրատարակութիւնը և ընդարձակելու Համար անոր ծաւալը: Դժբախտաբար, շատ անտեսուած էր այս Հանդէսը, մինչև այսօր, հակառակ իր կատարած ազգագրական և պատմագիտական մեծ աշխատանքին»³: Գրեթէ նույն միտքն էր արտահայտում «Ազգակը» և խոսքը մասնավորեցնում գիտական այլ Հանդեսի օրինակով՝ շեշտելով, որ «...կարևոր է հրատարակութիւնը Հայագիտական ուսումնաթերթի մը, որուն պակասը զգալի է 1933էն ի վեր, երբ լոյս տեսաւ ՌԵՎԻՍ: Տէր Գ' Եթիւտ Արմէնիէնի վերջին թիւը: Ուրիշ առթիւ ալ շեշտած ենք այս մասին: Ցարդ զրական ձեռնարկ մը չէր կատարուած վերականգնանալու Համար Հայագիտական Հանդէսը՝ մարդու, մանաւանդ զրամի չգոյութեան պատճառաւ: Հիմա որ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը Հաստատած է Հայկական Մատենաշար մը, քայլ մը աւելի առաջ երթալով կրնայ այդ ձեռնարկն ալ յաջողցնել: Երբ նիւթական ղոհողութեան առջև կանգ չառնուի, կարելի կ'ըլլայ գտնել Հայ և օտար Հայագէտներ, որոնք կրնան ստանձնել ուսումնաթերթին խմբագրական բաժինը»⁴:

¹ Տե՛ս Զամբերթեն Ա., Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ, էջ 155:

² «Յուսարեր», թիւ 153, 1 Հոկտեմբեր, 1959:

³ «Արև», թիւ 12.420, 15 Հոկտեմբեր, 1959, թիւ 13.281, 10 Օգոստոս, 1962:

⁴ «Ազգակ», թիւ 142 (8963), 21 Օգոստոս, 1961:

Հետազայում աստիճանաբար ընդարձակվեցին Հիմնարկությունից նպաստալորովող Հանդեսների ցանկերն ու նրանց արվող նպաստների ծավալները, որոնք ներառեցին «Revue des Etudes Arméniennes»-ը (Փարիզ), «Բազմալեզու» (Վենետիկ), Հայագիտական Հետազոտությունների միջազգային ասոցիացիայի «Newsletter»-ը (Լեյդեն), Հայաստանի Գիտությունների ակադեմիայի «Պատմաբանասիրական Հանդեսը» և այլն¹:

Եզրափակելով գլուխը՝ պետք է արձանագրել, որ չնայած «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հայկական ձեռնարկումներին նվիրված ղեկույցների ու տեղեկագրերի հեղինակները հաճախ չեն մտել մանրամասնությունների մեջ, այնուամենայնիվ գործունեությունից յուրաքանչյուր ուղղությունը վերաբերող հրապարակված վիճակագրական տվյալներն ու ցուցանիշները բավական են՝ վստահորեն պնդելու, որ հաստատությունից Հայկական բաժանմունքի գործունեությունը տարիների ընթացքում միայն ընդլայնվել է և դարձել էլ ավելի նպատակային: Հրատարակվել ու հրատարակվում են Հայագիտական բազում աշխատություններ: Հովանավորվել են Հայկական գիտական հաստատություններ, նշանավոր Հայագիտական հանդեսներ ու ամսագրեր: Լուրջ ուշադրություն և շոշափելի միջոցներ են հատկացվել ու հատկացվում Հայագիտական միջազգային կոնֆերանսների, գիտաժողովների կազմակերպմանն ու անցկացմանը և այլն: Հարցի առումով տեղին է նաև մեջ բերել Ա. Ջամբերթենի խոսքերն առ այն, որ «Կիւլպէնկեան Հիմնադրամի ծնունդէն ի վեր, Հայ Համայնքներու բաժնին նախընտրելի ծրագիրը եղած է օգնութիւնը Հայագէտներու և ձեռագրագէտներու»²:

Շուրջ 50 տարվա ընթացքում իրականացված ծրագրերը միանգամայն բավարար են՝ եզրակացնելու, որ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունն անփոխարինելի դեր ունի Հայագիտությունից դարգացման գործում և այսօր իսկ շարունակում է իր արդասարևր գործունեությունն այդ ուղղությամբ:

¹ *St'ya Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, p. 85, ՀԱԱ, ֆ. 420, ց. 86, գ. 2, թ. 4-6, գ. 3, թ. 5-8:*

² *Ջամբերթենի Ա., Երուսաղեմ և Կիւլպէնկեաններ, էջ 155:*

ՎԵՐՋԱԲԱՆ

«Գալուստ Կյուլպենկյան» բարեգործական Հաստատությունը, որն ստեղծվել է բացառապես մեկ անհատի՝ աշխարհահռչակ նավթարդյունարերող Գ. Կյուլպենկյանի ցանկություններ և նյութական կարողություններ, իր նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցների գոյացման ու զրանք կառավարելու տեսանկյունից էապես տարբերվում է Հիմնադրամներից: Վերջիններս առավելապես Հիմնվում են տարրեր մարդկանց համատեղ ջանքերով, ներդրումներով, իսկ իրենց անձնեմխելի դրամագլուխն ու բարեգործությունների համար անհրաժեշտ գումարներն ապահովում են գերադանցապես անդամավճարների, հանգանակությունների, կտակների, արժեթղթերից ստացվող եկամուտների հաշվին և այլն: Այդ տեսանկյունից հասկանալի է, որ Հիմնադրամները պարտավորված են հասարակությունը պարբերաբար տեղեկացնելու թե՛ իրենց նվիրված նյութական միջոցների ու զրանց կառավարման հարցերի, թե՛ կատարված հատկացումների ու կյանքի կոչված ծրագրերի նպատակահարմարություն չուրջ ծագող խնդիրների մասին:

Այլ է հանրային օգուտի մասնավոր բարեգործական Հաստատությունների՝ այս դեպքում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության պարագան: Խնդրո առարկա կազմակերպություն հիմնական եկամտի աղբյուրը եղել է Իրաքի նավթային ընկերությունը: Այդ ընկերության արժեթղթերի Հինգ տոկոսը պատկանել է Գ. Կյուլպենկյանին, որն էլ իր կտակով (1953 թ.) այն փոխանցել է Հիմնարկությանը: 1974 թ. Իրաքի նավթային ընկերության ազգայնացումից հետո «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունը Հիմնել է նավթի և գազի արդյունահանման նոր ընկերություններ,

իսկ 1998 թ. գնել կրկին Գ. Կյուլպենկյանի կողմից Հիմնադրված Partex՝ նավթի և գազի արդյունահանմամբ ու վաճառքով զբաղվող ընկերությունների արժեթղթերի ողջ փաթեթը: Հիմնարկությունն իր բարեգործական ծրագրերն իրականացնելու համար սկզբում Իրաքի նավթային ընկերություն մեջ ունեցած Հինգ տոկոս շահարժեք, այնուհետև Partex ընկերությունից, ինչպես նաև բանկերում պահվող արժեթղթերից զույգոց հասույթներից ու եկամուտներից կատարել է բաշխումներ, իսկ մնացած գումարը հավելել իր ակտիվին:

Նշվածը միանգամայն բավարար է՝ հասկանալու, որ այս հաստատություն կատարած բարեգործությունները պայմանավորված չէին կառույցից դուրս գտնվող որևէ անհատի, հասարակական, պետական կազմակերպությունների ցանկություններով կամ, առավել ևս, ցուցումներով: Հիմնարկությունը նույնիսկ Պորտուգալիայում համարվել ու համարվում է վերկառավարական նշանակություն կառույց: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության բոլոր բարեգործությունները, ֆինանսական հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռի ստուգումներն ու նյութական միջոցների կառավարումն իրականացվում են գերազանցապես Գ. Կյուլպենկյանի կտակի կետերի և հաստատության կանոնադրության հոդվածների համաձայն: Միայն բացառիկ դեպքերում է թույլատրված կազմակերպությունը կառավարել պորտուգալական համապատասխան օրենքով:

Ահա սրանք են այն Հիմնական պատճառները, որոնք առիթ դարձան լրջորեն հետաքրքրվելու, թե ինչու է «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունն իր Հիմնադրումից ի վեր բարեգործություններ կատարում հայկական կազմակերպությունների համար: Հարցն ավելի ուշագրավ է դառնում, երբ նկատի ենք առնում այն փաստը, որ Գ. Կյուլպենկյանը, բացառությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, Երուսաղեմի «Գալուստ Կյուլպենկյան» զբաղարանին և Կ. Պոլսի Սուրբ Փրկիչ հայկական Հիվանդանոցին հատկացրած միջոցների, իր կտակով չէր նախատեսել Հիմնարկության կազմում ստեղծել հայկական բաժանմունք կամ նյութական օգնություն ցուցաբերել հայությանը: Ընդ որում, պետք է նշել, որ Սվյաթոսրի Հայկական կազմակերպություններին և Հայաստանին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության հատկացրած նպաստները շատ հաճախ իրենց ծավալներով դիջել են միայն Պորտուգալիային

տրամադրված միջոցներին: Ոչ պակաս կարևոր ու հետաքրքրական է այն հանգամանքը, որ հիմնարկությունը, չլինելով հայկական կազմակերպություն, քաջատեղյակ էր ինչպես սփյուռքահայություն, այնպես էլ Հայաստանին հուղող բազմաթիվ կենսական հարցերին ու խնդիրներին՝ լինելին դրանք կրթություն, գիտություն, մշակույթի, ազգապահպանություն, թև որևէ մեկ այլ բնագավառում: Ավելին, սփյուռքահայ մամուլը, հիմնարկության արխիվային նյութերն ու տարրեր աղբյուրներ վկայում են, որ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունն, ի դեմս իր Տնօրենների ժողովի, միշտ հանդես է եկել զանազան երկրներում հայ համայնքների դիրքերն ամրապնդելու, հղորացնելու նախաձեռնություններով, կազմակերպել է հայագիտական թեմաներով գիտաժողովներ, ֆինանսավորել հայագիտական աշխատությունների, հանդեսների և ամսագրերի հրատարակությունը, աշխարհահռչակ համալսարաններում ու գիտական կենտրոններում հիմնադրել է հայագիտական ամբիոններ, խրախուսել սփյուռքահայ մատաղ, երիտասարդ սերունդների հայեցի կրթությունն ու դաստիարակությունը, լծվել հայ ժողովրդի հոգևոր ու նյութական արժեքների պահպանման, հարստացման դժվարին գործին, նպաստել Հայաստանում կրթություն, գիտություն զարգացմանն ու առողջապահական հաստատությունների արդիականացմանը:

Այսօր հայկական ճեմարաններում, դպրոցներում և նախակրթարաններում կարելի է հանդիպել հազարավոր հայ պատանիների ու աղջիկների, որոնք անվճար կրթություն են ստանում, ծանոթանում հայ ժողովրդի բազմադարյա մշակույթին ու պատմությանը՝ շնորհիվ այն ձևաչափերի, որոնք իրականացնում են «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ղեկավարությունն ու Հայկական բաժնի պատասխանատուները: Ծառայելով հայոց լեզվի և մշակութային արժեքների պահպանմանն օտար ափերում՝ հիմնարկության ղեկավարները հայ մարդուն ուղղորդում են դեպի իր ինքնություն և ազգային տեսակի պահպանման աներեր ուղին: Հաստատություն հայկական բաժանմունքի աշխատակիցների ջանքերով մշակվել են Սփյուռքի նոր սերունդների հայեցի կրթության ու դաստիարակության հատուկ հայեցակարգեր: Յուրահատուկ ուշադրություն են արժանացել այն կրթահամալիրները, որոնք դրադվել են հոգևոր-մշակութային, մանկավարժական և գիտական

գործունեությունը: Խնդրո առարկա կաղճակերպությունն աշխատակիցներն ու ղեկավարությունը տարիներ շարունակ ոչ միայն նպատակահարմար ծախսերի միջոցով բաղձացրել ու շնացրել են հայկական կրթական օջախներն, այլև տարեցտարի ավելի են ընդլայնել իրենց գործունեության դաշտն ու աշխարհագրական սահմանները: Չնայած ուշադրություն կենտրոնում են պահվել Սիրիայի, Լիբանանի, Թուրքիայի հայ համայնքները, որոնք ստրատեգիական նշանակություն ունեն Հայաստանի և Սփյուռքի համար, հիմնարկությունը մեծածավալ հատկացումներ է արել նաև Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, ԱՄՆ-ի, Բրազիլիայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Ավստրալիայի և այլ երկրների հայկական հաստատություններին:

Հանրագումարի բերելով կատարված նվիրատվությունների բոլոր թվերը՝ ստացվում է մի պատկեր, համաձայն որի՝ Թև՝ Հայաստանին, Թև՝ Սփյուռքին տրամադրված նպաստների ծավալները հիմնարկության հիմնադրումից ի վեր տարեցտարի աճել են: 50 տարվա ընթացքում հայկական ծրագրերի համար կառույցի ղեկավարները կատարել են շուրջ 120 միլիոն ԱՄՆ դոլարի հատկացում¹, որում լուրջ դերակատարություն են ունեցել Գևորգ և Միրայել Եսայանները, Ռորերտո Կյուլպենկյանը, Կորյուն Քեչիչյանը, Վահրամ Մավյանն ու Զավեն Եկավյանը: Հայոց պետականությունը նեցուկ կանգնելու և նրա հիմնախնդիրները լուծելու նպատակով հիմնարկության հայազգի ղեկավարներն ու աշխատակիցները ոչ միայն օժանդակել են Հայաստանի Հանրապետության համար անփոխարինելի նշանակություն ունեցող կառույցներին, այլև աշխատանքներ են տարել այստեղից գիտնականների ու մտավորականների արտահոսքը դադարեցնելու ուղղությամբ: Հարկ է ընդգծել, որ «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը չի բավարարվել միայն ֆինանսական հատկացումներով: Նրա գիտաշխատողները հայկական բաժանմունքի նախաձեռնությամբ ու միջոցներով մասնակցել են հայազիտական և, առհասարակ, գիտական բաղձաթիվ հետազոտությունների:

Հիմնադրումից կարճ ժամանակ անց «Գալուստ Կյուլպենկ-

¹ Նշված թվի իրական արժեքը ներկայումս հավասարապես է ավելի քան 500 մլն. դոլարի:

յան» Հիմնարկություն Տնօրենների ժողովի նախաձեռնությամբ համազործակցություն է հաստատվել նաև Սփյուռքում գործող բարեգործական կազմակերպությունների հետ, որը նպաստել է հայկական համայնքների տարարնույթ խնդիրների՝ միասնական ջանքերով և շուտափույթ լուծմանը: Առաջին այդպիսի կազմակերպություններից մեկը, որի հետ գործակցեց Հիմնարկությունը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունն էր: Վերջինս ուներ գործունեություն հարուստ փորձ և քաջատեղյակ էր հայկական համայնքների խնդիրներին: Այդ երկու կազմակերպության համագործակցությունը նպաստեց ոչ միայն նոր ձեռնարկումների մտահղացմանն ու ապահովեց դրանց արդյունավետ իրականացմանն, այլև ընդօրինակելի դարձավ Սփյուռքում համազգային որակներ ստեղծելու և շոշափելի հաջողություններ գրանցելու գործում: Գործակցության արդյունքում ընդլայնվեցին Սփյուռքի զարոցներին նյութապես աջակցելու, կրթություն որակ բարձրացնելու, հայկական կրթօջախներն անհրաժեշտ գույքով և գիտատեխնիկական նորագույն սարքավորումներով զինելու, չքավոր հայ երեխաներին ուսման տալու, զարոցների միջև համագործակցություն հաստատելու ծրագրերը և այլն: Համագործակցություն հաստատվեց նաև Հայ օգնություն, աղքատախնամ միությունների, «Հոուարդ Գարակէօղևան» Հիշատակի ընկերակցություն և այլ բարեգործական կազմակերպությունների հետ:

Ուշագրավ երևույթ էր խորհրդային Հայաստանի կազմակերպություններին «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկություն հատկացրած մեծածավալ նյութական օգնությունը: Հիմնարկությունը 1964 թվականից հետո Հայաստանում սկսեց իրականացնել տարարնույթ, լայնամասշտաբ բարեգործական ծրագրեր, որոնք ընդգրկում էին երկրի գիտություն, կրթություն և առողջապահության ոլորտները: Տարիների ընթացքում գիտական արժեքավոր և ծավալուն գրականություն տրվեց Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գրադարանին, Երևանի պետական համալսարանին, Մատենադարանին, ղեկորայք և թանկարժեք սարքավորումներ՝ բազմաթիվ Հիվանդանոցների ու բուժհիմնարկների: Հայաստանից ոչ քիչ թվով գիտնականներ և ուսանողներ Հիմնարկություն միջոցներով մասնակցեցին միջազգային գիտահետազո-

տական աշխատանքների, վերապատրաստման դասընթացների, գիտաժողովների և այլն: -

1988 թ. ավերիչ երկրաշարժից և 1991 թ. Հայաստանի պետականության վերընդունումից հետո երկրում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններն ստիպեցին աշխարհասփյուռ հայությանն օգնության հասնելու իրենց հայրենակիցներին: Հայաստանում ստեղծվեցին նոր հիմնադրամներ, լայնամասշտաբ գործունեություն ծավալեցին ՀԲԸ Միությունը, Լինսի, Բարենորոգում միջազգային, Միջազգային տարադրամի հիմնադրամները, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը, Հայ օգնության միությունը և այլն: Զգալի էր նաև «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ավանդն ու օգնությունը Հայաստանին կենսական անհրաժեշտություն ապրանքներ, ղեղորայք, սննդամթերք և գիտատեխնիկական արդիական սարքավորումներ տրամադրելու գործում: Ընդ որում, հիմնարկության ղեկավարության ու վարիչների կատարած հատկացումները միայն մեխանիկական աշխատանքներ չէին: Գրանց միջոցով տարվել է ազգապահպան ու ազգաչեն քաղաքականություն, որն առնչություն չի ունեցել կուսակցությունների, դավանական ղանազան ուղղությունների և հասարակական կազմակերպությունների՝ ժամանակ առ ժամանակ միմյանց հակասող ու եսակենտրոն քաղաքական վարքագծերի հետ: Միայն կրթական ծրագրերը բավական են, որպեսզի նկատելի դառնա բարեգործական այս հաստատությունը նպատակաուղղված, հայանպաստ գործունեությունը:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է անվարան կերպով արձանագրել, որ Հայապահպանության և Հայոց պետականության խնդիրների լուծմանը նեցուկ կանգնելու տեսանկյունից «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունն ամենեին չի դիջում հայկական կամ օտարերկրյա բարեգործական այն հաստատություններին, որոնք բազմաթիվ ծրագրեր են իրականացրել Հայաստանում և Սփյուռքում: Հիմնարկության հայանպաստ բարեսիրական գործունեությունը, սակայն, առ այսօր չէր դարձել գիտական ուսումնասիրության առարկա: Գործունեություն, որը կարևորվում է Հայաստանի Հանրապետության կայացման, ամրապնդման գործում Սփյուռքի և օտարերկրյա կառույցների ունեցած տեղի ու ղերի

առումով: Հոսով ենք, որ մոտ ապագայում նման Հարցերին կհատկացվի ավելի մեծ ուշադրություն, որոնք իրենց արժանի տեղը կգրավեն ոչ միայն պատմագիտության, այլև համաշխարհային քաղաքակրթության դարգացմանը լրջորեն նպաստող բարեգործական կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունների մեջ:

Սույն աշխատությունն առաջին փորձն է՝ ներկայացնելու «Գալուստ կյուլպենկյան» հիմնարկության ստեղծման և ավելի քան 50 տարվա ընթացքում իրականացրած բազմաթիվ ու բազմաբնույթ Հայանպաստ ծրագրերի ամբողջական պատկերը: Աշխարհում ծանրակշիռ դերակատարություն ունեցող այս հիմնարկությունը Հայ իրականության մեջ ևս Հանդիսանում է ազդու, կենտրոնաձիգ ուժ: Այն Սփյուռքի օջախները միմյանց և Հայաստանի Հանրապետությանը կապող ամուր օղակներից մեկն է:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
 «ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼՊԵՆԿՑԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ
 ՀԱՑԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԱՅԱԶԳԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ

Գևորգ Լորիսի Եսայան



Գ. Լ. Եսայանը ծնվել է Ստամբուլում 1897 թ. մայիսի 11-ին, մահացել 1981 թ. ապրիլի 1-ին՝ Փարիզում¹: Նա ծագում է Կ. Պոլսի Հայտնի Եսայաններից, որոնք Հիմնականում զբաղվում էին թուրքական պետության բանկային, մաքսային գործով և ունեին սևփական առևտրական նավեր: Հաճախել է Ստամբուլի կենտրոնական բարձրագույն դպրոցը, այնուհետև՝ տեղի ամերիկյան Ռոբերտ վարժարանը: 1920 թ. ամուսնացել է Գ. Կյուլպենկյանի դստեր՝ Ռիտա Կյուլպենկյանի հետ, որից ունեցել է իր միակ որդուն՝ Միքայել Եսայանին: Երիտասարդ Հասակում Գ. Եսայանը վարչական պաշտոններ է զբաղեցրել Գ. Կյուլպենկյանի զբաղեցրած: Հետագայում Գ. Կյուլպենկյանը նրան նշանակել է որպես իր կտակակատար և Հիմնարկության Տնօրենների ժողովի ցմահ տեսուչ: Գ. Եսայանը պատասխանատու էր Հիմնարկության նավթային (այժմ չգործող) և ֆինանսական բաժանմունքների անխափան գործունեության, ինչպես նաև Հայկական ծրագրերի իրականացման համար:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=558> [այցելությունը կայք էջ կատարվել է 20.07.2008 թ.]:

Ռոբերտո Վազանի Կյուլպենկյան



Ռ. Վ. Կյուլպենկյանը ծնվել է Ալժիրում՝ 1923 թ. ապրիլի 7-ին¹: 1943-ին ղորակոչվել և ծառայել է ֆրանսիական բանակի՝ Հյուսիսային Աֆրիկայի ստորարածում: 1946 թ. աշխատանքի է անցել նավթային գործի ասպարեղում՝ վարելով դանազան վարչական պաշտոններ Գ. Կյուլպենկյանի՝ Լոնդոնի գրասենյակում: 1964 թ. ընտրվել է «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովի անդամ: Հանգստի է կոչվել 1996-ին: Ռ. Կյուլպենկյանը պատասխանատու էր Հիմնարկության Հայկական Համայնքների և Մերձավոր Արևելքի ծառայության բաժանմունքների անխափան գործունեության, ինչպես նաև Հաստատության նավթային շահերի ու եկամուտների վերահսկման Համար: Նրա շուրջ 40 տարվա տրենաժան աշխատանքն ուղենիշ դարձավ «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հետազոտ պատակաուղղված գործունեության Համար: Ռ. Կյուլպենկյանը նաև ճանաչված գիտնական է՝ տնտեսագետ, արևելագետ-աղբյուրագետ, Պորտուգալիայի Պատմության ակադեմիայի թղթակից (1975), այնուհետև՝ իսկական անդամ (1983): 1996 թ. Հունվարի 17-ից Պորտուգալիայի Պատմության ակադեմիայի փոխնախագահն է: Նա Հեղինակ է երեք տասնյակից ավելի գիտական աշխատությունների, որոնք «Պատմական ուսումնասիրություններ» խորագրի ներքո ամփոփվել են երեք Հատորում և հրատարակվել 1995 թ.: Այս գիտնականի աշխատանքը բարձր է գնահատվել ու արժևորվել նաև Հայաստանում: 1992 թ. Հուլիսի 20-ին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան Ռ. Կյուլպենկյանին ընտրել է արտասահմանյան անդամ, իսկ 1994 թ. Երևանի պետական Համալսարանի գիտական խորհուրդը նրան շնորհել է պատվավոր դոկտորի կոչում:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=567> [այցելությունը կայր էջ կատարվել է 20.07.2008 թ.], նաև՝ էջեր Հայ գաղթավայրերի պատմություն, էջ 4, 5-7, 11, «Արև», թիվ 220110, 22 Յուլիս, 1992, Գալլաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 8, Զամբերթեն Ա., Մարդը և իր գործը, էջ 50:

Միքայել Գևորգի Եսայան



Մ. Գ. Եսայանը ծնվել է 1927 թ. մայիսի 7-ին¹: 1981-ից մինչև 2005 թ. եղել է «Գալուստ Կյուլենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովի տեսուչ, որից հետո այդ պաշտոնն զրազեցրել է որդին՝ Մարտին Եսայանը: 1992-ից Հանդիսանում է նույն Հիմնարկության ցմահ պատվավոր նախագահը: Մ. Եսայանը Հաճախել է Լոնդոնի Հարոու դպրոցը, այնուհետև՝ Բալիոլ քոլեջը (Օքսֆորդ), որը գերազանց գնահատական-

ներով ավարտելուց հետո ստացել է Հումանիտար գիտությունների առաջին կարգի գիտական աստիճան: 1945-1948 թթ. Մ. Եսայանը ծառայել է Անգլիայի զինված ուժերի՝ թագավորական հրետանու ստորարածնում: 1951-1956 թթ. աշխատել է Իրաքի նավթային բնկերության՝ Լոնդոնի և Իրաքի գրասենյակներում, 1957-ին՝ Անգլիայի դատական Համակարգում որպես իրավապաշտպան: 1976-ին նշանակվել է Մեծ Բրիտանիայի թագուհու խորհրդական, 1983-ին՝ ընտրվել Անգլիայի դատական Համակարգի իրավապաշտպանների ղեկավար, իսկ 1987-1988 թթ. եղել է Միացյալ Թագավորության փաստաբանների ընդհանուր խորհրդի պատվիրակ: Պորտուգալիային մատուցած ծառայությունների համար 1993 թ. երկրի նախագահը Մ. Եսայանին շնորհել է Արժանավորաց հրամանատարի կոչում: 2003-ին Մեծի Տանն Կլիկիո կաթողիկոսը նրան պարգևատրել է «Կլիկյան իշխան» շքանշանով:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=568>, <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201> [այցելություններ կայր էջեր կատարվել են 20.07.2008 թ.], նաև՝ Դավաթյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 14:

Կորյուն Միքայելի Քեչիչյան

Կ. Մ. Քեչիչյանը ծնվել է 1915 թ.¹ Մայաթիայում, մահացել 1990-ին՝ Լիսաբոնում¹: Վարել է Հայկական բաժանմունքի փոխտնօրենի և տնօրենի պաշտոնները: Բարձրագույն կրթություն է ստացել Բեյրութի Ամերիկյան Համալսարանում: 1938 թ. Կ. Քեչիչյանն աշխատանքի է անցել Իրաքի նավթային ընկերությունում՝ զբաղեցնելով տարրեր վարչական պաշտոններ: 1956 թ. տեղափոխվել և Հաստատվել է Լիսաբոնում: Կ. Քեչիչյանն զգալի ավանդ ունի մերձավորարևելյան տարածաշրջանում ծագած պատերազմներից Հետո Հայկական կրթական Հաստատությունների վերաշինման գործում: Նա Համակարգում էր նաև «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության՝ Հայաստանում իրականացվող բարեգործական ծրագրերի Հետ կապված Հարցերը և մինչև իր կյանքի վերջին տարիները սերտ կապ պահպանեց Սփյուռքահայության Հետ մշակութային կապի կոմիտեի Հետ:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=570>, <http://www.gulbenkian.pt/in dex.php?section=24&artId=201> լայնկությունները կայք էջեր կատարվել են 20.07. 2008 թ.]:

Վաճառամ Հակոբի Մավյան

Վ. Հ. Մավյանը ծնվել է 1926 թ. Հունիսի 27-ին՝ Երուսաղեմում¹: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Սրբոց Թարգմանչաց վարժարանում, որից Հետո ուսումը շարունակել է 1944 թ. ավարտել է տեղի անգլիական "Bishop Gobai" քոլեջը: 1948 թ. Հաստատվել է Կիպրոսում և որպես ուսուցիչ աշխատանքի անցել Նիկոզիայի «Մեկնքեան» ազգային վարժարանում: Այնուհետև, մինչև 1958 թ. դասավանդել է ՀԲԸ Միություն «Մեկնքեան» կրթական Հաստատությունում, որից Հետո մեկնել է Անգլիա (Հյուսիսային Իոլանդիա) և Բելֆաստի "Queen's university"-ում ուսանել իմաստասիրություն, Հոգերանություն և անգլիական գրականություն: 1961-ին Վ. Մավյանը վերադարձել է «Մեկնքեան» վարժարան՝ դասավանդելու Հոգերանություն, Հայոց լեզու և գրականություն: 1963 թ. տեղափոխվել է Լիսաբոն և աշխատանքի անցել «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկությունում՝ որպես Հայկական բաժանմունքի փոխտնօրեն: Մահացել է 1983 թ.՝ Լիսաբոնում: Թաղված է Բեյրութում:

Վ. Մավյանը նաև սփյուռքահայ նշանավոր գրող, Հասարակական գործիչ էր: Լույս են տեսել նրա «Համեցող վերադարձ» (1956) բանաստեղծությունների ժողովածուն, «Հայու բեկորներ» (1967), «Անկապ օրագիր» (1968), «Ամէն տեղ Հայ կայ» (1977), «Մխացող Հողիներ» (1977) և այլ, թվով ավելի քան քսան, արձակ գործեր: Մահվան պատճառով անավարտ է մնացել «Հայկական Պաղեստին» վեպը: Վ. Մավյանի ստեղծագործությունների հիմնական առանցքը աշխարհասփյուռ Հայերի Հոգեկան տառապանքն է, պայքարն՝ ազգային ինքնությունն ու դիմագիծը պահպանելու համար: Հայ գրողն ու Հասարակական գործիչը մեծ Հեղինակություն և Հարգանք էր վայելում ինչպես Սփյուռքում, այնպես էլ Հայրենիքում: Բաղմիցս այցելել է Հայաստան:

¹ Տե՛ս «Արև», թիվ 19.178, 23 Յունիս, 1982, թիվ 19.361, 8 Փետրուար, 1983:

Մարտին Միքայելի Եսայան



Մ. Մ. Եսայանը ծնվել է 1959 թ. նոյեմբերի 16-ին¹: «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Տնօրենների ժողովի տեսուչ է ընտրվել 2005 թ. Հուլիսի 20-ին: 1972-1977 թթ. Հաճախել է էտոնի, իսկ 1978-1981 թթ.՝ Քեմբրիջի Համալսարանի «էմանուել» քոլեջը՝ ստանալով Հումանիտար գիտությունների գիտական աստիճան: 1986-1988 թթ. Հաճախել է Հարվարդի գործարարության դպրոց՝ մասնագիտանալով գործարար կառավարման ընագավառում: 1981-ից մինչև 1986 թվականն աշխատել է Լոնդոնում՝ որպես Միջազգային բիզնես կադմակերպության ծրագրերի Համակարգող, այնուհետև՝ մինչև 2003 թ., Բոստոնի ՆորՀրգատվական ընկերությունում: Զուգահեռաբար Մ. Եսայանը տարրեր կադմակերպություններում ստանձնել է անգլիական ներդրումների Համար պատասխանատուի, ֆինանսական նոր ծառայությունների ուսուցման, եվրոպական Հաճախորդների ծրագրի, Համացանցի օգնությունը կատարվող առևտրի ու եվրոպական ֆինանսական ծառայությունների ղեկավարի պաշտոններ և այլն:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=48>, <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201> [այդելությունները կայք էջեր կատարվել են 20.07. 2008 թ.]:

Զավեն Վարդանի Եկավյան



Զ. Վ. Եկավյանը ծնվել է 1943 թ. սեպտեմբերի 1-ին՝ Հայկում: Բարձրագույն կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանում՝ ավարտելով բանասիրական ֆակուլտետը (1969 թ.): Ուսանել է նաև Սորբոնի համալսարանում (ավարտել է 1964 թ.), Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում (ավ. է 1964 թ.), Փարիզի հասարակագիտությունից ակադեմիայում (ավ. է 1964 թ.) և Պետական վարչագիտությունից ինստիտուտում (ավ. է 1977 թ.): 1972-1984 թթ. աշխատել է Սորբոնի համալսարանում՝ որպես դասախոս: Եղել է նաև Մարի-Նուրար ուսանողական ոստանի տնօրեն: Հեղինակ է «Հնդեվրոպական լեզուների բառապաշարը և Հայերենի տեղը» (1975 թ., ֆրանսերեն), «Ֆրանս-Հայերեն բառարանագրությունը 19-րդ դարում» (1976 թ., ֆրանսերեն), «Մխիթարյան միարանությունը և բառարանագրությունը» (1977 թ., ֆրանսերեն) և այլ աշխատությունների:

Պարգևատրվել է Մայայայից (1994 թ., Շվեյցարիա), Հայ կաթոլիկ պատրիարքության Սուրբ Մեսրոպ Մաշտոց պատվո (1995 թ.) շքանշաններով, Ֆրանսիայի Ասպետ արժանավորաց (1995 թ.), Վատիկանի Սուրբ Սեղրեստրոսի հրամանատար (1999 թ.), Հայաստանի Հանրապետության Մովսես Խորենացու (2000 թ.), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության՝ ասպետի և իշխանի աստիճանի (2003 թ.) մեդալներով: Սփյուռքի «Բարձրագույն կրթության բաժնի» անդամ է (կենտրոնատեղին՝ Անթիլիաս, Լիբանան), Սորբոնի համալսարանի լեզվաբանության դոկտոր (1977 թ.): 1998 թվականից ՀՀ ԳԱԱ, իսկ 2000-ից՝ Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտոր է, Ռուսաստանի Դաշնության հասարակական գիտությունների ակադեմիայի անդամ:

¹ Տե՛ս <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=571>, <http://www.gulbenkian.pt/in dex.php?section=24&artId=201> էջեր կառավարվել են 20.07. 2008 թ.], նաև՝ Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, Հ. 1. Ե., 2005, էջ 728, Դավաքյան Կ., նշվ. աշխ., «ՊԲՀ», 2006, № 3, էջ 14, նույն Հեղինակի՝ Հայ սփյուռքի պատմություն, էջ 219-220:

Մեծ է բաժանմունքի ներկայիս ղեկավարի կատարած աշխատանքը թե՛ նոր ծրագրերի իրականացման, թե՛ դրանց աշխարհագրական սահմանների ընդլայնման առումով: Հարկ է ընդգծել, որ Հիմնարկության բեղուն գործունեությունը, որը մեծապես կախված է եղել նաև հաստատության պատերից դուրս՝ Հեռավոր երկրներում կատարվող ուսումնասիրություններից, դանազան կազմակերպությունների պատասխանատուների Հետ ունեցած բազմաթիվ ու բազմաընկյթ խնդիրների քննարկումներից, իր շարունակությունն ու ընդարձակումն ունեցավ Ձ. Եկավյանի պաշտոնավարության ընթացքում: Ձ. Եկավյան մարդու և Հային Երրեք խորթ չի եղել Հայաստան աշխարհը. Հայաստանի համար ծանր՝ 1988 թ. երկրաշարժի, 1990-ականների չհայտարարված պատերազմի ցուրտ ու մութ տարիներին երկրի օդանավակայանում բազմիցս ևն վայրէջք կատարել նրա Զանքերով ուղարկված բեռնատար ինքնաթիռները՝ բերելով պահածոյացված կաթ, սննդամթերք և գեղորայք: Միայն Հայաստանի ավելի քան 90 հիվանդանոցի՝ նորագույն սարքավորումներով զինելու փաստը բավական է՝ ընդգծելու Ձ. Եկավյանի՝ երկրի խնդիրների լուծմանը մասնակից դառնալու ցանկությունն ու շահագրգռությունը. բառեր, որոնք իմաստ ու նշանակություն ունեն այնքանով, որքանով «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հայկական բաժանմունքն օգնություն է տրամադրում Հայաստանի կրթության, գիտության, առողջապահության, մշակութային Հիմնարկներին առանց կտակային պարտավորություն¹:

¹ Տե՛ս <http://www.azg.am/?lang=AR&num=2006052007> [այցելությունը կայք էջ կատարվել է 15.06.2007 թ.]:

**«ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ
 – ԿԱՏԱՐԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ
 (1956–2006 թթ.)**

Աղյուսակ 1

Տարիներ	Հասույթ	Հատկացումներ և ծախսեր	Մաքուր շահույթ
1957	364.053	147.776	216.277
1958	587.902	223.427	364.475
1959	817.781	125.526	692.255
1960	749.627	201.825	547.802
1961	732.920	232.153	500.767
1962	881.132	232.346	648.786
1963	906.515	317.979	588.536
1964	916.114	340.874	575.240
1965	1.006.841	451.330	555.551
1966	988.393	478.781	509.612
1967	843.199	507.998	335.201
1968	951.968	568.382	383.586
1969	1.071.973	584.041	487.932
1970	1.062.184	659.287	400.954
1971	619.055	638.529	-19.474
1972	889.045	623.415	265.630
1973	404.431	556.193	-151.762
1974	1.072.106	499.086	573.020
1975	668.988	650.226	18.762
1976	813.682	648.740	164.942
1977	1.080.292	818.874	261.418
1978	1.363.268	985.041	378.227
1979	2.111.146	1.462.160	648.986
1980 ¹	6.938.199	1.884.601	5.053.598

¹ Fundação Calouste Gulbenkian 1956/1981. 25 Anos de Gestão Financeira, Lisboa, 1983, p. 19. Հիմնարկության հատկացումներն ու եկամուտները 1957–1980 թթ. ընթացքում (հաշվարկված է սորտուզական արժույթով՝ կոնտոյով, իսկ մեկ կոնտոն այդ ժամանակաշրջանում համարվեք էր չուրջ 35 ԱՄՆ դոլարի):

Աղյուսակ 2

Երկրներ	1956-1972	1973	1974	1975	1976	1956-1976 ¹	%
Պորտուգալիա	2.979.705	345.183	301.582	464.698	390.474	4.481.642	61.6
Հայկական Համայնքներ	526.472	34.394	29.021	39.654	41.584	671.125	9.2
Մեծ Բրիտանիա	523.678	26.859	31.783	26.991	31.787	641.098	8.8
Միջին և Մերձավոր Արևելք	963.113	23.650	-3.265	-42.513	2.656	943.641	13.0
Այլ երկրներ	465.665	17.275	18.328	8.352	32.718	642.338	7.4
Ընդամենը	5.458.633	447.361	377.449	497.182	499.219	7.279.844	100

Աղյուսակ 3

Տարիներ	Գումար	Կազմակերպություններ
1963	3.000	Մատենադարան
1964	50.000	ՀԽՍՀ ԳԱ Հիմնարար դրադարան Մատենադարան ՀԽՍՀ Պատմական Հուշարձանների պահպանության կոմիտե
1965	100.000	Երևանի պետական Համալսարան Երևանի բժշկական ինստիտուտ ՀԽՍՀ ԳԱ Ագրոքիմիայի ինստիտուտ

¹ Calouste Gulbenkian Foundation, Report of the accountancy checking commission, relating to the year 1976, Lisbon 1977, pp. 4-22. 1956-1976 թթ. ընթացքում տարբեր երկրներին արված նպաստները (Հաշվարկված է կոնտոյով):

1966	100.000	Պետական Համալսարան Բժշկական ինստիտուտ ՀՆՍՀ ԳԱ Ազրոքիմիայի ինստիտուտ
1967	100.000	Մատենադարան Պետական Համալսարան ՀՆՍՀ ԳԱ Սրտարանության և սրտի վիրարուժության ինստիտուտ
1968 ¹	150.000	Պետական Համալսարան ՀՆՍՀ ԳԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ ՀՆՍՀ Առողջապահության նախարարության Արուվյան քաղաքի Հակատուրերկույցոգային դիսպանսեր
Ընդամենը	503.000	

Աղյուսակ 4

Տարի- ներ ²	Կազմակերպու- թյուններ	Գումար	Գնված նյութեր և սարքավո- րուճներ, այլ նպատակներով կատարված ծախսեր
1963	Մատենադարան	\$ 3.000	Գիտական գրականություն
1964	—//—	\$ 15.000	—//—
1967	—//—	\$ 10.000	—//—
1969	—//—	\$ 10.000	—//—

¹ ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, դ. 669, թ. 11: 1963-1968 թթ. ընթացքում ՀՆՍՀ-ի գիտա-
Հետազոտական և այլ Հաստատություններին Հատկացված նյութական միջոցների
ծավալը (Հաշվարկված է ԱՄՆ դոլարով):

² ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, դ. 669, թ. 11-15, ց. 6, դ. 585, թ. 1-10, դ. 586, թ. 1-3, դ.
594, թ. 1-3: 1963-1974 թթ. ընթացքում ՀՆՍՀ-ի գիտահետազոտական և այլ Հաս-
տատությունների Համար կատարված Հատկացումներով ձեռք բերված նյութերն ու
սարքավորումները (Հաշվարկված է ԱՄՆ դոլարով և անգլիական ֆունտ
ստեռլինգով, անունների և անվանումների կրկնությունից խուսափելու նպատակով
օգտագործել ենք տարրերանջան՝ —//—):

1969	—//—	—	Գիտադղիտիվ ցուցադրման սարք ¹
1972	—//—	\$ 10.000	Գիտական գրականություն
1973	—//—	\$ 10.000	—//—
1974	—//—	\$ 3.000	—//—
1974	—//—	\$ 25.000	Լուսապատճենահանման սարքավորում՝ «Ռենկքսերոքս 1824»
1974	—//—	\$ 13.000	Տպագրական սարքավորում՝ «Վերիվայվեր»
1964	ՀԽՍՀ ԳԱ Հիմնարար գրադարան	\$ 15.000	Գիտական գրականություն
1966	—//—	\$ 10.000	—//—
1969	—//—	\$ 10.000	—//—
1972	—//—	\$ 10.000	—//—
1973	—//—	\$ 15.000	—//—
1974	—//—	\$ 3.000	—//—
1973	Հայաստանի Ա. Մյանիկյանի անվան Հանրային գրադարան	\$ 10.000	—//—
1974	—//—	\$ 3.000	—//—
1964	ՀԽՍՀ Պատմական Հուշարձանների պահպանության կոմիտե	\$ 20.000	Պատմական Հուշարձանների վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ
1968	Երևանի պետական Համալսարան	£ 709.4	Թատրիկական սարքավորում իր Հավելյալ մասերով
1968	—//—	£ 118.11	Ինտերֆերոմետր «Ֆարրի-Պետրո»

¹ Համապատասխան փաստաթղթում չի նշված Հիշյալ սարքի արժեքը, որի փոխարեն գրված է Հեսեյայր. «Իրենը Են («Գալուստ Կյուրյենիցյան» Հիմնարկության աշխատակիցները՝ Վ. Ղ.) գնել և ուղարկել» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 669, թ. 14):

1968	—//—	£ 1.732.1	Ֆոտոնյութերի մշակման սարքավորում
1968	—//—	£ 34.1	Լուսափիլտրերի Հավաքածու
1968	—//—	£ 1.176	Պոլարոգրաֆ
1968	—//—	£ 13.938	Դիֆերոգրաֆ
1968	—//—	£ 1.130	Ֆոտոմետր
1968	—//—	£ 9.622.8	Պոլարոմետր
1968	—//—	£ 480	Լարրոատոր սարքավորումներ
1968	—//—	£ 180. 2	—//—
1968	—//—	£ 3. 292	Ուլտրաքննորիֆուզա
1968	—//—	£ 655	Լարրոատոր սարքավորումներ
1968	—//—	£ 1.847	Նոտոսարքավորում
1968	—//—	£ 533.13	Լարրոատոր սարքավորումներ
1968	—//—	\$ 40.000	Էլեկտրոննցեֆալոգրաֆ
1968	—//—	\$ 400	Էպիդիասկոպ
1968	—//—	\$ 10.000	Գիտական գրականություն
1969	—//—	\$ 60.000	Լարրոատոր սարքավորումներ
1969	—//—	\$ 3.202	Պոլարոգրաֆ
1972	—//—	\$ 10.000	Գիտական գրականություն
1973	—//—	\$ 15.000	—//—
1974	—//—	\$ 3.000	—//—
1974	—//—	\$ 34.400	Մանրադիտակներ
1974	—//—	\$ 49.100	Լարրոատոր սարքավորումներ
1974	—//—	\$ 16.000	Լինզաֆոնային ապարատներ
1968	Երևանի բժշկական ինստիտուտ	£ 5.089	Էլեկտրոննցեֆալոգրաֆ
1968	—//—	£ 5.657	Ուլտրաքննորիֆուզա
1972	—//—	\$ 17.800	Բուժ. և լարրոատոր սարքավորումներ
1969	Երևանի Օտար լեզուների ինստիտուտ	\$ 10.000	Լինզաֆոնային ապարատներ

1968	ՀԽՍՀ ԳԱ Ազրո- բիմիայի ինստի- տուտ	£ 323	Լարորատոր սարքավորումներ
1968	—//—	£ 558	—//—
1968	—//—	£ 3.292	Ուլտրադենտրիֆուզա
1968	—//—	£ 1.426	Լարորատոր սարքավորումներ
1968	—//—	£ 156	—//—
1969	—//—	\$ 28.840	Ամինաթթվային անալիզատոր, 4 ռոտոր
1973	—//—	\$ 13.000	Չափազրական սարքավորում իր պաշտամասերով
1968	Ներո և նեյրոլո- գիայի կլինիկա	\$ 460	Լուսարձակ
1968	Սփյուռքահայութ յան Հետ ճշակու- թյան կապի կոմիտե	\$ 109	Զայնագրիչ
1968	Մրտարանու թյան և սրտի վիրարու- ժության ինստի- տուտ	\$ 7.615	Մանրադիտակ
1969	—//—	\$ 12.408	Լարորատոր սարքավորումներ
1969	—//—	\$ 2.625	Բժշկական գործիքներ
1969	—//—	\$ 35.179	Լարորատոր սարքավորումներ
1969	—//—	\$ 265	Լարորատոր սարքավորումների լամպեր
1969	—//—	\$ 50.000	Էլեկտրոնային միկրոլուսանկարման սարք
1972	—//—	\$ 100.000	Բժշկական սարքավորումներ և գործիքներ
1972	Երևանի Ն. Արով- յանի անվան պե- տական մանկա- վարժական ինս- տիտուտ	\$ 13.000	Լինգաֆոնային ապարատներ

1972	Երևանի Պոլիտեխնիկակա ն ինստիտուտ	\$ 12,800	Լարորատոր սարքավորումներ
1973	—//—	\$ 13,000	—//—
1972	ՀԽՍՀ ԳԱ Գևո- ֆիզիկայի ինստի- տուտ	\$ 1,200	—//—
1972	ՀԽՍՀ ԳԱ Ֆիզիո- լոգիայի ինստիտուտ	\$ 4,100	—//—
1972	Բյուրականի աստղադիտարան	\$ 5,000	Օպտիկական և Հայելապատ սարքավորումներ
1973	—//—	\$ 19,000	—//—

Աղյուսակ 5

Տարիներ ¹	Կատարած Հատկացումներ
1956-1980 թթ.	—//—
Կրթություն	\$ 12 622 308
Դրամաշնորհներ	\$ 8 383 320
Հայադիտություն	\$ 1 213 347
Գիտություն	\$ 4 568 220
Արվեստ	\$ 1 380 400
Առողջապահություն և ինսամատարական ծրագրեր	\$ 1 010 738
Ընդամենը	\$ 29 178 333
Ընդամենը/ 1981 թ.	\$ 2 170 000

¹ ՀԱԱ, ֆ. 420, ց. 86., գ. 1, թ. 1, գ. 2, թ. 4-28, գ. 3 թ. 1-2; 1956-2006 թթ. բն-
թացքում «Գալուստ Կյուլպենկյան» Հիմնարկության Հայկական բաժանմունքի
կատարած Հատկացումներն ըստ բնագրովածների (Հաշվարկված և ԱՄՆ ղոլարով
և եվրոյով):

1982 թ.	-/-
Գիտություն	\$ 400 000
Կրթություն	\$ 1 600 000
Ընդամենը	\$ 2 000 000
1983 թ.	-/-
Գիտություն	\$ 450 000
Կրթություն	\$ 1 350 000
Արվեստ	\$ 200 000
Ընդամենը	\$ 2 000 000
1984 թ.	-/-
Գիտություն	\$ 450 000
Կրթություն	\$ 1 490 000
Արվեստ	\$ 60 000
Ընդամենը	\$ 2 000 000
1985 թ.	-/-
Կրթություն	\$ 1 381 665
Գիտություն	\$ 450 000
Նյութատարական ծրագրեր	\$ 88 335
Արվեստ	\$ 80 000
Ընդամենը	\$ 2 000 000
1986 թ.	-/-
Կրթություն	\$ 1 580 000
Գիտություն	\$ 490 000
Արվեստ	\$ 30 000
Ընդամենը	\$ 2 000 000
1987 թ.	-/-
Կրթություն	\$ 1 650 512
Գիտություն	\$ 496 141
Արվեստ	\$ 130 000
Ընդամենը	\$ 2 276 653
1988 թ.	-/-
Կրթություն	\$ 1 728 079
Գիտություն	\$ 500 000
Արվեստ	\$ 75 000

Ընդամենը	\$ 2 303 079
1989 թ.	-//-
Կրթություն	\$ 1 611 973
Գիտություն	\$ 1 000 000
Ընդամենը	\$ 2 611 973
1990 թ.	-//-
Կրթություն	\$ 1 778 935
Գիտություն	\$ 1 000 000
Ընդամենը	\$ 2 778 935
1991 թ.	-//-
Կրթություն	\$ 2 116 175
Գիտություն	\$ 560 000
Արվեստ	\$ 10 000
Ընդամենը	\$ 2 686 175
1992 թ.	-//-
Կրթություն	\$ 2 350 448
Գիտություն	\$ 560 000
Ընդամենը	\$ 2 910 448
1993 թ.	-//-
Կրթություն	\$ 2,467,169
Գիտություն	\$ 525,000
Արվեստ	\$157,831
Ընդամենը	\$ 3,150,000
1994 թ.	-//-
Կրթություն	\$ 2,732,500
Գիտություն	\$ 575,000
Ընդամենը	\$ 3,307,500
1995 թ.	-//-
Կրթություն	\$ 3 322 220
Խնամատարական ծրագրեր	\$ 192 000
Ընդամենը	\$ 3 514 220
1996 թ.	-//-
Կրթություն	\$ 3 658 613
Գիտություն	\$ 52 223

Մշակութային ծրագրեր	\$ 85 260
Ընդամենը	\$ 3 796 096
1997 թ.	-/-
Կրթություն	\$ 3.449.660
Գիտություն	\$ 35.476
Ընդամենը	\$ 3.485.136
1998 թ.	-/-
Կրթություն	\$ 4 078 650
Գիտություն	\$ 518 690
Սնամատարական ծրագրեր	\$ 211 400
Ընդամենը	\$ 4 808 540
1999 թ.	-/-
Կրթություն	\$ 3 512 954
Գիտություն	\$ 365 000
Ընդամենը	\$ 3 877 954
2000 թ.	-/-
Կրթություն	\$ 3 731 733
Գիտություն	\$ 171 485
Առողջապահություն և խնամատարական ծրագրեր	\$ 162 500
Ընդամենը	\$ 4 065 718
2001 թ.	-/-
Կրթություն	\$ 3 461 385
Գիտություն	\$ 320 625
Ընդամենը	\$ 3 782 010

2002 թ.	-//-
Կրթություն	€ 3 408 169
Գիտություն և այլ դրամաշնորհներ	€ 389 034
Ընդամենը	€ 3 797 203
2003 թ.	-//-
Կրթամթոշակներ	€ 2 583 526, 82
Կրթական, գիտական ծրագրեր և այլ դրամաշնորհներ	€ 951 687,12
Ընդամենը	€ 3 535 213, 94
2004 թ.	-//-
Կրթամթոշակներ	€ 2 420 459
Կրթական, գիտական ծրագրեր և այլ դրամաշնորհներ	€ 716 260
Ընդամենը	€ 3 136 719
2005 թ.	-//-
Կրթամթոշակներ	€ 2 064 734
Կրթական, գիտական ծրագրեր և այլ դրամաշնորհներ	€ 771 563
Ընդամենը	€ 2 836 297
2006 թ.	-//-
Կրթամթոշակներ	€ 2 505 142
Կրթական, գիտական ծրագրեր և այլ դրամաշնորհներ	€ 472 538
Ընդամենը € 2 977 680	
Ընդամենը 1956-2006 թթ.	\$ 90.702.770 € 16.283.112,94

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

Արխիվային նյութեր

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1 ֆ. 113, ց. 168, դ. 207:

1.2 ֆ. 178, ց. 1, դ. 518:

1.3 ֆ. 420, ց. 86, դդ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8:

1.4 ֆ. 430, ց. 1, դ. 731:

1.5 ֆ. 875, ց. 1, դ. 30, ց. 2, դդ. 251, 532, 533, 534, 669, ց. 4, դդ. 287, 864,
ց. 5, դդ. 1, 2, 3, 4, 6, 7, 303, ց. 6, դդ. 564, 565, 585, 586, 594, ց. 8, դդ.
12, 216, ց. 9, դդ. 34, 117, 140, ց. 14, դ. 17:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

2.1 Calouste Gulbenkian Foundation, Report of the accountancy checking commission, relating to the years 1961, 1962, 1964, 1965, 1967, 1968, 1969, 1971, 1976, 1978, Lisbon, 1962, 1963, 1965, 1966, 1968, 1969, 1970, 1972, 1977, 1979.

2.2 Calouste Gulbenkian Foundation, Grants 1956-1962, 1963-1965, prepared by the finance department, Lisbon, Printed by Gráfica Boa Nova, Limitada, 1963, 1966, 136, 155 pages.

3. Գրականություն

3.1 Ավետիսյան Ս., «Մերձավոր Արևելքում Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ.» (Թեկնածուական ատենախոսություն), Ե., 2007, 180 էջ:

3.2 Բալազյան Լ., Ալեքսանդր Մանթաշյանց, Ե., «Հայաստան» Հրատարակչություն, 1991, 192 էջ:

3.3 Բալազյան Լ., Գալուստ Գյուլբենկյան, Ե., «Զանգակ-97» տպարան, 2004, 304 էջ:

3.4 Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ Հասարակական մտքի

պատմություն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, 1994, 460 էջ:

- 3.5 **Դալլաքյան Կ., Ն.Բ.Ը.** Միություն նախագահ Գ. Կյուլաբենկյանի հրատարականի հարցի շուրջ, Ե., 1996, 112 էջ:
- 3.6 **Դալլաքյան Կ.,** Ռամկավար Ազատական Կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, 1999, 309 էջ:
- 3.7 **Դալլաքյան Կ.,** Հայ Սփյուռքի պատմություն, Ե., «Զանգակ-97» տպարան, 2004, 288 էջ:
- 3.8 **Դալլաքյան Կ., Հուշագատում, Ե., «Երևան»** պոլիգրաֆիական ձեռնարկություն ԲԲԸ, 1998, 367 էջ:
- 3.9 **Զաւէն Արքեպս.,** Պատրիարքական Յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, «Նոր Աստղ» տպարան, 1947, 424 էջ:
- 3.10 **Էջեր Հայ զաղթավայրերի պատմութեան, խմբագրութեամբ փրոֆ. Վ. Բ. Բարխուդարեանի և ղոկտ. Զաւեն Եկաւեանի, Ե., 1996: Printed by Grafica de Coimbra, Ltd, Portugal, 244 pages.**
- 3.11 **Լեո, Երեսնամյակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում: 1881-1911: Թիֆլիս, 1911, 360 էջ:**
- 3.12 **Համազասպան Վ., Ալեր Մանուկյան, Ե., ՀՀ կառավարությանն առնթմեր հրատարակչական գործի վարչության «Զվարթնոց»** պոլիգրաֆիական ձեռնարկություն, 1994, 76 էջ:
- 3.13 **Համազգայինի Նշան Փայանճեան ճեմարան: Անցեալն ու ներկան: Հունձրր: 1970-71 տարեշրջանր: Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1971, 60 էջ:**
- 3.14 **Համազգայինի Նշան Փայանճեան ճեմարան: Անցեալն ու ներկան: Հունձրր: 1972-73 տարեշրջանր: Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1973, 60 էջ:**
- 3.15 **Հայ սփյուռք հանրագիտարան, Հայկական Հանրագիտարանի Հրատ., Ե., «Տիգրան Մեծ» Հրատարակչություն, 2003, 732 էջ:**
- 3.16 **Մելքոնյան Է.,** Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Ե., «Մուղնի» Հրատարակչություն, 2005, 584 էջ:
- 3.17 **Մելքոնյան Է.,** Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Ե., «Նոյան Տապան», 1999, 202 էջ:
- 3.18 **Նուպար և Նուպարաշեն, Փարիզ, ՀԲԸՄ Հրատ., 1929, 47 էջ:**

- 3.19 **Շատվորյան Հ.,** Թիֆլիսի Հայ բարեգործական Հաստատությունների պատմությունից, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007, 173 էջ:
- 3.20 **Ով ով է, Հայեր,** Կենսագրական Հանրագիտարան, Հ. 1, Հայկական Հանրագիտարանի Հրատարակչություն, Ե., 2005, 728 էջ:
- 3.21 **Ջամբերթեն Ա.,** Գալուստ Սարգիս Կիւլպէնկեան: Մարդը և իր գործը, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Ծառայութեան Բաժանմունք, Լիզպոն, Edicão: Fundação Calouste Gulbenkian, Serviço das Comunidades Arménias (traduzido do texto original em FrancUs). Exccuçãõ Gráfica: G. C.- Gráfica de Coimbra, Lda. Coimbra-Portugal, 1999, 64 էջ:
- 3.22 **Ջամբերթեն Ա.,** Երուսաղէմ և Կիւլպէնկեաններ: Գալուստ Կիւպէնկեան Հաստատութիւն, Հայ Համայնքներու Բաժանմունք, Լիզպոն, Grafica de Coimbra, Lda. Palheira - Assafargc 3001-453 Coimbre-Portugal, 2007, 168 էջ:
- 3.23 **Պողոսեան Ս.,** Պողոս Նուրար Փաշա. աղգային գործիչը, Ե., «Ջանգակ-97» տպարան, 2004, 264 էջ+4 էջ ներդ.:
- 3.24 **Սարուխան Ա.,** Աղեքսանդր Մանթաշեանց, մեծ վաճառական և բարեգործը, յիշողութիւններ իր մահուան 20ամակի առթիւ, Վիեննա, «Մխիթարեան» տպարան, 1931, 233 էջ:
- 3.25 **Ստեփանյանց Ս.,** Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետութեան օրոք, Ե., «Ապոլոն» Հրատարակչություն, 1994, 242 էջ:
- 3.26 **Սկյուռքահայ կազմակերպություններ, զիրքը Հրատարակության և պատրաստել Արամ Սարգսյանը, Ամայյա Պետրոսյանը, խմբագիր՝ Հովհաննես Այվազյան, Ե., Հայկական Հանրագիտարանի Հրատ., 2002, 152 էջ:**
- 3.27 **Վասիլե Ա.,** Պարսից ծոցը փոթորկի էպիկենտրոնում, Ե., «Հայաստան» Հրատարակչություն, 1986, 359 էջ:
- 3.28 **Փափստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Ե., Հայպետհրատ, 1947, 345 էջ:
- 3.29 **Քէօսէեան Վ.,** Յուշամատենան 160-ամեայ Սուրբ Փրկիչ Հայոց Հիւանդանոցի, Իսթանպուլ, Dizgi ve Baski Murad ofset, 1994, 534 էջ:
- 3.30 **«1900, Ընդարձակ օրացույց Աղգային Հիվանդանոցի»,** տոմար, դանդան գիտելիքներ, վիճակագրական տեղեկություններ, Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Տէր Մինասեան, նախկին տպարան Գ.

Պաղատաւեան, Սուլթան Համամ Ճարտէսի, Թիւ 14, 1900, 367 էջ,
ճանուցումներ՝ 12 էջ:

բ) օտար լեզուներով

- 3.31 *Azeredo de Perdigao J., Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report, 20th July 1955-31st December 1959, Lisbon, Printed by Gráfica Boa Nova, Limitada, 1961, XVII, 212 pages.*
- 3.32 *Azeredo de Perdigao J., Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report II, 1st January 1960-31st December 1962, Lisbon, Printed by Gráfica Boa Nova, Limitada, 1963, XX, 203 pages.*
- 3.33 *Azeredo de Perdigao J., Calouste Gulbenkian, Collector, Lisbon, Printed by Gráfica Boa Nova, Limitada, 1969, 237 pages.*
- 3.34 *Calouste Gulbenkian Foundation, Armenian Department, Twenty years of activity 1956-1976, Lisbon, "Neogravura", 1976, 16 pages.*
- 3.35 *Calouste Gulbenkian Foundation, Calouste Gulbenkian Museum, Lisbon, "Pacheco", 1990, 68 pages.*
- 3.36 *Calouste Gulbenkian Museum, Composto e impresso no ano de 1982, Lisboa: Fundação Calouste Gulbenkian, 1982, 401 pages: [25] leaves of plates: ill (some col.): 24 pages.*
- 3.37 *European Gas & Electric Company, Standard Oil Company (New Jersey), Standard Oil Company (New Jersey) and oil production in Hungary by MAORT: 1931-1948. Copyright 1949, European Gas & Electric Company, printed in U.S.A., N. Y. 1949.*
- 3.38 *Foundation Calouste Gulbenkian, Lisbonne, Neogravura, LDA, 1967, 41 pages.*
- 3.39 *Fundação Calouste Gulbenkian, 1956-1981, 25 Anos de Gestão Financeira, Lisboa, "Novotipo", 1983, 432 pages.*
- 3.40 *Gulbenkian C. S., La Transcaucasie et la Peninsule d'Apcheron: souvenirs de voyage, Paris, "Hachette & Cie.", 1891, 336 pages.*
- 3.41 *Gulbenkian N., Portrait in oil. New York, Published by Simon and Schuster, Inc., 1965, 383 pages.*
- 3.42 *Gulbenkian N., Nous les Gulbenkian, London, "Hutchinson", 1965, 340 pages.*
- 3.43 *Hewins R., Mr. Five Per Cent: the biography of Calouste Gulbenkian,*

- London, Hutchinson, 1957, 254 pages.
- 3.44 **Hewins R., Mr. Five Per Cent. The Story of Calouste Gulbenkian**, New York, Published by Rinchart & Company, Inc., 1958, X, 261 pages.
- 3.45 **Lodwick J., In collaboration with D.H. Young. Gulbenkian, an interpretation of Calouste Sarkis Gulbenkian**, London, The Windmill Press Kingswood, Surrey, 1958, VII, 289 pages.
- 3.46 **Musée Calouste Gulbenkian, Lisbonne, s. n., 1991, 399 pages.**
- 3.47 **The international seminar on Oil as a weapon in the struggle against imperialism and Israeli aggression and a means to the development of an independent national economy**, Baghdad, November 11-14, 1972. Published by the Permanent Secretariat of the A.A.P.S.O., 89, Abdel Aziz Al Scoud St., Marial Cairo, A.R.E., October, 1974.
- 3.48 **The AGBU Story**, prepared by Bedros Norhad, New York, published by the Armenian General Benevolent Union of America, Inc., 1956, 32 pages.
- 3.49 **The Rockefeller Foundation, annual report, 1949**, New York, printed in the United States of America, 1950, 462 pages.
- 3.50 **The Ford Foundation Annual Report: 1969**, New York, printing: Case-Hoyt Corporation, 1969, 176 pages.
- 3.51 **The Houghton Mifflin Dictionary of Biography; The Most Comprehensive Coverage, from ancient times to the present day; Introduction by Justin Kaplan**, Boston-New York, printed by Houghton Mifflin, 2003, 1696 pages.
- 3.52 **Yarman Arsen, Osmanli saglik hizmetlerinde ermeniler ve Surp Pirgic ermeni hastanesi tarihi**, Istanbul, 2001, s. 866.
- 3.53 **Yergin Daniel, The Prize: the epic quest for oil, money, and power**, New York, London, Sydney, Tokyo, Singapore, printed in the U.S.A., Simon & Schuster, 1991, 877 pages, XXXIII, il., 24 cm, bibliogr.: pp. 848-873.

4. Հոդվածներ

ա) Հայերեն

- 4.1 **Անթարյան Փ., Գալուստ Կյուլպենկյան Հայկական մատենաչարի ձևագրացուցակները, Բանրեր Երևանի Համալսարանի, 1971, № 2, էջ 238 - 244:**

- 4.2 Ավետիսյան Ս., Հայ ազգային պատվիրակությունն և Ամերիկոսի Համա-
գործակցությունը 1920-ական թթ., Հայոց պատմության Հարցեր,
2007, № 8, էջ 286 - 294:
- 4.3 Գույումջյան Գ., «Կյուլպենեկյան Հիմնարկության» Հայկական մատու-
նաշարը, Բանրեր Երևանի Համալսարանի, 1968, № 1, էջ 237:
- 4.4 Դալլաքյան Կ., Գալուստ Կյուլպենեկյան Հիմնարկությունը (Կեսդարյա
Հորեկյանի առթիվ), Պատմա-բանասիրական Հանդես, 2006, № 3, էջ
3 - 22:
- 4.5 Թորգոմեան Վ., Հատոց Հին Հիւանդանոցները, «Հայաստանի կոչնակ»,
1925, թիւ 1, էջ 12-13:
- 4.6 Մեղքոնյան է., Գալուստ Կյուլպենեկյան - Խորհրդային Միություն.
չկայացած գործընկերություն, Լրարեր Հասարակական գիտու-
թյունների, 1998, № 3, էջ 91 - 101:
- 4.7 Մուրադյան Ա., Սիրիայի Հայկական բարեգործական ընդհանուր
միությունն պատմությունը, Հայոց պատմության Հարցեր, 2008, № 9,
էջ 181-191:

Բ) ուսանողներ

- 4.6 Петров Г., Ширинян Р., Мистер пять процентов (о Галусте Гюлбенкяне).
Коммунист, 1990, № 8, стр. 4.

Ե. Պարբերական մամուլ

- 5.1 «Արև», ԳաՀիրէ, 1953, 1954, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960,
1961, 1962, 1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969, 1970, 1971, 1972,
1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981, 1982, 1983, 1984,
1985, 1986, 1987, 1988, 1989, 1990, 1991, 1992, 1993, 1994, 1995:
- 5.2 «Այգ», Պէյրուժ, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1962, 1963, 1964,
1965:
- 5.3 «Ազատ օր», Աթէնք, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962,
1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969, 1970, 1971, 1972, 1973, 1974,
1975, 1976, 1977, 1978, 1979, 1980, 1981:
- 5.4 «Ազգ», Երևան, 2005, 2006:
- 5.5 «Ազգակ», Պէյրուժ, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1970, 1971,

1972, 1973, 1974, 1975, 1976, 1977, 1978, 1979, 1980:

- 5.6 «Ալիր», Թէհրան, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969, 1970:
- 5.7 «Ասպարէզ», Կլէնտէյլ, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969:
- 5.8 «Ապագայ», Փարիզ, 1931, 1932:
- 5.9 «Զարթօնք», Պէյրութ, 1960, 1961, 1962:
- 5.10 «Որհորդային Հայաստան», Երևան, 1931, 1932, 1960, 1964:
- 5.11 «Նիթան», Փարիզ, 1956, 1957, 1958, 1959:
- 5.12 «Հայրենիք», Պոսթրն, 1932:
- 5.13 «Մարմարա», Կ. Պոլիս, 1926, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1965:
- 5.14 «Յառաջ», Փարիզ, 1929, 1930, 1931, 1956, 1958, 1959, 1960, 1961, 1998, 2005:
- 5.15 «Յուսարեր», Գաշիք, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964:
- 5.16 «Նոր Երկիր», Փարիզ, 1932:
- 5.17 «Նոր օր», Աթէնք, 1933:
- 5.18 «Պայքար», Պոսթրն, 1953, 1954, 1955, 1956, 1957, 1958, 1959, 1960, 1961, 1962, 1963, 1964, 1965, 1966, 1967, 1968, 1969, 1970, 1971, 1972, 1973 (Յունուար-Օգոստոս, Հոկտեմբեր-Դեկտեմբեր), 1974, 1975, 1976, 1977, 1978 (Յուլիս-Դեկտեմբեր), 1978, 1979, 1980 (Հունվար-Հոկտեմբեր), 1981 (Օգոստոս-Դեկտեմբեր), 1982, 1983, 1984, 1985, 1986 (Փետրուար, Մարտ-Դեկտեմբեր), 1987, 1988, 1989 (Փետրուար-Ապրիլ, Յունիս-Դեկտեմբեր), 1990, 1991, 1992, 1993, 1994:

6. Համացանցային կայք էջեր

- 6.1 http://www.armenews.com/article.php3?id_article=39281.
- 6.2 http://www.armenianpedia.org/index.php?title=Armenian_Education.
- 6.3 <http://www.armenianprclacy.org/100704c.htm>.
- 6.4 <http://www.azg.am/?lang=AR&num=2006052007>.
- 6.5 <http://www.azad-hyc.nct/news/vicwnews.asp?ncwslid=876jz95>.
- 6.6 http://armenianstudies.csufresno.edu/sas_newsletter/Spring2001/page2.htm.

- 6.7 <http://www.acam-france.org/bibliographic/auteur.php?cle=tchamkerten-astrig>.
- 6.8 http://bookz.ru/authors/urii-ju_kov/stalin-705/page-10-stalin-705.html.
- 6.9 <http://www.colegioarmenio.edu.ar/>.
- 6.10 <http://www.gulbenkian.pt>.
- 6.11 <http://www.gulbenkin-paris.org>.
- 6.12 <http://www.gulbenkian.uk.org>.
- 6.13 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24>.
- 6.14 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201>.
- 6.15 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=568>.
- 6.16 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=571>.
- 6.17 <http://www.gulbenkian.pt/index.php?section=2&artId=12>.
- 6.18 http://www.gulbenkian.pt/fundacao_estatutos_testamento.asp.
- 6.19 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=48>.
- 6.20 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=558>.
- 6.21 <http://www.gulbenkian.org/english/report2005/Apresentacao.pdf>.
- 6.22 <http://www.gulbenkian.org/english/headoffice.asp>.
- 6.23 <http://www.gulbenkian.pt/index.php?section=6>.
- 6.24 http://www.gulbenkian.pt/english/rcport2004/pp0_13.pdf.
- 6.25 <http://www.gulbenkian.org/english/report2005/Apresentacao.pdf>.
- 6.26 <http://www.gulbenkian.pt/index.php?section=6&artId=37>.
- 6.27 <http://www.gulbenkian.pt/index.php?section=6&artId=35>.
- 6.28 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=567>.
- 6.29 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=201>.
- 6.30 <http://www.gulbenkian.pt/index.php?section=24&artId=570>.
- 6.31 <http://www.gulbenkian.pt/Jardins/>.
- 6.32 http://www.historymuseum.am/pastexhibitions_am.
- 6.33 <http://www.melkonyanforever.org/Yegavian%20in%20Istanbul.pdf>.
- 6.34 <http://www.petroprimo.pt>.
- 6.35 <http://www.saintsarkis.org.uk>.
- 6.36 <http://www.state.gov/r/pa/ho/time/id/88104.htm>.
- 6.37 http://www.ugab.org.ar/framesets/index_edu_compromiso.htm.
- 6.38 http://www.zarplata.ru/a-id-14_230.html.

Vahram Gharakhanyan

**Armenian activities of the Calouste Gulbenkian Foundation:
1956-2006**

SUMMARY

The present study is dedicated to an actual and almost untouched theme. It concerns the enlightenment of the benevolent, Armenian-favouring activities of the Calouste Gulbenkian Foundation, a charitable and scientific-cultural organization. The Foundation was established in Portugal in 1956 in accordance with the terms of the Will of the world-famous oil tycoon Calouste Sarkis Gulbenkian (1869-1955). The government of Portugal endowed the Foundation with legal entity by decree-law (No. 40690) dated 18th July 1956. The main purpose of the Foundation is assistance to scientific, cultural, educational, artistic and humanistic activities. Today, the number of countries enjoying the support of the Calouste Gulbenkian Foundation is more than 75.

The work consists of an introduction, three chapters, a conclusion, an appendix and a list of the used sources and literature. The intentions, assigned tasks, analysis of the used sources and literature are presented in the introduction. It is marked that neither the "Phenomenon Gulbenkian" nor the Foundation of the same name have ever been a subject of detailed research in the Armenian world. Thus, a large number of events continue to remain unknown worldwide. This is the first attempt to make a thorough study of the Calouste Gulbenkian Foundation's benevolent activities that can undoubtedly be defined as Armenian-favouring owing to the incessant and fruitful work carried out within Armenian communities of different countries and in different sections of Armenian society.

The first chapter of the book, entitled **"The establishment of the Calouste Gulbenkian Foundation"**, deals with the questions of both business and charitable activities of its founder, C. Gulbenkian. Special attention is given to a fact according to which the world-known oil magnate had kept in touch with the Armenian reality both during his presidency at the Armenian General Benevolent Union (1930-1932) and long before, as far back as 1920s. According to various sources C. Gulbenkian had serious intentions to set apart an essential part of his fortune to meet the needs of Armenian people. He had meetings with well-known statesmen and politicians (Simon Vratsian, Avetis Aharonian, Alexander Khatisian, Levon Karakhan) of the time for that purpose.

Questions are also raised concerning the details of establishment, legal status and charitable activities of the Calouste Gulbenkian Foundation. Issues on the creation of Armenian department within that organization are considered and discussed, too. The accent is put on the fact that although the Foundation Calouste Gulbenkian has never been a political organization, it has played a political role of vital importance for Armenian people up to now; promotion and preservation of the cultural heritage as well as assistance to attain a national unity.

The charitable donations and development plans in behalf of the cultural-educational, ecclesiastical and public health organizations of the Armenian Soviet Socialist Republic, Republic of Armenia (RA), the Armenian communities of Syria, Lebanon, Iran, Iraq, Turkey, Jordan, Greece, France, USA, Argentina, Brazil and of the other countries carried out by the Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation are represented and described in the second chapter (**"The programmes carried out by the Armenian Department of the Foundation"**). The purposeful policy of the management of the Armenian Department of the Foundation is emphasized in the work. Their main intention was assistance to the realization of ethno-cultural and national aspirations of the Armenian people. Considerable quantities of funds were allocated for the organizations of Diaspora; anyhow the Foundation's activities have been concentrated mainly in Syria, Lebanon and Turkey, countries where Armenians in the early

seventies stood at 600,000. However, due to unstable economic and political circumstances in the Middle East these countries suffered in the meantime massive emigration. The programs implemented by the Armenian Department in favour of Armenians who became refugees in consequence of the Arab-Israeli conflict are discussed and analyzed, too. The fact of special importance is the cooperation of the Calouste Gulbenkian Foundation's top management with the U.N.O., governments of Lebanon, Greece and France within the framework of aid to Armenian refugees.

The third chapter is entitled "The Armenian Department's assistance to the development of science in Armenia and in Diaspora". It is underscored that the Armenian Department of the Foundation has allocated substantial sums to satisfy the needs of different institutes of the National Academy of Sciences (NAS) of RA. In particular within the medical scope the Armenian Department's activities are reflected in the following: hospital equipment in Armenia and in Turkey, institution of two laboratories in Yerevan (Center of Medical Genetics of NAS and Laboratory for drugs and food control), support to Armenian researchers at CERN (European Centre for Nuclear Research) in Geneva, etc.

Furthermore the Library of Ancient Manuscripts (Matenadaran), the Yerevan State University and the National Library are equally pillars of the Armenian Department's activities. In addition, the Armenian Department deals with the development of Armenology. It has set up and financed chairs in Armenology at different international prestigious universities (Oxford, Harvard, Tufts, London University School of the Oriental and African Studies, Catholic Institute in Lyon etc.). It has supported the publication of Armenological studies and renders considerable material support to numerous Armenological magazines.

The results and outputs of the research are summarized in the conclusion according to which the benevolent Armenian activities of the Calouste Gulbenkian Foundation are a valuable contribution to the strengthening of Armenian statehood and national unity in the Armenian Communities worldwide. The short biographies of Armen-

ian heads of the Armenian Department of the Calouste Gulbenkian Foundation and tables of grants distributed by the Department for various Armenian institutions during the years 1956-2006 are given in the appendix.

Ваграм Караханян

Проармянская деятельность учреждения “Галуст Гюльбенкян”: 1956-2006 гг.

РЕЗЮМЕ

Данная работа посвящена почти не исследованной и актуальной теме – освещению благотворительной проармянской деятельности учреждения “Галуст Гюльбенкян”, которое является благотворительной и научно-культурной организацией. Учреждение было основано в 1956 г. в Португалии согласно завещанию всемирно известного нефтяного магната Галуста Гюльбенкяна (1869-1955). Декретом № 40690 (датированным 18-го июля 1956 г.) правительство Португалии признало правосубъектность вышеупомянутого учреждения, главной целью которого является поддержка научных, культурных, образовательных, художественных и гуманитарных начинаний. Сегодня помощью этого фонда пользуются свыше 75 стран мира.

Книга состоит из введения, трех глав, заключения, приложения и списка использованной литературы. Во введении представляются поставленные цели и задачи, анализируются использованные источники и литература. Отмечается, что до сих пор “феномен Гюльбенкян” и одноименное учреждение не были предметом научного изучения, вследствие чего многочисленные события представлялись и продолжают представляться неверно, с логично противоречащими друг другу комментариями. Это первая попытка создать научную и всеобъемлющую работу о благотворительной деятельности учреждения “Галуст Гюльбенкян” в армянской реальности - деятельности, которую можно уверенно назвать проармянской благодаря непрерывной и плодородной работе, проводящейся в армянских общинах разных стран и в разных социальных слоях армянского общества.

Первая глава работы озаглавлена “Основание учреждения “Галуст Гюльбенкян”. Здесь освещается экономическая и благотворительная деятельность основателя упомянутой организации Г. Гюльбенкяна. Особенно подчеркивается тот факт, что всемирно известный нефтяной магнат общался с армянской реальностью как будучи председателем Армянского Всеобщего Благотворительного Союза (1930-1932 гг.), так и намного раньше, еще в 1920-х годах. Кроме этого, с помощью разных источников освещается и акцентируется примечательный факт, согласно которому Г. Гюльбенкян имел серьезные намерения предоставлять существенную часть от своего состояния для нужд армянского народа. С этой целью он встречался с известными государственными, политическими деятелями своего времени - Симоном Врацяном, Аветисом Агароняном, Александром Хатисяном и Леоном Караханом.

Освещены также подробности основания, юридического статуса и благотворительной деятельности учреждения “Галуст Гюльбенкян”. Рассмотрены и проанализированы вопросы создания Армянского отдела внутри этой организации. Подчеркивается, что хотя фонд “Галуст Гюльбенкян” не был и не является политической организацией, но для армянского народа он по сегодняшний день играет наущно важную политическую роль, способствуя сохранению его национального и духовного облика, делу его единения.

Во второй главе - “Программы, осуществленные Армянским отделом учреждения” - представляются благотворительные пожертвования и планы развития, осуществленные Армянским отделом фонда “Галуст Гюльбенкян” в пользу культурно-образовательных, духовных и здравоохранительных учреждений Арм. ССР, РА, армянских общин Сирии, Ливана, Ирана, Ирака, Турции, Иордании, Греции, Франции, США, Аргентины, Бразилии и др. Акцентируется то обстоятельство, что все руководители и армянские сотрудники фонда “Галуст Гюльбенкян” проводили целенаправленную политику, сутью которой была поддержка этнокультурной и национальной идентичности армянского народа. Хотя выделялись значительные средства почти для всех организаций диаспоры, но главными аренами деятельности фонда были и остаются Сирия и Ливан, так как именно из этих стран (особенно из Ливана) по причине политической нестабильности ближневосточного региона с 1970-х годов

начались массовые эмиграции армян. В этой главе обсуждаются и анализируются также программы, осуществленные Армянским отделом в пользу армян, ставших беженцами вследствие арабо-израильского конфликта. В рамках помощи армянским беженцам особо важным фактом является сотрудничество высшего руководства учреждения “Галуст Гюльбенкян” с ООН, правительствами Ливана, Греции и Франции.

Третья глава озаглавлена “Помощь Армянского отдела развитию науки в Армении и в диаспоре”. В этой главе отмечается, что значительные суммы были выделены Армянским отделом учреждения “Галуст Гюльбенкян” для удовлетворения нужд различных институтов Академии наук (НАН) РА, Матенадарана, ЕрГУ и Национальной библиотеки. Были оборудованы больницы в Армении и в Турции, учреждены лаборатории в Ереване (Центр Медицинской Генетики НАН РА и Лаборатория для контроля лекарственных средств и качества пищевых продуктов), поддержаны армянские исследователи Европейского Центра Ядерного Исследования в Женеве (CERN) и т.д. Освещены также инициативы руководства учреждения в целях развития арменоведения. Подчеркивается, что Собрание директоров фонда основало и финансировало кафедры арменоведения в разных известных научно-образовательных центрах мира (Оксфорд, Гарвард, Тафтс, Лондонский университет, Католический Институт Лиона и др.), издавало и издает арменоведческие труды, оказывало и продолжает оказывать существенную материальную помощь многочисленным арменоведческим журналам, ежемесечникам и т. п.

В заключении обобщается изложенный материал и делаются выводы, согласно которым благотворительная проармянская деятельность учреждения “Галуст Гюльбенкян” является значительно ценным вкладом в укреплении армянской государственности и национального единства с точки зрения места и роли армянских и международных благотворительных фондов.

В приложении приводятся таблицы сумм, выделенных Армянским отделом фонда “Галуст Гюльбенкян” в течение 1956-2006 гг. в пользу различных армянских учреждений, и краткий биографический очерк армянских руководителей этого фонда.



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Արդուլ Համիլ - 34, 35
 Արուսյան ի. - 142, 230
 Ադոնց Ն. - 202
 Աթայան Ռոբերտ - 185
 Արևրտո ժողև Պեսսոա - 70
 Ալեքսանդր (Մակեդոնացի) - 200, 202
 Ակինյան Ներսես - 200, 202
 Ահարոնյան Ավետիս - 51, 53, 79
 Աղաթոն (Աղաթոնյան) Գրիգոր - 11
 Աղաթոն (Աղաթոնյան) Մկրտիչ - 11
 Աճևմյան Մովսես - 76, 77
 Աճևմյան Ծահև արք. - 206
 Աճէմևան Յակոբ - 156
 Ամենհանաթ փարավոն - 183
 Այվազեան Արզամ - 199
 Այվազեան Արմէն - 199
 Այվազյան Հովհաննես - 27
 Անաստաս կաթողիկոս - 8
 Անդրև Գոնսալվես Պերեյրա - 75
 Անթարյան Փ. - 206 //
 Անտոնիո Վիանա Բարեյրո - 70
 Աշոտ III Բաղրատունի թագավոր
 (Ողորմած) - 8
 Առաքելեան Հայկ - 166
 Առաքելյան Կարո - 198
 Ավետիսյան Ս. - 49
 Արամ Ա կաթողիկոս - 113
 Արթուր Ռուպինշթայն - 184
 Արթուր Սանտոս Սիլվա - 75
 Բալազյան Լիա - 25, 27, 58, 76, 77,
 237
 Բարխուդարեան Վ. Բ. - 182
 Գագիկ Արծրունի - 8
 Գագիկ թագավոր/ Կարսի - 206
 Գաղեղյան Ստեփան - 205
 Գարակյողյան Ա. - 164
 Գևորգյան Գեղամ - 187
 Գլխանենց Պետրոս դի Սարգիս - 200,
 202
 Գլղազյան Ալիս - 156
 Գյուլյան Արա - 156
 Գոնսալո Ռիբեյրո Տելլես - 70
 Գովցյան Ալեքսի - 126
 Գուլոյան Ա. - 54
 Գուլումջյան Գ. - 200
 Գուվեյա Թերեզա - 75
 Գուրեխ էլիզարեթ - 127
 Գրիգոր Նարեկացի - 202, 204
 Դալլաբյան Կարլեն 13, 16, 19, 25, 26,
 28, 29, 44, 46-48, 62, 69, 75, 76,
 81, 92, 118, 119, 125, 128, 129,
 136, 140, 167, 170, 171, 218, 219,
 223, 237, 238, 242
 Դանիելյան Ժիրայր - 204
 Դանիէլեան Կարինես - 204
 Դեղեյան Ժերար - 205
 Դեյվիդ Յանգ - 21

- Դենատոն Լ. Գ. - 57
Դր Լյուսանա Դիոզո - 75
Դիանա դիցուհի - 183
Դոմինիոս զր Սուզա Հոյճթայն - 87,
104, 176, 180
Դուրևան Պևարոս - 174
Դուրյան Եղիշ - 49
- Եղևիկ - 200, 202
Եկալյան Զավեն - 1, 3, 4, 19, 25, 85,
90, 93, 106, 107, 111, 122, 124,
126, 136, 142, 143, 149, 157, 161,
171, 177, 179, 187, 193, 195, 197,
198, 202-205, 213, 223, 224
Եկալյան Նարեկ - 106
Եկատերինա II [ռուս կայսրուհի] - 183
Եղիշ արք. Տերտերյան - 119, 170
Եղիշ Զարենց - 94
Եսայան Գևորգ - 17, 19, 56, 57, 76, 83,
84, 94, 95, 103, 116, 118, 121, 124,
131, 132, 145, 149, 151, 160, 166,
173, 184, 194, 196, 205, 207, 212,
217
Եսայան Հովհաննես - 33
Եսայան Մարտին - 62, 75, 219, 222
Եսայան Միքայել - 19, 62, 106-108,
136, 149, 161, 170, 171, 192, 196,
197, 202, 203, 212, 217, 219
Երամյան ԱրրաՀամ փաշա - 19
Երզնի Դանիել - 28, 43
- Զարեկ [Կիլիկիայի թագուհի] - 8
Զարեհ Ա կաթողիկոս (Մեծի Տանն
Կիլիկիո) - 173
Զեյթունցյան Սարգիս - 156
Զոհրարյան Մ. - 11
- Էդուարդո Լորենսո - 75
Էդուարդո Մարսալ Գրիլո - 75
Էմիլիո Ռուի վիլար - 75, 193
Էռնեստո Պերեյրա զր Ալմեյդա - 57
Էսթրաչյան Վարդղես - 156
Էքսերջյան Նուրար - 57, 180
- Թագվորյան Սևրովրն - 11
Թամամչյան - 10
Թաջիրյան Էլիզարեթ - 203
Թերդյան Հարություն - 205
Թերդյան Պևարոս - 127
Թէոդիկ - 174
Թոմասո Մակ Լինտոկ - 61
Թոսպաթ Տիգրան - 173, 181
Թորոմեան վ. - 7
Թորոս Ռոսլին - 206
Թորոսյան Հայկանուշ - 184, 200
Թոմանյան Հովհաննես - 94
Թոփճյան Հ. - 202
Թոփչյան Մ. Ա. - 104
- Ժակ Շիրակ - 186
Ժան Թրուվո - 169
Ժան Պոլ Հյուչոն - 127
Ժյուլյեր Ցակեր - 181
Ժողե Ազերեզո զր Պերդիգան - 17, 22,
26, 45, 55, 56-60, 62, 65, 69, 73,
76, 83, 87, 88, 92-95, 103-105,
108, 117, 119, 120, 123, 124, 134,
139, 151, 162, 164, 166, 167, 169,
170, 173, 176, 180, 181, 185, 195
- Իզարեկ Մոտա - 75
Իւլրաչեան Կարէն - 204

- Լևոն II Ռուրիկյան [Կիլիկիայի թագա-
 վոր] - 8
 Լազարևաններ - 199
 Լևո (Առաքել Բարախանյան) - 11
 Լիտվինով Մ. - 54
 Լյուդվիգ Նորել - 14, 33
 Լորդ Ռեդկլիֆ Վերմելը - 22, 56-61,
 65
 Լուի Մարիես - 200, 202
 Լորարտ Լ. - 200

 Խանջյան Աղասի - 46, 81, 97
 Խաչերյան Լևոն - 204
 Խաչիկյան Շուշանիկ - 199
 Խատիսյան Ալեքսանդր - 51, 76, 79
 Խորեն արք. Բարոյան - 173, 180

 Կալինովսկի Ռիչարդ - 186
 Կալիսթենես - 200, 202
 Կալմատ Ալեն - 127
 Կամսարական Արմենակ ընկ - 49
 Կասևո - 94, 123
 Կարախան Լևոն - 54
 Կարապետյան Մերուժան - 198, 199,
 203, 204
 Կեռան թագուհի [Կիլիկիայի] - 206
 Կերտան Լ. - 54
 Կյուլպենկյան Գալուստ - 12-14, 16,
 17, 20-22, 25-30, 33-67, 70, 73,
 75-84, 88, 90, 94, 97, 98, 100, 105,
 114-116, 120, 133, 137, 162-165,
 170, 174, 176, 178-180, 182, 183,
 187, 195, 209, 210, 217, 218
 Կյուլպենկյան Նուրար - 20-22, 33, 45,
 61, 77, 81, 82, 115-117
 Կյուլպենկյան Նվարդ - 114, 115, 117
 Կյուլպենկյան Ռիտա - 33, 170, 217

 Կյուլպենկյան Ռորերտո - 17, 19, 24,
 57, 83, 84, 87, 92-95, 103, 104,
 107, 108, 110, 117-121, 124, 129-
 132, 134, 136, 143, 145, 149, 151,
 160, 162, 164, 166, 167, 169, 170,
 176, 180-182, 185, 191, 192, 194-
 197, 205, 207, 212, 218
 Կյուլպենկյան Սարգիս - 33, 176
 Կյուլպենկյան Վահան - 17
 Կյուլպենկյան Տիրուհի - 176
 Կոմիտաս - 94, 143, 184

 Հակոբ Փաշա - 34, 35
 Հակոբյան Ավետուհ - 57
 Հաչիմյաններ (արքայատոհմ Իրա-
 քուհ) - 40
 Հեթում II [Կիլիկիայի թագավոր] - 8
 Հենրի Ֆորդ - 14
 Հերպերթ ֆոն Գարայեա - 184
 Հինդլյան Գևորգ - 206
 Հինդլյան Կարպիս - 206
 Հյուինս Ռալֆ - 20, 21, 35, 43, 61, 77,
 82, 115, 116
 Հուգոն - 183
 Հուսեյն թագավոր [Հորդանանի] -
 119, 120
 Հուստինիանոս (ըլյուզանդական
 կայսր) - 202

 Ղազարյան Ռուբեն - 204
 Ղուկասյան - 10

 Ճեմսնեան Ս. - 203, 204
 Ճիլմենճյան Ստեփան - 205
 Ճիճիլյան Ե. - 131

- Մալեղյան Վահան - 54
 Մալխասյան Արմեն - 199
 Մալխասյանց Ստ. - 9
 Մակ Զորջ Բանդի - 65, 86
 Մակարեան Ասատուր - 117, 118
 Մանանդյան Հակոբ - 200, 202
 Մանթաշյանց Լտե'ս նաև Մանթա-
 շևան, Մանթաշով] - 10, 28, 33
 Մանուկ Անատունեչ Ռիրեյրո - 56, 57
 Մանուկյան Ալեք - 13, 101, 137
 Մանուկյան Արտակ սրբազան - 173
 Մանուկյան Զորջ - 175
 Մանուկյան Ռիչարդ - 138
 Մալյան Վահրամ - 19, 24, 85, 93, 94,
 110, 124, 131, 132, 136, 143, 149,
 155, 167, 174, 177, 191, 192, 196,
 221
 Մարգարյան Հայրապետ - 199
 Մարկոս - 206
 Մարսելո Կուրտո - 193
 Մելքոնեան - 10
 Մելքոնյան Էդուարդ - 12, 25, 28, 29,
 46, 47, 54, 78, 79, 100, 105-107,
 109, 114, 117-119, 126, 129, 132,
 138, 164
 Մելքոնյան Լևոն - 35
 Մեսրոպ Մաշտոց - 18, 90, 223
 Մինասյան Կ. - 200
 Միրզախանյանց - 10
 Մլխիթարյան Արրակ - 206
 Մլխիթարյաններ - 125, 126, 159, 204
 Մլասնիկյան Ա. - 228
 Մովսես Խորենացի - 223
 Մութաֆյան Կլոդ - 122, 126, 198
 Մութաֆյան Մեսրոպ արք. - 122
 Մուրադյան Սեդա - 106
 Մուրատ-Ռափայել - 10
 Յակոբեան Ալեքսան - 204
 Յոզեֆ Կարստ - 200
 Նազյան Հովհաննես Լախիկոպոս - 52
 Նալբանդյան Էդուարդ - 127
 Նալբանդյան Միրայել - 11
 Նաճարյան Լազար - 105
 Նավասարդյան Բազրատ - 11
 Ներսես Մեծ - 8, 9
 Ներսոյան Մ. Կ. - 104
 Նիկոլա Հ. Ե. - 38, 40
 Նովիկով Ն. - 54
 Նորայր Բյուզանդացի - 205
 Նորատունկյան Գարրիել - 53
 Նուրար Պաուլա-Նվարդ - 19
 Նուրի Սայխտ - 123
 Շատվորյան Հ. - 11
 Հայր Շառլ Ռենու - 206
 Շարլ Աղնավուր - 126
 Շիշմանյան Հովսեփ - 11
 Ոսկյան Համադասպ - 200
 Չամբելթեն Արա - 19
 Չամբելթեն Աստղիկ - 13, 16, 18, 19,
 25-27, 33, 36-39, 41-43, 46, 48,
 49-51, 57, 58, 62, 65, 69, 71, 111,
 119, 161, 169, 173, 180, 187, 191,
 198, 206, 208
 Չամբելթեն Ինգրիդ - 19, 85
 Չարլզ Ուիչո - 57
 Չորեքչյան Գևորգ (տե'ս նաև Գևորգ
 Զ), Ամենայն Հայոց կաթողիկոս -
 80, 164, 166

- Պալճյան Վաղգեն (տե՛ս նաև Վաղգեն Ա), Ամենայն Հայոց կաթողիկոս - 76, 83, 92, 98, 166-168
- Պասկալ Դյուսապին - 188
- Պեղրո Բատալիա Ռեչ - 56
- Պեղրո Ֆերեյրա Սիդ - 70
- Պեղճյան Զենոբ - 52
- Պեղճյան Հարություն ամիրա (Գաղաղ Արթին) - 50
- Պելիկթաշյան Մկրտիչ - 11
- Պետեն Լավալ - 45
- Պետրոս Կրետ - 49
- Պետրոսյան Ամայա - 27
- Պողարյան Նորայր արք. - 170, 206
- Պողոս Նուբար (տե՛ս նաև Պողոս փաշա Նուբարյան) - 10, 12, 13, 19, 46, 47, 49, 53, 85
- Պօղոսեան Ս. - 12, 19, 53, 85
- Ջոան Մոտա - 186
- Ջոն Լոդվիկ - 21, 45, 82
- Ռեդկլիֆ Վերմեդ - 22, 56-61, 65
- Ռեմբրանդտ - 183
- Ռոբերտ Նորել - 14, 33
- Ռոզիտա Մորի - 19
- Ռոկֆելլեր ընտանիք - 14
- Ռոստոմյան Դ. - 11
- Ռուբենս - 183
- Ռուի Ժերվիս դը Ադուզիա - 70
- ՍաՀակ Պարթև - 8
- Սարգիս Պիժակ - 206
- Սարգիսեան Եղիշէ վրդ. - 166
- Սարգսյան Արամ - 27
- Սարգսյան Միքայել - 198
- Սարգսյան Սևրժ - 193
- Սարուխան Ալեքսանդր - 28, 33
- Սեթյան ՎաՀև - 181
- Սեթոն Լյոյդ - 196
- Սելիմ էֆենդի - 34
- Սթենֆլըն Հարքնէս - 15
- Սիդնի Քեյն - 163, 167
- Սունդուկյան Գարրիել - 11
- Սպենդիարյան Ալեքսանդր - 184
- Ստալին Իոսիֆ - 78
- Ստեփանյանց Ս. - 54, 164
- Հայր Վալենտին Մարկեդ - 193
- Վահրամ (որդի Պողոս Նուբարի) - 19
- Վասակ իշխան (Կիլիկիա) - 206
- Վասիլև Ա. - 28, 34, 37, 38, 40-42
- Վատտո - 183
- Վարժապետյան Պետիկ - 156
- Վիկտոր Սա Մաչադո - 75
- Վրացյան Սիմոն - 44, 51, 76, 78
- Տեր-Գալստյան Մովսես - 173, 180
- Տեր-Եղիայան Զավեն արք. - 47, 52, 53, 80
- Տեր-Հակոբյան Մեսրոպ ավագ քահանա - 131
- Տեր-Ներսիսյան Սիրարփի - 206
- Տեր-Պետրոսյան Լևոն - 186, 192, 204
- Տեր-Սարգսյան Հրաչ - 156
- Տէր Ստեփանեան Կոմիտաս եպիսկ. - 166
- Տիգրան Բ (Հայոց արքա) - 200, 202
- Տիգրան Թոսպաթ - 173, 180
- Ութուջյան էդուարդ - 163, 164, 167, 169
- Փավստոս Բուզանդ - 9

Քամիլ Շամուն - 180, 181	Օյսթրախ Տախտ - 184
Քեչիչյան Ի. - 202	Օտյան Գրիգոր - 11
Քեչիչյան Կորյուն - 19, 24, 93, 212, 220	Օրբանուտու Անաստաս - 169
Քեչիչյան Մեսրոպ վրդ. - 202	
Քըրքորյան Քըրք - 13	Ֆեյսայ I - 40
Քյոսեյան Վարուժան - 7, 29, 176, 177	Ֆեներճյան Ջ. - 131
Քյուրբջյան - 10	Ֆերեր Կողեյա - 132
	Ֆերնանդո Տավարեշ դը Կարվալհո -
Օգոստինոս Բաջննյ - 203	56
Օհանջանյան Համադաս - 51	Ֆրանսուա Թոմաս Ժերմեն - 183

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

- Արուսյան քաղաք - 178, 179, 227
Աղուլիս - 199
Ադրբեջան - 11
Աթենք - 13, 29, 111, 129, 131-133
Ալբանիա - 71
Ալեքսանդրիա - 144, 156
Ալժիր - 64, 218
Ամբերդ - 143, 187, 195
Ամերիկա Մայր ցամաք - 12, 18
Ամերիկայի Միացյալ Նահանգներ
(տե՛ս նաև ԱՄՆ) - 14, 36, 39, 41,
46, 50, 54, 63, 65, 71, 86, 114, 134,
135, 137, 138, 144, 147, 151, 158,
174, 187, 194-196, 212, 214
Ամման - 119, 120
Այնճար - 110, 112
Անգլիա - 36, 39, 40, 45, 57, 71, 127,
150, 160, 178, 187, 195, 219, 221
Անդրկովկաս - 10, 34
Անթիլիա - 110, 159, 160, 171, 173,
197, 199, 204, 223
Ապշերոնյան թերակղզի - 34
Աստրախան - 203
Ավստրալիա - 18, 71, 144, 145, 212
Ավստրիա - 71, 87, 150, 197
Ասլանտյան օվկիանոս - 139
Արևմտյան Հայաստան - 11
Արամո գյուղ - 112
Արգենտինա - 71, 139-142, 150, 212
Աֆրիկա - 92, 218
Բազրեյն - 42
Բաղդադ - 35, 40, 49, 71, 88, 108, 124,
175
Բասրա - 88, 108, 124
Բարու - 33
Բելգիա - 41, 71, 187, 195, 197
Բելֆաստ - 221
Բեյրութ - 9, 10, 29, 55, 56, 59, 79, 88,
104, 107-112, 156, 159, 160, 174,
175, 180-182, 196, 198, 204, 206,
220, 221
Բենին - 71
Բոխում - 186
Բոն - 196
Բոսսի (Bosscy) ամրոց - 197
Բոստոն - 29, 138, 195, 222
Բուդապեշտ - 144
Բուենոս Այրես - 140
Բուլղարիա - 71, 148
Բրազիլիա - 64, 71, 104, 110, 139-142,
150, 155, 158, 212
Գատրգյուղ - 33
Գերմանիա - 14, 35, 38, 150, 151, 158,
186, 196
Գերմանիայի Դաշնային Հանրապե-
տություն - 71
Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրա-
պետություն - 71
Գյոտերորդ - 205

- Գնդեւիւնք - 143
 Գողարան դյուղ - 187
 Գրենորլ - 187
- Դամասկոս - 112
 Դեսին - 127
 Դեսարոյթ - 135-137
 Դերիկ - 112
 Դուրլին - 206
- Եգիպտոս - 12, 49, 50, 72, 87, 144, 148, 150
 Եթովպիա - 146
 Եվրոպա - 12, 16, 36, 73, 74, 92, 126, 176, 203
 Երևան - 18, 51, 81, 90, 94, 142, 143, 158, 161, 179, 187, 191-194, 198, 200, 206, 214, 218, 223, 226, 228-231
 Երուսաղեմ - 16, 27, 49, 50, 57, 66, 87, 88, 104, 119, 120, 159, 160, 164, 168-171, 173-176, 178-181, 192, 197, 198, 206, 208, 210, 221
- Զաիր - 72
 Զալկա - 112
 Զմառ - 159, 160, 174, 202, 206
- Էկվադոր - 72
 Էջմիածին - 16, 51, 83, 84, 129, 133, 159, 160, 162-164, 174
 Էտոն - 222
- Թավրիզ - 118
 Թեհրան - 17, 29, 114, 118, 175, 196
 Թիֆլիս - 11
 Թուրուզ - 187
- Թունիս - 72
 Թուրքիա - 11, 14, 18, 34, 35, 37-39, 42, 48, 54, 87, 88, 104, 110, 120-122, 127, 138, 146, 149, 158, 161, 196, 212
- Ժնև - 175, 183, 194
- Իլ դը Ֆրանս - 127
 Ինդոնեզիա - 72, 73
 Իրանդիա - 71, 206, 221
 Իսլանդիա - 72
 Իսպանիա - 14, 16, 72
 Իսրայել - 72
 Իտալիա - 14, 18, 39, 72, 127, 147, 150, 158, 212
 Իրան - 17, 42, 50, 72, 87, 88, 110, 113, 117, 118, 147, 149, 150, 175, 187, 195
 Իրաք - 15, 34, 35, 39-45, 48, 57, 60, 62, 63, 71, 72, 77, 87, 89, 90, 94, 104, 123, 124, 146, 149, 174, 175, 181, 209, 210, 219, 220
- Լաթարիա - 112
 Լատինական Ամերիկա - 139
 Լեյդեն - 195, 197, 208
 Լիրանան - 18, 48, 50, 72, 87, 88, 103, 104, 107-110, 112, 122, 123, 127, 144, 148, 149, 157, 160, 173, 180, 188, 212, 223
 Լիխտենշտեյն - 64
 Լիոն - 125, 127, 128, 187, 195
 Լիսաբոն - 13, 15, 27, 34, 46, 55-57, 59, 60, 66, 68-70, 76, 155, 156, 166, 169, 170, 175, 180, 183, 184, 186, 204-206, 220, 221

- Լյուքսեմբուրգ - 72
 Լոնդոն - 33, 34, 37, 42, 51, 57, 59, 60,
 62, 64, 66, 70, 71, 163, 178, 183,
 195, 206, 218, 219, 222
 Լոս Անջելես - 29, 138, 147, 195
 Լուվեն - 195-198
- Կալիֆոռնիա - 187, 196
 Կարկաթա - 206
 ԿաՀիրն - 12, 29
 Կամերուն - 71
 Կանադա - 71, 135, 144, 150, 158
 Կարս - 206
 Կիլիկիա - 8, 205
 Կիլիկյան Հայաստան - 186
 Կիպրոս - 58, 148, 149, 175, 221
 Կոիմբոր - 193
 Կոլումբիա - 72
 Կոստա Ռիկա - 72
 Կովկաս - 11
 Կուրա - 72
- Հազմիկ - 110
 Հալեպ - 59, 104-107, 111, 112, 156,
 182, 198, 204, 206, 223
 Հայաստան - 7, 8, 10-12, 18, 19, 23-
 26, 28, 29, 31, 43, 46, 48, 49, 51,
 53, 54, 70, 72, 75, 78, 79, 81, 83,
 92-95, 97-99, 101, 125, 141-143,
 150, 158, 161-165, 167, 171, 174,
 175, 178, 179, 185-189, 191-193,
 199, 201-203, 205, 208, 210-215,
 218, 220, 221, 224, 228
 Հարավային Ամերիկա - 87, 92, 139,
 144
 Հարավային Կորեա - 72
- Հարավաֆրիկյան Հանրապետություն
 - 71
 Հարավսլավիա - 72
 ՀԽՍՀ - 23, 76, 92, 226-228, 230, 231
 Հյուսիսային Իռլանդիա - 221
 Հնդկաստան - 10, 49, 50, 72, 147, 206
 Հոլանդիա - 72, 195, 208
 Հոնկոնգ - 72
 Հորդանան - 48, 87, 118-120, 148, 150
 Հունաստան - 18, 50, 72, 87, 127-129,
 131, 133, 134, 144, 146, 150, 171,
 180, 182, 212
 Հունգարիա - 63, 72
 Հոոմ - 135, 200, 202, 203
- Ղազախստան - 64
 Ղամիշլի - 112
- Ճապոնիա - 72
- Մադրաս - 10
 Մալազիա - 72
 Մալաթիա - 220
 Մալավիա - 72
 Մարաշ - 141
 Մարոկո - 72
 Մարսել - 33, 125, 127, 175, 186, 187
 Մեծ Բրիտանիա (Միացյալ Թագավո-
 րություն) - 14, 16, 21, 22, 36, 37,
 40, 44, 45, 58, 61, 71, 72, 90, 108,
 158, 188, 219
 Մերձավոր Արևելք - 12, 35, 36, 41, 42,
 49, 71, 72, 84, 87, 92, 94, 97, 104,
 108, 111, 114, 119, 123, 128, 138,
 146, 161, 179, 180, 188, 218, 219,
 226
 Մերսիկա - 72

- Միջագետք - 34, 35, 39
 Միջին Արևելք - 12, 36, 87, 90, 92, 115, 120, 128, 176, 226
 Մոնմորանսի - 182
 Մոնտեվիդեո - 140
 Մոսուլ - 38, 40

 Նախիջևան - 199, 203
 Նիգերիա - 72
 Նիդերլանդներ - 16
 Նիկարագուա - 72
 Նիկոզիա - 221
 Նյու Յորք - 7, 105, 134, 135, 196
 Նյու Ջերսի - 40, 63
 Նոր Զելանդիա - 72
 Նոր Կեսարիա - 51
 Նոր Զուգա - 118, 199, 200
 Նորվեգիա - 72
 Նուբարաչեն - 51

 Շվեդիա - 72, 205
 Շվեյցարիա - 14, 34, 46, 72, 135, 188, 194, 197, 223
 Շրի-Լանկա - 72

 Ռոթթերթաուն - 138
 Ռւրուզիայ - 72, 139, 140, 142, 212

 Ջեխիա - 72
 Ջեխոստովակիա - 71
 Ջիլի - 72
 Ջինաստան - 72

 Պակիստան - 72
 Պաղեստին - 40, 180
 Պանամա - 25, 42
 Պարագվայ - 72
 Պարսից ծոց - 28, 36, 42
 Պորտուգալիա - 13-15, 21, 22, 34, 46, 55, 57-61, 64, 65, 67-69, 72, 75, 84, 92, 134, 140, 158, 182, 191-193, 210, 218, 219

 Ռուսինիա - 72, 148
 Ռուսաստանի Դաշնություն - 223

 Սևր - 125-127, 160
 Սալոնիկ - 129, 182
 Սան Պաուլո - 58, 141, 142, 196
 Սան Սալվադոր - 72
 Սան-Ռեմո - 39, 40
 Սաուդյան Արաբիա - 42, 71
 Սեն Շամոն - 187
 Սեն Ռաֆայել - 182
 Սենեգալ - 72
 Սերբիա - 18, 144, 148
 Սիդնեյ - 144
 Սիրիա - 18, 38, 47, 48, 50, 87, 103, 104, 106-108, 111-113, 122, 144, 146, 148, 150, 157, 160, 187, 188, 206, 212
 Սլովակիա - 72
 Սորբոն - 197, 223
 Սուեզ - 36, 94
 ՍպաՀան - 175, 195, 196
 Սպիտակի չրջան - 187
 Ստամբուլ (տե՛ս նաև Իսթանպուլ, Կ. Պոլիս) - 7, 10, 11, 16, 29, 33, 38, 41, 47, 48, 50, 52, 54, 66, 80, 87, 104, 111, 120-122, 148, 159, 161, 164, 168, 174-176, 178, 205, 110, 217
 Ստոկհոլմ - 205

- Վալանս - 127
 Վաչինգտոն - 54, 183, 206
 Վասպուրական - 8, 193
 Վատիկան - 203, 223
 Վենեսուելա - 72
 Վենեսուելի - 87, 159, 160, 173, 198, 203, 204, 206, 208
 Վիննա - 28, 144, 159, 160, 173, 198, 202, 206
 Վրաստան - 11, 166

 Տոգո - 72
 Տրիպոլի - 49

 Յեյրոն - 71
 Յուրիխ - 34

 Փարիզ - 29, 34, 45, 51, 59, 66, 70, 71, 104, 114, 118, 125, 163, 168, 169, 175, 183, 186, 187, 193, 197, 206, 208, 217, 223

 Քաթար - 42
 Քեմբրիջ - 222
 Քենիա - 72
 Քեսար - 112, 187
 Քիրքուք - 49, 88, 108, 124
 Քուվեյթ - 42

 Օերաչ - 16, 69, 191
 Օման - 64, 72
 Օսմանյան կայսրություն - 35, 36, 39
 Օքսֆորդ - 195, 198, 219

 Ֆիլիպիններ - 72
 Ֆինլանդիա - 72
 Ֆրանսիա - 18, 36, 38, 39, 44-46, 50, 84, 108, 114, 124-127, 144, 145, 146, 150, 151, 158, 160, 168, 175, 180, 182, 187, 212, 223

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....7

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

«ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼ ՊԵՆԿՑԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ.....33

1.1 Գալուստ կյուլպենկյանի կյանքն ու գործունեությունը.....33

1.2 «Գալուստ կյուլպենկյան» հիմնարկության հիմնումը, կանոնադրությունը և բաժանմունքները.....55

1.3 Հայկական Համայնքների ծառայության բաժանմունքի ստեղծումը.....75

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՑԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ

ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ.....103

2.1 Կրթամշակութային օջախների շինարարություն և վերանորոգում 103

2.2 Կրթամշակակների և դրամաշնորհների ծրագիր.....145

2.3 Աջակցություն Հայկական Հոգևոր Հաստատություններին.....162

2.4 Առողջապահական և խնամատարական ծրագրեր.....174

2.5 Մշակութային ձևերնարկումներ.....182

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆՊԱՍԵ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ	191
3.1 Հատկացումներ գիտական հաստատություններին.....	191
3.2 Հայազխտություն զարգացմանն ուղղված ծրագրեր.....	194
3.3 Հայազխտական հրատարակություններ.....	199
ՎԵՐՋԱԲԱՆ՝	209
ՀԱՎԵԼՎԱԾ	217
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ «ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼ-ՊԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԱՅԱԶԳԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ	217
«ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ (1956-2006 թթ.)	225
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ...237	
SUMMARY (ամփոփում անգլերենով)	245
PEZIOME (ամփոփում ռուսերենով).....	249
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	253
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ	259

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻԿԻ ՂԱՐԱԽԱՆՑԱՆ

«ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼ ՊԵՆԿՑԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ. 1956-2006 ԹԹ.

Սրբազրիչ՝ Վահանդուխտ Դերձյան
Կազմի և սուպեր շապիկի ձևավորումը՝ Գրիգոր Մարիկյանի
Համակարգչային շարվածք՝ Վահրամ Ղարախանյան
Համակարգչային ձևավորումը՝ Աննա Աղուզումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 20.11.2008 թ.:
Ձափա՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Հրատ. 14.3 մամուլ, տպագր. 17 մամուլ + 4 էջ ներդիր = 16.8 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 93:

ԵՊՀ Հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուսյան 52

**«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հովանավորությամբ
Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը
լույս է ընծայել հետևյալ գրքերը**

1. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Յ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, 1998:
2. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Յ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 4, 1998:
3. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Յ. Բարսեղյան - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 5, 2001: (Բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»):
4. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.:
5. Հրաչյա Գարրիբեյան - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.:
6. Ալեքսանդր Մարգարյան - Հայերենի հոլովները, 2000 թ.:
7. Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.:
8. Շարական (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը, 2001 թ.:
9. Հրաչյա Միրզոյան - Հովհաննես Մրքուզ Զուղայեցի, 2001 թ.:
10. Ռուբեն Ղազարյան - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.:
11. Բաբկեն Հարությունյան - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», 2001 թ.:
12. Վարդան Արևելցի - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.:

13. Գևորգ Մադոյան - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.:
14. Գևորգ Արզարյան - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.:
15. Փայլակ Անթապյան - Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.:
16. Յոզեֆ Կարստ - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.:
17. Ռաֆայել Մաթևոսյան - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.:
18. Խաչիկ Բաղիկյան - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.:
19. Հրաչյա Գաբրիելյան - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.:
20. Էդուարդ Աղայան - Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.:
21. Արտակ Մովսիսյան - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.:
22. Հրաչյա Աճառյան - Բնություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.:
23. Պիոն Հակոբյան - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.:
24. Աշոտ Սուքիասյան - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին՝ «Մարդկային զարգացման և հումանիտական արժեքների, այդ թվում՝ հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում ձեռք բերված նվաճումների համար»), 2003 թ.:
25. Երջանիկ Գևորգյան - Հայոց շարժումային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.:
26. Հայնրիխ Չյուբշման - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.:
27. Հայնրիխ Չյուբշման - Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.:
28. Ալեքսանդր Մարգարյան - Հայոց լեզվի քերականություն (Ձևաբանություն) 2004 թ.:
29. Ռամազ Գորգաձե - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.:
30. «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն, 2004 թ. (ռուսերեն):
31. Հրաչյա Աճառյան - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.:
32. Յովհաննես Սարկալագ Իմաստասեր - Լուծմունք «Սահմանաց գրոց», 2004 թ.:
33. Սանդրո Սարգսյան - Հայաստանը քաղաքակրթության օրրան, 2004 թ.:

34. Կարեն Իզբաշեան - Աւարայրի ճակատամարտից դէպի Նուարսակի պայմանադրութիւնը, 2005 թ.:
35. Հարություն Դելլայան - Ժողովածու, 2005 թ.:
36. Բախտիար Հովակիմյան - Հայոց ծածկանունների բառարան, 2005 թ.:
37. Գառնիկ Անանյան - Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, 2005 թ.:
38. Վահան Տեր-Ղևոնդյան – Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145-1226 թթ.), 2005 թ. (ֆրանսերեն):
39. Գառնիկ Ստեփանյան – Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), 2005 թ.:
40. Հրաչյա Աճառյան - Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների. Իմաստաբանություն, Բառաքնություն, Շարահյուսություն, 2005 թ.:
41. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 16-րդ հատոր: Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, 2005 թ.:
42. Սահակ Բազյան - Խաչատուր Աբովյանը առակախոս-բանաստեղծ և դրամատուրգ, 2005 թ.:
43. Ռամազ Գորգաձե - Վրացերեն-հայերեն բառարան, 2005 թ.:
44. Պավել Շարաբխանյան - Հանգաբանություն, 2005 թ.:
45. Ռուբեն Ղազարեան - Գրաբարի հոմանիշների բառարան, 2006 թ.:
46. Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում եւ վկայութիւններում: Աշխատասիրութեամբ Ալբերտ Շարուրեանի, 2006 թ.:
47. Նիկողայոս Աղոնց - Երկեր, հինգ հատորով, հատոր Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, 2006 թ.:
48. Հ. Պողոս Գոճանեան - Ուղեցոյց դասական ուղղագրութեան, 2006 թ.:
49. Հայկազ Ժամկոչյան - Հայ ժողովրդի պատմություն, 2006 թ.:
50. Հայ հնայական և ժողովրդական աղոթքներ: Աշխատությամբ Ս. Հարությունյանի, 2006 թ.:
51. Սաթենիկ Գեջյան - Աճի: Մատենագիտություն, 2006 թ.:
52. Հարություն Մ. Վենետիկյան, Զերալդ Ա. Ուորֆիլդ - Համաշխարհային առևտրի ֆինանսավորում, 2006 թ.:

53. Շահէ Արքեպիսկոպոս Աճէմեան, Հայերէն Աստուածաշունչը, 2006 թ.:
54. LA MINIATURE ARMENIENNE - Collection du Matenadaran, 2006 թ., «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ
55. Արևելագիտության հարցեր (Հողվածների ժողովածու, հատոր VI), 2006 թ.:
56. Հակոբ Սիմոնյան - Վերին նավեր, գիրք Ա, (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), 2006 թ.:
57. Նիկողայոս Արոնց - Երկեր, հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, 2006 թ.:
58. Լիլիթ Ջաքարյան - Աղջոց սուրբ Ստեփանոս, 2007 թ.:
59. Ալբերտ Խառատյան - Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.:
60. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Զ հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
61. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Է հատոր, Ը դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
62. Մատենագիրք Հայոց, մատենաշար, Ը հատոր, Շարական, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2007 թ.:
63. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թվականը), հատ. 1, 2007 թ.:
64. Ռուբեն Ղազարեան, Հենրիկ Ավետիսեան - Նորայայտ բառեր գրաբարում, 2007 թ.:
65. Ֆելիքս Հայրապետյան - Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարան, 2007 թ.:
66. Արմեն Մալխասեան (կազմող) - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ, 2007 թ.:
67. Դեմի ղը Ռուժմոն - Սերը և Արևմուտքը (թարգմ. Ալ. Թովչյանի), 2007 թ.
68. Սերոբ Ղազարյան - Հայոց լեզվի պատմություն, 2007 թ.:
69. Լաւրենտի Յովհաննիսեան - Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը (V դար), Ազգային Մատենադարան, հ. ՄԽ, 2007 թ.:
70. Համաստեղ - Մոռացված էջեր, հատոր Դ, 2007 թ.:
71. Գրիգոր Սիքայեյան - Կիլիկիայի հայկական պետության պատմություն, 2007 թ.:

72. Նիկողայոս Ադոնց - Երկեր, հինգ հատորով, հատոր Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, 2008 թ.:
73. Աելիտա Ղուլխանյան - Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, 2008 թ.:
74. Ստեփան Պողոսյան - Պատմագիտական ուսումնասիրություններ, 2008 թ.:
75. Ժիրայր Անանյան - Պիեսներ, Ընտրանի, 2008 թ.:
76. Մատենագիրք Հայոց - մատենաշար, Թ հատոր, Թ դար, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
77. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԲ հատոր, Ժ դար Գրիգոր Նարեկացի, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
78. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԳ հատոր, Գանձեր I մաս, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
79. Մատենագիրք Հայոց - մատենաշար, ԺԴ հատոր, Գանձեր II մաս, տպագրվել է Անթիլիասում (Լիբանան), 2008 թ.:
80. Խաչիկյան Լևոն - Աշխատություններ, հատոր Գ, («Նաիրի» հրատարակչության հետ համատեղ), 2008 թ.:
81. Հարությունյան Հ. Մ. - Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., 2008 թ.:
82. Գրիգոր Ղափանցյան - Արմատական բառարանի առթիվ դիտողություններ, *Ара Прекрасный мифотворческий образ у армян*, 2008 թ.:
83. Բարկեմ Հարությունյան - Խորհրդահայ թատրոնի տարեգրություն, հատոր III, 2008 թ.:
84. Վահրամ Ղարախանյան - «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայացապատ գործունեությունը. 1956-2006 թթ., 2008 թ.:



[2000թ.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0091208

